



Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը

Ուսուցչի ձեռնարկ

Կրոն 275

Հիմնական դասընթաց

Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը Ուսուցչի ձեռնարկ

Կրոն 275

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սուրբ Լեյք Սիթի, Յուտա

Դիտողություններն ու ուղղումները ողջունվում են: Խնդրում ենք ուղարկել դրանք՝ այդ թվում նաև սխալները, հետևյալ հասցեով.

Seminaries and Institutes of Religion Curriculum Services
50 E. North Temple St., Floor 8
Salt Lake City, Utah 84150-0008
USA

Email: ces-manuals@ldschurch.org

Խնդրում ենք նշել ձեր լրիվ անունը, հասցեն, ծուխը և ցիցը:

Չմոռանաք նշել ձեռնարկի վերնագիրը: Այնուհետև նշեք ձեր դիտողությունները:

© 2015, 2016 by Intellectual Reserve, Inc.

Բոլոր իրավունքները վերապահված են:

Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Տարբերակ 2, 5/16

Անգլերենի հաստատումը. 8/14

Թարգմանության հաստատումը. 8/14

Teachings and Doctrine of the Book of Mormon Teacher Manual-ի թարգմանությունը

Armenian

12557 201

Բովանդակություն

<i>Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը Ուսուցչի ձեռնարկ</i>	V
1 Մորմոնի Գիրքը ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին	1
2 Հետևել մարգարեների խոսքերին	7
3 Հնազանդությունը օրհնություններ է բերում	13
4 Ադամի անկումը և ազատ կամքի պարզեր	19
5 Հիսուս Քրիստոսի անսահման քավությունը	25
6 Մորմոնի Գիրքը գրվել է մեր օրերի համար	31
7 Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը	36
8 Փրկությունը գալիս է Հիսուս Քրիստոսի միջոցով	41
9 «Փնտրեք Աստծո արքայությունը»	47
10 Աղոթք և հայտնություն	53
11 Պաշտպանենք մեզ վերջին օրերի կեղծ վարդապետություններից . .	59
12 Հոգևոր վերածննդի մեր կարիքը	65
13 Մկրտության ուխտը, Հանգստության օրը և հաղորդությունը	71
14 Աստծո ազատման զորությունը	76
15 Գործիքներ դառնալով Աստծո ձեռքում	81
16 Ապաշխարություն և մկրտություն	87
17 Խոսքի զորությունը	92
18 Նախապատրաստվելով Դատաստանի Վերջին Օրվան	97
19 Պաշտպանել կրոնական ազատությունը	103
20 Ամրացնել մեր հավատքն ու վկայությունը	110
21 Հիսուս Քրիստոսի Գալուստը	116
22 «Ծիշտ ինչպես ես եմ»	120
23 Իսրայելի ցրումը և հավաքումը	124
24 Բոլորը հավասար են Աստծո համար	129
25 Այրել արդար ամբարշտության օրում	134
26 Հավատքի փորձությունից հետո	140
27 Հավատք, հույս և գթություն	145
28 Եկեք Քրիստոսի մոտ	151

Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը Ուսուցչի ձեռնարկի (Կրոն 275) նախաբան

Ի՞նչ է ակնկալվում կրոնի ուսուցչից:

Ուսուցմանը պատրաստվելիս կարևոր է հասկանալ Մեմփիսիայի և Կրոնի ինստիտուտի նպատակը:

«Մեր նպատակն է օգնել երիտասարդներին և երիտասարդ չափահասներին հասկանալ Հիսուս Քրիստոսի ուսմունքները և Քավությունը և ապավինել դրանց, արժանի լինել տաճարի օրհնություններին և պատրաստել իրենց, իրենց ընտանիքներին և մյուսներին՝ իրենց Երկնային Հոր հետ հավերժական կյանքին» (Ավետարանի ուսուցում և ուսանում. Մեմփիսիաների և Կրոնի Ինստիտուտների ուսուցիչների և ղեկավարների ձեռնարկ [2012], x):

Ջանասիրաբար ապրելով ավետարանով, ձեր ուսանողներին ավետարանն արդյունավետ ուսուցանելով և պատշաճ կերպով դասը կամ ծրագիրը մատուցելով, դուք կարող եք հասնել այդ նպատակին: Եթե դուք պատրաստվեք և ուսուցանեք ավետարանը այս եղանակներով, դուք կարժանանաք Սուրբ Հոգու ներգործությանը (տես ՎեՌ 42.14):

Դուք հնարավորություն կունենաք օգնելու ուսանողներին սովորել Հոգով, որպեսզի նրանք կարողանան ամրացնել իրենց հավատքն ու խորացնել իրենց դարձը: Կարող եք օգնել ուսանողներին ձեռք բերել այդ ամենը՝ օգնելով նրանց բացահայտել, հասկանալ, զգալ ճշմարտությունը և դրա կարևորությունը և կիրառել Հիսուս Քրիստոսի ավետարանի կարևոր վարդապետություններն ու սկզբունքները:

Ավետարանի ուսուցում և ուսանում ձեռնարկը կարևոր աղբյուր է ուսուցման գործընթացը հասկանալու և հաջողությամբ դասավանդելու համար:

Որո՞նք են այս դասընթացի նպատակները:

Ակնկալվում է, որ ինստիտուտի տարիքի շատ ուսանողներ նախկինում ուսումնասիրած կլինեն Մորմոնի Գիրքը հաջորդաբար՝ սկզբից մինչև վերջ սեմինարիայում, տանը կամ միսիայում: Այս դասընթացը՝ Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը (Կրոն 275), նախատեսված է ուսանողներին օգնելու այլ մոտեցում ցուցաբերել Մորմոնի Գրքի ուսումնասիրությանը: Այս դասընթացում գտնվող դասերը կենտրոնացնում

են հայտնի վարդապետական թեմաների վրա, որոնք շեշտվել են Մորմոնի Գրքի ոգեշնչված հեղինակների կողմից:

Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը (1899–1994) հրավիրել է Մորմոնի Գիրքն ընթերցողներին կենտրոնացնել իրենց ուշադրությունը դրանում պարունակվող վարդապետության վրա:



«Մորմոնի Գիրքը գրվել է մեր օրերի համար: ... Մենք ոչ միայն պետք է իմանանք, թե ինչ պատմական տվյալներ և հավատք առաջացնող պատմություններ է այն ընդգրկում, այլ մենք պետք է հասկանանք դրա ուսմունքները: Եթե մենք իսկապես կատարում ենք մեր տնային աշխատանքը և վարդապետորեն ենք մոտենում Մորմոնի Գրքին, մենք կարող ենք բացահայտել սխալները և գտնել ճշմարտությունները՝ պայքարելու մարդկանց ներկայիս բազմաթիվ կեղծ տեսակետների և փիլիսոփայությունների դեմ» ("Jesus Christ—Gifts and Expectations," *Ensign*, Dec. 1988, 4):

Այս դասընթացի միջոցով ուսանողները կուսումնասիրեն Մորմոնի Գրքում գտնվող մարգարեական գրությունները և ուսումնունքները, որոնք շեշտում են Երկնային Հոր ծրագիրը և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի առանցքային դերը: Ուսանողները ավելի լավ կհասկանան Մորմոնի Գիրքը որպես Հիսուս Քրիստոսի մասին ևս մեկ վկայություն և կխորացնեն իրենց սերը և վկայությունը Նրա մասին: Ուսանողները կբարելավեն ավետարանի վարդապետությունները սուրբգրքյան համատեքստում ուսումնասիրելու իրենց ունակությունը, որն առաջ է բերում ավելի մեծ հասկացողություն և անձնական աշակերտություն: Նրանք նախապատրաստված կլինեն բացատրելու և վկայելու Մորմոնի Գրքի կարևորության ու աստվածային ծագման և դրանում պարունակվող վարդապետության մասին:

Ի՞նչ է ակնկալվում ուսանողներից:

Ինստիտուտի ավարտական վկայական ստանալու համար ուսանողները պետք է կարդան յուրաքանչյուր դասի սուրբ գրությունների հատվածները, գերազույն համաժողովի ելույթները և Ուսանողի ընթերցարան բաժնում տրված այլ նյութերը: Ուսանողները պետք է նաև բավարարեն հաճախելիության պահանջները և քննություն հանձնելիս բանիմացություն ցուցաբերեն ուսումնական նյութի վերաբերյալ:

Ինչպե՞ս են դասերը կառուցված այս ձեռնարկում:

Այս դասընթացը նախատեսված է մեկ կիսամյակի համար և բաղկացած է 28 դասից՝ գրված 50-րդականոց դասաժամի համար: Եթե ձեր դասարանը հանդիպում է շաբաթը երկու անգամ, յուրաքանչյուր դասաժամին ուսուցանեք մեկ դաս: Եթե ձեր դասարանը հանդիպում է շաբաթը մեկ անգամ 90-100 րոպեով, յուրաքանչյուր դասաժամի համար միացրեք և ուսուցանեք երկու դաս: Յուրաքանչյուր դասը բաղկացած է չորս բաժնից:

- Նախաբան
- Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ուսուցման առաջարկներ
- Ուսանողի ընթերցարան

Նախաբան

Այս բաժինը հակիրճ ներկայացնում է դասի թեմաները և նպատակները:

Ընթերցանության օժանդակ նյութեր

Այս բաժինը առաջարկում է օժանդակ նյութեր, օրինակ՝ մեր օրերի մարգարեների և Եկեղեցու այլ ղեկավարների ուղերձներ, որոնք կօգնեն ձեզ ավելի խորը հասկանալ դասի ծրագրում ընդգրկված վարդապետությունները, սկզբունքները և ավետարանի ճշմարտությունները:

Ուսուցման առաջարկներ

Ուսուցման առաջարկներ բաժնում տրված են նյութեր, որոնք կօգնեն ձեզ իմանալ՝ *ինչ* ուսուցանել և *ինչպես* ուսուցանել (տես նաև բաժիններ՝ 4.3.3 և 4.3.4, *Ավետարանի ուսուցում և ուսանում* ձեռնարկում): Առաջարկվող ուսումնական վարժությունները նախատեսված են օգնելու ուսանողներին բացահայտել, հասկանալ և կիրառել սրբազան ճշմարտությունները: Կարող եք օգտագործել առաջարկություններից մի քանիսը կամ բոլորը՝ դրանք համապատասխանեցնելով ուսուցման ձեր անհատական ոճին և բավարարելով ձեր ուսանողների կարիքներն ու պայմանները: Ուսումնական նյութերը հարմարեցնելու համար հետևեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Հ. Օուքսի հետևյալ խորհրդին:



«Նախագահ Փաքերը հաճախ է իմ ներկայությամբ ուսուցանել, որ նախ մենք ընդունում ենք, ապա հարմարեցնում: Եթե մենք խորապես ուսումնասիրում ենք տվյալ դասը, որը պետք է մատուցենք, ուրեմն կարող ենք հետևել Հոգուն այն հարմարեցնելու համար: Երբ մենք խոսում ենք այս ճկունության մասին, երբեմն գայթակղվում ենք սկսել հարմարեցնելուց և ոչ թե ընդունելուց: Սա հավասարակշռություն է: Սա մշտական խնդիր է: Սակայն նախ ընդունելու և ապա հարմարեցնելու մոտեցումը լավ եղանակ է ամուր հիմքի վրա կանգնելու համար» ("A Panel Discussion with Elder Dallin H. Oaks" [Seminaries and Institutes of Religion Satellite Broadcast, Aug. 7, 2012]; si.lds.org):

Այս դասընթացը ներառում է Եկեղեցու ղեկավարների ելույթներ, որոնք հավանաբար մատչելի են բազմաթիվ լեզուներով: Ուսուցմանը պատրաստվելիս դուք կարող եք հարմարեցնել դասերը, օգտագործելով Եկեղեցու ղեկավարների այլ մատչելի ելույթներ, որոնք համապատասխանում են դասի թեմային:

Ուսուցման առաջարկներ մասը պարունակում է թավ տառերով տպված առնվազն մեկ վարդապետություն կամ սկզբունք: Երբ ուսանողները բացահայտում են վարդապետություններն ու սկզբունքները և կիսվում իրենց սովորածով, նրանք միգուցե այլ կերպ շարադրեն ձեռնարկում տրված ձևակերպումը: Նման դեպքերում ուշադիր եղեք, որ նրանց

պատասխանները սխալ չհամարեք: Սակայն, եթե արտահայտված միտքը կարող էր ավելի ճշգրիտ լինել, զգուշորեն օգնեք պարզաբանել այն:

Այս ուսումնական ծրագիրը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է ավետարանն ուսուցանելու և ուսանելու հիմունքները ներառել թեմատիկ դասընթացի մեջ (տես *Gospel Teaching and Learning*, 10, 23–31, 38–41):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը նկարագրել է ավետարանը թեմաներով ուսումնասիրելու առավելություններից մի քանիսը.



«Մինչ սուրբ գրությունները սկզբից մինչև վերջ կարդալը տալիս է հիմնական ընդհանուր գիտելիքներ, թեմատիկ ուսումնասիրությունը խորացնում է մեր գիտելիքները: Հայտնությունների մեջ կապեր, օրինաչափություններ և թեմաներ փնտրելը կառուցում է ավելացնում է մեր հոգևոր գիտելիքը ... այն մեծացնում է մեր հեռանկարը և փրկության ծրագրի մեր հասկացողությունը:

Իմ կարծիքով, կապեր, օրինաչափություններ և թեմաներ գտնելու համար ջանասիրաբար ուսումնասիրելը մի մասն է այն գործընթացի, որն անվանում ենք «սնվել»՝ Քրիստոսի խոսքերով: Այս մոտեցումը կարող է հոգևոր օրհնության մեծ դռներ բացել մեզ համար, Նրա Հոգու միջոցով լուսավորել մեր հասկացողությունը, սուրբ գրությունների հանդեպ խորը երախտագիտություն առաջ բերել և հոգևոր պարտավորվածության այնպիսի աստիճան զարգացնել, որ հնարավոր չէ ձեռք բերել մեկ այլ միջոցով: Նման որոնումը մեզ հնարավորություն է տալիս կառուցել մեր Քավիչի վեմի վրա և դիմակայել ամբարշտության քամիներին այս վերջին օրերում» (*“A Reservoir of Living Water”* [Brigham Young University fireside, Feb. 4, 2007], 3, speeches.byu.edu):

Ուսանողի ընթերցարան

Այս մասում թվարկվում են սուրբ գրությունների հատվածներ, Եկեղեցու գերագույն իշխանավորների ելույթներ և այլ նյութեր, որոնք կխորացնեն տվյալ դասի թեմայի վերաբերյալ ուսանողի հասկացողությունը: Հանձնարարեք և խրախուսեք ուսանողներին նախքան դասին ներկայանալը ընթերցել այդ նյութերը: Այդ ոգեշնչված նյութերն ուսումնասիրելով նրանք ոչ միայն ավելի լավ կնախապատրաստվեն դասարանային քննարկումներին, այլև առավել խորը պատկերացում կկազմեն ուսումնական թեմաների վերաբերյալ: Կիսամյակի սկզբում ուսանողներին տվեք Ուսանողի ընթերցարանի ողջ ցուցակը:

Ինչպե՞ս կարող եմ նախապատրաստվել ուսուցմանը:

Տերը կօգնի ձեզ՝ մինչ կնախապատրաստվեք ուսուցմանը:

Պատրաստվելու ժամանակ օգտակար կլինի, եթե հետևյալ հարցերը տաք ինքներդ ձեզ.

- Արդյո՞ք ես ձգտում եմ ապրել ավետարանով, որպեսզի ընկալունակ լինեմ Հոգուն իմ նախապատրաստությունների և ուսուցման ընթացքում:
- Աղոթե՞լ եմ Սուրբ Հոգու առաջնորդությունը ստանալու համար: (Տես ՎնՈւ 42.14:)

- Արդյոք ուսումնասիրել՞ էմ հանձնարարված սուրբ գրությունների հատվածները և ընթերցանության օժանդակ նյութերը:
- Կարդացել՞ էմ ծրագիրը և գտել, թե արդյոք կան բաներ, որոնք պետք է հարմարեցնեմ կամ համապատասխանեցնեմ իմ ուսանողների կարիքներին:
- Ինչպե՞ս կարող եմ հետևել ուսանողների ընթերցումներին՝ հավաստիանալով, որ ուսանողներն առավելագույնն են քաղում դրանից:
- Ինչպե՞ս կարող եմ օգնել իմ ուսանողներից յուրաքանչյուրին լիարժեք մասնակցություն ունենալ դասին:

Հետևյալ առաջարկները նույնպես կարող են օգտակար լինել.

- Խրախուսեք ուսանողներին յուրաքանչյուր դասից առաջ կարդալ հանձնարարված սուրբ գրությունների հատվածները և հոդվածները:
- Ակնկալվում է, որ ուսանողները կկատարեն իրենց դերը որպես սովորողներ:
- Ուսանողներին հաճախակի հնարավորություն տվեք իրենց խոսքերով բացատրել վարդապետությունները և սկզբունքները, կիսվել համապատասխան փորձով և վկայել այն մասին, ինչ գիտեն և զգում են:
- Օրեցօր փոփոխեք ուսումնական վարժությունները և մոտեցումները յուրաքանչյուր դասի համար:
- Ստեղծեք ուսանելու մթնոլորտ, որը կհրավիրի Հոգին և որտեղ ուսանողները միմյանց սովորեցնելու և իրարից սովորելու հնարավորություն և պատասխանատվություն կունենան (տես ՎևՈւ 88.78, 122):
- Դասընթացի ընթացքում դուք կգտնեք սուրբ գրությունների ուսումնասիրության որոշ հմտությունների հղումներ: Օգտվեք այս հնարավորություններից՝ օգնելու համար ուսանողներին դառնալ ավելի ինքնավստահ սուրբ գրությունների իրենց ուսումնասիրության մեջ և ավելի նվիրված՝ ողջ կյանքում սուրբ գրություններից սովորելուն:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ուսուցանել է.



«Հավաստիացեք, որ կա բավարար մասնակցություն, որովհետև ուսանողի կողմից կիրառվող ազատ կամքը թույլ է տալիս, որ Սուրբ Հոգին ուսուցանի: ... Երբ ուսանողները կիսվում են ճշմարտություններով, այդ ճշմարտությունները հաստատվում են նրանց հոգում և ամրապնդում նրանց վկայությունը» ("To Understand and Live Truth" [evening with Elder Richard G. Scott, Feb. 4, 2005], 3; si.lds.org):

Ինչպե՞ս կարող եմ հարմարեցնել դասերը հաշմանդամ ուսանողների համար:

Ուսուցմանը պատրաստվելիս հաշվի առեք հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին: Հարմարեցրեք վարժությունները և սպասելիքները, որպեսզի օգնեք նրանց հաջողության հասնել: Փնտրեք ուղիներ, որպեսզի օգնեք նրանց զգալ սիրված, ընդունված և ներառված: Ձեր հարաբերություններում զարգացրեք վստահություն:

Լրացուցիչ մտքերի և աղբյուրների համար օգտվեք disabilities.lds.org կայքի Հաշմանդամության ռեսուրսներ էջից և Սեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների քաղաքականության ձեռնարկի «Հարմարեցված դասեր և ծրագրեր հաշմանդամ ուսանողների համար» բաժնից:

ԴԱՍ 1

Մորմոնի Գիրքը և մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին

Նախաբան

Նրանք, ովքեր ուսումնասիրում են Մորմոնի Գրքի ուսմունքներն ու վարդապետությունը, կիմանան, որ Հիսուսը Քրիստոսն է: Այս դասի ընթացքում ուսանողները կսովորեն, որ գրքի հեղինակների մեծ մասը իրենց իսկ աչքերով տեսել են Աստծո Որդուն և որ նրանց խոսքերն

օգնում են խորացնել մեր հասկացողությունը և վկայությունը Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Gordon B. Hinckley, “A Testimony Vibrant and True,” *Ensign*, Aug. 2005, 2–6.
- «Մորմոնի Գիրքը՝ մեր կրոնի պորտաքարը», գլուխ 9, *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն* (2014), 151–163):

Ուսուցման առաջարկներ

1 Նեփի 13.40, 2 Նեփի 25.17–18, Ալմա 33.22–23

Մորմոնի Գիրքը վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին:

Ցուցադրեք Մարգարե Զոգեֆ Սմիթի (1805–1844) հետևյալ խոսքերը և խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ այն.



«Ես ասացի եղբայրներին, որ Մորմոնի Գիրքն ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից և մեր կրոնի պորտաքարն է, և ապրելով ըստ դրա ցուցումների, մարդ ավելի շատ կմոտենա Աստծուն, քան ըստ որևէ այլ գրքի ցուցումների» (Մորմոնի Գրքի նախաբանը):

- Մորմոնի Գրքի մասին Մարգարեի ո՞ր հայտարարության վերաբերյալ դուք ունեք վկայություն և ինչո՞ւ:
- Ինչպե՞ս է Մարգարեի հայտարարությունը մեծացնում Մորմոնի Գիրքն ուսումնասիրելու ձեր մղումը:

Հրավիրեք ուսանողներին իրենց սուրբ գրություններում ընդգծել այս հայտարարությունը, որը գտնվում է Մորմոնի Գրքի նախաբանի վեցերորդ պարբերությունում, և խորհուրդ տվեք, որ դրա կողքին նշեն 1 Նեփի 13.40 և 2 Նեփի 25.17–18 հոդումները: (Նշում. Հոդումներ կատարելը սուրբ գրություններն ուսումնասիրելու հմտություն է, որը դուք կարող եք ընտրել

շեշտել այս դասընթացի ժամանակ: Երբ ուսանողներն ամրապնդում են սուրբ գրություններն ուսումնասիրելու իրենց հմտությունները, նրանք դառնում են հոգևորապես ավելի ինքնավստահ:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 1 Նեփի 13.40 և 2 Նեփի 25.17–18 հատվածները, մինչ դասարանը կփնտրի Մորմոնի Գրքի հիմնական նպատակը:

- Ըստ այդ հատվածների, ո՞րն է Մորմոնի Գրքի հիմնական նպատակներից մեկը: (Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալ ճշմարտությունը. **Աստված վերջին օրերում առաջ բերեց Մորմոնի Գիրքը, որպեսզի համոզի բոլոր մարդկանց, որ Հիսուսը Քրիստոսն է:** [Տես նաև Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը:])
- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը համոզում մարդկանց, որ Հիսուսը Քրիստոսն է:

Յուզադրեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի (1899–1994) հետևյալ խոսքերը և հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ դրանք.



«Այսօր Քրիստոնյա աշխարհի մեծ մասը հերքում է Փրկչի աստվածային բնույթը: Նրանք կասկածի տակ են դնում Նրա զարմանահրաշ ծնունդը, Նրա կատարյալ կյանքը և Նրա փառահեղ հարության իսկությունը: Մորմոնի Գիրքը պարզ և անսխալ ձևով է ուսուցանում այդ ամենի մասին: Այն տալիս է նաև Բավության վարդապետության առավել ամբողջական բացատրությունը: Իսկապես, աստվածայնորեն ոգեշնչված այդ գիրքը պորտաքար է՝ աշխարհին Հիսուս Քրիստոսի մասին վկայություն բերելու գործում» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն [2014], 157):

- Հիսուս Քրիստոսի կյանքի և ծառայության վերաբերյալ ի՞նչ իրական փաստեր են հաստատվում Մորմոնի Գրքում:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը.



«Ես բազմիցս կարդացել եմ [Մորմոնի Գիրքը]: Ես նաև շատ եմ կարդացել, թե ինչ են գրել դրա մասին: Որոշ հեղինակներ կենտրոնացել են պատմությունների, մարդկանց կամ պատմական դրվագների վրա: Ոմանց էլ հետաքրքրել են գրքի լեզվաբանական ոճը կամ գեղեցիկ, աշխարհագրության, կենդանական աշխարհի, շինարարական հմտությունների կամ կշռի և չափման համակարգերի մասին տվյալները:

Որքան էլ հետաքրքրական լինեն այդ մանրուքները, Մորմոնի Գրքի ուսումնասիրությունից շատ բան կարելի է քաղել, եթե կենտրոնանալ դրա *հիմնական* նպատակի վրա. այն վկայում է Հիսուս Քրիստոսի մասին: Համեմատական կարգով կարող ենք ասել, որ մնացած բոլոր տվյալները լրացուցիչ են:

Երբ դուք կարդում եք Մորմոնի Գիրքը, ձեր ուշադրությունը կենտրոնացրեք Հիսուս Քրիստոսի՝ Կենդանի Աստծո Որդու՝ գրքի կարևոր հերոսի վրա, սկսած առաջին իսկ գլխից մինչև վերջին գլուխը» (“A Testimony of the Book of Mormon,” *Ensign*, Nov. 1999, 69):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է առավել կարևոր Մորմոնի Գրքի բոլոր ուղերձներից կենտրոնական Հիսուս Քրիստոսի մասին ուղերձի վրա:

Բացատրեք ուսանողներին, որ երբ Ալմա մարգարեն գործադրեց իրենց ուսուցանեց Փրկիչի ծառայության մասին (տես Ալմա 33.22), նա հրավիրեց իրեն լսողներին սերմանել Աստծո խոսքը իրենց սրտերում, որպեսզի այն կարողանա աճել: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 33.22-23 հատվածները և գտնել ճշմարտությունները, որոնք Ալման խրախուսեց իր խոսքերը կարդացողներին «սերմանել» իրենց սրտերում:

- Ո՞րն էր այն ուղերձը, որն Ալման ցանկանում էր, որ իրեն լսողները սերմանեին իրենց սրտերում:
- Ի՞նչ հետևանքներ Ալման խոստացավ, եթե նրանք սերմանեին և սնուցեին Հիսուս Քրիստոսի վերաբերյալ այս համոզմունքները: (Նրանց վկայությունները կտանեին «դեպի հավիտենական կյանք», նրանց բեռները կթեթևանային:)
- Ինչպե՞ս է Մորմոնի Գրքի ուսումնասիրությունն օգնել ձեզ ստանալ Ալմայի նկարագրած օրհնությունները:

1 Նեփի 6.4; 2 Նեփի 11.2–3, Հակոբ 1.7–8, Մորմոն 1.15, 3.20–22, Եթեր 12.38–39, 41

Մորմոնի Գրքի հեղինակներն անձամբ տեսել էին Հիսուս Քրիստոսին

Բացատրեք, որ Մորմոնի Գիրքը մեծամասամբ գրվել է չորս գլխավոր հեղինակների կողմից. Նեփի, Հակոբ, Մորմոն և Մորոնի: (Բացառություն են կազմում Ենոկսի, Հարումի և Օմնիի գրքերը:)

Հետևյալ աղյուսակը փակցրեք գրատախտակին. Օգնելու համար ուսանողներին սովորել այս գլխավոր չորս հեղինակների մասին, հրավիրեք նրանց ընտրել և մտքում կարդալ հետևյալ հատվածներից մեկը: Խնդրեք նրանց փնտրել, թե ինչն է հեղինակին դարձնում Հիսուս Քրիստոսի զորեղ վկա:

Հեղինակ	Փորձ
1. Նեփի	2 Նեփի 11.2
2. Հակոբ	2 Նեփի 11.3
3. Մորմոն	Մորմոն 1.15
4. Մորոնի	Եթեր 12.38-39

Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչ սովորեցին այս չորս հատվածներից յուրաքանչյուրից: Այնուհետև հարցրեք.

- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ Մորմոնի Գրքի հեղինակների մեծ մասը անձամբ տեսել էին Հիսուս Քրիստոսին: (Մինչ դուք կքննարկեք այս հարցը, օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալ ճշմարտությունը. **Ուսումնասիրելով Մորմոնի Գիրքը մենք սովորում ենք Հիսուս Քրիստոսի և Նրա առաքելության մասին նրանցից, ովքեր տեսել էին և գիտեին Նրան:** Դուք կարող եք շեշտել, որ Մորմոնի Գրքը թարգմանողը՝ Ջոզեֆ Սմիթը, նույնպես անձամբ տեսել է Հիսուսը Քրիստոսին:

Գրատախտակին ավելացրեք երրորդ սյունակը հետևյալ կերպ.

Հեղինակ	Փորձ	Նպատակ
1. Նեփի	2 Նեփի 11.2	1 Նեփի 6.4
2. Հակոբ	2 Նեփի 11.3	Հակոբ 1.7–8
3. Մորմոն	Մորմոն 1.15	Մորմոն 3.20-22
4. Մորոնի	Եթեր 12.38-39	Եթեր 12.41

Հրավիրեք յուրաքանչյուր ուսանողի մտքում կարդալ երրորդ սյունակի հատվածներից մեկը, փնտրելով պատճառները, թե ինչու է յուրաքանչյուր հեղինակ գրի առել իր ուղերձը:

- Ինչո՞ւ էին Մորմոնի Գրքի այս հեղինակները գրի առնում իրենց ուղերձները:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էին այս հեղինակներն այդքան վճռական, երբ հրավիրում էին ուրիշներին գալ Քրիստոսի մոտ:
- Ինչպե՞ս են Քրիստոսի մոտ գալու նրանց հրավերները վերաբերում անձամբ ձեզ: Ի՞նչ մտքեր և զգացողություններ եք ունենում, երբ խորհում եք այս հրավերների շուրջ:

2 Նեփի 33.1–2, 4–5, 10–11

Մորմոնի Գիրքն օգնում է մեզ հավատալ Հիսուս Քրիստոսին:

Բացատրեք, որ մինչ անհամար անհատների կյանքը փոխվել է Մորմոնի Գրքի վերաբերյալ իրենց վկայությունների շնորհիվ, մյուսները պայքարում են դրա ճշմարտացիության և հավաստիության կասկածների դեմ:

- Ի՞նչ խորհուրդ կտաք, որպեսզի օգնեք մեկին ամրացնել կամ ձեռք բերել վկայություն Մորմոնի Գրքի վերաբերյալ:

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 33.1–2 հատվածները, մինչ դասարանը կբացահայտի զորությունը, որը թույլ է տալիս Մորմոնի Գրքի ուղերձը հասնի մարդու սրտին:

- Ըստ Նեփիի՝ ո՞ր գործությունը թույլ կտար, որ իր ուղերձը հասներ անհատի սրտին: (Սուրբ Հոգու գործությունը:)
- Ըստ Նեփիի, ի՞նչը կխանգարեր որոշ մարդկանց ստանալու Սուրբ Հոգին:

Հրավիրեք ուսանողներին սահմանել և քննարկել այս հատվածներում ուսուցանվող սկզբունքը: (Օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալ սկզբունքը. **Սուրբ Հոգին կարող է հասցնել Մորմոնի Գրքի ուղերձը մեր սրտերին այնքան ժամանակ, մինչ մենք չենք կարծրացնում մեր սրտերը Սուրբ Հոգու դեմ:** Կարող եք այդ սկզբունքը գրել գրատախտակին:)

Ժամանակ տրամադրեք, որպեսզի ուսանողներն ուսումնասիրեն 2 Նեփի 33.4-5 հատվածները, փնտրելով լրացուցիչ օրհնությունները, որոնք մենք կարող ենք ստանալ Մորմոնի Գիրքն ուսումնասիրելու արդյունքում: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտած նյութով:

Ցուցադրեք Յոթանասունից Երեց Լ. Ուիթնի Քլեյթոնի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Մենք պետք է ընտրենք բացել մեր սրտերը Փրկիչի աստվածային իրականության առաջ: ... Աստված չի ստիպում մեզ հավատալ: Դրա փոխարեն, նա հրավիրում է մեզ հավատալ, ուղարկելով կենդանի մարգարեներ և առաքյալներ՝ ուսուցանելու, տրամադրելով սուրբ գրություններ և նշան անելով մեզ Իր Հոգու միջոցով: ... Հավատալու որոշումը ամենակարևոր ընտրությունն է, որ մենք երբևէ կատարում ենք: Այն ազդում է մեր բոլոր այլ որոշումների վրա» («Ընտրիր հավատքը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2015, 38):

- Ինչպե՞ս կարող է Հիսուս Քրիստոսին հավատալու Մորմոնի Գրքի հեղինակների հրավերն ընդունելն ազդել մեր բոլոր այլ որոշումների վրա:

Շարունակեք, հրավիրելով ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ 2 Նեփի 33.10–11 հատվածները, մինչ դասարանը կփնտրի, թե ինչպես է Նեփին նկարագրում իր խոսքերին հավատալու և Հիսուս Քրիստոսին հավատալու միջև եղած կապը:

- Ըստ Նեփիի ի՞նչ կապ կա նրա խոսքերին հավատալու և Հիսուս Քրիստոսին հավատալու միջև:
- Ըստ Նեփիի նախազգուշացումների «վերջին օրը» ի՞նչ կպատահեր նրանց հետ, ովքեր կմերժեին իր խոսքերը:

Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց վկայություններով, թե ինչպես է Մորմոնի Գիրքն օգնել նրանց ավելի մոտենալ Հիսուս Քրիստոսին:

Ուսանողի ընթերցարան

- 1 Նեփի 6.4, 13.40, 2 Նեփի 11.2–3, 25.17–18, 33.1–2, 4–5, 10–11, Հակոբ 1.7–8, Ալֆա 33.22–23, Մորմոն 1.15, 3.20–22, Եթեր 12.38–39, 41:

- «Մորմոնի Գիրքը՝ մեր կրոնի պորտաքարը», գլուխ 9, *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները*. Էզրա Թաֆտ Բենսոն (2014), 151-163):

Հետևել մարգարեների խոսքերին

Նախաբան

Աստված կանչում է մարգարեներին, որպեսզի վկայեն Հիսուս Քրիստոսի մասին, քարոզեն ապաշխարություն և հրավիրեն բոլորին գալու Փրկիչի մոտ: Մորմոնի Գիրքն ուսուցանում է, որ նրանք, ովքեր հետևում են այս

մարգարեներին, օրհնվում են, իսկ նրանք, ովքեր հակառակվում են նրանց, ափսոսանք ու վիշտ են ապրում:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ռասսել Մ. Նելսոն, «Հաստատել մարգարեներին», *Ensign* կամ *Լիսինգ*, նոյ. 2014, 74–77:
- Կլաուդիո Ռ. Մ. Կոստա, «Հնազանդություն մարգարեներին», *Ensign* կամ *Լիսինգ*, նոյ. 2010, 11–13:
- Քերոլ Ֆ. Մակքոնկի, «Ապրենք մարգարեների խոսքերին համաձայն», *Ensign* կամ *Լիսինգ*, նոյ. 2014, 77–79:
- “Our Need for Living Prophets,” chapter 1 in *Teachings of the Living Prophets Student Manual* (Church Educational System manual, 2010), 4–13.

Ուսուցման առաջարկներ

1 Նեփի 1.4–15, 18, Մոսիա 11.20–25, 13.33–35

Մարգարեների դերը

Հարցրեք դասարանին.

- Ապրող մարգարեին հավատալու միջոցով ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցն տարբերվում մյուս հավատքներից:
- Ինչո՞ւ են ապրող մարգարեները նույնքան կարևոր այսօր, որքան եղել են աշխարհի պատմության այլ ժամանակաշրջաններում:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 1 Նեփի 1.4–15, 18 հատվածները, մինչ դասարանը կհետևի, որոնելով, թե ինչպես է Տերը կանչել և նախապատրաստել Լեքիին լինելու մարգարե:

- Ի՞նչ փորձառություն ունեցավ Լեքին, որը նախապատրաստեց նրան լինելու մարգարե: (Նա վկայություն ստացավ Հիսուս Քրիստոսի մասին, և նա նախապես տեսավ ամբարիշտների կործանումը և ողորմածությունը, որ շնորհվեց նրանց, ովքեր եկան Աստծո մոտ:)
- Ինչո՞ւ է Երուսաղեմի ժողովուրդն ուներ Լեքիի նման մարգարեների կարիքը: (Երբ ուսանողները պատասխանեն, հավաստիացեք, որ նշում

Են հետևյալ ճշմարտությունը. Աստված կանչում է մարգարեներ և հայտնում է Իր կամքը նրանց միջոցով:)

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Նախագահ Ջոն Թեյլորի (1808-87) հետևյալ խոսքերը.



«Մեզ անհրաժեշտ է կենդանի ծառ, կենդանի աղբյուր, կենդանի բանականություն, որը երկրի կենդանի քահանայության միջոցով սկիզբ է առնում երկնքի կենդանի քահանայությունից: ... Եվ այն ժամանակներից ի վեր, ինչ Ադամն առաջին անգամ ստացավ Աստծո խոսքը, մինչև այն ժամանակը, երբ Հովհաննեսը Աստծո խոսքը ստացավ Պատմոս կղզում կամ Ջոզեֆ Սմիթին բացվեցին երկինքները, մշտապես կարիք է եղել նոր հայտնությունների, որոնք հարմարեցված են եղել այն յուրահատուկ հանգամանքներին, որոնց մեջ հայտնվել են եկեղեցիները կամ անհատները:

Ադամի հայտնությունը չի հրահանգել Նոյին կառուցելու իր տապանը, ոչ էլ Նոյի հայտնությունն է ասել 'Ղովտին' թողնելու Սողոմոն, ոչ էլ դրանցից որևէ մեկում խոսվել է Եգիպտոսից Իսրայելի զավակների հեռանալու մասին: Նրանք բոլորն էլ հայտնություններ են ստացել իրենց իսկ համար, ինչպես Նաև Եսայիան, Երեմիան, Եզեկիելը, Հիսուսը, Պետրոսը, Պողոսը, Հովհաննեսը և Ջոզեֆը: Այդպես էլ պետք է լինի մեր օրերում» (*Teachings of Presidents of the Church: John Taylor* [2001], 158):

- Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ այսօր Տերը շարունակում է հայտնել Իր կամքը ապրող մարգարեների միջոցով:
- Ինչպե՞ս կարող է Մորմոնի Գրքի մարգարեների դերն ուսումնասիրելն օգնել մեզ մեր օրերում:

Հետևյալ հղումները գրեք գրատախտակին.

Մոսիա 11.20–25

Մոսիա 13.33–35

Բացատրեք, որ մինչդեռ մարգարեները հղում են իրենց ժամանակներից հատուկ բազմաթիվ ուղերձներ, կան ուղերձներ, որոնք հղել են բոլոր մարգարեները: Հրավիրեք ուսանողներին գտնել նման երկու ուղերձներ, մինչ նրանք լուծ կկարդան գրատախտակին տրված հաստատումները: Ուսանողներին խնդրեք իրենց սուրբ գրություններում ընդգծել կարևորագույն ուղերձը, որը յուրաքանչյուր հատվածում տրվել է Աբիմադի մարգարեի միջոցով: (*Նշում.* Սուրբ գրություններն ընդգծելը սուրբ գրություններն ուսումնասիրելու հմտություն է, որը դուք կարող եք սովորեցնել այս դասընթացի ընթացքում:)

Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով և ամփոփել այն՝ շեշտելով այս վարդապետությունը. **Բոլոր մարգարեները հայտարարում են ապաշխարություն և վկայում են Հիսուս Քրիստոսի մասին:**

Հրավիրեք ուսանողներին Մորմոնի Գրքում գտնել օրինակ, երբ մարգարեները հայտարարում է ապաշխարություն կամ վկայում է Հիսուս

Քրիստոսի մասին: (Ապաշխարություն են հայտարարել Եսայիան 2 Նեփի 16.9–11-ում, Հակոբը Հակոբ 2–3-ում, Աբինադին Մոսիա 11–12-ում, Սամուելը Հելաման 13–16-ում և Մորմոնը Մորմոն 3-ում: Հիսուս Քրիստոսի մասին ուսուցանել են Նեփին 1 Նեփի 19 և 2 Նեփի 25-ում, Ալման Ալմա 7-ում և Մորմոնը Մորմոն 7-ում:) Հրավիրեք ուսանողներին իրենց օրինակներով կիսվել դասարանի հետ:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են մարգարեները շարունակ հայտարարում ապաշխարություն և վկայում Հիսուս Քրիստոսի մասին:
- Ինչպե՞ս է այս ուղերձներին ականջ դնելն օգնում մեզ փրկություն ձեռք բերել:

Հելաման 13.24–33, 3 Նեփի 8.24–25, 9.10–11

Աստծո մարգարեներին մերժելը առաջ է բերում զոջում

Ցուցադրեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի (1899–1994) հետևյալ խոսքերը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Երբ մարգարեն մատնացույց է անում աշխարհի մեղքերը, աշխարհիկ մարդիկ կա՛մ ուզում են փակել մարգարեի բերանը, կա՛մ գործում կարծես մարգարեն գոյություն չունի, փոխարեն ապաշխարեն իրենց մեղքերից: Ժողովրդականությունը երբեք ճշմարտության ստուգարք չէ: ... Մինչ մենք մոտենում ենք Տիրոջ երկրորդ գալուստին, դուք կարող եք ակնկալել, որ երբ մարդիկ ավելի ամբարիշտ դառնան, մարգարեն ավելի քիչ ժողովրդականություն կվայելի նրանց մոտ» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները.)
Էզրա Թաֆտ Բենսոն [2014], 183):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են որոշ մարդիկ թերանում հետևելու մարգարեի խոսքերին:

Հրավիրեք դասարանին մտքում ուսումնասիրել Սամուել մարգարեի խոսքերը Հելաման 13.24–29-ում, փնտրելով պատճառները, թե ինչու են մարդիկ մերժում մարգարեական նախագգույնացումները: Դուք կարող եք կրկին խրախուսել ուսանողներին, որ նշեն այն, ինչ գտնում են:

- Ըստ Սամուելի, ինչո՞ւ էին նեփիացիները մերժում Աստծո մարգարեներին:
- Չնայած մենք չենք անարգում կամ սպանում մարգարեներին, ինչպե՞ս կարող են այս հատվածները որպես նախագգույնացում ծառայել մեզ համար այսօր:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Հելաման 13.30–33 հատվածները, մինչ դասարանը փնտրում է հետևանքները, որոնց մասին մարգարեացավ Սամուել Լամանացին, որ պետք է գային նրանց վրա, ովքեր մերժում էին մարգարեի խոսքերը: Ապա հրավիրեք դասարանին կարդալ այս մարգարեության իրականացումը 3 Նեփի 8.24–25, 9.10–11 հատվածներում:

- Ի՞նչ ճշմարտություն կարող ենք սովորել այս հատվածներից:
(Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալ սկզբունքը. **Եթե մենք մերժենք Տիրոջ մարգարեների խոսքերը, մենք կունենանք վիշտ ու թախիծ:** [Տես նաև 3 Նեփի 28.34:])

Մի ուսանողի հրավիրեք կարդալ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի հետևյալ խոսքերը.



«Եթե մենք ուզում ենք իմանալ, թե որքանով ենք մոտիկ կանգնած Տիրոջը, ապա պետք է հարցնենք ինքներս մեզ, թե որքանով ենք մոտիկ կանգնած Նրա մահկանացու հրամանատարին. թե որքանով է մոտ մեր կյանքը ներդաշնակ Տիրոջ օծյալի՝ ապրող մարգարեի՝ Եկեղեցու Նախագահին, և Առաջին Նախագահության Զվիրուծին» (Ուսմունքներ. Էզրա Թաֆտ Բենսոն, 181):

«Երբ մարգարեն խոսում է այն, ինչ անհրաժեշտ է մեզ, բայց երբ մենք նախընտրում ենք չլսել, կրա խոսքի մեր արձագանքը դառնում է մեր հավատարմության ստուգարքը» (Ուսմունքներ. Էզրա Թաֆտ Բենսոն, 183):

- Ինչպե՞ս են Նախագահ Բենսոնի խոսքերն օգնում ձեզ լինելու ավելի ջանասեր՝ ապրող մարգարեի խորհրդին հետևելու մեջ:
- Ըստ ձեզ, մարգարեների ուղերձներից որո՞նք են ամենակարևորները Վերջին Օրերի Սրբերի համար այսօր:

Մոսիա 15.10–13, 3 Նեփի 10.12, 12.1–2, Եթեր 7.23–27

Աստծո մարգարեներին հետևելը օրհնություններ է բերում:

Ասացեք ուսանողներին, որ Աբինադի մարգարեն ուսուցանեց Նոյ թագավորին և նրա ամբարիշտ քահանաներին մարգարեների խոսքերին հետևելու կարևորության մասին: Ուսանողներից մեկին խնդրեք կարդալ Մոսիա 15.10–13 հատվածները, մինչ դասարանը խորհում է, թե ինչպես ամփոփել այդ հատվածները որպես սկզբունքի մի դրույթ:

- Ինչպե՞ս կարտահայտեք Աբինադի խոսքերը որպես սկզբունքի մի պարզ դրույթ: (Ուսանողները կարող են ամփոփել այս հատվածը հետևյալ կերպ. **Նրանք, ովքեր ականջ են դնում մարգարեների խոսքերին, հավատում են Հիսուս Քրիստոսի փրկագնող գործությանը և ապաշխարում են իրենց մեղքերը, Աստծո արքայության ժառանգներն են:**)

Ուսանողներին խնդրեք մտածել Մորմոնի Գրքից հավատարիմ անհատների կամ մարդկանց խմբերի օրինակների մասին, ովքեր օրհնվել են մարգարեների խոսքերին հետևելով: Որոշ օրինակներ կարող են ներառել հետևյալը. Լեքիի ընտանիքը խուսափեց կործանումից՝ հետևելով Երուսաղեմից հեռանալու խորհրդին (2 Նեփի 1.4), Ալմա Ավագը ականջ դրեց Աբինադի խոսքերին և կարողացավ ուսուցանել շատ մարդկանց (Մոսիա 17.1–4, 18.1–3), Մորմոնի զորապետի բանակն

իմացավ, թե ուր պետք է գնար, որպեսզի պաշտպանվեր լամանացիների բանակից՝ փնտրելով Ալմայի խորհուրդը (Ալմա 43.23–24):

Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները (մի ներառեք մուգ տառերով գրված սկզբունքները)։

3 Նեփի 10.12 (Աստծո մարգարեներին հետևելու արդյունքում ձեռք ենք բերում ապահովություն):

3 Նեփի 12.1–2 (Մարգարեները մեզ ուսուցանում են, թե ինչպես ստանալ մեր մեղքերին թողություն):

Եթեր 7.23–27 (Եթե մենք հետևենք մարգարեների խորհրդին և հիշենք Տիրոջը, Նա կօրհնի մեզ համաձայն մեր կարիքների):

Հանձնարարեք ուսանողներն կարդալ գրատախտակին տրված հատվածներից մեկը և ամփոփել իրենց կարդացածը որպես սկզբունքի մի դրույթ։ Երբ ուսանողները կիսվեն իրենց ձևակերպումներով, կարող եք յուրաքանչյուր հղման կողքին գրել սկզբունքի առաջարկվող ձևակերպումը։

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ մարգարեներին հետևելու արդյունքում տրվում են բազմաթիվ օրհնություններ, ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ս. Ռասսել Բալլարդի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք։



«Եղբայրներ և քույրեր, մեր մեջ մարգարե ունենալը փոքր բան չէ։ Մեծ և հրաշալի են այն օրհնությունները, որոնք մեր կյանք են գալիս, երբ մենք լսում ենք այն խոսքը, որը Տերը մեզ է տալիս Նրա միջոցով։ ... Երբ մենք լսում ենք Տիրոջ խորհուրդը՝ արտահայտված Եկեղեցու Նախագահի խոսքերի միջոցով, մեր արձագանքը պետք է լինի դրական և հստակ։ Պատմությունը ցույց է տվել, որ առկա է անվտանգություն, խաղաղություն, բարեկեցություն և երջանկություն, եթե մենք արձագանքում ենք մարգարեական խորհրդին» (“His Word Ye Shall Receive,” *Ensign*, May 2001, 65):

- Ե՞րբ եք դուք օրհնվել՝ դրական և հստակ արձագանք տալով մարգարեական ցուցումներին։
- Երբ դուք առաջ եք նայում դեպի ապագան, ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր մարգարեներ ունենալ երկրի վրա։

Խրախուսեք ուսանողներին խորհել, թե արդյոք իրենց գործողություններն ազդում են Տիրոջ մարգարեներին հավատարմորեն հետևելու իրենց ցանկության վրա։ Խնդրեք նրանց խորհել, թե ինչը նրանք կարիք կունենան փոխելու իրենց կյանքում, որպեսզի կարողանան ավելի լիարժեքորեն վայելել հավատարիմներին խոստացված օրհնությունները։

Ուսանողի ընթերցարան

- 1 Նեփի 1.4–15, 18, Մոսիա 11.20–25, 13.33–35, 15.10–13, Հելաման 13.24–33, 3 Նեփի 8.24–25, 9.10–11, 10.12, 12.1–2, Եթեր 7.23–27:
- Ռասսել Մ. Նելսոն, «Հաստատել մարգարեներին», *Ensign* կամ *Լիստոնա*, նոյ. 2014, 74–77:

Հնազանդությունը օրհնություններ է բերում

Նախաբան

Աստծո պատվիրաններին հնազանդվելը ուղիներից մեկն է, որով մենք ցույց ենք տալիս մեր երախտագիտությունը Նրա հրաշալի օրհնությունների համար: Փրկիչը հնազանդության կատարյալ օրինակ է: Հնազանդ լինելու

մեր ցանկությունը մեծանում է, երբ մեծանում է Աստծո հանդեպ մեր սերը: Պատվիրաններին հնազանդվելը հնարավոր է դարձնում, որ Աստված օգնի մեզ, երբ մենք փորձում ենք իրականացնել բարոյ խնդիրներ:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Թոմաս Ս. Մոնտոն, «Հնազանդությունը օրհնություններ է բերում», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2013, 89-92:
- Ռոբերտ Դ. Հեյլս, «Եթե ինձ սիրում էք, իմ պատուիրանքները պահեցե՛ք», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 35-38:

Ուսուցման առաջարկներ

1 Նեփի 2.2–4, 9–13, 16, 19–20, Մոսիա 2.20–24, 41

Մեր հնազանդության միջոցով մենք ցույց ենք տալիս մեր երախտագիտությունը Աստծո հանդեպ և ստանում ենք Նրա մեծագույն օրհնությունները:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Զվորումից Երեց Զոգեֆ Բ. Վիրթլինի (1917–1985) հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք:



«Ինչպե՞ս մենք կարող ենք երբևէ վճարել Փրկիչին ունեցած մեր պարտքը: Նա վճարեց պարտքը, որը Իրենը չէր, որպեսզի ազատեր մեզ պարտքից, որը մենք երբեք չէինք կարողանա վճարել: Նրա շնորհիվ մենք հավերժ կապրենք: Նրա անսահման քավության շնորհիվ մեր մեղքերը կարող են ջնջվել՝ թույլ տալով մեզ ունենալ Աստծո պարգևներից մեծագույնը՝ հավերժական կյանքը:

Կարո՞ղ է նման պարգևը գին ունենալ: Կարո՞ղ ենք մենք երբևէ փոխհատուցել նման պարգևի դիմաց» (“Earthly Debts, Heavenly Debts,” *Ensign* or *Liahona*, May 2004, 43):

Ուսանողներին տվեք մի քանի րոպե, որպեսզի քննարկեն Երեց Վիրթլինի տված վերջին հարցի հնարավոր պատասխանները: Խրախուսեք ուսանողներին դասի ընթացքում փնտրել սկզբունքներ և վարդապետություններ, որոնք կօգնեն պատասխանել այս հարցին:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 2.20-24 հատվածները: Խնդրեք նրանց փնտրել, թե ինչ ուսուցանեց Բենիամին թագավորն այն մասին, թե ինչպիսին մենք պետք է տեսնենք մեզ Աստծո մոտ:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Բենիամին թագավորն ուսուցանեց, որ անկախ այն ամենից, թե ինչ ենք մենք անում, մենք շարունակում ենք լինել «անպիտան ծառաներ» Աստծո համար:
- Չնայած մենք երբեք չենք կարող Աստծուն վճարել մեր պարտքը, ի՞նչ խորհուրդ են տալիս այս հատվածները, որ մենք կարող ենք անել, որպեսզի ցույց տանք մեր երախտագիտությունն այն ամենի համար, որ Նա արել է մեզ համար: (Օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալ սկզբունքը: **Երբ մենք գիտակցում ենք, որ ընդմիջտ պարտք ենք Աստծուն, մենք ցանկանում ենք ծառայել Նրան և պահել Նրա պատվիրանները:**)

Ասացեք ուսանողներին, որ Աստծո հանդեպ հնազանդության սուրբգրքյան հրաշալի պետություններից մեկը գտնվում է Մորմոնի Գրքի սկզբում, որում պատմվում է, թե ինչպես Լեքի մարգարեն և նրա ընտանիքն արձագանքեցին, երբ նրանց Աստված խնդրեց անել մի շատ դժվար բան: Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 2.2-4 հատվածները:

- Ինչո՞ւ էր Լեքիի ընտանիքի համար դժվար հնազանդվել Երուսաղեմից հեռանալու Աստծո պատվիրանին:

Ուսանողներին հրավիրեք ուսումնասիրել 1 Նեփի 2.9-13,16 հատվածները՝ փնտրելով Լամանի և Լեմուելի, ինչպես նաև Նեփիի վերաբերմունքի և վարքագծի միջև եղած տարբերությունները, թե ինչպես նրանք արձագանքեցին այս պատվիրանին: (Նշում. Այս վարժությունը կխրախուսի ուսանողներին կիրառել համեմատելու և հակադրելու սուրբ գրություններն ուսումնասիրելու հմտությունը:)

- Ո՞ր բառերն ու արտահայտություններն են նկարագրում Լամանի և Լեմուելի արձագանքը: (Նրանք խստապարանոց էին, նրանք տրտնջում էին և նրանք չգիտեին Աստծո գործերը:)
- Ինչպե՞ս Նեփին արձագանքեց Երուսաղեմից հեռանալու պատվիրանին: (Նա խոնարհ էր, նա ցանկացավ իմանալ Աստծո բաները, նա հավատաց իր հոր խոսքերին, ով մարգարե էր, և նա աղոթեց:)
- Ինչո՞ւ էր Նեփիի արձագանքն իր հոր ուղերձին տարբերվում իր եղբայրների արձագանքից:

Ուսանողներին ժամանակ տվեք, որպեսզի խորհեն, թե արդյոք նրանք ավելի նման են Լամանին և Լեմուելին, թե՞ Նեփիին, երբ Տերը կամ Նրա Եկեղեցու ղեկավարները խնդրում են անել մի դժվար բան:

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ 1 Նեփի 2.19-20 հատվածները: Դասարանին հանձնարարեք հետևել և գտնել Նեփիին տված Տիրոջ խոստումը:

- Այս հատվածների ո՞ր հայտարարությունն է ամփոփում Նեփիին տված Տիրոջ խոստումը: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են հետևյալ սկզբունքը. **Եթե մենք պահենք պատվիրանները, մենք կբարգավաճեք երկրի վրա:** Դուք կարող եք շեշտել, որ սա Մորմոնի Գրքի ամենահաճախակի կրկնվող թեմաներից մեկն է: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին, որ Մորմոնի Գիրքն ուսումնասիրելիս ուշադրություն դարձնեն բազմաթիվ օրինակներին, երբ այս թեման կրկնվում է:)
- Նեփիի ո՞ր հատկանիշներն է Տերը գովում: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր, որ մեզանից յուրաքանչյուրն ունենա այդ հատկանիշները Տիրոջ հետ հաղորդակցվելիս:
- Չնայած հնազանդությունը միշտ չէ, որ կհանգեցնի նյութական բարեկեցության, ի՞նչ օրհնություններ մենք կարող ենք ակնկալել Տիրոջը հնազանդվելու արդյունքում: (Որպեսզի օգնեք պատասխանել այս հարցին, կարող եք կարդալ Մոսիա 2.41-ը:)

2 Նեփի 31.6–10, 15–16, Մոսիա 15.7, 3 Նեփի 11.11, 12.19–20, 48

Փրկիչի հնազանդության օրինակին հետևելն օգնում է մեզ գալ Նրա և Հոր մոտ:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Զվորումից Երեց Ռոբերտ Դ. Հելյսի հետևյալ խոսքերը.



«Փրկիչի կյանքից սովորած բոլոր դասերից ոչ մեկն այնքան պարզ և զորավոր չէ, որքան հնազանդության դասը» («Եթե ինձ սիրում եք, իմ պատուիրանքները պահեցեք», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 35):

- Փրկիչի կյանքի ո՞ր օրինակներն են ներկայացնում Նրա հնազանդությունը:

Որպեսզի օգնեք ուսանողներին շարունակել այս հարցի քննարկումը, խնդրեք նրանց կարդալ Մոսիա 15.7 և 3 Նեփի 11.11 հատվածները, փնտրելով, թե ինչ էր հոժար անելու Հիսուսը՝ Իր Հոր կամքին հնազանդվելու համար:

Հրավիրեք ուսանողներին հերթով բարձրաձայն կարդալ 2 Նեփի 31.6–10, 15–16 հատվածները, մինչ դասարանի անդամները կփնտրեն, թե ինչ կարող ենք սովորել Փրկիչի օրինակից հնազանդվելու կարևորության և օրհնությունների մասին, որոնք բխում են հնազանդությունից:

- Ի՞նչ կարող ենք սովորել Փրկիչի օրինակից հնազանդվելու կարևորության մասին: Ի՞նչ կարող ենք սովորել Նրա օրինակից օրհնությունների մասին, որոնք բխում են հնազանդությունից: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են այս սկզբունքը. **Եթե մենք հետևենք Իր Հորը հնազանդվելու Փրկիչի օրինակին, մենք կմնանք նեղ ու անձուկ արահետի վրա, որը տանում է դեպի փրկություն:**)

Ցուցադրեք Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Հոգևորապես հասուն հնազանդությունը «Փրկիչի հնազանդությունն է»: Այն հիմնվում է Երկնային Հոր և Նրա Որդու հանդեպ անկեղծ սիրո վրա: ... Փրկիչի հանդեպ մեր սերը Փրկիչի նման հնազանդվելու բանալին է» («Եթե ինձ սիրում էք, իմ պատուիրանքները պահեցեք», 36–37):

- Ինչո՞ւ է Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ սերը «բանալի» հանդիսանում պատվիրաններին հնազանդվելու համար:

Շեշտեք, որ հարություն առած Հիսուս Քրիստոսը նեփիազիներին ուսուցանեց պատվիրաններին հնազանդվելու նպատակը: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 12.19–20, 48 հատվածները, որպեսզի բացահայտեն այդ նպատակները:

- Համաձայն այդ հատվածների, ի՞նչ ասաց Տերն այն մասին, թե ինչու էին մեզ տրվել պատվիրաններ: (Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալ սկզբունքը. **Երբ մենք գալիս ենք դեպի Քրիստոսը և պահում ենք պատվիրանները, մենք կարող ենք ավելի նմանվել Նրան ու մեր Երկնային Հորը, և մենք կփրկվենք:**)
- Ինչպե՞ս է ձեր հնազանդությունն օգնել ձեզ գալու Փրկիչի մոտ:

Ժամանակ տրամադրեք ուսանողներին, որպեսզի խորհեն, թե ինչ կարող են անել Երկնային Հոր պատվիրաններին ավելի հնազանդ լինելու համար, որպեսզի նրանք կարողանան ավելի շատ նմանվել Նրան և Նրա Որդուն:

1 Նեփի 3.4–7, 15–16, 4.1–2, 7.12, 17.1–31, 18.1–4

Տերն օգնում է նրանց, ովքեր հնազանդ են

Հրավիրեք ուսանողներին խորհել ժամանակների մասին, երբ Աստծո պատվիրաններից որևէ մեկը պահելը կամ Եկեղեցու կոչումը կամ հանձնարարություն կատարելը դժվար էր թվում: Հիշեցրեք ուսանողներին, որ Նեփին և նրա եղբայրները հանդիպեցին վտանգների և կանգնեցին մահվան վտանգի առջև, երբ Աստված պատվիրեց նրանց վերադառնալ Երուսաղեմ՝ վերցնելու արույրե թիթեղները: Ուսանողներին խնդրեք կարդալ 1 Նեփի 3.4–7 հատվածները և ներկայացնել սկզբունքը, որը նրանք սովորեցին Նեփիի օրինակից, որը կարող է մեծացնել հնազանդ լինելու նրանց ունակությունը:

- Ի՞նչ սկզբունք մենք կարող ենք սովորել Աստծո դժվար պատվիրանին տված Նեփիի արձագանքից: (Հետևյալ սկզբունքը գրեք գրատախտակին, երբ ուսանողները բացահայտեն այն. **Եթե մենք ձգտենք կատարել այն, ինչ Տերն է պատվիրում, Նա ուղի կպատրաստի մեզ համար՝ իրականացնելու այն:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այս սկզբունքը, գրատախտակին գրեք հետևյալ հղումները և ուսանողներին ժամանակ տրամադրեք ուսումնասիրելու դրանք, ուշադրություն դարձնելով, թե ինչպես արձագանքեց Նեփին, երբ փորձում էր իրականացնել բարդ բաներ, որոնք նրան պատվիրվել էր կատարել. 1 Նեփի 3.15–16, 4.1–2, 7.12 Երբ ուսանողները կիսվեն իրենց գտածով, բացատրեք, որ Նեփին ավելի ուշ նկարագրել է որոշ ուղիներ, որոնցով Տերն օգնում է նրանց, ովքեր պահում են Իր պատվիրանները: Խնդրեք ուսանողներին կարդալ 1 Նեփի 17.1–4 և գտնել ուղիները, որոնցով Տերն օգնում է մեզ: Նաև խնդրեք ուսանողներին ընդգծել Նեփիի «և այսպիսով, մենք տեսնում ենք» արտահայտությունը, որն օգտագործվում է Մորմոնի Գրքում նախապատրաստելու ընթերցողին հատուկ ուշադրություն դարձնել դրանց հետևող խոսքերի վրա:

Երբ ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, գրատախտակին գրեք հետևյալ բառերը.

Մնուցել

Ուժեղացրել

Ապահովել միջոցներ

Հրավիրեք ուսանողներին մի քանի ռոպեում աչքի անցկացնել 1 Նեփի 17.5–31, 18.1–4 հատվածները, փնտրելով օրինակներ, թե ինչպես է Տերը սնուցել, ուժեղացրել կամ ապահովել միջոցներ Լեքիի ընտանիքի համար:

- Ի՞նչ ուղիներով է Տերը կերակրել կամ ուժեղացրել Լեքիի ընտանիքին: Ինչպե՞ս է նա միջոցներ ապահովել, որպեսզի օգնել նրանց:
- Լեքիի ընտանիքին Տիրոջ կողմից տրված ո՞ր օրհնությունների կարիքն ունենք մենք այսօր:
- Ե՞րբ է Տերն օգնել ձեզ այս ուղիներից որևէ մեկի միջոցով, երբ ջանացել եք հնազանդվել Նրան:

Հիշեցրեք ուսանողներին, որ Տերը խնդրում է մեզ հնազանդ լինել, որպեսզի կարողանա տալ մեզ առատ օրհնություններ, երբ մենք ջանում ենք նմանվել Նրան: Կիսվեք Նախագահ Հարոլդ Բ. Լիի (1899–1973) հետևյալ խոսքերով.



«Աստծո բոլոր պատվիրաններից ամենակարևորն այն է, որը դուք ամենադժվարն եք պահում այսօր: ... Լուծեք դրա հետ կապված բոլոր խնդիրները, ապա անցեք հաջորդին, որն ամենադժվարն է պահել ձեզ համար: Դա է Աստծո պատվիրանները պահելու միջոցով ձեր անձերը սրբազործելու ուղին» (*Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* [2000], 30):

Հրավիրեք ուսանողներին մտածել մի պատվիրանի մասին, որին հնազանդվելը դժվար է նրանց համար: Խրախուսեք նրանց ծրագրել, թե ինչպես կարող են ավելի հնազանդ դառնալ, որպեսզի ավելի լիարժեքորեն կարողանան արժանի լինել Տիրոջ օգնությունը ստանալուն:

Ուսանողի ընթերցարան

- 1 Նեփի 2.1–20, 3.4–7, 15–16, 4.1–2, 7.12, 17.1–31, 18.1–4, 2 Նեփի 31.6–10, 15–16, Մոսիա 2.20–24, 41, 15.7, 3 Նեփի 11.11, 12.19–20, 48
- Թոմաս Ս. Մոնսոն, «Հնազանդությունը օրհնություններ է բերում», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2013, 89–92:

ԴԱՍ 4

Ադամի անկումը և ազատ կամքի պարզեր

Նախաբան

Ադամի և Եվայի անկումը Երկնային Հոր ծրագրի անբաժանելի մասն էր: Այն առաջ բերեց այնպիսի պայմաններ, որոնց ներքո մենք կարող էինք աշխարհ գալ և փորձվել: Աստծո ծրագիրը նաև ներառում է Նրա զավակներին կամքի ազատություն տալը (տես 2 Նեփի

2:27): Այս դասի ընթացքում ուսանողները կսովորեն, որ մեր կամքի ազատությունը լավագույնս գործածելու բանալին Աստծո կամքը կատարելն է, որի միջոցով մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսի օրինակին:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ռոբերտ Դ. Հեյլս, «Ազատ կամք՝ կարևորագույնը կյանքի ծրագրում», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2010, 24-27:
- Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Որտեղ հանդիպում են արդարությունը, սերն ու ողորմածությունը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2015, 104-6:

Ուսուցման առաջարկներ

2 Նեփի 2:19–26, 28, Ավամ 42:6–10, 14, Մովսես 5:5–9

Ադամի անկումը

Ցուցադրեք Յոթանասունից Երեք Բրյուս Զ. Հեյֆենի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Հինգերորդ դարից սկսած քրիստոնեությունն ուսուցանել է, որ Ադամի և Եվայի անկումը ողբերգական սխալ է եղել: ... Այդ մոտեցումը սխալ է: ... Անկումը աղետ չէր: Դա սխալ կամ դժբախտ պատահար չէր: Այն փրկության ծրագրի կանխամտածված մասն էր» («The Atonement: All for All», *Ensign* կամ *Liahona*, May 2004, 97):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր հասկանալը, որ Անկումը սխալմունք կամ դժբախտ պատահար չէր, այլ փրկության ծրագրի կանխամտածված մասն էր կազմում:

Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել 2 Նեփի 2:19-25 հատվածները և կազմել Անկման հետևանքների ցանկը, որոնք պատահեցին Ադամի և Եվայի հետ այն բանից հետո, երբ նրանք ճաշակեցին արգելված պտղից: Ապա խնդրեք ուսանողներին գրատախտակին գրել իրենց ցանկի որոշ կետերը: (*Նշում*. Սուրբ գրությունների հատվածներում ցանկեր կազմելը սուրբ գրությունների ուսումնասիրության հմտություն է, որը դուք կարող եք ուսուցանել, օգտագործելով այս հատվածը, տես *Gospel Teaching and Learning* [2012], 23:) Ցանկը պետք է ընդգրկի հետևյալը. Ադամն ու Եվան

վտարվում են Եդեմի պարտեզից, նրանք երեխաներ են ունենում, նրանք մուտք են գործում մի փորձաշրջան, նրանք կորած վիճակում էին և ապաշխարության կարիք ունեին և նրանք հանդիպում են հակադրությունների, որը թույլ է տալիս նրանց ճաշակելու բարին և չարը և օգտագործելու իրենց կամքի ազատությունն իմաստությամբ:

- Ինչպե՞ս է գրատախտակին գրված ցանկն օգնում բացատրել, թե ինչո՞ւ էր Ադամի Անկումը Երկնային Հոր ծրագրի անհրաժեշտ մասը կազմում: (Ուսանողները հավանաբար կառաջարկեն տարբեր պատասխաններ, որոնք հնարավոր կլինի ամփոփել հետևյալ սկզբունքով. **Ադամի Անկումը հնարավոր դարձրեց, որ մենք մուտք գործենք մահկանացու կյանք և առաջ շարժվենք դեպի հավերժական կյանք:**)
- Ի՞նչ է նշանակում, որ «բոլոր մարդիկ ... կորած են» Անկման պատճառով: (2 Նեփի 2.21):

Որպեսզի օգնեք պատասխանել այս հարցին, հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 42.6–10, 14 հատվածները, մինչ դասարանը փնտրում է Անկման ևս մի քանի հետևանքներ: Մինչ ուսանողները կիսվում են իրենց գտածով, դուք կարող եք ավելացնել նրանց պատասխանները գրատախտակի ցանկին:

- Ի՞նչ է նշանակում «կտրված լինել ... Տիրոջ ներկայությունից»:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«[Ադամն ու Եվան] խախտեցին Աստծո պատվիրաններից մեկը, որը պահանջեց, որ նրանք թողնեին իրենց պարտեզի միջավայրը, բայց, որը նրանց թույլ տվեց երեխաներ ունենալ նախքան ֆիզիկական մահը: Բացի ավելացնելուց վիշտ և բարդություններ իրենց վիճակին, նրանց օրինազանցությունը ունեցավ նաև հոգևոր հետևանքներ, հավերժ կտրելով նրանց Աստծո ներկայությունից: Քանի որ մենք ծնվել ենք այդ անկում ապրած աշխարհում և քանի որ մենք ևս խախտելու էինք Աստծո օրենքները, մենք ևս կարժանանանք նույն պատիժներին, որոնց արժանացան Ադամն ու Եվան: ...

... Այն պահից ի վեր, ինչ այդ առաջին ծնողները դուրս եկան Եդեմական պարտեզից, Աստված՝ և մեր բոլորիս Հայրը, ակնկալելով որոշում Ադամի և Եվայի կողմից, առաքեց հենց երկնքի հրեշտակներին՝ հայտարարելու նրանց, և ընդհուպ մինչև մեր ժամանակը, որ այս ամբողջ հերթականությունը նախատեսված էր մեր հավերժական երջանկության համար: Այդ Նրա աստվածային ծրագիրն էր, որն ապահովեց Փրկիչ, հենց Իր՝ Աստծո Որդին մեկ ուրիշ «Ադամ» ինչպես անվանել է «Նրան» Պողոս Առաքյալը [տես Ա Կորնթացիս 15.45], ով գալու է ժամանակի գագաթնակետին՝ քավելու առաջին Ադամի օրինազանցությունը: Այդ Քավությունը ձեռք էր բերելու լիակատար հաղթանակ ֆիզիկական մահի վրա: ... Ողորմածությամբ այն նաև կապահովի ներում բոլորի անձնական մեղքերի համար Ադամից մինչև աշխարհի վերջը, որը պայմանավորված է ապաշխարությամբ և աստվածային պատվիրանների հնազանդությամբ» («Որտեղ հանդիպում են արդարությունը, սերն ու ողորմածությունը», *Ensign* կամ *Liahonua*, մայիս 2015, 105–6):

- Ինչո՞ւ ենք մենք «արժանանում նույն պատիժներին, որոնց արժանացան Ադամն ու Եվան»: (Մենք ծնվել ենք անկում ապրած աշխարհում, և մենք օրինազանցում ենք Աստծո օրենքները:)

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 2 Նեփի 2.26, 28 և Մովսես 5.5-9 հատվածները, մինչ դասարանը կփնտրի, թե ինչպես կարող են հաղթահարվել Անկման հետևանքները մեր կյանքում:


- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի ավետարանը մեզ օգնում հաղթահարել անկման հետևանքները: (Պատասխանները պետք է ընդգրկեն հետևյալ սկզբունքը: **Եթե մենք ապաշխարենք և աղերսենք Աստծո ներողամտությունը, մենք կկարողանանք փրկագնվել մեր մեղքերից Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:**)

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչ դեր ունենա Անկումը փրկության ծրագրում և ինչպես էր այն «նախատեսված մեր հավերժական երջանկության համար»: Խնդրեք մեկ կամ երկու ուսանողների՝ դասարանի հետ կիսվել իրենց մտքերով:

2 Նեփի 2.14, 16, 26–29, Հելաման 14.30–31, 3 Նեփի 27.13

Ազատ կամքի պարզևը

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը և հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Ադամն ու Եվան [Անկման միջոցով] մահկանացու դարձան: Ի ուրախություն մեզ, նրանք կարող էին նաև երեխաներ ունենալ և իրականացնել նպատակը, որի համար ստեղծվել էր աշխարհը: ... Անկման միջոցով մեզ տրվեցին ևս մի քանի օրհնություններ: Դրա միջոցով գործի դրվեցին ևս երկու սերտ կապ ունեցող աստվածային պարզևներ, գրեթե նույնքան թանկ, որքան ինքը՝ կյանքը. *ազատ կամքն ու պատասխանատվությունը*»

(“Constancy amid Change,” *Ensign*, Nov. 1993, 34, շեղագրերն ավելացված են):

- Ինչո՞վ է պայմանավորված ազատ կամքի և պատասխանատվության «գրեթե նույնքան թանկ լինելը, որքան ինքը՝ կյանքը»:

Հանձնարարեք ուսանողներին ուսումնասիրել 2 Նեփի 2.14, 16 և 26 հատվածները, ուշադրություն դարձնելով, թե ինչ են այս հատվածներն ուսուցանում այն մասին, թե ինչով են Աստծո զավակները տարբերվում Նրա ստեղծած մնացած ամեն ինչից:

- Ի՞նչ տարբերություններ են ընդգծվում այս հատվածներում Աստծո զավակների և Նրա մյուս արարումների միջև: (Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալ վարդապետությունը: **Աստծո զավակները ստեղծված են ինքնուրույն գործելու, այլ ոչ թե ներգործվելու համար:**)
- Ի՞նչ է նշանակում այն, որ Տերը ստեղծել է մեզ գործելու, այլ ոչ թե ներգործվելու համար:

- Ինչո՞ւ է կարևոր իմանալը, որ Աստծո զավակները ստեղծված են ինքնուրույն գործելու, այլ ոչ թե ներգործվելու համար:

Որպեսզի օգնեք պատասխանել այս հարցին, դուք կարող եք քննարկել Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերի (1924–2015) հետևյալ խոսքերը.



«Հին ասացվածքը «Տերը քվեարկում է իմ օգտին, իսկ Լյուցիֆերը քվեարկում է իմ դեմ, բայց *իմ* քվեն է, որ հաշվի է առնվում», նկարագրում է վարդապետական համոզվածություն, որ մեր ազատ կամքը ավելի հզոր է, քան հակառակորդի կամքը: Ազատ կամքը թանկարժեք է: Մենք կարող ենք հիմարաբար, կուրորեն այն տալ, բայց այն չի կարող ուժով վերցվել մեզանից:

Կա նաև դարավոր հնություն ունեցող մի արդարացում. «Դևը ստիպեց ինձ ասել դա»: Այդպես չէ: Նա կարող է խաբել ձեզ և մոլորեցնել, բայց նա չունի իշխանություն ստիպելու ձեզ կամ որևէ մեկ ուրիշի օրինազանցության մեջ ընկնել» («Մաքրել ներսի անոթը», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2010, 74):

Մի քանի ուսանողի խնդրեք կարդալ 2 Նեփի 2.26–29 հատվածները, իսկ մյուսներին՝ Հելաման 14.30–31-ը: Խրախուսեք ուսանողներին ընդգծել բառեր և արտահայտություններ, որոնք ցույց են տալիս հետագա հետևանքներն այն ընտրությունների, որոնք մենք կատարում ենք այժմ: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց ընդգծած հատկանիշներով:

- Ի՞նչ ճշմարտություն կարող ենք սովորել այս հատվածներից մեր ընտրությունների հետևանքների մասին: (Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալ ճշմարտությունը. **Մեր հոգևոր աճը և հավերժական օրհնությունները պայմանավորված են այն բանով, թե ինչպես ենք մենք օգտագործում մեր ազատ կամքը:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այս ճշմարտությունը, հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ հայտարարությունը.



«Երբ մենք ընտրում ենք կատարել մեր Երկնային Հոր կամքը, մեր ազատ կամքը պահպանվում է, մեր հնարավորությունները մեծանում են և մենք առաջ ենք ընթանում: ... Հակառակը նույնպես ճշմարիտ է. երբ մենք չենք պահում պատվիրանները և չենք հետևում Սուրբ Հոգու հուշումներին, մեր հնարավորությունները կրճատվում են, գործելու և առաջ ընթանալու մեր ընդունակությունները նվազում են: ... Պատվիրաններին հնազանդվելը, ի վերջո, պահպանում է մեր ազատ կամքը» («Ազատ կամք՝ կարևորագույնը կյանքի ծրագրում» *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2010, 25-26):

- Որո՞նք են այն հետևանքները, որ գալիս են կամքի ազատության սխալ օգտագործումից:
- Ինչպե՞ս է Աստծո պատվիրաններին հնազանդվելը պաշտպանում մեր կամքի ազատությունը:

- Ինչո՞ւ է մեր կամքի ազատությունն օգտագործելով «մեր Երկնային Հոր կամքը կատարելը» բանալի հանդիսանում մեր հոգևոր զարգացման համար:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 27.13 և խորհել ազատ կամքի պարզևի արդար օգտագործման Հիսուս Քրիստոսի օրինակի մասին:

- Ինչպե՞ս կարող են «Ես եկա ... կատարելու իմ Հոր կամքը» Փրկիչի խոսքերն օգնել մեզ իմաստությամբ օգտագործել ազատ կամքի պարզևր:

Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ խոսքերով, որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ մեծ օրհնությունները, որոնք տրվում են մեր կամքի ազատությունն արդարությամբ օգտագործելու արդյունքում.



«Տերը մտահոգվում է ձեր անձնական զարգացման և աճի համար: Այդ զարգացումն արագ է ընթանում, երբ դուք հոժարակամ թույլ եք տալիս Նրան առաջնորդել ձեզ յուրաքանչյուր զարգացման փորձառության ժամանակ, որին դուք հանդիպում եք, անկախ այն բանից, թե ի սկզբանե այն ձեր սրտով է, թե ոչ: Երբ դուք վստահում եք Տիրոջը, երբ դուք հոժար եք թույլ տալ ձեր սրտին և ձեր մտքին, որ կենտրոնական Նրա կամքի վրա, երբ դուք խնդրում եք, որ առաջնորդվեք Հոգով՝ Նրա կամքը կատարելու համար, դուք կարող եք վստահ լինել, որ կունենաք ամենամեծ երջանկությունը ողջ ճանապարհին և ամենագոհացուցիչ ձեռքբերումներն այս մահկանացու փորձառությունից: Եթե դուք կասկածի եք ենթարկում յուրաքանչյուր բան, ինչը խնդրվում է ձեզանից անել, կամ համառում եք յուրաքանչյուր անհաճո դժվարության ժամանակ, դուք ավելի եք դժվարացնում ձեզ օրհնելու Տիրոջ գործը: (Տես 1 Նեփի 3.7:)

Ձեր կամքի ազատությունը՝ ընտրություններ կատարելու իրավունքը, տրված չէ այն բանի համար, որ դուք կարողանաք ստանալ այն ամենը, ինչ ցանկանում եք: Աստվածային այս պարգևը տրված է, որպեսզի դուք ընտրեք, թե ինչ է ձեզ համար ցանկանում Երկնային Հայրը: Այդպիսով Նա կկարողանա առաջնորդել ձեզ դառնալու այնպիսին, ինչպիսին Նա նախատեսում է, որ դուք լինեք: (Տես ՎեՐ 58.26-32:») («Finding Joy in Life,” *Ensign*, May 1996, 25):

Խնդրեք ուսանողներին մտածել այն ժամանակների մասին, երբ որոշումներ են կայացրել գործելու արդարությամբ: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե ինչպես են այդ որոշումների հետևանքներն օրհնություններ բերել նրանց:

Խրախուսեք ուսանողներին մտածել, թե ինչպես նրանք կարող են ավելի լավ հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին Երկնային Հոր կամքը կատարելիս: Կիսվեք ձեր վկայությամբ, որ մեր ազատ ընտրության պատշաճ կիրառումը կարող է առաջնորդել մեզ դեպի հավերժական կյանք:

Ուսանողի ընթերցարան

- 2 Նեփի 2.14, 16, 19–29, Ալմա 42.6–10, 14, Հելաման 14.30–31, 3 Նեփի 27.13, Մովսես 5.5–9:

- Զեֆրի Ռ. Հոլլանդ, «Որտեղ հանդիպում են արդարությունը, սերն ու ողորմածությունը», *Ensign* կամ *Հիսիոնա*, մայիս 2015, 104-6:

Հիսուս Քրիստոսի անսահման քավությունը

Նախաբան

Հիսուս Քրիստոսի Քավությունը՝ ամենամեծ իրադարձությունը, որ երբևէ տեղի է ունեցել, հնարավոր է դարձնում, որ ողջ մարդկության մեղքերը ներվեն և նրանք ապրեն Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ ողջ հավերժության մեջ: Քավության միջոցով բոլորը հարություն կառնեն և կվերադառնան Աստծո

ներկայության մեջ, որպեսզի դատվեն: Քանի որ Քավությունը պահանջում էր, որ Հիսուս Քրիստոսը բազմաթիվ տառապանքներ տաներ, Նա ունի կատարյալ կարեցցանք մեզանից յուրաքանչյուրի հանդեպ:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Բոյդ Բ. Փաբեր, «Քավությունը», *Ensign* կամ *L'Espresso*, նոյ. 2012, 75-78:
- Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Փրկագնում», *Ensign* կամ *L'Espresso*, մայիս 2013, 109-12:

Ուսուցման առաջարկներ

Մոսիա 3.5–11, Ալմա 34.8–12

Միայն Հիսուս Քրիստոսը կարող էր կատարել անսահման Քավություն

Ցուցադրեք և հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Զեյմս Բ. Ֆաուստի (1920–2007) հետևյալ խոսքերը.



«Ես ցանկանում եմ խոսել ողջ պատմության ընթացքում տեղի ունեցած ամենամեծ իրադարձության մասին: Այդ եզակի իրադարձությունը մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի անզուգական Քավությունն է: Դա ամենասահման գործողությունն է, որը երբևէ տեղի է ունեցել» (“The Atonement: Our Greatest Hope,” *Ensign*, Nov. 2001, 18).

Հրավիրեք երկու կամ երեք ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 34.8-12 հատվածները, մինչ դասարանը կրնա զգծի կարևոր բառերն ու արտահայտությունները, որոնք լուսաբանում են, թե ինչու է Քավությունը համարվում պատմության ամենամեծ իրադարձությունը:

- Ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսի Քավությունը ամենամեծ իրադարձությունը, որը երբևէ պետք է տեղի ունենար: (Շեշտեք հետևյալ ճշմարտությունը. **Հիսուս Քրիստոսի Քավությունն անսահման է և հավերժական՝ դարձնելով փրկությունը հնարավոր ողջ մարդկության համար:**)

Խորհեք Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերով կիսվելու մասին.



«Ադամին, Եվային և Լրանց բոլոր ժառանգներին փրկագնելու համար պահանջվում էր անսահման զոհաբերություն: ... Համաձայն հավերժական օրենքի այդ քափությունը պահանջում էր անձնական զոհաբերություն անմահ Եակի կողմից, ով ենթակա չէր մահվան: Սակայն Նա պետք է մահանար և կրկին հետ վերցնէր Իր սեփական մարմինը: Փրկիչը միակն էր, որ կարող էր իրագործել սա: Իր մորից Նա ժառանգել էր մահանալու զորությունը: Իր Հորից Նա ժառանգել էր զորություն մահվան վրա» ("Constancy amid Change," *Ensign*, Nov. 1993, 34):

- Ինչո՞ւ էր Հիսուս Քրիստոսը միակը, ով կարող էր փրկագնել ողջ մարդկությանը: (Նա անմահ արարած էր, ով ենթակա չէր մահվան:)
- Ի՞նչ առումներով է Հիսուս Քրիստոսի Քավությունը անսահման և հավերժական:

Որպեսզի օգնեք պատասխանել այս հարցին, ցուցադրեք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«[Հիսուս Քրիստոսի] Քավությունն անսահման է՝ առանց վերջի: Այն նաև անսահման էր, որպեսզի ամբողջ մարդկությունը կարողանար փրկվել երբեք չվերջացող մահից: Այն անսահման էր Նրա վիթխարի տառապանքների առումով: ... Այն անսահման էր իր մասշտաբով, այն կատարվում էր մեկ անգամ՝ բոլորի համար: Եվ Քավության ողորմությունը տարածվում է ոչ միայն անսահման քանակությամբ մարդկանց վրա, այլ նաև Նրա կողմից ստեղծված անսահման քանակությամբ աշխարհների վրա: Այն անսահման էր մարդկային ցանկացած չափորոշիչից կամ մահկանացու ըմբռնումից վեր» ("The Atonement," *Ensign*, Nov. 1996, 35):

Բացատրեք, որ իր թագավորության վերջում Բենիամին թագավորն ուսուցանեց իր ժողովրդին, որ հրեշտակը հայտնել էր իրեն «մեծ ուրախության ավետիքը», որի շնորհիվ մարդիկ կկարողանային «լցվել ուրախությամբ» (Մոսիա 3.2–4): Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մոսիա 3.5–11 հատվածները, մինչ դասարանը կհետևի, որոնելով Բենիամին թագավորի նկարագրած «ավետիքը»:

- Ձեր կարծիքով, այս հատվածների որ ուղերձները կարող էին Բենիամին թագավորի ժողովրդին լցնել ուրախությամբ: (Երբ ուսանողները պատասխանեն, շեշտեք, որ Հիսուս Քրիստոսը փրկությունը հնարավոր է դարձնում:)
- Ո՞ր բառերը կամ արտահայտություններն են նկարագրում գինը, որը Հիսուս Քրիստոսը վճարեց մեր փրկության համար:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Զեյմս Ի. Թալմիչի (1862–1933) հետևյալ խոսքերը.



«Քրիստոսի չարչարանքը պարտեզում անիմանալի է սահմանափակ մտքի համար՝ դրա թե ուժգնությունը և թե նպատակը: ... Նա տառապեց և հառաչեց այնպիսի մի բեռի տակ, որը ոչ մի այլ արարած, ով ապրել է երկրի վրա, չէր կարող երբևէ հնարավոր համարել: Դա զուտ ֆիզիկական ցավ կամ մտավոր տառապանք չէր, որը ստիպեց Նրան տանել նման տանջանք, որի հետևանքով արյուն հոսեց յուրաքանչյուր ծակոտիկից, այլ հոգու այնպիսի հոգևոր տառապանք, որը միայն Աստված կարող էր տանել: Ոչ մի ուրիշ մարդ, որքան էլ մեծ լիներ նրա ֆիզիկական ուժը կամ հոգու տոկոսությունը, չէր կարողանա տանել այդ տառապանքը» (*Jesus the Christ*, 3rd ed. [1916], 613):

- Ի՞նչ մտքեր և զգացողություններ եք ունենում, երբ խորհում եք մեզ համար Հիսուս Քրիստոսի տարած մեծ տառապանքի մասին:

2 Նեփի 9.6–12, 20–22

Հիսուս Քրիստոսը հաղթահարեց թե ֆիզիկական, թե հոգևոր մահը

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, թե ինչ տեղի կունենար, եթե չլիներ Քավությունը: Որպեսզի օգնեք ուսանողներին պատկերացնել, թե ինչ իրավիճակում կլինեին մարդկությունը, եթե չլինեին Քավությունը, խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ 2 Նեփի 9.6–9 հատվածները: Դասարանին խնդրեք հետևել, փնտրելով այն արտահայտությունները, որոնք նկարագրում են, թե ինչպիսին կլինեին մեր ճակատագիրը առանց Քավության:

- Համաձայն Հակոբ մարգարեի խոսքերի, ի՞նչ կպատահեր մեր մարմինների հետ, եթե չլինեին Քավությունը: Ի՞նչ կպատահեր մեր հոգիների հետ:

Հիշեցրեք ուսանողներին, որ ավետարանի գլխավոր ուղերձն այն է, որ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք ստիպված չենք լինի արժանանալու այդ սարսափելի ճակատագրին:

Հրավիրեք երկու ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 2 Նեփի 9.10–12, 20–22 հատվածները, մինչ դասարանը կհետևի, որոնցով միջոցները, որոնք ազատում են մեզ հոգևոր և ֆիզիկական մահից:

- Ի՞նչ միջոցներ էին պատրաստված հոգևոր և ֆիզիկական մահից մեզ փրկելու համար: (Օգնեք ուսանողներին ներկայացնել հետևյալ վարդապետությունը: **Իր Քավության միջոցով Հիսուս Քրիստոսը հաղթահարեց ֆիզիկական և հոգևոր մահվան ազդեցությունները:**)
- Ի՞նչ են ուսուցանում այս հատվածները Հարության օրհնությունների մասին: (Մեր ֆիզիկական մարմինները և մեր հոգիները հավերժորեն կվերամիավորվեն: Մենք ետ կբերվենք Աստծո ներկայության մեջ, որպեսզի դատվենք:)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը, և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք:



«Իր Զավության և Հարության միջոցով Հիսուս Քրիստոսը հաղթահարեց Անկման բոլոր գործոնները: Ֆիզիկական մահը կլինի ժամանակավոր, և նույնիսկ հոգևոր մահը կունենա ավարտ, քանի որ մենք բոլորս ետ կբերվենք Աստծո ներկայության մեջ, առնվազն ժամանակավորապես, որպեսզի դատվենք» («Հիսուս Քրիստոսի Հարությունը», *Ensign* կամ *Լիառնա*, մայիս 2014, 112):

- Ե՞րբ եք դուք զգացել երախտագիտություն, որ Հիսուս Քրիստոսը հաղթել է ֆիզիկական և հոգևոր մահը:

Մոսիա 3.11, 16, 15.7–9, Ալմա 7.11–13, Մորոնի 8.8–12, Վարդապետություն և Ուխտեր 137.7–9

Իր Զավության միջոցով Հիսուս Քրիստոսը փրկագնում է առաջարկում ողջ մարդկությանը

Հիշեցրեք ուսանողներին, որ Անկման պատճառով առաջ եկած ֆիզիկական և հոգևոր մահից բոլոր մարդկանց ազատելուց բացի Հիսուս Քրիստոսը կարող է ազատել մեզ հոգևոր մահից, որն առաջ է գալիս մեր սեփական մեղքերի պատճառով: Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Մոսիա 15.7-9 հատվածները, մինչ դասարանը կփնտրի, թե ինչպես է Քրիստոսը հնարավոր դարձնում, որ մենք փրկագնվենք մեր մեղքերից:

- Ի՞նչ են այս հատվածները սովորեցնում այն մասին, թե ինչպես է Քրիստոսը հնարավոր դարձնում, որ մենք փրկագնվենք մեր մեղքերից: (Շեշտեք հետևյալ վարդապետությունը. **Քավության միջոցով Հիսուս Քրիստոսը քանդեց մահվան կապանքները և Իր վրա վերցրեց մեր անօրինությունները՝ բավարարելով արդարադատության պահանջները և զորություն ձեռք բերելով բարեխոսելու մեզ համար:**)
- Ի՞նչ է նշանակում *բարեխոսել* բառը: (*Բարեխոսելը* երկու կողմերի միջև միջամտության գործողությունն է՝ օգնելու նրանց հարթել տարաձայնությունները: Այս դեպքում Հիսուսը բարեխոս էր հանդիսանում մեր և Աստծո միջև, որպեսզի վերականգներ ընդհատված հարաբերությունները, որոնց պատճառ էին հանդիսացել մեր մեղքերը:)

Բացատրեք, որ Մորմոնի Գիրքն օգնում է մեզ հասկանալ, թե ինչպես է Հիսուս Քրիստոսի Քավությունը փրկում փոքր երեխաներին և մարդկանց, ովքեր մահացել են առանց ավետարանը ստանալու կամ մկրտվելու:

Թող դասարանի մի մասը մտքում կարդա Մոսիա 3.16 հատվածը և հղում կատարի Մորմոնի 8.8-12-ին: Թող դասարանի մյուս մասը մտքում կարդա Մոսիա 3.11 հատվածը և հղում կատարի Վարդապետություն և Ուխտեր 137.7-9-ին:

- Ի՞նչ են այս հատվածները սովորեցնում երեխաների փրկության մասին, ովքեր մահանում են նախքան մկրտվելը:

- Ի՞նչ են այս հատվածները սովորեցնում նրանց փրկության մասին, ովքեր «մահացել են՝ չիմանալով Աստծո կամքը» (Մոսիա 3.11):

Ասացեք ուսանողներին, որ Քավության միջոցով Փրկիչը ձեռք բերեց կատարյալ կարեկցանք՝ հասկանալու մեզ և օգնելու մեզ մահկանացու կյանքի դժվարությունների միջով անցնելիս: Ուսանողներին խնդրեք ուսումնասիրել Ալմա 7.11–13 հատվածները, փնտրելով այն բառերը, որոնք նկարագրում են մահկանացու կյանքի դժվարությունները, որոնց միջով անցավ Հիսուս Քրիստոսը որպես Քավության մի մաս: Երբ ուսանողները կիսվեն իրենց գտածով, գրատախտակին գրեք հետևյալ բառերը. *ցավեր, չարչարանքներ, զայթակրություններ, հիվանդություններ, մահ, թուլություններ (թույլ կողմեր կամ անկարողություն) և մեղքեր*: Շեշտեք «ամեն տեսակի» արտահայտությունը Ալմա 7.11-ում և խնդրեք ուսանողներին կիսվել գրատախտակին գրված տարբեր պայմանների օրինակներով:

Շեշտեք, որ «վեր կառնի իր վրա» արտահայտությունը մի քանի անգամ կրկնվում է 11-13 հատվածներում: (Նշում. Կրկնությունները նկատելը սուրբ գրություններն ուսումնասիրելու հմտություն է, որը դուք կարող եք շեշտել այստեղ: Սուրբգրքյան կրկնությունները նկատելը կարող է օգնել ուսանողներին գտնել շեշտադրումների գլխավոր կետերը:)

- Համաձայն 11-12 հատվածների, ինչո՞ւ Հիսուս Քրիստոսը «վեր կառնի իր վրա» մեր ցավերը, հիվանդությունները, թուլությունները և գրատախտակին գրված մյուս պայմանները: (Օգնեք ուսանողներին հասկանալ այս սկզբունքը. **Փրկիչն Իր վրա վերցրեց մեր ցավերը, հիվանդություններն ու թուլությունները, որպեսզի Նա կարողանա օգնել մեզ, երբ մենք հանդիպենք մահկանացու կյանքի դժվարություններին**):

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Ես վկայում եմ, որ Փրկիչի Քավությունը մեր վրայից վեր է առնում ոչ միայն մեր մեղքերի ծանրությունը, այլ նաև մեր հուսախաբությունների և վշտերի ծանրությունը, մեր սրտի ցավերը և մեր հուսահատությունները [Ալմա 7.11-12]: Ի սկզբանե նման օգնության ակնկալիքը զարգանալու համար մեզ տալու էր և պատճառ, և ուղի՝ դրդելով մեզ վայր դնել մեր բեռները և վեր բարձրացնել մեր փրկությունը» (“Broken Things to Mend,” *Ensign* կամ

Լիառնա, մայիս 2006, 70–71):

- Ինչպե՞ս կարող է Փրկիչի Քավությանը վստահելը ազդել ձեր գործողությունների և հավերժական հեռանկարի վրա:
- Ինչպե՞ս կարող է Ալմա 7.11–13 հատվածների ճշմարտությունների ըմբռնումն օգնել մեզ դժվարությունների ժամանակ:

Հրավիրեք ուսանողներին կիսվել փորձառություններով, երբ նրանք զգացել են Հիսուս Քրիստոսի Քավության գործությունը իրենց կյանքում

(զգուշացրեք նրանց, որ չկիսվեն որևէ բանով, ինչը շատ սուրբ է կամ անձնական):

Հրավիրեք ուսանողներին գրի առնել, թե ինչ կարող են անել՝ Փրկիչի Քավության բուժող և ուժեղացնող գործությունը իրենց կյանքում ավելի լավ կիրառելու համար: Խրախուսեք նրանց գործել ըստ իրենց զգացածի:

Ուսանողի ընթերցարան

- 2 Նեփի 9.6–12, 20–22, Մոսիա 3.5–11, 16, 15.7–9, Ալմա 7.11–13, 34.8–12, Մորոնի 8.8–12, Վարդապետություն և Ուխտեր 137.7–9:
- Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Փրկագնում», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2013, 109–12:

Մորմոնի Գիրքը գրվել է մեր օրերի համար

Նախաբան

Մորմոնի Գիրքը և Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը «գարմանալի և սքանչելի մի գործի» մասն են, որ վերջին օրերում առաջ է բերվել Աստծո կողմից (2 Նեփի 25.17): Քանի որ Մորմոնի Գիրքը պարունակում է ավետարանի լրիվությունը, այն կարևոր դեր է խաղում

ուրացությունը հաղթահարելու և հոգիներին Քրիստոսի մոտ բերելու գործում: Այս դասում շեշտվում է, որ այս սուրբ հիշատակարանը գրվել է ոգեշնչված հեղինակների կողմից, ովքեր տեսել են մեր օրերը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Ապահովություն հոգու համար», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2009, 88-90:
- «Հեղեղել երկիրը և մեր կյանքը Մորմոնի Գրքով», գլուխ 10, *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն* (2014), 165-175):

Ուսուցման առաջարկներ

2 Նեփի 27.6, 29–30, 35, 3 Նեփի 29.1–2, Մովսես 7.62, Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.34

Մորմոնի Գրքի դերը վերջին օրերում

Ուսանողներին բացատրեք, որ Մորմոնի Գրքում տրված են մարգարեություններ, որ վերջին օրերում կլինեն ամբարշտություններ և ուրացություններ (տես 2 Նեփի 27.1, 4-5): Մորմոնի Գրքում տրված է նաև, թե ինչպես է Տերը տալիս այդ խնդիրների լուծումը: Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 27.6, 29–30, 35 հատվածները, մինչ դասարանը փնտրում է Տիրոջ վճիռը:

- Ըստ այդ հատվածների, ի՞նչ կանի Տերը վերջին օրերում ամբարշտությանը և ուրացությանը դիմակայելու համար:
- Ի՞նչ եղանակներով է Մորմոնի Գիրքը լուծում տալիս վերջին օրերի ամբարշտությանը:

Ասացեք ուսանողներին, որ Մորմոնը գրի է առել մարգարեություն Մորմոնի Գրքի լրացուցիչ դերի մասին, որը նա կունենա վերջին օրերում: Ուսանողներին մի քանի րոպե ժամանակ տրամադրեք 3 Նեփի 29.1–2 հատվածներն ուսումնասիրելու և այդ մարգարեությունը փնտրելու համար: Դուք կարող եք շեշտել, որ «այս ասածները» արտահայտությունը վերաբերում է Մորմոնի Գրքին:

- Ի՞նչ կարևոր աշխատանք պետք է սկսվեր Մորմոնի Գրքի առաջ գալու հետ մեկտեղ: (Բարայելի հավաքումը:)

Բացատրեք, որ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը (1899–1994) նկարագրել է Մորմոնի Գրքի առանցքային դերը վերջին օրերում ավետարանի Վերականգնման և Տիրոջ աշխատանքը սկսելու գործում: Հրավիրեք ուսանողներին որևէ մեկին բարձրաձայն կարդալ հետևյալ հայտարարությունը.



«[Մորմոնի Գիրքը] հրատարակվել է Եկեղեցու կազմավորումից ընդամենը մի քանի օր առաջ: Սրբերին հնարավորություն տրվեց կարդալու Մորմոնի Գիրքը նախքան նրանց հայտնություններ տրվեց, որոնցում ընդգծվում էին այնպիսի մեծ վարդապետություններ, ինչպիսին են փառքի երեք աստիճանները, սելենտիալ ամուսնությունը կամ մահացածների համար աշխատանքը: Այն առաջ եկավ նախքան քահանայության քվորումների և Եկեղեցու կազմավորումը: Արդյո՞ք սա մեզ ինչ-որ բան չի ասում այն մասին, թե ինչ նշանակություն է Տերը տալիս այս սուրբ աշխատանքին» ("The Book of Mormon—Keystone of Our Religion," *Ensign*, Nov. 1986, 4):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Մորմոնի Գրքի առաջ գալը նախորդել Վերականգնման բազմաթիվ կարևոր իրադարձությունների և շատ կարևոր է Իսրայելի հավաքման Տիրոջ աշխատանքի և վերջին օրերում ամբարշտությանը վերջ դնելու համար:

Որպեսզի օգնեք պատասխանել այս հարցին, խնդրեք ուսանողներին մեկին բարձրաձայն կարդալ **Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.34** հատվածը: Հրավիրեք դասարանին ուշադրություն դարձնել, թե ինչ է պարունակում Մորմոնի Գիրքը:

- Ի՞նչ է պարունակում Մորմոնի Գիրքը: (Օգնեք ուսանողներին ներկայացնել հետևյալ ճշմարտությունը. **Մորմոնի Գիրքը պարունակում է Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը**):
- Ո՞րն է Մորմոնի հայտարարության իմաստը, որ Մորմոնի Գիրքը պարունակում է «հավիտենական ավետարանի լրիվությունը»:

Որպեսզի օգնեք պատասխանել այս հարցին, ցուցադրեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Տերն Ինքն է հայտարարել, որ Մորմոնի Գիրքը պարունակում է «Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը» (ՎեՌւ 20.9): Դա չի նշանակում, որ այն պարունակում է ամեն մի ուսմունք, ամեն մի վարդապետություն, որը երբևէ հայտնվել է: Ավելի շուտ, դա նշանակում է, որ Մորմոնի Գրքում մենք կգտնենք մեր փրկության համար անհրաժեշտ վարդապետությունների լրիվությունը: Եվ դրանք ուսուցանված են պարզ և հասարակ ձևով»
(*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն* [2014], 158):

- Որո՞նք են «մեր փրկության համար անհրաժեշտ վարդապետությունները», որոնք պարունակվում են Մորմոնի Գրքում: (Այդ վարդապետություններն ընդգրկում են Քավությունը, Հիսուս

Քրիստոսի հանդեպ հավատքը, ապաշխարությունը, մկրտությունը և Սուրբ Հոգու պարգևը։)

Բացատրեք, որ Տերը ուսուցանեց Ենովս մարգարեին վերջին օրերում Մորմոնի Գրքի կարևորության մասին։ Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մովսես 7.62 հատվածը։ (Դուք կարող եք գրատախտակին գրել, որ «արդարություն ցած կոտարկեմ երկնքից» արտահայտությունը վերաբերում է հայտնություններին, որոնք հնարավոր դարձրին Վերականգնումը, իսկ «ճշմարտություն առաջ կոտարկեմ երկրից» արտահայտությունը վերաբերում է Մորմոնի Գրքին։ Խրախուսեք ուսանողներին գրել այս սահմանումներն իրենց սուրբ գրությունների լուսանցքում կամ գրառումներ կատարել իրենց սուրբ գրությունների էլեկտրոնային տարբերակում։)

- Համաձայն այս հատվածի, ինչպե՞ս կկիրառվի Մորմոնի Գիրքը վերջին օրերում։ (Այն կօգնի Եկեղեցում հավաքել Աստծո ընտրյալներին աշխարհի չորս ծայրերից։)
- Ե՞րբ եք ականատես եղել, որ Մորմոնի Գիրքն օգնել է որևէ մեկին դարձի գալ առ ավետարանը և միանալ Տիրոջ Եկեղեցուն։
- Որո՞նք են այն ուղիները, որոնցով մենք կարող ենք «սրբել երկիրը» արդարությունով և Մորմոնի Գրքի ուղերձով՝ «ասես ջրհեղեղով»։

Հրավիրեք ուսանողներին պարտավորվել անելու մի բան, որպեսզի գալիք շաբաթվա ընթացքում «հեղեղեն» իրենց սրտերը, իրենց տները և երկիրը Մորմոնի Գրքի ուղերձով։

3 Նեփի 21.9-11

Մորմոնի Գրքի ճշմարտությունը դիմակայում է ընդդիմությանը։

Խնդրեք ուսանողներին խորհել ժամանակների մասին, երբ նրանք պաշտպանել են Մորմոնի Գիրքը կամ Վերականգնման ուղերձն ընդդիմությունից։

Որևէ ուսանողի հրավիրեք բարձրաձայն կարդալ 3 Նեփի 21.9-11 հատվածները։ Նախքան ուսանողի կարդալը բացատրեք, որ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը մեկնաբանել է, որ այս հատվածներում ներկայացվող «ծառան» Սարգարե Ջոզեֆ Սմիթն է (տես *Christ and the New Covenant* [1997], 287–88)։

- Ինչպե՞ս է Ջոզեֆ Սմիթը համապատասխանում այս հատվածներում գտնվող նկարագրությանը։
- Ըստ այդ հատվածների, ի՞նչ ցույց կտա Փրկիչը այն մարդկանց, ովքեր կընդդիմանան Ջոզեֆ Սմիթին և Մորմոնի Գրքին վերջին օրերում։ (Օգնեք ուսանողներին ներկայացնել հետևյալ վարդապետությունը։
Աստծո իմաստությունն ավելի մեծ է, քան դևի խորամանկությունը։)
- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքն օգնում ցույց տալ, որ Աստծո «իմաստությունն ավելի մեծ է, քան դևի խորամանկությունը»։

Ցուցադրեք և կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը.



«[Ավելի քան 180] տարի այս գիրքը քննության և հարձակման է ենթարկվել, մերժվել և քննադատվել, որպես թիրախ ընտրվել և ծվատվել, ինչպես ոչ մի գիրք ժամանակակից կրոնի պատմության մեջ, գուցե ոչ մի այլ գիրք *ցանկացած* կրոնի պատմության մեջ: Եվ դեռևս այն կանգուն է: Այս գրքի ծագման վերաբերյալ սնանկ տեսություններ են ծնվել, կրկնվել և մահացել:

... Այս գրքի դեմ առաջ քաշած ոչ մի սրտառույզ մեղադրանք երբեք քննությանը չի դիմացել, որովհետև *չկա այլ պատասխան*, բացի Ջոզեֆի տված պատասխանից՝ որպես դրա երիտասարդ ուսում չստացած թարգմանիչ: Սրանում ես համաձայն եմ իմ նախապապի հետ, որը պարզապես ասել է. «Ոչ մի չար մարդ չի կարող գրել այսպիսի գիրք, և ոչ մի բարի մարդ չի կարող գրել այն, եթե այն ճշմարիտ չէ, և եթե գրողին չի պատվիրել Աստված» («Ապահովություն հոգու համար», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2009, 89):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ այդքան մեծ ընդդիմություն կա Մորմոնի Գրքի դեմ:
- Ի՞նչ փորձառություններ եք ունեցել, որոնք ուսուցանել են ձեզ, որ Մորմոնի Գիրքը կարող է դիմակայել ընդդիմությանը:
- Ի՞նչ եք դուք զգացել և ի՞նչ եք դուք սովորել, երբ ուսուցանել եք ուրիշներին Մորմոնի Գրքի մասին կամ պաշտպանել եք դրա ճշմարտացիությունը:

Մորմոն 8.1–5, 26–35

Մորմոնի Գիրքը գրվել է մեր օրերի համար

Հիշեցրեք ուսանողներին, որ Նեփիին ականատես եղավ իր քաղաքակրթության կործանմանը: Խնդրեք ուսանողներին կարդալ Մորմոն 8.1-5 հատվածները և խորհել, թե ինչ կարող էր պահանջվել Մորմոնից անել՝ ոսկե թիթեղները պաշտպանելու համար:


- Պատկերացրեք, թե դուք Մորմոնին եք: Ի՞նչ պատճառներ կարող էին լինել, որպեսզի դուք ցանկանայիք, որ ուրիշները կարդային ձեր հիշատակարանը:

Խնդրեք ուսանողներին կարդալ Մորմոն 8.26-35 հատվածները, փնտրելով, թե ինչ մարգարեացավ Մորմոնին այն ժամանակների մասին, երբ Մորմոնի Գիրքը պետք է ի հայտ գար: Կարող եք խրախուսել ուսանողներին նշել իրենց գտածը:

- Ինչպե՞ս է Մորմոնին նկարագրում ժամանակը, երբ պիտի առաջ բերվեր Մորմոնի Գիրքը: (Դա լինելու էր ուրացության և ամբարշտության ժամանակ:)
- Ի՞նչ եզրակացության դուք կարող եք գալ՝ ելնելով 35-րդ հատվածից: (Դուք կարող եք շեշտել, որ ի լրացում Մորմոնի, մյուս մարգարեները, ներառյալ Նեփիին, Հակոբը և Մորմոնը, նշել են, որ իրենք գրել են ապագա սերունդների համար: Ուսանողները կարող են հատված 35-ից հղում կատարել 2 Նեփի 25.21–22 և Մորմոն 7.1 հատվածներին:)

- Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Մորմոնին և Մորմոնի Գրքի մյուս գրողները տեղյակ էին այն խնդիրներին, որոնց մենք հանդիպում ենք այսօր: (Մինչ դուք կքննարկեք այս հարցը, շեշտեք հետևյալ ճշմարտությունը: **Մորմոնի Գրքի ուսմունքներն այսօր մեծ արժեք ունեն մեզ համար, քանի որ գրողները տեղյակ էին այն խնդիրներին, որոնց մենք պետ է հանդիպելին:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այդ ճշմարտությունը, հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի հետևյալ հայտարարությունը.



«Մորմոնի Գիրքը ... գրվել է մեր օրերի համար: Նեփիացիները երբեք չեն ունեցել այդ գիրքը, ոչ էլ Լամանացիներն են ունեցել հին ժամանակներում: Այն նախատեսված է եղել մեզ համար: Մորմոնն այն գրել է Նեփիացիների քաղաքակրթության մայրամուտին: Աստծո ոգեշնչման ներքո, ով տեսնում է ամեն ինչ սկզբից ի վեր, նա կրճատեց դարերով գրված արձանագրությունները, ընտրելով այն պատմությունները, քարոզներն ու իրադարձությունները, որոնք կլինեին ամենաօգտակարը մեզ համար:

Մորմոնի գրքի հիմնական գրողներից յուրաքանչյուրը վկայել է, որ գրում է գալիք սերունդների համար: ... Եթե նրանք տեսել են մեր օրը և ընտրել այն, ինչն առավել մեծ արժեք կունենար մեզ համար, ապա ինչպե՞ս մենք պետք է ուսումնասիրենք Մորմոնի Գիրքը: Մենք պետք է շարունակ հարցնենք ինքներս մեզ. «Ինչո՞ւ Տերը ոգեշնչեց Մորմոնին (կամ Մորոնիին, կամ Ալմային) ընդգրկել այս կամ այն հատվածն իր գրառումների մեջ: Ի՞նչ դաս կարող եմ ես սովորել դրանից, որը կօգնի ինձ ապրել այս օրը և այս դարաշրջանում»: (Ուսմունքներ. Էզրա Թաֆտ Բենսոն, 168-169):

- Ինչպե՞ս կարող է հիշելը, որ Մորմոնի Գիրքը գրվել է մեր օրերի համար, փոխել մեր մոտեցումը դրա հանդեպ, երբ կարդում ենք այն:

Հրավիրեք ուսանողներին բերել օրինակներ, թե ինչպես է Մորմոնի Գիրքը նրանց ուղղություն, ուժ, հարցերի պատասխաններ կամ խնդիրների լուծումներ տվել:

Ուսանողի ընթերցարան

- 2 Նեփի 25.17–18, 3 Նեփի 21.9–11, 29.1–4, Մորմոն 8.1–5, 26–35, Եթեր 12.22–26, Մովսես 7.62, Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.34:
- «Հեղեղել երկիրը և մեր կյանքը Մորմոնի Գրքով», գլուխ 10, Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն (2014), 165-175):

Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը

Նախաբան

Որպես Աստվածաշնչի զուգընկեր Մորմոնի Գիրքը վկայում է Հիսուս Քրիստոսի աստվածայնության և որպես աշխարհի Փրկիչ Նրա դերի մասին: Մորմոնի Գիրքը վերականգնում է պարզ և թանկարժեք ճշմարտությունները, որոնք կորսվել էին Աստվածաշնչից:

Երբ մենք ուսումնասիրում ենք Մորմոնի Գիրքը, Աստվածաշնչում եղած վարդապետությունների վերաբերյալ մեր հասկացողությունը պարզաբանվում է:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ռասսել Մ. Նելսոն, «Սուրբ գրքերի վկայություններ», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2007, 43-46:
- Թեդ Ռ. Քալիսթեր, «Մորմոնի Գիրք՝ գիրք Աստծուց», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2011, 74-76:

Ուսուցման առաջարկներ

Եզեկիել 37.15–19, 2 Նեփի 3.11–12, 29.3–10

Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը միասին վկայում են Հիսուս Քրիստոսի մասին:


Հարցրեք ուսանողներին, թե ինչ կարող են ասել մեկին, ով կասկածներ է արտահայտում Մորմոնի Գրքի մասին, քանի որ Աստված արդեն իսկ մեզ տվել է Աստվածաշունչը:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 29.3-10 հատվածները և նշել, թե ինչ պատճառներով Տերը նախապատրաստեց մեկից ավելի սուրբ գրությունների գիրք:

- Ի՞նչ է Տերն ասել այն մարդկանց մասին, ովքեր կասկածանքով են վերաբերվում Աստվածաշնչին լրացնող սուրբ գրությանը:
- Համաձայն հատված 8-ի, որն էր Աստվածաշնչին լրացնող սուրբ գրություն ի հայտ բերելու Տիրոջ նպատակը: (Ուսանողները կարող են առաջարկել տարբեր պատասխաններ, սակայն նրանք պետք է ներկայացնեն հետևյալ ճշմարտությունը. **Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը միասին վկայում են Հիսուս Քրիստոսի մասին:**)
- Ի՞նչ էք սովորում այս հատվածից, որն օգնում է ձեզ հասկանալ լրացուցիչ սուրբ գրությունների վկայությունն ունենալու կարևորությունը:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի խորությամբ հասկանալ, թե ինչպես են Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը միասին վկայում Հիսուս Քրիստոսի մասին, ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Սուրբգրքյան վկայությունները վավերացնում են մեկը մյուսին: Այս տեսակետը վաղուց է բացատրվել, երբ մի մարգարե գրեց, որ Մորմոնի Գիրքը «գրվել է այն նպատակով, որ դուք հավատաք [Աստվածաշնչին] և եթե դուք հավատաք [Աստվածաշնչին], դուք կհավատաք նաև [Մորմոնի Գրքին]» [Մորմոն 7.9]: Յուրաքանչյուր գիրք հղում է կատարում մյուսին: Յուրաքանչյուր գիրք ապացույց է հանդիսանում, որ Աստված ապրում է և խոսում իր զավակների հետ՝ Իր մարգարեներին հայտնություն տալու միջոցով:

Մորմոնի Գրքի հանդեպ սերը մեծացնում է սերը Աստվածաշնչի հանդեպ և ճիշտ հակառակը: Վերականգնման սուրբ գրքերը չեն մրցակցում Աստվածաշնչի հետ» («Սուրբ գրքերի վկայություններ», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2007, 43):

- Ի՞նչը գրավեց ձեր ուշադրությունը, երբ կարդացիք այս երկու սուրբ գրքերի միջև եղած կապի վերաբերյալ Նախագահ Նելսոնի նկարագրությունը, և ինչո՞ւ:

Հիշեցրեք ուսանողներին, որ Հին Կտակարանի մարգարե Եզեկիելը մարգարեացել էր, որ Հուդայի փայտը և Հովսեփի փայտը պիտի միանային: Բացատրեք, որ «փայտ» բառը կարող է վերաբերել կամ փայտե հուշատախտակներին, կամ հնագույն ձեռագիր գալարներին, որոնց ծայրերին փայտեր էին ամրացվում (Boyd K. Packer, “Scriptures,” *Ensign*, Nov. 1982, 51): Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Եզեկիել 37.15-19 հատվածները:

- Ի՞նչ են ներկայացնում այդ փայտերը: (Անհրաժեշտության դեպքում կարող եք բացատրել, որ «Հուդայի փայտը» վերաբերում է Աստվածաշնչին, իսկ «Եփրեմի փայտը»՝ Մորմոնի Գրքին:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում այն արտահայտությունը, որ սուրբ գրությունների այս հնադարյան ձեռագրերը կամ փայտերը պիտի «միանան քո ձեռքումը» (հատվածներ 17, 19):

Որպեսզի օգնեք պատասխանել այս հարցին, կիսվեք Տասներկու Մոսթրյալների Քվորումի Նախագահ՝ Նախագահ Բոյդ Զ. Փաքերի հետևյալ խոսքերով: Բացատրեք, որ Նախագահ Փաքերի այս հայտարարությունից կարճ ժամանակ առաջ Եկեղեցին տպագրել էր Մորմոնի Գրքի և Աստվածաշնչի նոր հրատարակությունները: Գրքերից յուրաքանչյուրում կային ծանոթագրություններ և սուրբ գրքերից վերցված այլ օժանդակ նյութեր, որոնց միջոցով հղումներ էին կատարվում մյուս գրքին, այդպիսով իսկ միավորելով երկուսը նոր եղանակով: Հրավիրեք դասարանին լսելու այն օրհնությունների մասին, որոնք հասանելի են նրանց, ովքեր ուսումնասիրում են Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը միասին:



«Հուդայի փայտը կամ հիշատակարանը ... և Եփրեմի փայտը կամ հիշատակարանը ... այժմ այնպես են միահյուսվել, որ երբ խորհում ես մեկի շուրջ, ընկղմվում ես մյուսի մեջ, երբ սովորում ես մեկից, լույս է սփռվում մյուսի վրա: Դրանք, իրոք, մեկ են մեր ձեռքում: Այժմ մենք տեսնում ենք Եզեկիելի մարգարեությունն իրականացած:

Տարիների ընթացքում այդ սուրբ գրությունները կպատրաստեն հավատարիմ քրիստոնյաների հաջորդող սերունդներ, ովքեր կճանաչեն Հիսուս Քրիստոսին և պատրաստ կլինեն հնազանդվելու Նրա կամքին: ...

... Այնպիսի հայտնություններ կբացվեն [նոր սերունդներին], որ աշխարհի պատմությունը երբևէ չի գրանցել: Այժմ նրանց ձեռքերում են գտնվում Հովսեփի և Հուդայի փայտերը: ... Նրանք ավետարանի վերաբերյալ իրենց գիտելիքը կգարգացնեն այն ամենից վեր, ինչին իրենց նախնիները կարող էին հասնել: Նրանք վկայություն կունենան, որ Հիսուսը Քրիստոսն է և իրավասու կլինեն հռչակելու Նրան և պաշտպանելու Նրան» (*“Scriptures,” Ensign, Nov. 1982, 53*):

- Ի՞նչ օրհնություններ են մատչելի դառնում, երբ ուսումնասիրում ենք Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը միասին: (Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալ սկզբունքը. **Երբ մենք ուսումնասիրում ենք Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը միասին, մենք ավելի մեծ վկայություն ենք ստանում առ այն, որ Հիսուսը Քրիստոսն է:**)
- Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը միասին ուսումնասիրելն ինչպե՞ս է խորացնում Հիսուս Քրիստոսի մասին ձեր գիտելիքները և վկայությունը:

Խնդրեք մի ուսանողի կարդալ 2 Նեփի 3.11-12: (Օգտակար կլինի պարզաբանելը, որ այս հատվածները Եզիպտոսի Հովսեփի մարգարեության մի մասն են: Այս հատվածներում Հովսեփը նշում է երկու գրքերի մասին. Հովսեփի սերունդների կողմից գրված Մորմոնի Գիրքն է, իսկ Հուդայի սերունդների կողմից գրված Աստվածաշունչն է:)

- Ի՞նչ ազդեցություն կունենան երկրի վրա Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը, երբ այս երկու գրքերը «սերտաճեն»: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ գաղափարները. Գրքերը կհերքեն կեղծ վարդապետությունները, կդադարեցնեն հակառակությունները և խաղաղություն կհաստատեն:)

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչպես կարող են օգտագործել Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը միասին, որպեսզի ամրացնեն իրենց վկայությունները և Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը: Ուսանողներին խնդրեք կիսվել իրենց մտքերով և տպավորություններով: Նաև խրախուսեք նրանց գործել ըստ իրենց ստացած հուշումների:

1 Նեփի 13.23–29, 35–36, 38–41

Պարզ և արժեքավոր ճշմարտությունները վերականգնվել են:

Հիշեցրեք ուսանողներին, որ Տերը պատվիրել էր Մարգարե Ջոզեֆ Մաիթին կատարել Աստվածաշնչի Մուրբ Հակոբոսի տարբերակի ոգեշնչված վերանայում: Այս վերանայված տարբերակը հայտնի է որպես

Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն: Ցուցադրեք և կարդացեք Մարգարե
Ջոզեֆ Սմիթի (1805-44) հետևյալ խոսքերը.



«Ես հավատում եմ Աստվածաշնչին, ինչպես այն կարդացվել է բնագիրը
գրողների գրչով գրված ժամանակ: Անիրազեկ թարգմանիչները, անփույթ
արտագրողները կամ խափուսիկ և ապականված քահանաները շատ
սխալներ են թույլ տվել» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ
Սմիթ [2007], 219):

- Ինչո՞ւ էր անհրաժեշտ Աստվածաշնչի ոգեշնչված վերանայում:

Հիշեցրեք ուսանողներին, որ Նեփին տեսիլք տեսավ Աստվածաշնչի
առաջ գալու վերաբերյալ: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն
կարդալ 1 Նեփի 13.23-25 հատվածները: Դասարանին խնդրեք փնտրել
Աստվածաշնչի վերաբերյալ Նեփիի նկարագրությունը, երբ այն նոր
էր գրվել:

- Ի՞նչ ուսուցանեց հրեշտակը Նեփիին Աստվածաշնչի վերաբերյալ, երբ
այն նոր էր ստեղծվել: (Այն «պարունակում էր Տիրոջ ուխտերը», այն
«մեծ արժեք ունի» և այն «պարունակում էր Տիրոջ ավետարանի
լրիվությունը»:)

Հրավիրեք ուսանողներին կարդալ 1 Նեփի 13.26–28 հատվածները,
որոնցում, թե ինչ Նեփին իմացավ այն մասին, ինչ պիտի տեղի ունենար
Աստվածաշնչի հետ և որոնք էին պատճառները:

- Ի՞նչ արեց Աստվածաշնչի հետ մեծ և պիղծ եկեղեցին: (Շեշտեք, որ մեծ
ու պիղծ եկեղեցին որոշակի եկեղեցի կամ կազմակերպություն չէ, այլ
ընդհանուր եզրույթ, որը վերաբերում է բոլորին, ովքեր կովում են
Քրիստոսի դեմ [տես 1 Նեփի 13.4–9, 14.10]:)
- Համաձայն հատված 27-ի, ինչո՞ւ էին հեռացվել այս պարզ ու
արժեքավոր մասերը:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ 1 Նեփի 13.29
հատվածը, մինչ դասարանը կփնտրի պարզ ու արժեքավոր մասերը
Աստվածաշնչից հեռացնելու հետևանքները:

- Ի՞նչ պատահեց այն ամենի արդյունքում, երբ Տիրոջ պարզ և
արժեքավոր ուսմունքները հանվեցին Աստվածաշնչից:
- Ի՞նչ ապացույց էք տեսնում այսօր աշխարհում, որ «շատ-շատերը
սայթաքում են» պարզ ու արժեքավոր ճշմարտությունների
բացակայության արդյունքում:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 1 Նեփի
13.35–36, 38–41 հատվածները, մինչ դասարանը կփնտրի այս խնդրին
տրվող Տիրոջ լուծումը:

- Ի՞նչ կանի Տերը պարզ ու արժեքավոր ճշմարտությունները
Աստվածաշնչից հեռացնելու պատճառով առաջ եկած խնդիրները
հաղթահարելու համար:

- Ի լրացում Մորմոնի Գրքին, ի՞նչ «ուրիշ գրքեր» է Տերն առաջ բերել որպես Վերականգնման մի մաս: (Խրախուսեք ուսանողներին նշում կատարել իրենց սուրբ գրություններում, որ «ուրիշ գրքերը» կարող են ներառել Վարդապետություն և Ուխտերը, Թանկագին Մարգարիտը և Աստվածաշնչի Զոգեֆ Սմիթի Թարգմանությունը:)
- Համաձայն հատված 40-ի, ինչպե՞ս են Մորմոնի Գիրքը և «ուրիշ գրքերը» լուծում խնդիրները, որոնք առաջ են եկել պարզ ու արժեքավոր ճշմարտությունները Աստվածաշնչից հեռացնելու պատճառով: (Ուսանողները պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունը. **Մորմոնի Գիրքը և վերջին օրերի սուրբ գրությունները օգնում են հաստատել Աստվածաշնչի ճշմարտությունը և վերականգնել պարզ ու արժեքավոր ճշմարտությունները, որոնք հանվել էին:**)

Որպեսզի լուսաբանեք, թե ինչպես է Մորմոնի Գիրքը հաստատում մեր հասկացողությունը Աստվածաշնչում գտնվող վարդապետության և սկզբունքների վերաբերյալ, կիսվեք Երեց Թեդ Ռ. Քալիսթերի հետևյալ խոսքերով, ով ծառայել է Յոթանասունի Նախագահությունում:



«Աստվածաշունչը մի վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին, իսկ Մորմոնի Գիրքը՝ մեկ այլ վկայություն: Ինչո՞ւ է այդքան կենսական այս երկրորդ վկայությունը: Հետևյալ պատկերը կարող է օգնել: Որքա՞ն ուղիղ գծեր դուք կարող եք անցկացնել մեկ կետով մեկ թղթի վրա: Պատասխանս է՝ անթիվ: Մի պահ պատկերացրեք, որ մեկ կետը ներկայացնում է Աստվածաշունչը, իսկ հարյուրավոր ուղիղ գծերը, որոնք անցնում են այդ կետով, ներկայացնում են Աստվածաշնչի տարբեր մեկնաբանությունները, և որ այդ մեկնաբանություններից յուրաքանչյուրը մի եկեղեցի է ներկայացնում:

Ի՞նչ է պատահում, երբ այդ թղթի վրա հայտնվում է երկրորդ կետը՝ Մորմոնի Գիրքը: Զանի՞ ուղիղ գիծ դուք կարող եք տանել այս երկու կետերի՝ Աստվածաշնչի և Մորմոնի Գրքի միջև: Միայն մեկ: Քրիստոսի վարդապետությունների միայն մեկ մեկնաբանություն կարող է ճշմարիտ լինել, եթե կա երկու վկաների վկայություն:

Կրկին և կրկին, Մորմոնի Գիրքը հանդիսանում է հաստատող, պարզաբանող, միավորող վկայություն այն վարդապետությունների մասին, որոնք ուսուցանվում են Աստվածաշնչում» («Մորմոնի Գիրք՝ գիրք Աստծուց», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2011, 75):

- Ինչո՞ւ է կարևոր ունենալ թե Մորմոնի Գիրքը, թե Աստվածաշունչը որպես Հիսուս Քրիստոսի ավետարանի վարդապետությունների վկաներ:

Հրավիրեք ուսանողներին բերել իրենց վկայությունները և կիսվել օրինակներով, թե ինչպես է Մորմոնի Գիրքն օգնել նրանց ավելի լավ հասկանալ Աստվածաշունչը կամ ավելի մոտենալ Փրկիչին:

Ուսանողի ընթերցարան

- Եզեկիել 37.15–19, 1 Նեփի 13.20–41, 2 Նեփի 3.11–14, 29.1–14:
- Ռասսել Մ. Նելսոն, «Սուրբ գրքերի վկայություններ», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2007, 43–46:

Փրկությունը գալիս է Հիսուս Քրիստոսի միջոցով

Նախաբան

Հիսուս Քրիստոսին հետևելու և Նրա պատվիրանները պահելու մեր ջանքերը անհրաժեշտ են, սակայն ոչ բավարար, որպեսզի մեզ արժանի դարձնեն փրկվելուն: Մեր փրկությունը հնարավոր է դարձվել միայն Հիսուս Քրիստոսի արժանիքների, ողորմության և շնորհի միջոցով: Քրիստոսի վարդապետությունն օգնում է մեզ

հասկանալ, որ Նրա շնորհով մենք կարող ենք սովորել ավետարանը, ստանալ արարողությունները և առաջ մղվել այն արահետով, որը տանում է դեպի հավերժական կյանք:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դիտեր Ֆ. Ուլտորֆ, «Շնորհի պարզեր», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2015, 107-10:
- Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Հիսուս Քրիստոսի Ավետարանը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2008, 44-46:

Ուսուցման առաջարկներ

2 Նեփի 2.6–9, 25.23, Մոսիա 4.6–8

Փրկությունը հնարավոր է դարձվել Հիսուս Քրիստոսի միջոցով

Ցուցադրեք և կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Լ. Թոմ Փերիի (1922-2015) հետևյալ խոսքերը.



«Շատ մարդիկ խորհում են. «Որտեղի՞ց ենք մենք եկել: Ինչո՞ւ ենք այստեղ: Ո՞ւր ենք գնում»: Մեր Երկնային Հայրը մեզ չի ուղարկել աշխարհ աննպատակ, անիմաստ ճամփորդության: Նա ծրագիր է պատրաստել մեզ համար, որին պետք է հետևենք: Նա է այդ ծրագրի հեղինակը: Այն նախատեսված է մարդու զարգացման և ի վերջո՝ փրկության և վեհացման համար» («Փրկության ծրագիրը» *Ensign* կամ *Liahona*, մայիս 2006, 69-70):

- Երբ մարդիկ բացահայտում են, որ Աստված չի թողել նրանց մահկանացու կյանքում միայնակ թափառելու, այլ ծրագիր է նախապատրաստել նրանց փրկության համար, ձեր կարծիքով, ի՞նչ կարող են նրանք զգալ:

Հրավիրեք ուսանողներին կարդալ 2 Նեփի 2.6–9 հատվածները, փնտրելով, թե ինչն է փրկությունը հնարավոր դարձնում ըստ Լեքի մարգարեի խոսքերի:

- Ըստ Լեքիի, ի՞նչն է փրկությունը հնարավոր դարձնում Աստծո ծրագրում: (Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալը. **Մենք**

կարող ենք փրկվել միայն Հիսուս Քրիստոսի արժանիքների, ողորմության և շնորհի միջոցով: Դուք կարող եք կիսվել հետևյալ սահմանումով, թե ինչ է նշանակում փրկվել կամ փրկություն ստանալ. «Փրկությունը իր ճշմարիտ և ամբողջական իմաստով *վեհացում* կամ *հավերժական կյանք* գաղափարների հոմանիշն է և նախատեսում է ժառանգություն ձեռք բերել երեք երկինքներից ամենաբարձրում՝ սելեստիալ արքայությունում: Մի քանի բացառություններով, հենց սա է փրկությունը, որի մասին խոսում են սուրբ գրությունները» [Bruce R. McConkie, *Mormon Doctrine*, 2nd ed. (1966), 670]:)

- Ի՞նչ է նշանակում Հիսուս Քրիստոսի *արժանիքների, ողորմության և շնորհի* միջոցով: (Հիսուս Քրիստոսի *արժանիքներն* են Նրա արդար արարքները, հատկապես Նրա Քավությունը: *Ողորմությունը* վերաբերում է կարեկցանքին և մեր հանդեպ Նրա ցուցաբերած ներողամտությանը՝ անկախ մեր մեղքերից: *Շնորհը* վերաբերում է օգնությանը, որը Նա տալիս է մեզ ողորմության, սիրտ, բարության և հնարավորություն տվող զորության տեսքով, որը մեզ թույլ է տալիս ստանալու հավերժական կյանք և վեհացում այն բանից հետո, երբ մենք գործի ենք դնում մեր իսկ լավագույն ջանքերը: Տես նաև Աստվածաշնչի բառարան, «Շնորհ»:)

Որպեսզի օգնեք ուսանողներին խորացնել իրենց հասկացողությունն այս վարդապետության մասին, ցուցադրեք Նախագահ Դիտեր Ֆ. Ուիլսոնի ֆիլմը՝ *Հետևյալ խոսքերը և խնդրեք* որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Մենք չենք կարող վաստակել մեր ճանապարհը դեպի երկինք, արդարադատության պահանջները կանգնած են որպես խոչընդոտ, որը մենք անգոր ենք հաղթահարել ինքներս:

Սակայն ամեն ինչ կորած չէ:

Աստծո շնորհը մեր մեծ և անսահման հույսն է:

Հիսուս Քրիստոսի զոհաբերության շնորհիվ, ողորմության ծրագիրը բավարարում է արդարադատության պահանջները [տես Ալմա 42:15]» («Շնորհի պարզևը», *Ensign* կամ *Լիսինա*, մայիս 2015, 108):

- Ինչո՞ւ անհատի անձնական արդարակեցությունը բավարար չէ «արդարադատության պահանջները» բավարարելու և հավերժական կյանք ձեռք բերելու համար: (Չնայած ժամանակի ընթացքում մենք կարող ենք սովորել կատարելապես ապրել պատվիրաններով, ոչ ոք չի ապրել կատարյալ կյանքով, բացի Փրկիչից [տես Հռոմայեցիս 3.23]: Չնայած մենք կարող ենք դադարել մեղք գործել, մենք չենք կարող ջնջել նախկինում գործած մեր մեղքերի հասցրած վնասը կամ մեղքի զգացումը: Ահա թե ինչու են անհրաժեշտ Քավությունն ու շնորհը:)

Հիշեցրեք ուսանողներին, որ թեև մենք փրկված ենք միայն Հիսուս Քրիստոսի արժանիքների, ողորմության և շնորհի միջոցով, Մորմոնի Գրքում մարգարեներն ուսուցանել են, թե ինչ պետք է մենք անենք, որպեսզի կարողանանք ստանալ Փրկիչի փրկագնող զորությունը:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 4.6-8 հատվածները, իսկ դասարանին խնդրեք գտնել, թե ինչ ուսուցանեց Բենիամին թագավորը, որ մենք պետք է անենք Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով փրկություն ստանալու համար:

- Համաձայն Բենիամին թագավորի, ի՞նչ պետք է մենք անենք՝ Քավության միջոցով փրկություն ստանալու համար: (Գիտելիք ձեռք բերել Աստծո և Քավության մասին, ապավինել Աստծուն, ջանասիրաբար պահել պատվիրանները և հավատարիմ մնալ մինչև մեր կյանքի վերջը:)

Հրավիրեք ուսանողներին կարդալ 2 Նեփի 25.23:

- Ի՞նչ վարդապետություն ուսուցանեց Նեփին մեր փրկության վերաբերյալ: (Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալ վարդապետությունը. **Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մենք կարող ենք փրկվել շնորհով այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել:** Օգնեք ուսանողներին հասկանալ, որ միայն Հիսուս Քրիստոսի միջոցով մենք կկարողանանք դառնալ սուրբ և մեր Երկնային Հոր նման:)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այս վարդապետությունը, հրավիրեք նրանցից մեկին բարձրաձայն կարդալ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի (1899–1994) հետևյալ խոսքերը.



«Այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել» արտահայտությունը ներառում է մեր լավագույն ջանքերը ներդնելը: Այն ներառում է նրա պատվիրաններով ապրելը:

«Այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել» արտահայտությունը ներառում է մեր մերձավորներին սիրելը և նրանց համար աղոթելը, ովքեր թշնամաբար են վերաբերվում մեզ հետ: Դա նշանակում է հագցնելը մերկերին, կերակրելը սովյալներին, այցելելը հիվանդներին և «սատարելը նրանց, ովքեր ունեն մեր սատար կանգնելու կարիքը» (Մոսիա 4.16), հիշելով, որ այն, ինչ մենք անում ենք Աստծո զավակներից ամենափոքրի համար, անում ենք Նրա համար:

«Այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել» նշանակում է ապրել մաքրաբարո, մաքուր, անբիծ կյանքով, լինելով կատարելապես ազնիվ մեր բոլոր գործերում և վերաբերվել ուրիշների հետ այնպես, ինչպես կցանկանայինք, որ մեզ վերաբերվեին» ("Redemption through Christ after All We Can Do," *Liahona*, Dec. 1988, 5):

- Ի՞նչ եղանակներով եք դուք ճաշակել Տիրոջ շնորհը, որն օգնել է ձեզ ձեր իսկ ունակություններից առավել, երբ դուք գործադրել եք ձեր լավագույն ջանքերը Նրա մոտ գալու համար:

Օգտագործեք հետևյալ հայտարարությունը, որի հեղինակը նույնպես Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն է, որպեսզի օգնեք ուսանողներին խորհել այս հարցի շուրջ նախքան պատասխանելը.



«Որպես եկեղեցի մենք համաձայն ենք Նեփիի հետ, ով ասել է. «Շնորհի միջոցով է, որ մենք փրկվում ենք՝ այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել» (2 Նեփի 25.23:) ...

Շնորհի միջոցով Փրկիչը իրագործեց իր քավող զոհաբերությունը, որպեսզի ողջ մարդկությունը անմահություն ձեռք բերի:

Նրա շնորհի միջոցով, նրա քավության հանդեպ մեր հավատքի և մեր մեղքերն ապաշխարելու միջոցով մենք ուժ ենք ստանում անելու անհրաժեշտ աշխատանքներ, որոնք մենք ի գործու չէինք լինի անելու ինքնուրույն:

Նրա շնորհի միջոցով մենք օժտվում ենք օրհնություններով և հոգևոր ուժով, որոնք ի վերջո մեզ կառաջնորդեն դեպի հավերժական կյանք, եթե մենք համբերենք միևնույն վերջ:

Նրա շնորհի միջոցով մենք ավելի ենք նմանվում նրա աստվածային անհատականությանը» ("Redemption through Christ after All We Can Do," 4–5):

- Ձեր կարծիքով, ի՞նչ կարող ենք անել, որպեսզի ցույց տանք մեր երախտագիտությունը այն ամենի համար, ինչը Հիսուս Քրիստոսը հնարավոր է դարձնում:

Վկայեք, որ միայն շնորհի միջոցով է, որը հնարավոր է դարձվել Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով հաղթահարել Ադամի և Եվայի Անկման հետևանքները, ստանալ մեր մեղքերին թողություն, հաղթահարել թերությունները և զարգացում ապրել դեպի կատարելություն: Հորդորեք ուսանողներին խորհել, թե արդյոք նրանք անում են ամեն հնարավոր բան, որպեսզի ստանան Տիրոջ շնորհի օրհնությունները:

2 Նեփի 31.2, 10–21, 3 Նեփի 11.31–40, 3 Նեփի 27.13–22

Քրիստոսի վարդապետությունը

Հետևյալ հղումները գրեք գրատախտակին.

2 Նեփի 31.2, 10–21

3 Նեփի 11.31–40

3 Նեփի 27.13–22

Դասարանի մի մասին հանձնարարեք ուսումնասիրել 2 Նեփի 31.2, 10–21, մյուս մասին՝ 3 Նեփի 11.31–40, իսկ երրորդ մասին՝ 3 Նեփի 27.13–22 հատվածները: Նախքան ուսանողների սկսելը շեշտեք, որ այս հատվածները պարունակում են «Քրիստոսի վարդապետությունը», «իմ վարդապետությունը» կամ «իմ ավետարանը» եզրույթները: Բացատրեք, որ Քրիստոսի վարդապետությունը կամ ավետարանը, բաղկացած է այն ամենից, ինչ Հիսուս Քրիստոսն արել է և շարունակում է անել, որպեսզի մոտեցնի մեզ Հորը: Այն նաև պարունակում է այն ամենը, ինչ մենք պետք է անենք, որպեսզի ստանանք Հիսուս Քրիստոսի Քավության օրհնությունները: Հրավիրեք յուրաքանչյուր խմբին ներկայացնել և նշել, թե իրենց հանձնարարված հատվածներն ինչ են ուսուցանում Քրիստոսի

վարդապետության մասին՝ ինչ է արել Քրիստոսը և ինչ պետք է անենք մենք:

Իրենց հանձնարարված հատվածներն ուսումնասիրելու համար ուսանողներին բավարար ժամանակ տրամադրելուց հետո խնդրեք նրանց իրենց գտածը գրել գրատախտակին՝ յուրաքանչյուր հատվածի կողքին: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ է արել Հիսուս Քրիստոսը, որպեսզի մոտեցնի մեզ Հորը:
- Ի՞նչ պետք է անենք մենք, որպեսզի ստանանք Քրիստոսի Քավության օրհնությունները: (Մենք պետք է հավատք ունենանք, ապաշխարենք, մկրտվենք, ստանանք Սուրբ Հոգու պարգևը, համբերենք մինչև վերջ և ստանանք ու հնազանդվենք անձնական հայտնությանը:)
- Ինչպե՞ս դուք կարող եք ամփոփել Հիսուս Քրիստոսի վարդապետությամբ կամ ավետարանով ապրելու կարևորությունը: (Ուսանողները պետք է ներկայացնեն նմանատիպ մի սկզբունք. **Եթե մենք ապրում ենք Քրիստոսի վարդապետության համաձայն, մենք կարող ենք ճաշակել Քավության օրհնությունները և ստանալ հավերժական կյանք:**)

Ելնելով ձեր ուսանողների կարիքներից, խորհեք նմանատիպ հարցեր տալու մասին, որպեսզի օգնեք նրանց շարունակել վերլուծել իրենց կարդացած սուրբ գրությունների հատվածները.

- 2 Նեփի 31.20 հատվածի ո՞ր արտահայտությունն առանձնահատուկ իմաստ ունի ձեզ համար, և ինչպե՞ս է այն օգնում ձեզ ստանալ Քավության օրհնությունները:
- Համաձայն 2 Նեփի 31.13–14, 17 հատվածների, ի՞նչ է նշանակում մկրտվել «կրակով»: (Մարդը ստանում է մեղքերի թողություն և մաքրվում է Սուրբ Հոգու միջոցով:)
- Համաձայն 3 Նեփի 11.39–40 հատվածների, ինչո՞ւ է յուրաքանչյուր մարդու համար կարևոր Քրիստոսի վարդապետությունն ընդունելը: (Դուք կարող եք հրավիրել ուսանողներին այս հատվածից հղում կատարել Հելաման 5.12-ին:)
- Համաձայն 3 Նեփի 27.14–16 հատվածների, ի՞նչ է պատահում մեզ հետ, երբ ապրում ենք համաձայն Հիսուս Քրիստոսի վարդապետության կամ ավետարանի:

Վերջում ցուցադրեք հետևյալ հայտարարությունը *Քարոզիր իմ ավետարանը. միախոնելական ծառայության ուղեցույցից*: Հրավիրեք ուսանողներին կարդալ այն և փնտրել, թե ինչ ուղիներով կարող է Քրիստոսի վարդապետության համաձայն ապրելն օրհնել նրանց իրենց ողջ կյանքի ընթացքում:

«Անհատներն ու ընտանիքները սկսում են հետևել Քրիստոսին, երբ գործադրում են հավատք Նրա հանդեպ և ապաշխարում են իրենց մեղքերը: Նրանք ստանում են մեղքերի թողություն մկրտության և Սուրբ Հոգու պարգևի միջոցով, որը ստանում են այդ

արարողությունները կատարելու համար Աստծո իշխանությունը կրող մարդկանց կողմից: Ապա, նրանք դիմանում են մինչև վերջ, կամ այլ խոսքերով, շարունակում են կյանքի ընթացքում հավատք գործադրել Հիսուս Քրիստոսի հանդեպ, ապաշխարել և նորացնել իրենց կապած ուխտերը: Սրանք պարզապես սկզբունքներ չեն, որոնց նրանք պետք է մեկ անգամ հետևեն իրենց կյանքում, դրանք պետք է միշտ պահվեն կյանքի ընթացքում, դառնալով ապրելաձև, որն ավելի ու ավելի է վարձատրվում: Իրականում, սա միակ ապրելաձևն է, որը կարող է բանականությանը խաղաղություն պարգևել և հնարավորություն տալ Երկնային Հոր զավակներին վերադառնալ ապրելու Նրա ներկայության մեջ» (*Քարոզիչ Իմ Ավետարանը* [2004], 6):

- Ինչպե՞ս է Քրիստոսի վարդապետությամբ ապրելը «դարձել ապրելաձև, որն ավելի ու ավելի է վարձատրվում»:

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչ աստիճանի լավ են նրանք ապրում Քրիստոսի վարդապետությամբ: Խնդրեք նրանց մտածել, թե ինչը նրանք կարող են ավելի լավ անել, որպեսզի ստանան Քրիստոսի վարդապետությամբ ապրելու օրհնությունները:

Ուսանողի ընթերցարան

- 2 Նեփի 2.6–9, 25.23, 31.2–21, Մոսիա 4.6–8, 3 Նեփի 11.31–40, 27.13–22:
- Դիտեր Ֆ. Ուլտորֆ, «Շնորհի պարգևը», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2015, 107-10:

«Փնտրեք Աստծո արքայությունը»

Նախաբան

Երբ Մորմոնի Գրքի մարգարե Հակոբը խրախուսեց իր ժողովրդին փնտրել Աստծո արքայությունը (տես Հակոբ 2.18), նա արեց դա այն ժամանակ, երբ հպարտության, հարստությունների հանդեպ սեր ունենալու և անբարոյականության մեղքերը լուրջ խնդիրներ էին առաջ բերում: Այս մեղքերը սպառնալիք են հանդիսանում

երկրի վրա Աստծո արքայության միության և զարգացման համար: Աստծո արքայությունը փնտրելը նշանակում է ավետարանին համաձայն ապրելը մեր կյանքում առաջնահերթություն դարձնել: Այս դասը կօգնի ուսանողներին պարտավորվել թողնել մեղքը և ավելի լիարժեք ձևով փնտրել Աստծո արքայությունը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դիտեր Ֆ. Ուվսդորֆ, «Հպարտությունը և քահանայությունը», *Ensign* կամ *Լիսինս*, նոյ. 2010, 55-58:
- “Thou Shalt Have No Other Gods before Me,” chapter 14 in *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* (2006), 145–53.
- «Սիրեք Տիրոջը՝ մեծ պատվիրանը», գլուխ 1, *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն* (2014), 45-55):

Ուսուցման առաջարկներ

Ավմա 7.14–16, 19, 21–24

Մորմոնի Գիրքն ուսուցանում է մեզ ինչպես հետևել Աստծո արքայություն տանող շավիղներին:

Խնդրեք ուսանողներին խորհել բաների մասին, որոնք պետք է մշտապես ստուգել, որպեսզի լավ աշխատանքային վիճակում լինեն (օրինակ, ստուգել շարժիչի յուղը, ծուխ հայտնաբերող սարքի մարտկոցները, բժշկին կամ ատամնաբույժին այցելելը):

- Որո՞նք են այս ոլորտներում ուշադիր լինելու առավելությունները: (Մենք կարող ենք շտկել խնդիրները և խուսափել ապագա փորձանքից կամ վտանգից:)

Բացատրեք, որ նման կերպ մենք պետք է մշտապես վերանայենք մեր հոգևոր կյանքի պայմանները, որպեսզի գնահատենք մեր թուլությունները և խուսափենք վտանգից:

Ասեք ուսանողներին, որ երբ Ավմա Կրտսերը ծառայում էր որպես քահանայապետ, նա այցելեց Եկեղեցու մարդկանց Գեդեոնում և կոչ հղեց նրանց՝ գնահատելու իրենց հոգևոր վիճակը: Ուսանողներին խնդրեք մտքում կարդալ Ավմա 7.19 հատվածները, փնտրելով, թե հոգևոր ինչ վիճակում էին մարդիկ գտնվում Գեդեոնում:

- Ինչպե՞ս է Ալման նկարագրում Գեդեոնի մարդկանց հոգևոր վիճակը: (Մարդիկ գտնվում էին «այն շավիղում, որը տանում է դեպի Աստծո արքայություն»։)

Բացատրեք, որ «Աստծո արքայություն» արտահայտությունն ունի առնվազն երկու առանձին նշանակություններ՝ մեկը երկրային և մյուսը՝ երկնային: Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրուս Ռ. Մակքոնկիի (1915–1985) հետևյալ խոսքերը և օգնեք ուսանողներին հասկանալ, որ Ալմա 7.19 հատվածում «Աստծո արքայություն» արտահայտությունը վերաբերում է երկնային արքայությանը.



«Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին, ինչպես այն կոչվում է այժմ, *Աստծո արքայությունն է երկրի վրա*: ... Հավերժական աշխարհներում *երկնային արքայությունը Աստծո արքայությունն է*: ... Ավետարանը նախատեսված է նախապատրաստելու մարդուն ժառանգելու Աստծո երկնային արքայությունը» (*Mormon Doctrine*, 2nd ed. [1966], 415–17):

Ուսանողներին հանձնարարեք կարդալ Ալմա 7.14–16 հատվածները, ուշադրություն դարձնելով, թե ինչ ասաց Ալման ժողովրդին, որ նրանք պետք է անեին, որպեսզի ժառանգեին հավերժական կյանքը:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Ալման հրավիրեց մարդկանց ապաշխարել, երբ նրանք արդեն իսկ արդարության շավիղներում էին: (Գեդեոնի մարդիկ պետք է մնային արդարության շավիղներում:)

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 7.21–24 հատվածները: Դասարանին խնդրեք գտնել այն արարքները և հատկանիշները, որոնք կօգնեն մեզ ժառանգելու Աստծո արքայությունը:

- Ի՞նչ պետք է մենք *անենք* և ինչպիսի՞ն պետք է *լինենք*, որպեսզի հետևենք դեպի Աստծո արքայություն տանող շավիղին: (Ուսանողների պատասխաններն ամփոփելու համար գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. **Ավետարանի սկզբունքներով ապրելով մենք հետևում ենք այն շավիղին, որը տանում է դեպի Աստծո արքայությունը**։)

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչպես են իրենց արարքներն օգնում իրենց ավելի շատ նմանվել Հիսուս Քրիստոսին և առաջ շարժվել դեպի Աստծո արքայությունը: Խնդրեք նրանց խորհել, թե այժմ ըստ իրենց ինչ առաջընթաց ունեն:

1 Նեփի 10.21, 2 Նեփի 9.39, Հակոբ 2.12–14, 20–28, 3.10–12, Մոսիա 2.20–25, 4.13, 21–26, 3 Նեփի 12.27–30

Հարստությունների հանդեպ սերը, հպարտությունը և անբարոյականությունը մեզ հեռու են պահում Աստծո արքայությունը փնտրելուց

Բացատրեք, որ Մորմոնի Գրքի միջոցով Աստծո մարգարեները նախազգուշացրել են մարդկանց մեղքի դեմ: Օրինակ, Տերը պատվիրել էր

Հակոբին հանդիմանել իր ժողովրդին մեղքերի համար, որոնք «պիղծ են Աստծո համար» (Հակոբ 2.5):

Հետևյալ հղումները գրեք գրատախտակին. Հակոբ 2.12–14, Հակոբ 2.20–21 և Հակոբ 2.23–28: Խնդրեք ուսանողներին արագ աչքի անցկացնել այս հատվածները, փնտրելով որոշակի մեղքեր, որոնք նշել է Հակոբը: Խորհուրդ տվեք, որ ուսանողներն ընդգծեն բառերը կամ արտահայտությունները, որոնք նկարագրում են այդ մեղքերը: Բավարար ժամանակ տրամադրելուց հետո, հրավիրեք ուսանողներին կիսվել մեղքերով, որոնց Հակոբն անդրադարձել է յուրաքանչյուր հատվածում: Նրանց նշած յուրաքանչյուր մեղքը գրեք գրատախտակին համապատասխան հատվածի վերևում հետևյալ կերպ.

<i>Մեր հարստության հանդեպ</i>	<i>Հպարտություն</i>	<i>Անբարոյականություն</i>
Հակոբ 2.12-14	Հակոբ 2.20-21	Հակոբ 2.23-28

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Հակոբ 3.10-12 հատվածները, և հորդորեք դասարանին ուշադրություն դարձնել այն բառերին և արտահայտություններին, որոնք Հակոբն օգտագործել է մարդկանց մեղքերի լրջությունը ներկայացնելու համար:

- Ո՞ր բառերն ու արտահայտություններն են նկարագրում մարդկանց մեղքերի լրջությունը:
- Հակոբն օգտագործում է մեղքի «սոսկալի հետևանքները» արտահայտությունը (հատված 12): Հրավիրեք ուսանողներին Հակոբ 3.12 հատվածից հղում կատարել 2 Նեփի 9.39 և 1 Նեփի 10.21 հատվածներին: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այդ հատվածներից յուրաքանչյուրը: Հրավիրեք դասարանին փնտրել մեղքի այլ հետևանքներ: Հրավիրեք դասարանին ներկայացնել այս հատվածներում տրված ճշմարտությունն այն մասին, թե ինչպես կարող են մեղքերը, ինչպիսին են հպարտությունը, անբարոյականությունը և հարստության հանդեպ սերը, ազդել մեկի վրա, ով փնտրում է Աստծո արքայությունը: (Ուսանողները պետք է ներկայացնեն նմանատիպ մի ճշմարտություն. **Մեղքը տանում է դեպի հոգևոր մահ և արգելում է մեզ մտնել Աստծո արքայությունը:**)

Գրատախտակին ավելացրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները.

<i>Սեր հարստության հանդեպ</i>	<i>Հպարտություն</i>	<i>Անբարոյականություն</i>
Հակոբ 2.12-14 Մոսիա 4.13, 21-26	Հակոբ 2.20-21 Մոսիա 2.20-25	Հակոբ 2.23-28 3 Նեփի 12.27-30

Հրավիրեք ուսանողներին ընտրել և կարդալ նոր հատվածներից մեկը: Խնդրեք նրանց փնտրել ուղիներ, որոնց միջոցով կարող են խուսափել հարստությունների հանդեպ սեր ունենալու, հպարտության և անբարոյականության մեղքերից: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք կիսվել իրենց գտած նյութով:

- Այս հատվածներում տրված խորհուրդն ինչպե՞ս կարող է օգնել Եկեղեցու անդամին փնտրելու Աստծո արքայությունը և զորացնելու Տիրոջ Եկեղեցին երկրի վրա:

Մատթեոս 6.33, Հակոբ 2.17-19

Մենք պետք է փնտրենք Աստծո արքայությունը ամեն բանից առավել

Բացատրեք, որ բացի հարստությունների հանդեպ սիրո, հպարտության և անբարոյականության մասին իր ժողովրդին զգուշացնելուց, Հակոբը տվեց խորհուրդ՝ օգնելու նրանց հաղթահարել իրենց անարդար ցանկությունները: Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Հակոբ 2.17-19 հատվածները, մինչ դասարանը կփնտրի Հակոբի տված խորհուրդը:

- Ի՞նչ կարող ենք մենք սովորել Հակոբի խորհուրդից, որը կարող է օգնել մեզ խուսափել մեղքից: (Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալը. **Աստված պատվիրել է մեզ փնտրել Աստծո արքայությունը ամեն հետաքրքրություններից առավել:**)
- Ըստ ձեզ, ի՞նչ է նշանակում նախ փնտրել Աստծո արքայությունը:

Յուդադրեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի (1899–1994) հետևյալ խոսքերը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Երբ մենք Աստծուն առաջին տեղում ենք դնում, բոլոր մյուս բաներն ընկնում են իրենց համապատասխան տեղը կամ հեռանում են մեր կյանքից: Տիրոջ հանդեպ մեր սերը կկառավարի մեր գործվանքի պահանջը, մեր ժամանակի կարիքը, հետաքրքրությունները, որոնց մենք հետամուտ ենք և մեր առաջնահերթությունների հերթականությունը» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն [2014], 49):

- Որո՞նք են այն բաների օրինակները, որ «ընկնում են իրենց համապատասխան տեղը կամ հեռանում են մեր կյանքից», երբ Աստված մեզ համար առաջին տեղում է լինում:

- Ի՞նչ օրինակ կարող եք բերել, երբ ինչ-որ բան ընկել է իր համապատասխան տեղը կամ հեռացել է ձեր կյանքից, երբ ձեզ համար առաջին տեղում են եղել Երկնային Հայրը և Նրա արքայությունը:
- Ի՞նչ ազդեցություն կունենա մեզ վրա առաջին հերթին Աստծուն փնտրելը, երբ մենք կանգնած ենք հպարտության, հարստությունների սիրելու, անբարոյականության կամ այլ մեղքերի գայթակղության առաջ:

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մատթեոս 6.33 հատվածը: Ասացեք ուսանողներին, որ Ջոզեֆ Մմիթի Թարգմանությունը կարդացվում է հետևյալ կերպ. «Ուստի, մի փնտրեք այս աշխարհի բաները, այլ նախ փնտրեք *կառուցել* Աստծո արքայությունը և *հաստատել* նրա արդարությունը, և այդ ամենը կտրվի ձեզ» (Ջոզեֆ Մմիթի Թարգմանություն, Մատթեոս 6.38 [տես Մատթեոս 6.33, ծանոթագրություն ա]):

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Հ. Օուքսի հետևյալ խոսքերը.



«Նախ փնտրեք կառուցել Աստծո արքայությունը» նշանակում է առաջնահերթությունը տալ Աստծուն և Նրա աշխատանքին: Աստծո գործը կայանում է հետևյալում՝ իրականացնել Իր զավակների հավերժական կյանքը (տես Մովսես 1.39) և այն ամենը, ինչը կապված է դրա հետ: ... Ցանկացած այլ բան չի կարող լինել դրանից ավելի առաջնահերթ: ... Ինչպես մեկն ասել է, եթե մենք նախ չենք ընտրել Աստծո արքայությունը, այն մի փոքր կփոփոխի հեռանկարը, համաձայն այն բանի, ինչը մենք ընտրել էինք դրա փոխարեն» ("Focus and Priorities," *Ensign*, May 2001, 83–84):

- Ինչպե՞ս կարող է Եկեղեցու երիտասարդ չափահասը «կառուցել Աստծո արքայությունը»:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերը.



«Երբ ընտրում ենք լինել [Աստծո] արքայությունում, մենք առանձնացնում, այլ ոչ թե մեկուսացնում ենք մեզ աշխարհից: Մեր հագուստը կլինի համեստ, մեր մտքերն ու լեզուն՝ մաքուր: Ֆիլմերը և հաղորդումները, որոնք մենք դիտում ենք, երաժշտությունը, որը մենք լսում ենք, գրքերը, ամսագրերն ու թերթերը, որոնք մենք կարդում ենք, կլինեն վեհացնող: Մենք կընտրենք ընկերներ, ովքեր աջակցում են մեր հավերժական նպատակներին, և մենք բարյացակամ կլինենք ուրիշների հանդեպ: Մենք կխուսափենք անբարոյականության, մոլախաղով զբաղվելու, ծխախոտ, ալկոհոլ և թմրանյութեր օգտագործելու արատներից: Մեր կիրակնօրյա միջոցառումները կարտացոլեն հանգստության օրը հիշելու և այն սուրբ պահելու Աստծո պատվիրանը: Մենք կհետևենք Հիսուս Քրիստոսի օրինակին ուրիշների հանդեպ մեր վերաբերմունքով: Մենք այնպես կապրենք, որ արժանի լինենք մտնելու Տիրոջ տունը» ("The Covenant of Baptism: To Be in the Kingdom and of the Kingdom," *Ensign*, Nov. 2000, 8):

- Ինչպե՞ս կարող է Աստծո արքայությունը փնտրելը մեծապես ազդել մեր կյանքի յուրաքանչյուր ոլորտի վրա:
- Ինչպե՞ս է Աստծո արքայությունը փնտրելն ազդել ձեր կյանքի, ընտանիքի անդամի կամ ծանոթ մեկի կյանքի վրա:

Խրախուսեք ուսանողներին մտածել, թե ինչ կարող են անել՝ Աստծո արքայությունը շարունակ փնտրելու համար: Խրախուսեք ուսանողներին ականջ դնել Հոգու հուշումներին և գրի առնել այն, ինչ ծրագրում են անել: Վկայեք այն օրհնությունների մասին, որ գալիս են Աստծուն մեր կյանքում առաջին տեղը հատկացնելուց:

Ուսանողի ընթերցարան

- Մատթեոս 6.33, Հակոբ 2.12–28, 3.10–12, Մոսիա 2.20–25, 4.13, 21–26, Ալմա 7.14–16, 19, 21–24, 3 Նեփի 12.27–30:
- «Սիրեք Տիրոջը՝ մեծ պատվիրանը», գլուխ 1, *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն* (2014), 45–55):

Աղոթք և հայտնություն

Նախաբան

Աղոթքը սրբազան արտոնություն է և պատվիրան, որը մեզ թույլ է տալիս հաղորդակցվել սիրող Երկնային Հոր հետ: Նա լսում և պատասխանում է մեր աղոթքներին: Նրանք, ովքեր ջանասիրաբար փնտրում են Տիրոջ առաջնորդությունը, կարող են օրհնվել անձնական

հայտնությամբ: Այս դասը շեշտում է, թե ինչ կարող ենք անել, որ պատրաստենք մեր սրտերը և մեր մտքերը՝ մեր աղոթքների պատասխանները ստանալու համար:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Boyd K. Packer, “The Candle of the Lord,” *Ensign*, Jan. 1983, 51–56.
- Ռիչարդ Գ. Սքոթ, «Ինչպես ստանալ հայտնություն և ոգեշնչում ձեր անձնական կյանքի համար», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2012, 45–47:
- Դեյվիդ Ա. Բեդնար, «Հայտնության Հոգին», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2011, 87–90:

Ուսուցման առաջարկներ

2 Նեփի 32.8–9, 3 Նեփի 14.7–11

Աստված լսում է մեր աղոթքները

Խնդրեք ուսանողներին թվարկել այն եղանակները, որոնցով մենք կարող ենք օգտագործել տեխնիկական սարքեր, որպեսզի հաղորդակցվենք ուրիշների հետ: Ուսանողների պատասխանները գրեք գրատախտակին:

- Մինչդեռ տեխնիկական սարքերը մեզ թույլ են տալիս հաղորդակցվել մեր ընտրած գրեթե ցանկացած մարդու հետ, ինչո՞ւ ենք մենք երբեմն դժվար համարում մեր Երկնային Հոր հետ արդյունավետ հաղորդակցությունը:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ 3 Նեփի 14.7–11 հատվածները, մինչ դասարանը կփնտրի, թե ինչ է Փրկիչն ուսուցանում մեր աղոթքներին պատասխանելու Երկնային Հոր պատրաստակամության մասին:

- Ի՞նչ սկզբունք է Փրկիչը սովորեցնում մեր աղոթքներին պատասխանելու Երկնային Հոր պատրաստակամության մասին: (Ուսանողի պատասխանները պետք է ներառեն հետևյալ սկզբունքը. **Երկնային Հայրը լսում և պատասխանում է մեզ, երբ մենք խնդրում, փնտրում և թակում ենք:**)

Որպեսզի խորացնեք այս սկզբունքի վերաբերյալ ուսանողների հասկացողությունը, կիսվեք Առաջին Նախագահությունից Նախագահ Ջեյմս Բ. Ֆաուստի (1920–2007) հետևյալ խոսքերով.



«Ոչ մի աշխարհիկ իշխանություն չի կարող սահմանափակել ուղիղ կապը մեր Արարչի հետ: Երբեք չի կարող լինել մեխանիկական կամ էլեկտրոնային անսարքություն, երբ մենք աղոթում ենք: Չկա քանակական կամ ժամանակի սահմանափակում, թե որքան մենք կարող ենք աղոթել ամեն օր: Չկա որոշված չափաքանակ, թե քանի կարիքների վերաբերյալ մենք կարող ենք աղոթել ամեն աղոթքի ժամանակ: Կարիք չկա, որ մենք դիմենք քարտուղարների կամ պայմանավորվածություն ձեռք բերենք՝ շնորհի գահին հասնելու համար: Նա հասանելի է ցանկացած պահի և ցանկացած վայրում» ("The Lifeline of Prayer," *Ensign*, May 2002, 59):

- Ի՞նչ կարող եք դուք ասել՝ օգնելու համար այն անձանց, ովքեր հաճախ չեն աղոթում, քանի որ չեն հավատում, որ Աստված լսում կամ պատասխանում է իրենց աղոթքներին:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 32.8-9 հատվածները և խնդրեք դասարանին փնտրել, թե ինչ է Նեփին ուսուցանել աղոթքի մասին: Դուք կարող եք տալ նմանատիպ հարցեր.

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «միշտ աղոթել»:
- Ի՞նչ օրինակ եք տեսել, երբ մեկը միշտ աղոթում է: Ինչպե՞ս է այդ անհատը օրինվել տվյալ գործելակերպի արդյունքում:
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում այն փաստը, որ Տերը «կնվիրագործի» ձեր ջանքերը ձեր հոգու բարօրության համար, երբ դուք դիմեք Նրան աղոթքով: (Կարող է օգտակար լինել շեշտելը, որ ինչ-որ բան *նվիրագործել* նշանակում է նվիրել այն հատուկ կամ սուրբ նպատակով կամ դարձնել այն սուրբ:)

Խրախուսեք ուսանողներին ջանասեր լինել միշտ աղոթելու իրենց ջանքերում: Վստահեցրեք նրանց, որ Երկնային Հայրը լսում է իրենց աղոթքները և մեծապես ցանկանում է օրհնել նրանց:

1 Նեփի 10.17–19, 15.1–3, 7–11, Հակոբ 4.6, Ավա 26.22

Հիսուս Քրիստոսի բոլոր հետևորդները կարող են անձնական հայտնություն ստանալ:

Խնդրեք ուսանողներին թվարկել որոշ հարցեր կամ հանգամանքներ, որոնց համար երիտասարդ չափահասները կցանկանային հայտնություն ստանալ Աստծուց:

Հիշեցրեք ուսանողներին կենաց ծառի մասին Լեքիի երազի մասին և շեշտեք, որ այս ոգեշնչված երազի մասին լսելուց հետո Նեփին ցանկացավ ավելի իմանալ դրա մասին: Խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 1 Նեփի 10.17-19 հատվածները: Խնդրեք դասարանին գտնել, թե ինչ են այս հատվածներն ուսուցանում հայտնության մասին, ներառյալ այն, թե ով իրավունք ունի ստանալու այն:

- Ի՞նչ են այս հատվածներն ուսուցանում անձնական հայտնության մասին: (Համոզվեք, որ ներկայացվում է հետևյալ վարդապետությունը. **Աստված հայտնում է ճշմարտությունը Սուրբ Հոգու զորությամբ բոլոր նրանց, ովքեր ջանասիրաբար փնտրում են, որ իմանան:**)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«[Հայտնության Հոգին] չի սահմանափակվում Եկեղեցու նախագահող իշխանավորներով, ավելի ճիշտ այն պատկանում է և պետք է գործի յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի կյանքում, ով հասնում է պատասխանատվության տարիքին և մտնում է սուրբ ուխտի մեջ: Անկեղծ ցանկությունն ու արժանավորությունը հրավիրում են հայտնության Հոգին մեր կյանք» («Հայտնության Հոգին», *Ensign* կամ *Lehman*, մայիս 2011, 87):

- Ինչո՞ւ են Երեց Բեդնարի այս մտքերը հուսադրող ձեզ համար:

Բացատրեք, որ Նեփիի ցանկությունների, նրա արժանավորության և հավատքի շնորհիվ նրան նույնպես ցույց տրվեց կենաց ծառի տեսիլքը (տես 1 Նեփի 11–14): Նաև շեշտեք, որ Լամանի և Լեմուելի արձագանքն առ իրենց հոր տեսիլքը բավականին տարբերվում էր Նեփիի արձագանքից: Խնդրեք երկու ուսանողների բարձրաձայն կարդալ 1 Նեփի 15.1–3, 7–9 հատվածները և հրավիրեք դասարանին հետևել և խորհել, թե ինչ են սովորում այս հատվածներից:

- Ի՞նչն է ամենակարևորը ձեզ համար այս հատվածներում:

Խնդրեք մեկ այլ ուսանողի բարձրաձայն կարդալ 1 Նեփի 15.10–11 հատվածները: Շեշտեք, որ հատված 11-ը սուրբ գրություններում «եթե-ապա» կառուցվածք ունեցող նախադասության օրինակ է: Գրատախտակին գրեք հետևյալը և ուսանողներին հարցրեք, թե ինչպես կլրացնեն այս նախադասությունը համաձայն 10–11 հատվածներում իրենց կարդացածի.

Եթե _____, ապա _____:

Հրավիրեք ուսանողներին հատված 11-ից հղում կատարել Ալմա 26.22-ին, այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս կարող եք օգտագործել 1 Նեփի 15.10–11 և Ալմա 26.22 հատվածներում սովորածը, որպեսզի ուսուցանեք ինչ-որ մեկին, թե ինչպես փնտրի իր աղոթքի պատասխանը:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Հակոբի 4.6 հատվածը և հրավիրեք դասարանին ուշադրություն դարձնել, թե ինչ արեց Հակոբի ժողովուրդը՝ ի լրացում հավատքով խնդրելուն, որպեսզի հայտնություն ստանային: Կարող եք բացատրել, որ «մենք ուսումնասիրում ենք մարգարեներին» արտահայտությունը վերաբերում է սուրբ գրություններից մարգարեների խոսքերը կարդալուն:

- Ինչո՞ւ էք կարծում, որ հին օրերի և վերջին օրերի մարգարեների խոսքերն ուսումնասիրելու արդյունքում կարող ենք հայտնություն ստանալ Տիրոջից:

Յուզադրեք և կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերը.



«Երբ մենք ցանկանում ենք խոսել Աստծո հետ, մենք աղոթում ենք: Եվ երբ մենք ցանկանում ենք, որ Նա խոսի մեզ հետ, մենք ուսումնասիրում ենք սուրբ գրությունները, քանի որ Նրա խոսքերը տրվել են Նրա մարգարեների միջոցով: Ապա Նա կուսուցանի մեզ, միևնույն ժամանակ կդնենք Սուրբ Հոգու հուշումներին:

Եթե դուք վերջին ժամանակներում չեք լսել ձեզ հետ խոսող Նրա ձայնը, վերադարձեք սուրբ գրություններին և նոր աչքերով և նոր ականջներով: Դրանք մեր հոգևոր հենարանն են» ("Holy Scriptures: The Power of God unto Our Salvation," *Ensign* կամ *Լիսհոնա*, նոյ. 2006, 26–27):

Հրավիրեք ուսանողներին մտածել դժվարության կամ որոշման մասին, որի առջև նրանք կանգնած են: Խնդրեք նրանց խորհել, թե արդյոք խորհուրդ են արել Տիրոջ հետ աղոթքի միջոցով և պատասխանի համար կենտրոնացել սուրբ գրությունների վրա:

Որպեսզի օգնեք ուսանողներին տեսնել օրինակները, թե ինչպես է Տերը անձնական հայտնություն տալիս մեզ, սուրբ գրությունների հետևյալ հղումները գրեք գրատախտակին:

1 Նեփի 4.6

1 Նեփի 8.2

Հակոբ 7.5

Ենոք 1.10

Հեբման 13.5

3 Նեփի 11.3

Այս հատվածներից յուրաքանչյուրը հանձնարարեք մի քանի ուսանողների: Խնդրեք նրանց կարդալ իրենց հանձնարարված հատվածները և գտնել ուղիներից մեկը, որով Աստված անձնական հայտնություն է տալիս Իր զավակներին: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտած նյութով: Երբ խորհեք ձեր ուսանողների կարիքների մասին, դուք կարող եք կիսվել Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Բ. Փաքերի (1924–2015) և Երեց Ռիչարդ Գ. Մքրթի հետևյալ խոսքերով.



«Հոգին մեր ուշադրությունը չի գրավում աղաղակելով կամ մեր ուսերից բռնած ուժգին թափահարելով: Դրա փոխարեն Նա շշնջում է: Նա այնքան քնքշորեն է մոտենում մեզ, որ եթե զբաղված լինենք, կարող ենք ոչինչ չնկատել: ...

Երբեմն Հոգու ներգործությունը բավական է լինում լոկ մեր ուշադրությունը գրավելու համար: Սակայն հիմնականում, եթե մենք ուշադրություն չենք դարձնում մեղմ զգացողությանը, Հոգին հեռանում և սպասում է, մինչև մենք կգանք փնտրելով և լսելով և մեր ձևով ասելով, ինչպես Սամուելը հին ժամանակներում. «Խօսիր [Տեր], որովհետև քո ծառան լսում է»: (Ա թագ. 3.10)» ("The Candle of the Lord," *Ensign*, Jan. 1983, 53):



«Նրա պատասխանները հազվադեպ կգան, երբ դուք ծնկի իջած աղոթեք, նույնիսկ, երբ աղերսեք անհապաղ պատասխանել ձեզ: Ավելի շուտ Նա կհուշի ձեզ խաղաղ պահերին, երբ հոգին կարող է ամենաարդյունավետ ձևով ազդել ձեր մտքի և սրտի վրա: Հետևաբար, դուք պետք է գտնեք խաղաղ պահեր՝ զանազանելու, երբ եք հրահանգավորվում և գորացվում»

(«Օգտագործելով աղոթքի երկնային պարզը», *Ensign* կամ *Լիաժողովուրդ*,

մայիս 2007, 9):

Հիշեցրեք ուսանողներին, որ մենք չենք ընտրում, թե ինչպես Աստված մեզ կհայտնի ճշմարտությունը, սակայն, երբ գործում ենք հավատքով, մենք ավելի լավ ենք նախապատրաստում մեր սրտերը և մտքերը հայտնություն ստանալուն: Հրավիրեք մի քանի ուսանողների՝ դասարանի հետ կիսվել, թե ինչպես են անձնական հայտնություն ստացել, եթե փորձառությունը խիստ անձնական կամ սուրբ չէ:

1 Նեփի 18.1–3, 2 Նեփի 28.30, Ալմա 12.9–11

Հայտնություն ստանալը և ըստ դրա գործելը

Խնդրեք ուսանողներին մտքում համեմատել 2 Նեփի 28.30 և Ալմա 12.9–11 հատվածները և գտնել սկզբունքներ, որոնք կարող են օգնել նրանց ավելի շատ անձնական հայտնություններ ստանալ:

- Ի՞նչ են այդ հատվածներն ուսուցանում այն մասին, թե ինչը մեզ կօգնի ավելի շատ անձնական հայտնություններ ստանալ: (Թեև ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, նրանք պետք է ներկայացնեն հետևյալ սկզբունքները. **Տերը հայտնում է մեզ ճշմարտությունը համաձայն այն բանի, թե որքան ջանասիրաբար ենք մենք ականջ դնում Իր խոսքին: Հայտնությունը հաճախ տրվում է մեզ տող առ տող:**)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Տերը պահանջում, որ մենք հնազանդվենք այն ամենին, ինչը Նա արդեն իսկ հայտնել է մեզ, նախքան Նա կհայտնի լրացուցիչ գիտելիքներ:
- Ի՞նչ ենք հասկանում, երբ ասում ենք, որ հայտնությունները մեզ տրվում են «տող առ տող»:

Եթե ժամանակը թույլ է տալիս, դուք կարող եք դասարանի հետ քննարկել 1 Նեփի 18.1–3 հատվածները, ցույց տալով, թե ինչպես է Նեփին ժամանակ

առ ժամանակ հայտնություն ստացել, որպեսզի սովորեր, թե ինչպես նա կառուցեր:

Յուցադրեք և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը:



Հոգին», 88):

«Ավելի հաճախ հայտնությունը գալիս է ժամանակ առ ժամանակ փոքր ավելացումներով և տրվում է համաձայն մեր ցանկության, արժանավորության և պատրաստվածության: Այսպիսի հաղորդակցությունները Երկնային Հորից աստիճանաբար և մեղմորեն «[իջնում են մեր] հոգու վրա, ինչպես ցողը երկնքից» (ՎեՌ 121.45): Հայտնության այս ձևը ավելի հաճախ է հանդիպում» («Հայտնության

- Երբ դուք խորհում եք ձեր անցած կյանքի շուրջ, ինչպե՞ս է Տերը ժամանակ առ ժամանակ առաջնորդում ձեզ որոշումներ կայացնելիս կամ հասկացողություն փնտրելիս:

Դասի վերջում ցուցադրեք և խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Նախագահ Թոմաս Ս. Մոնտնի հետևյալ հայտարարությունը.



«Եթե մեզանից որևէ մեկը ականջալուր չի եղել մշտապես աղոթելու խորհրդին, այժմ է աղոթել սկսելու ամենալավ ժամանակը: Վիլյամ Կուպերն ասել է. «Սատանան դողում է, երբ տեսնում է ամենաթույլ սրբին ծնկների վրա» [‘Exhortation to Prayer,’ in *Olnay Hymns*]» («Թագավորական Զահանայություն», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2007, 61):

Խնդրեք ուսանողներին մտածել ջանքերի մասին, որոնք նրանք ներկայումս տրամադրում են աղոթքին իրենց ամենօրյա կյանքում: Խրախուսեք նրանց հետևել այս դասի ընթացքում քննարկված սկզբունքներին, որպեսզի հրավիրեն առատ անձնական հայտնություններ աղոթքի և սուրբ գրությունների ուսումնասիրության միջոցով: Հրավիրեք ուսանողներին կիսվել նրանով, թե ինչպես գիտեն, որ Երկնային Հայրը պատասխանում է աղոթքներին: Կիսվեք ձեր վկայությամբ, որ մեր սիրող Երկնային Հայրը կոգեշնչի մեզ հասկացողությամբ և առաջնորդությամբ, եթե մենք նախապատրաստենք մեզ դրանք ստանալուն:

Ուսանողի ընթերցարան

- 1 Նեփի 10.17–19, 15.1–3, 7–11, 18.1–3, 2 Նեփի 28.30, 32.8–9, Հակոբ 4.6, Ալմա 12.9–11, 26.22, 3 Նեփի 14.7–11:
- Դեյվիդ Ա. Բեդնար, «Հայտնության Հոգին», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2011, 87–90:

Պաշտպանենք մեզ վերջին օրերի կեղծ վարդապետություններից

Նախաբան

Ի լրումն «Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը» (Վևու 20.9) ուսուցանելուն՝ Մորմոնի Գիրքը Քրիստոսի հետևորդներին օգնում է պաշտպանվել կեղծ ուսմունքներից և գաղափարներից, որոնք լայն տարածում են գտել վերջին օրերում: Ուղիներից մեկը, որով այն կատարում է դա, Քրիստոսի թշնամիներին և կեղծ վարդապետությունները բացահայտելն է, որը

նրանք տարածում են: Երբ ուսանողները Մորմոնի Գրքում ուսումնասիրեն կեղծ ուսուցիչների պատմությունները, նրանք կսովորեն տարբերել ավետարանի ճշմարտությունները աշխարհի կեղծ հասկացողություններից:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Dallin H. Oaks, “Be Not Deceived,” *Ensign* or *Liahona*, Nov. 2004, 43–46.
- Dallin H. Oaks, “As He Thinketh in His Heart” (evening with Elder Dallin H. Oaks, Feb. 8, 2013), [lds.org/broadcasts](https://www.lds.org/broadcasts).
- Նիլ Լ. Անդերսեն, «Հոգևոր պատահողմեր», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 18–21:

Ուսուցման առաջարկներ

2 Նեփի 28.3–9, 12–15, Հակոբ 7.1–12, Ալմա 1.2–6, 30.12–18, 39–44, Զոգեֆ Սմիթ-Մատթեոս 1.22

Բացահայտել և պաշտպանվել կեղծ վարդապետություններից

Խնդրեք ուսանողներին խորհել հետևյալ խնդիրների շուրջ աշխարհում գոյություն ունեցող հակասական կարծիքների մասին. Աստծո տված ճշմարտությունը դեմ է բարոյական հարաբերականությանը (այն գաղափարը, որ չկա համընդհանուր ճիշտ կամ սխալ), կրոնական ազատությունը դեմ է հատուկ շահեր ունեցող խմբերի իրավունքներին և արհեստական վիժեցման իրավունքը դեմ է կյանքի իրավունքին: Մինչ կքննարկեք այս խնդիրները, կարող եք գրել դրանք գրատախտակին: Ուսանողներին տվեք մի քանի բույս, որպեսզի քննարկեն, թե ինչու մենք պետք է զգույշ լինենք, երբ ողջունում ենք գաղափարները, որոնք ճիշտ են:

Բացատրեք, որ իր կյանքի վերջում Հիսուս Քրիստոսը մարգարեացավ հոգևոր վտանգավոր իրավիճակների մասին, որոնք գոյություն էին ունենալու վերջին օրերին: Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Զոգեֆ Սմիթ - Մատթեոս 1.22-ը: Դուք կարող եք շեշտել, որ «ընտրվածներին, որոնք ընտրված են՝ ուխտի համաձայն» արտահայտությունը վերաբերում է Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամներին:

- Ի՞նչ սպառնալիքներ են մեր օրերում ներկայացնում «կեղծ քրիստոնեները» և «կեղծ մարգարեները»:

Ցուցադրեք և կարդացեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի (1899–1994) հետևյալ խոսքերը.



«Մորմոնի Գիրքը բացահայտում է Քրիստոսի թշնամիներին: Այն կործանում է կեղծ վարդապետությունները և տապալում հակառակությունները: (Տես 2 Նեփի 3.12:) Այն ամրացնում է մեր օրերում Քրիստոսի խոնարհ հետևորդներին չարի ծրագրերի, ռազմավարության և դևի վարդապետությունների դեմ: Մորմոնի Գրքի ուրացողները նման են մեր օրերի ուրացողներին: Աստված Իր անսահման կանխագիտությամբ այնպես է ձևավորել Մորմոնի Գիրքը, որ մենք կարողանանք տեսնել սխալը և իմանալ, թե ինչպես պայքարել մեր օրերի կեղծ կրթական, քաղաքական, կրոնական և փիլիսոփայական տեսակետների դեմ» (Եկեղեցու նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն [2014], 159):

- Ի՞նչ են այս խոսքերն ուսուցանում այն մասին, թե ինչպես կարող է Մորմոնի Գիրքն ուսումնասիրելը պաշտպանել մեզ կեղծ ուսմունքներից: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են այս սկզբունքը. **Երբ մենք ուսումնասիրում ենք Մորմոնի Գիրքը և կիրառում ենք դրա ուսմունքները, մենք պաշտպանված ենք լինում դևից և մեր օրերի կեղծ ուսմունքներից ու հասկացություններից:**)
- Ինչո՞վ կարող է օգտակար լինել սատանայի մարտահրավերների մասին իմանալը նախքան իրականում դրանց հանդիպելը:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 2 Նեփի 28.3-9 հատվածները, մինչ դասարանը կփնտրի կեղծ գաղափարները, որոնք Նեփին ասում էր, որ լայն տարածում պիտի գտնեին մեր օրերում: Կարող եք խրախուսել ուսանողներին նշել կարևոր բառերն ու արտահայտությունները: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով, ապա հարցրեք.

- Որո՞նք են այս կեղծ գաղափարների մեր ժամանակների օրինակները: (Հնարավոր օրինակներ. բարոյականության հարաբերականությունը, համոզվածությունը, որ մեր հանդեպ ունեցած Աստծո մեծ սիրտ պատճառով Նա չի պատժի մեղքը, նախապաշարմունքներ քրիստոնյաների դեմ, ովքեր հաճախ համարվում են մոլեռանդներ:)

Որպեսզի օգնեք ուսանողներին պատասխանել այս հարցին, կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ս. Ռասսել Բալլարդի հետևյալ խոսքերով. Խնդրեք ուսանողներին լսել կեղծ ուսմունքները, որոնց նրանք կհանդիպեն:



«Կեղծ մարգարեները և կեղծ ուսուցիչները նրանք են, ովքեր հայտարարում են, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը եղել է կեղծավոր մոլորեցնող, նրանք Առաջին Տեսիլքը համարում են նման մի փորձ: Նրանք հայտարարում են, որ Մորմոնի գիրքը և մյուս կանոնիկ աշխատությունները սուրբ գրությունների հնադարյան հիշատակարաններ չեն: Նրանք նաև փորձում են նոր ձևով ներկայացնել Աստվածագլուխը, և նրանք հերքում են, որ Աստված տվել է և շարունակում է հայտնություններ տալ այսօր Իր կարգված և հաստատված մարգարեներին: ...

Հավանաբար ամենադատապարտելին այն է, որ նրանք հերքում են Քրիստոսի Հարությունն ու Քավությունը, վիճաբանելով, որ չկա Աստված, ով կարող է փրկել մեզ: Նրանք մերժում են Փրկիչ ունենալու կարիքը: Կարճ ասած, այս գրադարտիչները փորձում են այլ կերպ մեկնաբանել Եկեղեցու վարդապետությունները, հարմարեցնելով դրանք իրենց անձնական կանխակալ տեսակետների հետ, և այդ ընթացքում մերժում են Քրիստոսի առաքելությունը:

Կեղծ մարգարեները և կեղծ ուսուցիչները նաև նրանք են, ովքեր փորձում են փոխել Աստծո կողմից տրված և սուրբ գրությունների վրա հիմնված վարդապետությունները, որոնք պաշտպանում են ամուսնության սրբությունը, ընտանիքի աստվածային էությունը և անձնական բարոյականության առանցքային վարդապետությունը: Նրանք սատարում են բարոյականության վերասահմանմանը, որպեսզի արդարացնեն պոռնկությունը, շնությունը և միասեռական հարաբերությունները» ("Beware of False Prophets and False Teachers," *Ensign*, Nov. 1999, 63–64):

Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել 2 Նեփի 28.12–15-ը, փնտրելով կեղծ ուսմունքներին հավատալու հետևանքները:

- Որո՞նք են կեղծ ուսմունքներին և գաղափարներին հավատալու հետևանքները:

Ցուցադրեք Յոթանասունի Նախագահությունից Երեց Ուլիսես Մոարեսի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Մենք չենք կարող մեզ թույլ տալ շփոթվել հանրաճանաչ ուղերձներով, որոնք հեշտ են ընդունվում աշխարհում և հակասում են Հիսուս Քրիստոսի ավետարանի վարդապետությանն ու ճշմարիտ սկզբունքներին: Աշխարհիկ այդ ուղերձներից շատերը ներկայացնում են ոչինչ ավելի, քան մեր հասարակության մեղքերն արդարացնելու փորձ» («Այո, մենք կարող ենք և կհաղթենք», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2015, 75):

- Ըստ Երեց Մոարեսի, ո՞րն է բազմաթիվ հայտնի ուղերձների նպատակը, որոնք հակասում են Հիսուս Քրիստոսի ավետարանին: (Օգնեք ուսանողներին հասկանալ այս ճշմարտությունը. **Մատանան կեղծ վարդապետություններ է օգտագործում, որպեսզի գայթակղի մեզ մեղք գործելու:** Դուք կարող եք անդրադառնալ Ալմա 30.53-ին, որպեսզի ավելի շատ տեղեկություններ ստանաք այս ճշմարտության մասին:)

Դասարանը բաժանեք երեք խմբի: Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հատվածները, և յուրաքանչյուր խմբի հանձնարարեք կարդալ հատվածներից մեկը. Հակոբ 7.1–7, Ալմա 1.2–6

կամ Ալմա 30.12–18: Խնդրեք ուսանողներին ներկայացնել Սերեմի, Նեհորի և Կորիհորի կողմից ուսուցանած կեղծ ուսմունքները և գրել դրանք գրատախտակին համապատասխան վերնագրերի տակ:

Սերեմ (Հակոբ 7.1–7)	Նեհոր (Ալմա 1.2–6)	Կորիհոր (Ալմա 30.12–18)
---------------------	--------------------	-------------------------

- Ինչպե՞ս եք նկատել, որ կեղծ ուսմունքները կամ գաղափարները, ինչպիսին են գրատախտակին գրվածները, ազդեն Եկեղեցու անդամների վրա այսօր:

Հրավիրեք ուսանողներին համեմատել Հակոբ 7.5, 8–12 և Ալմա 30.39–44 հատվածները, որպեսզի տեսնեք, թե ինչն էր ուժ տալիս Հակոբին և Ալմային Սերեմի և Կորիհորի կեղծ ուսմունքների դեմ պայքարում: (Նշում. Համեմատելը սուրբ գրությունների ուսումնասիրության հմտություն է: Նմանություններ տեսնելը «ուսմունքների, մարդկանց կամ իրադարձությունների միջև կարող է օգնել ավետարանի ճշմարտություններին ավելի մեծ ուշադրություն դարձնել» [Gospel Teaching and Learning: A Handbook for Teachers and Leaders in Seminaries and Institutes of Religion (2012), 22]:)

- Ի՞նչն էր Հակոբին և Ալմային զորացնում կեղծ ուսմունքների դեմ պայքարում: (Հնարավոր պատասխաններ. նախկինում ունեցած հոգևոր փորձառությունները, սուրբ գրությունների իմացությունը, Սուրբ Հոգու միջոցով ստացած գիտելիքը և Քրիստոսի մասին ունեցած վկայությունը:)
- Ո՞րն է այն սկզբունքը, որը մենք կարող ենք սովորել այս կեղծ ուսմունքներին տրված Հակոբի և Ալմայի պատասխաններից: (Օգնեք ուսանողներին հասկանալ այս սկզբունքը. **Երբ մենք ապավինում ենք առ Քրիստոս ունեցած մեր վկայությանը և փնտրում Սուրբ Հոգու առաջնորդությունը, մենք կարող ենք հաղթահարել մեր հավատքի փորձությունները:**)
- Ինչպե՞ս է ձեր վկայությունը զորացրել ձեզ կեղծ ուսմունքների կամ ձեր հավատքը քննադատողների դեմ պայքարում:

Հորդորեք ուսանողներին կիսվել, թե ինչ են անում կեղծ ուսմունքներից պաշտպանվելու համար, որոնք կարող են աղավաղել իրենց հավատքն առ Հիսուս Քրիստոսը և Նրա վերականգնված ավետարանը:

2 Նեփի 26.29, 3 Նեփի 18.24, 27.27

Քահանաների գլխավորական վտանգները

Ասացեք ուսանողներին, որ Եկեղեցու որոշ հոգևոր վտանգներ գալիս են հենց Եկեղեցու անդամներից: Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 26.29 հատվածը, մինչ դասարանը կփնտրի Նեփիի նկարագրած հոգևոր վտանգը:

- Համաձայն այս հատվածի, ի՞նչ է քահանանենգությունը: (Երբ մարդիկ քարոզում են ավետարանը անձնական համբավի կամ հարստության, այլ ոչ թե Աստծո զավակների բարօրության համար:)
- Ինչպե՞ս կարող են քահանանենգությունները հոգևոր վտանգներ առաջացնել Եկեղեցու անդամների համար:

Որպեսզի օգնեք պատասխանել այս հարցերին, հրավիրեք ուսանողներին մեկին կարդալ Երեց Մ. Ռասսել Բալլարդի հետևյալ հայտարարությունը.



«Եկեք զգուշանալ կեղծ մարգարեներից և կեղծ ուսուցիչներից՝ տղամարդ, թե կին, ովքեր ինքնակոչ հայտարարում են Եկեղեցու վարդապետությունների մասին և ձգտում տարածել իրենց կեղծ ավետարանը և գրավել հետևորդներ, հովանավորելով քննարկումներ, գրքեր և ամսագրեր, որոնց բովանդակությունը կասկածի տակ է դնում Եկեղեցու վարդապետությունները: Զգուշացեք նրանցից, ովքեր խոսում և հրատարակում են նյութեր ընդդեմ Աստծո ճշմարիտ մարգարեների, ովքեր ակտիվորեն քարոզում են մյուսների՝ անհոգությամբ անտեսելով նրանց բարօրությունը, ում խաբեության մեջ են զգում» ("Beware of False Prophets and False Teachers," *Ensign*, Nov. 1999, 63):

- Ինչպե՞ս կարող եք պաշտպանել ձեզ և ուրիշներին քահանանենգությունից:
- Ինչպե՞ս կարող եք պաշտպանել Եկեղեցու վարդապետությունները, երբ ուրիշները դեմ են խոսում Աստծո վերջին օրերի մարգարեներին:

Ասեք ուսանողներին, որ Փրկիչը ուսուցանեց Իր աշակերտներին, թե ինչպես պետք է նրանք, ովքեր ներկայացնում են Իրեն, ուսուցանեն և ներգործեն ուրիշների վրա: Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել 3 Նեփի 18.24 և 3 Նեփի 27.27 հատվածները, փնտրելով, թե ինչպես է ավետարանի ճշմարիտ ծառայությունը տարբերվում քահանանենգությունից:

- Ինչպե՞ս են արդար ուսուցիչների և դեկավարների մղումներն ու գործերը տարբերվում նրանց մղումներից և գործերից, ովքեր մեղադրվում են քահանանենգության մեջ: (Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալ ճշմարտությունը. **Հիսուս Քրիստոսի աշակերտները ծառայում և օրհնում են ուրիշներին՝ դարձնելով նրանց դեպի Տերը:**)

Մորոնի 7.12–17, Եթեր 4.11–12

Տարբերել ճշմարտությունը կեղծիքից

Խնդրեք ուսանողներին մտածել այն ժամանակի մասին, երբ ինչ-որ մեկը հարցականի տակ է դրել կամ քննադատել է իրենց կրոնական համոզմունքները: Հրավիրեք մեկ կամ երկու ուսանողների հակիրճ կիսվել իրենց փորձառություններով:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մորոնի 7.12–17 և Եթեր 4.11–12 հատվածները, մինչ դասարանը կհետևի, որոնելով, թե ինչպես տարբերել, արդյոք տվյալ բանը Տիրոջից է, թե դիցի:

- Այդ հատվածներից ի՞նչ էք սովորում բարու և չարի միջև դատելու մասին: (Հավաստիացե՛ք, որ ուսանողները հասկանում են հետևյալ սկզբունքը. **Այն ամենը, ինչը Աստծուց է, հրավիրում է մեզ անելու բարին, հավատալու Հիսուս Քրիստոսին, սիրելու և ծառայելու Աստծուն:**)

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի հետևյալ խոսքերը.



«Թույլ տվե՛ք առաջարկել ձեզ երեք կարճ փորձարկումներ, որոնք կօգնեն ձեզ խուսափել մոլորություններից: ...

1. Ի՞նչ են ասում այդ մասին օրինակելի աշխատությունները: ...

2. Երկրորդ ցուցումը. Ի՞նչ են ասում այդ մասին Վերջին Օրերի Եկեղեցու Նախագահները, մասնավորապես՝ ապրող Նախագահը: ...

3. Երրորդ և վերջին թեսթը դա Սուրբ Հոգին է՝ Սուրբ Հոգու թեսթը: ... Այս թեսթը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, եթե այդ անձի մոտ Աստծո հետ հաղորդակցվելու ուղիները մաքուր են, առաքինի են և մեղքից չաղտոտված» (Conference Report, Oct. 1963, 16–17):

Վերջում խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչպես կարող են ավելի արդյունավետ օգտագործել սուրբ գրությունները, մարգարեների խոսքերը և Սուրբ Հոգու աջակցությունը, որպեսզի զանազան են կեղծ ուսմունքները և խուսափեն մոլորություններից: Կարող եք խրախուսել նրանց ուսումնասիրել Հակոբ 7, Ալմա 1 և Ալմա 30 գլուխները ավելի մանրամասնորեն և խորհել, թե ինչպես կարող են այս գլուխները օգնել նրանց ավելի լավ տարբերակել ճիշտը սխալից:

Ուսանողի ընթերցարան

- 2 Նեփի 26.29, 28.3–9, 12–15, Հակոբ 7.1–12, Ալմա 1.2–6, 30.12–18, 39–44, 3 Նեփի 18.24, 27.27, Եթեր 4.11–12, Մորոնի 7.12–17, Զոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.22:
- Նիլ Լ. Անդերսեն, «Հոգևոր պատահողմներ», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2014, 18–21:

Հոգևոր վերածննդի մեր կարիքը

Նախաբան

Մորմոնի Գրքից մենք սովորում ենք, որ «բնական մարդը Աստծո մի թշնամի է» (Մոսիա 3.19): Այս դասի ընթացքում ուսանողները ուսուցանվում են, որ ապաշխարելու և առ Հիսուս Քրիստոսը հավատք գործադրելու միջոցով մենք կարող ենք հաղթել բնական մարդուն, «վերստին ծնվել»

և ունենալ սրտի զորեղ փոփոխություն: Այս փոփոխությունը անհրաժեշտ է Աստծո արքայություն մտնելու համար:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- David A. Bednar, “The Atonement and the Journey of Mortality,” *Ensign*, Apr. 2012, 40–47:
- Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Վերստին ծնված», *Ensign* կամ *Հիստորիա*, մայիս 2008, 76–79:

Ուսուցման առաջարկներ

Մոսիա 3.19, 16.2–5, Ալմա 41.10–11

Հանել բնական մարդուն

Գրատախտակին գրեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի (1899–1994) հետևյալ խոսքերը (“To ‘the Rising Generation,’” *New Era*, June 1986, 5).

«Դուք չեք կարող անել սխալ բան և լավ զգալ: Դա հնարավոր չէ»:
(Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոն)

- Ինչո՞ւ է անհնար երջանիկ լինելը, երբ սխալ ընտրություններ ենք կատարում:

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Ալմա 41.10–11 հատվածները, մինչ դասարանը փնտրում է ամբարշտության հետևանքները: (Շեշտեք հետևյալ ճշմարտությունը. **Ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել:**)

- Ի՞նչ մոլորություններ է օգտագործում սատանան, որպեսզի համոզի մեզ, որ պատվիրանները խախտելը երջանկություն է բերում:
- Ըստ հատված 11-ի, ի՞նչ է նշանակում լինել «բնական վիճակում»: (Լինել «մարմնական վիճակում», «դառը մաղձի և անօրինության կապանքների մեջ» և «առանց Աստծո աշխարհում»:)

- Ինչպե՞ս են Ալմա 41.10–11 հատվածներն օգնում բացատրել, թե ինչու մեղք գործելը չի բերի երջանկություն: (Դա Աստծո էությանը հակառակ մի վիճակ է, իսկ «Աստծո էությունը» «երջանկության էությունն է»):

Հիշեցրեք ուսանողներին, որ մենք բոլորս էլ ժառանգել ենք Ադամի Անկման հետևանքները: Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մոսիա 16.2-5 հատվածները, մինչ դասարանը փնտրում է բառեր և արտահայտություններ, որոնք նկարագրում են մարդկության ընկած վիճակը:

- Ի՞նչ բառեր կամ արտահայտություններ է օգտագործում Աբինադին, որպեսզի նկարագրի մարդկության ընկած վիճակը:
- Ի՞նչ կարևորություն ունի «համառել» բառը հատված 5-ում: (*Նշում.* Հիմնաբառերը նկատելի սուրբ գրություններն ուսումնասիրելու կարևոր հմտություն է, որը դուք կարող եք շեշտել այստեղ:)
- Ի՞նչն է մեզ համար հնարավոր դարձնում մեր մեղավոր և ընկած վիճակից փրկագնվելը:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 3.19 հատվածը և նշել, թե ինչպես կարող ենք հաղթահարել մեր ընկած վիճակը:

- Ի՞նչ է նշանակում «ենթարկվել Սուրբ Հոգու հորդորներին»:
- Ի՞նչ պետք է մենք անենք, որպեսզի «հանենք բնական մարդուն»: (Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալ սկզբունքը. **Երբ մենք հետևում ենք Սուրբ Հոգու հուշումներին և ապավինում Քավության գործությանը, մենք կարող ենք հանել մեր միջից բնական մարդուն:**)

Հրավիրեք ուսանողներին խորհել իրենց տեսած փաստերի շուրջ, որոնք ցույց են տալիս, որ Փրկիչը կարող է փոխել մեզ և դարձնել ավելի լավ մարդ, քան մենք երբևէ կարող ենք ինքնուրույն դառնալ: Մի քանի ուսանողների հրավիրեք կիսվել իրենց մտքերով:

Հանձնարարեք ուսանողներին լուռ խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Ի՞նչ կարող եք դուք անել, որ ավելի լիարժեք ձևով ենթարկվեք «Սուրբ Հոգու հորդորներին»:
- Մոսիա 3.19-ում թվարկված երեխայի ո՞ր հատկանիշը զարգացնելու կարիքը դուք ամենաշատն ունեք:

Մոսիա 5.1–5, 7–8, 27.24–26

Վերստին ծնվել

Խնդրեք ուսանողներին թվարկել մարդկանց անուններ Մորմոնի Գրքից, որոնց էությունը փոխվել էր Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ:

Հիշեցրեք ուսանողներին, որ Ալմա Կրտսերը և Մոսիայի որդիները ինչ-որ ժամանակ եղել են Զարահեմլայի անհավատների մեջ, ովքեր հալածում էին Եկեղեցու անդամներին (տես Մոսիա 27.8): Հրեշտակի այցելությունից հետո Ալման ուժասպառ էր եղել և չէր կարողանում խոսել: Երեք օր անց Ալմայի ուժերը վերականգնվեցին և նա վկայեց հրաշալի փոփոխության մասին, որը նա զգացել էր իր մեջ (տես Մոսիա 27.11–24):

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մոսիա 27.24-26 հատվածները, մինչ դասարանը փնտրում է, թե ինչպես է Ալման նկարագրել այդ հրաշալի փոփոխությունը:

- Ո՞ր բառերը և արտահայտություններն են այս հատվածներում նկարագրում, թե ինչ է նշանակում վերստին ծնվել:
- Ինչպե՞ս է հատված 26-ը օգնում բացատրել, թե ինչու մենք պետք է վերստին ծնվենք: (Հավաստիացե՛ք, որ ուսանողները հասկանում են այս ճշմարտությունը: **Միայն Քրիստոսում նոր արարածներ դառնալու միջոցով մենք կարող ենք ժառանգել Աստծո արքայությունը:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչ է տեղի ունենում, երբ մենք հոգևորապես վերածնվում ենք, խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 5.1-5, 8 հատվածները: Խնդրեք դասարանին փնտրել բառեր կամ արտահայտություններ, որոնք ցույց են տալիս, որ Բենիամին թագավորի ժողովուրդը հոգևոր վերածնունդ էր ապրել:

- Խնդրեք դասարանին փնտրել բառեր կամ արտահայտություններ, որոնք ցույց են տալիս, որ Բենիամին թագավորի ժողովուրդը հոգևոր վերածնունդ էր ապրել: (Հնարավոր պատասխաններ. նրանք այլևս հակված չէին գործելու չարիք, նրանք ցանկանում էին շարունակ գործել բարիք, նրանք մտքերը լուսավորվել էին և նրանք լցվել էին ուրախությամբ և կամենում էին ուխտեր կապել Տիրոջ հետ:)
- Համաձայն 2 և 4 հատվածների, ի՞նչ է պահանջվում «սրտի զորեղ փոփոխություն» ստանալու համար: (Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալ սկզբունքը: **Եթե մենք հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը և ստանանք Սուրբ Հոգին, մենք կարող ենք ունենալ սրտի զորեղ փոփոխություն:**)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը. Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ այն, մինչ դասարանը փնտրում է, թե ինչպես է Երեց Բեդնարը նկարագրում սրտի զորեղ փոփոխությունը:



«Ուզում եմ նկատեք, որ [Մոսիա 5-ում] նկարագրված փոփոխությունը հզոր է, ոչ թե փոքր. դա հոգևոր վերածնունդ է և հիմնավոր փոփոխություն մեր զգացումների և ցանկությունների մեջ, մեր մտածածի և անելիքի, և ով լինելու մեջ: Իսկապես, Հիսուս Քրիստոսի ավետարանի էությունը պահանջում է հիմնավոր և մշտական փոփոխություն մեր իսկ էության մեջ, որը հնարավոր է, եթե մենք վստահում ենք «Սուրբ Մեսիայի արժանիքներին, որոշմամբս և շնորհին» (2 Նեփի 2.8)» («Դուք պետք է վերստին ծնվեք», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2007, 20):

- Ի՞նչը գրավեց ձեր ուշադրությունը, երբ կարդացիք սրտի զորեղ փոփոխության Երեց Բեդնարի նկարագրությունը:

Հրավիրեք ուսանողներին քննարկել, թե ինչ պետք է մենք անենք, որպեսզի շարունակենք սրտի զորեղ փոփոխություն ունենալ:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մոսիա 5.7 հատվածը և ուշադրություն դարձնել, թե ինչպես են փոխվում մեր հարաբերությունները Հիսուս Քրիստոսի հետ, երբ մենք վերստին ծնվում ենք:

- Ի՞նչ առումով ենք մենք դառնում Հիսուս Քրիստոսի զավակները:

Հրավիրեք ուսանողներին մտածել «Քրիստոսի զավակները» դառնալու կարևորության մասին, և հրավիրեք նրանց կիսվել, թե ինչպես սա պետք է մղի մեզ դեպի վերածնվելը:

Ավմա 5.14, 26–27, Եթեր 12.27

Հոգևոր վերածնունդը պահանջում է ժամանակ և ջանքեր

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թող Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը, մինչ դասարանը կլսի, թե ինչպես է նա նկարագրում սրտի փոփոխություն ստանալու գործընթացը.



«Նստարավոր ե հարցնեք. «Ինչո՞ւ այդ փոփոխությունն ավելի արագ չի կատարվում ինձ հետ»: Դուք պետք է հիշեք, որ Բենիամին թագավորի ժողովրդի նշանավոր օրինակը, Ավման և սուրբ գրությունների ուրիշ մի քանի մարդիկ հենց այդպիսին են՝ նշանավոր և ոչ սովորական: Մեզանից շատերի համար փոփոխություններն ավելի շուտ աստիճանական են և տեղի են ունենում ժամանակի ընթացքում: Վերստին ծնվելը, ի տարբերություն մեր ֆիզիկական ծննդի, ավելի շուտ ընթացք է, քան իրադարձություն: Եվ այդ գործընթացի մեջ մտնելը մահկանացու կյանքի առանցքային նպատակն է:

Միևնույն ժամանակ եկեք անփույթ ջանքերով չարդարացնենք մեզ: Եկեք չբավարարվենք՝ չարիք գործելու ինչ-որ հակվածություն պահելով: Եկեք արժանավորությամբ ճաշակենք հաղորդությունից ամեն շաբաթ և շարունակենք մոտենալ Սուրբ Հոգուն՝ արմատախիլ անելով մեր միջի անմաքրության վերջին մոլախոտերը: Ես վկայում եմ, որ եթե դուք շարունակեք մնալ հոգևոր վերածննդի ճանապարհին, Հիսուս Քրիստոսի քավիչ շնորհը կհեռացնի ձեր մեղքերը և այդ մեղքերի բժերը. գայթակղությունները կկորցնեն իրենց տեսքը և Քրիստոսի միջոցով դուք կդառնաք սուրբ, ինչպես որ Նա և մեր Հայրն են սուրբ» («Վերստին ծնված», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2008, 78):

- Համաձայն Երեց Քրիստոֆերսոնի, ինչո՞ւ է վերստին ծնվելն ավելի շուտ ընթացք, քան իրադարձություն:
- Ինչպե՞ս է հոգևոր վերածննդի գործընթացն օգնում մեզ դառնալ սուրբ, ինչպես Երկնային Հայրը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը: (Օգնեք ուսանողներին հասկանալ այս ճշմարտությունը. **Հիսուս Քրիստոսի շնորհով մենք կարող ենք ներվել և օգնություն ստանալ՝ շարունակելու հոգևոր վերածննդի ուղին:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ *շնորհի* իմաստը, խորհեք Աստվածաշնչի բառարանի այս հատվածով կիսվելու մասին.

«Տիրոջ շնորհի միջոցով է, որ անհատները, Հիսուս Քրիստոսի Քավության հանդեպ հավատքի և իրենց մեղքերն ապաշխարելու միջոցով, ստանում են ուժ և օգնություն՝ անելու բարի գործեր, ինչը, այլապես, չէին կարողանա անել, եթե ինքնուրույն մնային: Այդ շնորհը գործություն է, որը թույլ է տալիս տղամարդկանց և կանանց ակնկալել հավիտենական կյանք և վեհացում նրանից հետո, երբ գործադրել են իրենց լավագույն ջանքերը» (Աստվածաշնչի բառարան, «Ողորմածություն»):

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 5.14, 26–27 հատվածները, ուշադրություն դարձնելով, թե ինչ ուսուցանեց Ալման նրանց, ովքեր արդեն իսկ սկսել էին հոգևոր վերածննդի գործընթացը և ունեցել էին սրտի փոփոխություն: Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչպես նրանք կպատասխանեին Ալմայի հարցերին:

- Ըստ հատված 27-ի, մենք ի՞նչ պիտի անենք սրտի փոփոխություն ստանալուց հետո: (Մենք պետք է շարունակենք անարատ քայլել Աստծո առաջ, լինել խոնարհ և ձգտել ներում ստանալ մեր մեղքերի համար:)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Ալման ուսուցանել, որ խոնարհ լինելը այդքան կարևոր դեր է խաղում մեր սրտի փոփոխությունը պահպանելու համար:

Ասացեք ուսանողներին, որ Տերն ուսուցանել է Եթերին, թե ինչու է խոնարհության գործությունը այդքան կարևոր, երբ մենք ցանկանում ենք սրտի փոփոխություն ունենալ: Հիշեցրեք ուսանողներին, որ սուրբգրքյան սկզբունքներում հաճախ օգտագործվում են *եթե* և *այսպես* բառերը, և հրավիրեք նրանց լուս վերանայել Եթեր 12.27 հատվածը, փնտրելով «եթե-այսպես» սկզբունքներ: Երբ ուսանողները նշեն հետևյալ սկզբունքները, քննարկեք դրանք. **Եթե մենք զանք դեպի Հիսուս Քրիստոսը, նա ցույց կտա մեզ մեր թուլությունը: Եթե մենք խոնարհեցնենք մեզ և գործադրենք հավատք առ Տերը, Նա մեր թույլ կողմերը կդարձնի ուժեղ:**

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր մեզ համար ճանաչել մեր թուլությունները:
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «իմ շնորհը բավարար է բոլոր մարդկանց համար, ովքեր իրենց խոնարհեցնում են իմ առջև» արտահայտությունը:

Ցուցադրեք Յոթանասունից Երեց Բրուուս Ս. Հեյֆենի հետևյալ խոսքերը և հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Եթե դուք ձեր կյանքում խնդիրներ ունեք, մի կարծեք, թե ինչ-որ բան սխալ եք անում: Այդ խնդիրների հետ կապված պայքարը կյանքի նպատակի հետև հիմքն է: Երբ մենք մոտենանք Աստծուն, Նա մեզ ցույց կտա մեր թուլությունները և դրանց միջոցով մեզ կդարձնի ավելի իմաստուն և ուժեղ: Եթե դուք ավելի շատ թուլություններ եք տեսնում ձեր մեջ, դա պարզապես կարող է նշանակել, որ դուք ավելի եք մոտեցել Աստծուն, այլ ոչ թե հեռացել»

(“The Atonement: All for All,” *Ensign* կամ *Liahona*, մայիս 2004, 97):

- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի խուսափենք հիասթափությունից, երբ տեսնում ենք մեր թուլությունները:

Կիսվեք ձեր վկայությամբ, որ Հիսուս Քրիստոսի շնորհը կօգնի մեզ հաղթահարել մեր թուլությունները, երբ մենք ջանանք հոգևորապես վերածնվել:

Ուսանողի ընթերցարան

- Մոսիա 3.19, 5.1–5, 7–8, 16.2–5, 27.24–26, Ալմա 5.14, 26–27, 41.10–11, Եթեր 12.27:
- David A. Bednar, “The Atonement and the Journey of Mortality,” *Ensign*, Apr. 2012, 40–47.

Մկրտության ուխտը, Հանգստության օրը և հաղորդությունը

Նախաբան

Մկրտության արարողության միջոցով Հիսուս Քրիստոսի հետևորդները ուխտում են իրենց վրա վերցնել Նրա անունը: Այս դասի ընթացքում ուսանողները կսովորեն, որ Մորմոնի Գիրքը ուսուցանում է, որ Քրիստոսի Եկեղեցու անդամները պետք է միասին հավաքվեն Հանգստյան օրը

և վայելեն հաղորդությունն ընդունելու սրբազան արտոնությունը: Երբ մենք ճաշակում ենք հաղորդությունը, մենք վերանորոգում ենք մկրտության ուխտերը և հրավիրում ենք Սուրբ Հոգուն լինելու մեզ հետ:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Լ. Թոմ Փերի, «Հանգստության օրը և հաղորդությունը», *Ensign* կամ *Լիստինա*, մայիս 2011, 6-9:
- Ռասսել Մ. Նելսոն, «Կիրակին բերկրանք է», *Ensign* կամ *Լիստինա*, մայիս 2015, 129-32:
- Դալլին Հ. Օուքս, «Հաղորդության ժողովը և Հաղորդությունը», *Ensign* կամ *Լիստինա*, նոյ. 2008, 17-20:

Ուսուցման առաջարկներ

Մոսիա 18.8-10, 25.23-24

Մեզ վրա վերցնել Քրիստոսի անունը

Խնդրեք մի քանի ուսանողների նկարագրել մի իմաստալից բան, որ հիշում են իրենց մկրտությունից, օրինակ՝ մկրտության արարողությունը կամ իրենց ունեցած մտքերն ու զգացողությունները: Ապա թող ուսանողները մի պահ մտածեն, թե որքանով է նրանց հաջողվել պահել իրենց մկրտության ուխտերը:

Հիշեցրեք ուսանողներին, որ Ալման ուսուցանել է Մորմոնի Ջրերի մոտ կապած մկրտության ուխտի մասին, ապա խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 18.8-10 հատվածները: Դասարանին խնդրեք հետևել, փնտրելով, թե ինչ ենք մենք ուխտում անել, երբ մկրտվում ենք:

Գրատախտակին գրեք հետևյալը.

Երբ մկրտվում ենք, մենք ուխտում ենք ...

- Ի՞նչ ենք մենք ուխտում անել, երբ մկրտվում ենք: (Ուսանողների պատասխանները գրեք գրատախտակին՝ լրացնելով վարդապետական հայտարարությունը. **Երբ մենք մկրտվում ենք, մենք ուխտում ենք կրել մեկս մյուսի բեռը, կանգնել որպես Աստծո վկաներ, ծառայել Նրան և պահել Նրա պատվիրանները:**

Օգնեք ուսանողներին հասկանալ սուրբ գրության հաջորդ հատվածի ենթատեքստը, բացատրելով, որ երբ Ալման ու նրա ժողովուրդը միացան հավատացյալներին Ջարահեմլայում, Ալման հաստատեց հավատացյալների բազմաթիվ խմբեր: Մի քանի ուսանողների հրավիրեք բարձրաձայն կարդալ Մոսիա 25.23-24 հատվածները և խնդրեք դասարանին փնտրել լրացուցիչ մտքեր, որոնք վերաբերում են մեր մկրտության ուխտին: Երբ ուսանողները կիսվեն իրենց գտած նյութով, հարցրեք.

- Ինչպե՞ս էին մարդիկ օրհնվել մկրտվելու և Աստծո Եկեղեցուն միանալու արդյունքում: (Օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալ սկզբունքը. **Երբ մենք մեզ վրա ենք վերցնում Հիսուս Քրիստոսի անունը և ապրում համապատասխան ձևով, Տերը դուրս է թափում Իր Հոգին մեզ վրա:)**
- Երբ դուք ապրել եք ձեր մկրտության ուխտի համաձայն, ի՞նչ ազդեցություն է ձեր կյանքում եղել՝ ունենալով Տիրոջ Հոգին դուրս թափված ձեզ վրա:

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչպես կարող են նրանց մկրտության ուխտերը ամրացնել իրենց պարտավորությունը՝ լինելու Հիսուս Քրիստոսի հետևորդը իրենց որոշումներում և արարքներում:

Ելից 31.13, 16–17, Մոսիա 18.17, 23–25, Մորոնի 6.4–6

Երկրպագել Հանգստության օրը

Բացատրեք, որ Մորմոնի Գիրքը ցույց է տալիս ուղիներից մի քանիսը, որոնցով Քրիստոսի Եկեղեցու անդամները պետք է պահեն մկրտության ուխտը:

Դասարանի մի մասին հանձնարարեք ուսումնասիրել Մոսիա 18.17, 23–25 հատվածները, մինչ մյուս մասն ուսումնասիրում է Մորմոնի 6.4–6-ը: Խորհուրդ տվեք, որ ուսանողներն ընդգծեն բառերը կամ արտահայտությունները, որոնք նկարագրում են Քրիստոսի հետևորդների մոտ նկատվող երկրպագության սովորությունները: Ապա հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտած նյութով:

- Ինչո՞ւ էին անդամները հաճախ մեկտեղ հավաքվում: (Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալ ճշմարտությունները. **Երբ մենք դառնում ենք Քրիստոսի Եկեղեցու անդամ, մեզ պատվիրվում է հիշել հանգստության օրը և այն սուրբ պահել: Որպես Եկեղեցու անդամներ մենք պետք է հաճախ մեկտեղ հավաքվենք, որպեսզի սնուցվենք Աստծո բարի խոսքով, ծով պահենք, աղոթենք, զորացնենք միմյանց և ճաշակենք հաղորդությունը:)**

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը.




«Հիմնականում մարդիկ եկեղեցի են գալիս ոչ թե պարզապես մի քանի ավետարանական նոր փաստեր որոնելու կամ հին ընկերներին տեսնելու համար, չնայած այդ ամենը կարևոր է: Նրաք գալիս են՝ փնտրելով հոգևոր փորձառություն: Նրանք խաղաղություն են ուզում: Նրանք ցանկանում են ամրացնել իրենց հավատքը և վերանորոգել իրենց հույսը: Մի խոսքով, նրանք ցանկանում են սնուցվել Աստծո բարի խոսքով, զորացվել երկնքի գործությունների կողմից» (“A Teacher Come from God,” *Ensign*, May 1998, 26):

- Ինչպե՞ս է հանգստության օրը Եկեղեցու մյուս անդամների հետ մեկտեղ հավաքվելն օգնում ձեզ զգալու զորացված երկնքի գործությունների կողմից:
- Ի՞նչ եք անում Եկեղեցում, որպեսզի ավելի մոտենաք և պատշաճ ձևով երկրպագեք Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե ինչու է Եկեղեցու անդամներին պատվիրված հիշել Հանգստյան օրը և այն սուրբ պահել, հրավիրեք նրանց կարդալ Ելից 31.13, 16-17 հատվածները և հղում կատարել Մոսիա 18.23-ին:

- Ի՞նչ է նշանակում այն, որ Հանգստյան օրը «նշան» է մեր և Տիրոջ միջև:

Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը.



«Ինչպե՞ս ենք մենք *սուրբ պահում* Հանգստության օրը: Իմ ավելի երիտասարդ տարիքին ես ուսումնասիրել եմ այն մարդկանց աշխատությունները, ովքեր ցուցակ են կազմել այն բաների համար, որոնք պետք է անել, և այն բաների համար, որոնք *չպետք է* անել Հանգստության օրը: Ավելի ուշ ես սուրբ գրություններից իմացա, որ իմ վարքն ու վերաբերմունքը Հանգստության օրվա հանդեպ կազմավորում են մի *նշան* իմ և Երկնային Հոր միջև: Դա իմանալով, ես այլևս կարիք չունեի այդ ցուցակի: Երբ պետք է որոշում կայացնեի, թե արդյոք միջոցառումը համապատասխանում էր Հանգստության օրվան, թե ոչ, ես պարզապես ինքս ինձ հարց էի տալիս. «Ի՞նչ *նշան* եմ ցանկանում փոխանցել Աստծուն»: Այդ հարցը Հանգստության օրվա վերաբերյալ իմ որոշումները պարզից էլ պարզ էր դարձնում» («Կիրակին բերկրանք է», *Ensign* կամ *Լիա՛հոնա*, մայիս 2015, 130):

- Ինչպե՞ս կարող է «Ի՞նչ *նշան* եմ ցանկանում փոխանցել Աստծուն» հարցը ինքններս մեզ ուղեկն օգնել մեզ ավելի լավ ընտրություններ կատարել և որոշել, թե ինչ ենք մենք անում Հանգստության օրը:
- Ինչպե՞ս են Հանգստության օրը սուրբ պահելու ձեր ջանքերը ներգործում շաբաթվա մյուս օրերի վրա:

Հրավիրեք ուսանողներին գնահատել Հանգստյան օրը սուրբ պահելու իրենց ջանքերը: Խնդրեք նրանց խորհել, թե արդյոք իրենց մտքերը և

գործողությունները արտահայտում են այդ օրը Հորը երկրպագելու անկեղծ ցանկություն: Հրավիրեք ուսանողներին հատուկ նպատակ դնել լավացնել իրենց Հանգստյան օրվա երկրպագությունը:

3 Նեփի 18.1–11, 20.3–9, Մորոնի 4.3, 5.2

Ճաշակել հաղորդությունը

Գրատախտակին գրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Լ. Թոմ Փերի (1922–2015) հետևյալ խոսքերը (*“As Now We Take the Sacrament,” Ensign* կամ *Լիսինա*, մայիս 2006, 39):

«Հաղորդությունը ճաշակելը մեզ պարգևում է սրբազան պահ սուրբ վայրում»: (Երեց Լ. Թոմ Փերի:)

- Ինչպե՞ս կարող են «սուրբ պահ» և «սուրբ վայր» գաղափարները ներգործել մեր մտքերի և գործողությունների վրա, երբ մենք ճաշակում ենք հաղորդությունը:

Հիշեցրեք ուսանողներին, որ հարություն առած Հիսուս Քրիստոսը հաստատեց հաղորդությունը, երբ այցելեց նեփիացիներին Լիառատ երկրում: Մի քանի ուսանողների հրավիրեք հերթով բարձրաձայն կարդալ 3 Նեփի 18.1–11 հատվածները, մինչ դասարանը կփնտրի, թե ինչ է Փրկիչն ուսուցանում հաղորդության նպատակի մասին:

- Ի՞նչ սկզբունք ուսուցանեց Փրկիչը հաղորդության նպատակի վերաբերյալ: (Երբ ուսանողները պատասխանեն, հետևյալ սկզբունքը գրեք գրատախտակին. **Եթե մենք ճաշակենք հաղորդությունը և միշտ հիշենք Հիսուս Քրիստոսին, մենք Նրա Հոգին մեզ հետ կունենանք:**)
- Ի՞նչ էք դուք անում, որպեսզի հիշեք Փրկիչին հաղորդությունն ընդունելիս և ողջ շաբաթվա ընթացքում:

Հիշեցրեք ուսանողներին, որ Մորոնին գրի է առել բառերը, որոնք Հիսուս Քրիստոսի հետևողներն օգտագործել են, երբ օրհնել են հաղորդությունը: Կարող եք խնդրել ուսանողներին արագ աչքի անցկացնել հաղորդության աղոթքները, որոնք գտնվում են Մորոնի 4.3 և 5.2 հատվածներում և ընդգծել արտահայտությունները, որոնք կապված են գրատախտակին գրված սկզբունքի հետ:

- Ի՞նչ հետևանքներ կարող են լինել, եթե մենք չկարողանանք «միշտ հիշել նրան»: (Մորոնի 4.3, 5.2):

Հիշեցրեք ուսանողներին, որ երբ Հիսուսը այցելեց նեփիացիներին հաղորդությունը հաստատելու հաջորդ օրը, Նա կրկին կատարեց այդ արարողությունը նրանց համար: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 3 Նեփի 20.3–9 հատվածները: Դասարանին հանձնարարեք փնտրել լրացուցիչ օրհնությունները, որոնք հետևում են հաղորդություն ընդունելուն:

- Ի՞նչ է նշանակում այն, որ մեր հոգին «երբեք չպիտի քաղցի, ոչ էլ ծարավի, այլ պիտի հագեցնա»:
- Ինչպե՞ս է հաղորդություն ընդունելը հագեցրել ձեր հոգևոր քաղցը և ծարավը:
- Ինչպե՞ս կարող է հաղորդությունը խոնարհաբար և երախտագիտությամբ ընդունելն օգնել մեզ ողջ շաբաթվա ընթացքում հիշել Փրկիչին:

Հրավիրեք ուսանողներին խորհել հաղորդության արարողության ժամանակ իրենց վարքագծի մասին, մինչև ուսանողներից մեկը բարձրաձայն կկարդա Երեց Դավիթ Հ. Օուքսի հետևյալ խոսքերը.



«Հաղորդության ժողովի և հատկապես հաղորդության արարողության ժամանակ, մենք պետք է կենտրոնանանք երկրպագության վրա և զերծ մնանք ուրիշ որևէ բան անելուց, հատկապես, այնպիսի պահվածքից, որը կարող է խանգարել ուրիշների երկրպագությանը: ... Հաղորդության ժողովը գրեթե կամ ամսագրեր կարդալու ժամանակ չէ: Երիտասարդներ, դա հեռախոսով շշուկով խոսելու կամ հաղորդագրություններ գրելու ժամանակ չէ: Երբ ճաշակում ենք հաղորդությունից, մենք սրբազան ուխտ ենք կապում, որ միշտ կհիշենք Փրկիչին: Որքան տխուր է տեսնել մարդկանց, ովքեր բացահայտորեն խախտում են այդ ուխտը հենց այն ժողովին, որտեղ կապում են այն» («Հաղորդության ժողովը և հաղորդությունը», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2008, 18–19):

Ձեր ուսանողների կարիքների և Հոգու հուշումների շուրջ խորհելով դուք կարող եք կարդալ Մարկոս 14.37 հատվածը նրանց հետ միասին և շեշտել, որ այս հատվածը հորդորում է մեզ մի կողմ թողնել բոլոր խանգարող հանգամանքները և մեր ողջ ուշադրությունը կենտրոնացնել Տիրոջ վրա ամեն շաբաթ հաղորդության ժողովի մեր երկրպագության ժամանակ:

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչ իրենք կարող են անել, որպեսզի ավելի սուրբ փորձառություն ունենան, երբ ճաշակում են հաղորդությունը: Հարցրեք, թե արդյոք որևէ մեկը ցանկություն կունենա կիսվել Հանգստության օրվա և հաղորդության կարևորության մասին վկայությամբ: Կիսվեք ձեր վկայությամբ, որ Տերը կօրհնի մեզ Իր Հոգով, եթե մենք պատվենք մեր մկրտության ուխտերը և ջանանք միշտ հիշել Նրան:

Ուսանողի ընթերցարան

- Ելից 31.13, 16–17, Մոսիա 18.8–10, 23, 25.23–24, 3 Նեփի 18.1–11, 20.3–9, Մորոնի 4.3, 5.2, 6.4–6:
- Ռասսել Մ. Նելսոն, «Կիրակին բերկրանք է», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2015, 129–32:

Աստծո ազատման գործությունը

Նախաբան

Մորմոնի Գիրքը պարունակում է անթիվ անհատների և հասարակությունների պատմություններ, որոնք ինչ-որ ձևով գերության մեջ են եղել: Այս պատմություններից շատերը լուսաբանում են, որ Հիսուս Քրիստոսը Մեծ Ազատիչն է և օգնության աղբյուրը, երբ փախուստը կամ փրկությունն անհնար են թվում: Երբ մենք մոտենում ենք

Տիրոջը ապաշխարության, խոնարհության և աղոթքի միջոցով, հոգևոր առումով ավելի պատրաստված ենք լինում աղերսելու և ստանալու Աստծո ազատման գործությունը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Լ. Թոմ Փերի, «Ազատման գործությունը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2012, 94-97:
- Dallin H. Oaks, “He Heals the Heavy Laden,” *Ensign* or *Liahona*, Nov. 2006, 6–9.
- Դեյվիդ Ա. Բեդնար, «Իրենց բեռները հեշտությամբ տանելին», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 87–90:

Ուսուցման առաջարկներ

1 Նեփի 1.20, Ալմա 36.1–3, 27–29

Աստված գործություն ունի ազատում շնորհելու

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե երբ են իրենք ոգեշնչվել մեկի քաջությամբ ու ուժով, ով կանգնել է մեծ մարտահրավերների կամ դժվարությունների առաջ: Խնդրեք ուսանողներին հակիրճ ձևով կիսվել իրենց մտաբերած օրինակներով:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 1 Նեփի 1.1 հատվածը, փնտրելով, թե ինչ է Նեփին ասում դժվարությունների մասին, որոնք նա ունեցել է իր կյանքում:

- Ինչպե՞ս է Նեփին հակիրճ ձևով ներկայացնում իր զգացմունքները «շատ չարչարանքներ» տանելուց հետո:
- Ձեր կարծիքով, ինչպես կարող է մարդը «մեծապես հովանավորված [զգալ] Տիրոջ կողմից» նույնիսկ այն դեպքում, երբ հանդիպում է մարտահրավերների և դժվարությունների:

Ասեք ուսանողներին 1 Նեփի 1.1-ից հղում կատարել 1 Նեփի 1.20-ին և փնտրել մեկ պատճառ, թե ինչու էր Նեփին նկարագրում, որ զգում էր «մեծապես հովանավորված Տիրոջ կողմից»:

- Այս հատվածի որ սկզբունքը կարող է օգնել մարդուն հույս ունենալ, երբ հանդիպում են մարտահրավերների կամ դժվարությունների:

(Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալ սկզբունքը. Երբ մենք հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը, մենք կարող ենք արժանանալ Աստծո ողորմածությանը և ազատմանը:)

Բացատրեք, որ «Ես՝ Նեփիս, ցույց կտամ ձեզ» արտահայտությունը ցույց է տալիս, որ Նեփին նախատեսում էր արձանագրել Աստծո ազատման գործության օրինակներ: Հրավիրեք ուսանողներին աչքի անցկացնել 1 Նեփի 1–8 և 16–18 գլուխները, փնտրելով օրինակներ Նեփիի կյանքից, որոնք նկարագրում են Աստծո ազատման գործությունը: Հրավիրեք ուսանողներին հակիրճ ձևով կիսվել իրենց գտած օրինակներով: Եթե ուսանողները դժվարանում են օրինակներ գտնել, դուք կարող եք հուշել նրանց հետևյալ հատվածներից մեկը կամ մի քանիսը. 1 Նեփի 3.23–31, 4.1–18, 7.16–19, 8.7–12, 16.10, 18–31, 36–39, 17.48–55 և 18.1–3, 11–21:

Բարձրաձայն կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Լ. Թոմ Փերիի (1922–2015) հետևյալ խոսքերը.



«Մորմոնի Գրքի պատմություններից շատերը ազատվելու պատմություններ են: Լեքիի մեկնումը անապատ իր ընտանիքի հետ Երուսաղեմի կործանումից ազատման մասին էր: Հարեդացիների պատմությունը ազատման պատմություն է, ինչպես Մուլենկացիների պատմությունն էր: Ալմա Կրտսերը ազատվեց մեղքից: Շելամանի պատանի ռազմիկները ազատվեցին ճակատամարտում: Նեփին ու Լեքին ազատվեցին բանտից: Ազատման թեման ակնհայտ է ողջ Մորմոնի գրքով մեկ» («Ազատման գործությունը» *Ensign* կամ *Liahona*, մայիս 2012, 94):

Որպես հոգևոր ազատման օրինակ բացատրեք, որ Ալման իր որդի Հելամանին նկարագրել է մեղքից իր ազատումը: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 36.1–3 հատվածները և հրավիրեք մեկ այլ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 36.27–29 հատվածները (նշեք, որ Ալմա 5.1–12 հատվածները պարունակում են նմանատիպ մի խորհուրդ): Դասարանին խնդրեք հետևել, փնտրելով մտքեր, որոնք կարող են օգնել մեկին, ով անցնում է չարչարանքների կամ դժվարությունների միջով:

- Ի՞նչ մտքեր գտաք այս հատվածներում, որոնք կարող են օգնել մեկին, ով հանդիպել է ֆիզիկական կամ հոգևոր դժվարությունների:
- Ինչպիսի՞ ֆիզիկական կամ հոգևոր գերության են հանդիպում մարդիկ այսօր: (Հնարավոր օրինակներ. վատ առողջություն, թմրադեղերից կամ պոռնոգրաֆիայից կախվածություն, աղքատություն, բռնություն, խտրականություն, մեղք, անհավատություն և ըմբոստություն:)

Ցուցադրեք և կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը.



«Արդյո՞ք դուք տրվում եք դևի հակում առաջացնող գայթակղություններին, ինչպիսին են ծխախոտը, թմրադեղերը, մոլախաղերը կամ մեր ժամանակներում ամենամեծ վնասը հասցնող պոռնոգրաֆիայի համաճարակը: Արդյո՞ք ձեր ամուսնությունը կանգնած է խնդիրների առաջ կամ ձեր երեխան վտանգի մեջ է: Արդյո՞ք դուք շփոթության մեջ եք, կապված ձեր սեռային ինքնության հետ, կամ փնտրում եք

ինքնագնահատում: Արդյո՞ք դուք կամ մեկը, ում դուք սիրում եք, կանգնել է հիվանդության, դեպրեսիայի կամ մահվան առաջ: Ինչ քայլեր էլ որ պահանջվեն ձեզանից կատարել այդ խնդիրները լուծելու համար, *առաջիկա* եկեք դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը: Վստահեք երկնքի խոստումներին: Այդ առումով Ավմայի վկայությունը նաև իմ վկայությունն է. «Ես իսկապես գիտեմ, - ասում է նա, - որ ովքեր որ դնեն իրենց վստահությունն Աստծո վրա, պիտի սատարվեն իրենց փորձանքների, և իրենց տագնապների, և իրենց չարչարանքների մեջ» [Ավմա 36.3]» ("Broken Things to Mend," *Ensign or Liahona*, May 2006, 70):

- Ըստ Երեց Հովանդի, ի՞նչը մեզ կօգնի լուծել մեր խնդիրները և հաղթահարել դժվարությունները:

1 Նեփի 6.4, Մոսիա 21.2–5, 14–16, 23.23–24, 24.13–15, 21, Ավմա 34.9, Հեկաման 5.9

Հիսուս Քրիստոսը ազատման աղբյուրն է

Հրավիրեք ուսանողներին նկարագրել տարբեր պատճառներ, թե ինչը կարող է մղել հեղինակին գիրք գրել: (Օրինակ, հեղինակը կարող է ցանկանալ պատմություն պատմել, կիսվել իր փորձառությամբ որևէ հարցի շուրջ կամ ապրուստի համար գումար վաստակել:) Երբ մի քանի ուսանողներ դասարանի հետ կիսվեն իրենց գաղափարներով, հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 1 Նեփի 6.4 հատվածը, փնտրելով պատճառներից մեկը, թե ինչու էր Նեփին գրում:

- Ի՞նչ է Նեփին ասել իր հիշատակարանը գրելու նպատակի մասին: (Նա ցանկանում էր համոզել մարդկանց գալ Աստծո մոտ և փրկվել:)

Վկայեք ուսուցիչներին, որ Աստծո փրկելու գործությունը ազատելու գործությունն է:

Գրատալստակին գրեք հետևյալը և բացատրեք ուսանողներին, որ այս հատվածները նկարագրում են մարդկանց, ովքեր ունեին ազատվելու կարիք.

<i>Լեմբիի ժողովուրդը</i>	<i>Արմայի ժողովուրդը</i>	<i>Բոլոր ժողովուրդները</i>
<i>Մոսիա 21.2–5, 14–16</i>	<i>Մոսիա 23.23–24, 24.21</i>	<i>Արմա 34.9, Հեկաման 5.9</i>

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ գրատախտակին գրված սուրբ գրությունների հատվածները, փնտրելով, թե հատվածներից յուրաքանչյուրն ինչ է ուսուցանում խնդիրներից ու դժվարություններից ազատելու աղբյուրի մասին:

- Ի՞նչ եք սովորում այս հատվածից ազատելու աղբյուրի մասին:
(Ուսանողների պատասխաններից հետո շեշտեք հետևյալ վարդապետությունը. **Հիսուս Քրիստոսը զորություն ունի ազատելու մեզ մեր կորած և ընկած վիճակից և մահկանացու կյանքի այլ խնդիրներից:**

Ցուցադրեք Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ խոսքերը և որևէ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ այն.



«Ես ցանկանում եմ վկայել Աստծո ազատման զորության մասին: Մեր կյանքում ինչ-որ մի պահ բոլորս էլ կունանանք այդ զորության կարիքը: Ամեն կենդանի արարած փորձաշրջան է անցնում: ... Երկու բան նույնը կլինեն մեզանից յուրաքանչյուրի համար: Դրանք մահկանացու կյանքի մի մասն են կազմում:

Առաջինը, փորձությունները ժամանակ առ ժամանակ կստիպեն մեզ զգալ, որ մենք ունենք օգնության կարիք՝ մեր ուժերից վեր: Եվ երկրորդը, Աստված Իր բարությամբ և իմաստությամբ ազատման զորությունը հասանելի է դարձրել մեզանից յուրաքանչյուրի համար» (“The Power of Deliverance” [Brigham Young University devotional, Jan. 15, 2008], 1; speeches.byu.edu):

- Ե՞րբ եք դուք դժվարությունների ընթացքում ստացել «օգնություն» [ձեր] ուժերից վեր»:

Եթե ժամանակը թույլ է տալիս, դուք կարող եք անդրադառնալ Աստծո ժողովրդի պատմությանը Մոսիա 24.13-15 հատվածներում, որպեսզի լուսաբանեք այն գաղափարը, որ Աստվածայի ազատման արդյունքում միշտ չէ, որ մենք ազատվում ենք մեր բեռներից, այլ Աստված հաճախ ազատում է մեզ ուժեղացնելով մեր բեռները տանելու ունակությունը: Այս իրավիճակներում պահանջվում է համբերություն և տոկունություն, ճիշտ ինչպես երբ առողջական խնդիրներն են շարունակվում ողջ կյանքի ընթացքում: Ազատումը գալիս է Աստծո որոշած ձևով և Նրա սահմանած ժամանակին:

Մոսիա 7.33, 29.20, Ավամ 58.10–11, 3 Նեփի 4.33

ճաշակել ազատման զորությունը

Վկայեք, որ մեզանից յուրաքանչյուրն էլ կարող է հույս ունենալ, երբ հայտնվում ենք այնօրիսի իրավիճակներում, որոնցից ազատվելը կամ փրկվելն անհնարին է թվում: Հիշեցրեք ուսանողներին, որ սուրբ գրությունները պարունակում են հրահանգներ այն մասին, թե ինչպես ճաշակել Փրկիչի ազատման զորությունը:

Գրատախտակին գրեք հետևյալ հղումները: (Մի ներառեք փակագծերի նյութերը. այն նախատեսված է միայն ուսուցիչների համար:) Հրավիրեք ուսանողներին կարդալ հատվածներից յուրաքանչյուրը, փնտրելով

գործողությունները, որոնք կարող են օգնել մեզ ճաշակել Փրկիչի ազատման գործությունը:

Մոսիա 7.33 (Սրտի ողջ նվիրվածությամբ դարձեք դեպի Տերը, ապավինեք Նրան, ջանասիրությամբ ծառայեք նրան)

Մոսիա 29.20 (Եղեք խոնարհ, ուժգին աղաղակեք ամ Աստված)

Ալմա 58.10–11 (Դուրս թափեք ձեր հոգիներն աղոթքով, ազատման հույս ունեցեք)

3 Նեփի 4.33 (Ապաշխարեք, եղեք խոնարհ)

Բավարար ժամանակից հետո հրավիրեք ուսանողներին կիսվել և քննարկել նրանց նշած գործողություններից որևէ մեկը և ուսանողների պատասխանները գրել գրատախտակին: Շեշտեք հետևյալ սկզբունքը. **Երբ մենք սրտի ողջ նվիրվածությամբ դառնում ենք դեպի Աստված և աղոթում Նրա օգնության համար, ունենալով ապաշխարության հոգի և խոնարհություն, մենք կարող ենք ճաշակել Նրա ազատման գործությունը:**

Ցուցադրեք Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ խոսքերը.



«Տերը միշտ ցանկանում է առաջնորդել մեզ դեպի ազատում՝ մեր ավելի արդարակյաց դառնալու միջոցով: Դա պահանջում է ապաշխարություն: Եվ դրա համար պետք է խոնարհություն: Այսպիսով, ազատման ուղին միշտ պահանջում է խոնարհություն, որպեսզի Տերը կարողանա առաջնորդել մեզ մեր ձեռքից բռնած դեպի այն վայրը, ուր Նա ցանկանում է տանել մեզ մեր փորձությունների միջով դեպի սրբագործում» ("The Power of Deliverance"

[Brigham Young University devotional, Jan. 15, 2008], 4; speeches.byu.edu):

- Ինչպե՞ս են ապաշխարությունը, խոնարհությունը և աղոթքն օգնում մեզ ճաշակել Տիրոջ ազատման գործությունը:
- Ե՞րբ եք դուք կամ մեկը, ում դուք ճանաչում եք, դարձել դեպի Տերը ազատման համար և ստացել այն: Ինչպե՞ս է այդ փորձառությունը մեծացրել ձեր վստահությունը ամ Հիսուս Քրիստոսը:

Խրախուսեք ուսանողներին խորհել այնպիսի ժամանակաշրջանի մասին, երբ նրանք ճաշակել են Տիրոջ ազատման գործությունը: Քաջալերեք նրանց գրել իրենց փորձառությունները հետագայում հիշելու համար: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց փորձառություններով, որոնք չափից ավելի սուրբ կամ անձնական չեն:

Ուսանողի ընթերցարան

- 1 Նեփի 1.20, 6.4, Մոսիա 7.33, 21.2–5, 14–16, 23.23–24, 24.13–15, 21, 29.20, Ալմա 34.9, 36.1–3, 27–29, 58.10–11, Հեկաման 5.9, 3 Նեփի 4.33:
- Լ. Թոմ Փերի, «Ազատման գործությունը», *Ensign* կամ *Լիսհոնա*, մայիս 2012, 94–97:

Գործիքներ դառնալ Աստծո ձեռքում

Նախաբան

Հիսուս Քրիստոսի ավետարանը խաղաղության ուղերձ է անհանգիստ աշխարհի համար: Նրանք, ովքեր գործիքներ են դառնում Աստծո ձեռքում, կարող են կիսվել ավետարանով և օգնել մյուսներին դարձի գալ: Այս դասին

ուսանողները կսովորեն և կկիրառեն սկզբունքներ Մորմոնի Գրքի պատմվածքներից՝ միսիոներների մասին, ովքեր գործիքներ էին դարձել Աստծո ձեռքում և օգնել մյուսներին ստանալ հավերժական կյանք:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Մ. Ռասսել Բալլարդ, «Ապավինեք Տիրոջը», *Ensign* կամ *Լիստոնա*, նոյ. 2013, 43–45.
- Don R. Clarke, “Becoming Instruments in the Hands of God,” *Ensign* կամ *Լիստոնա*, նոյ. 2006, 97–99.

Ուսուցման առաջարկներ

1 Նեփի 13.37, Մոսիա 15.14–19, 26–28

Օրհնություններ են խոստացված նրանց, ովքեր կիսվում են ավետարանով

Գրառախտակին գրեք մարգարե Ջոզեֆ Մոսիի (1805–1844) հետևյալ խոսքերը *Եկեղեցու Նախագահների ուսմունքներից. Ջոզեֆ Մոսի* (2007), 330:

«Նրանից հետո, երբ ամեն ինչ ասված է, առավել մեծ և կարևոր պարտականությունը ավետարանը քարոզելն է»: (Մարգարե Ջոզեֆ Մոսի)

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ այս խոսքերը: Այնուհետև հարցրեք.

- Ինչո՞ւ է ավետարանով մյուսների հետ կիսվելը մեր ամենակարևոր պարտականությունը:
- Ի՞նչ օրհնություններ եք դուք ստացել այս պարտականությունն ընդունելու և կատարելու արդյունքում:

Բացատրեք, որ Նեփին կանխատեսել էր ավետարանի վերականգնումը և Մորմոնի Գրքի ի հայտ գալը (տես 1 Նեփի 13.34–36): Նա նաև նկարագրել է օրհնությունները, որոնք հասանելի են նրանց, ովքեր կքարոզեն ավետարանը և կօգնեն մյուսներին գալ դեպի Քրիստոսը:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 1 Նեփի 13.37 հատվածը, և խրախուսեք նրանց նշել կամ գումարարել օրհնությունները, որոնք

խոստացված են նրանց, ովքեր կջանան կիսվել ավետարանով այս վերջին օրերում:

- Ի՞նչ օրհնություններ են ստանում նրանք, ովքեր ջանում են հաստատել Միոնը և հրատարակում խաղաղություն: (Ուսանողները պետք է հասկանան հետևյալ սկզբունքը. **Երբ մենք ջանում ենք կիսվել ավետարանով, մենք օրհնվում ենք Սուրբ Հոգով և կարող ենք փրկվել Աստծո արքայությունում:**)

Ասացեք ուսանողներին, որ Աբինադին մեջբերում էր Եսայիային և բացատրում, թե ինչ է նշանակում հրատարակել խաղաղություն և թե ինչու մենք պետք է ջանանք կիսվել ավետարանով (տես Եսայիա 52.7):

Հրավիրեք մի քանի ուսանողների բարձրաձայն կարդալ Մոսիա 15.14–19, 26–28 հատվածները, մինչ դասարանը կհետևի, թե ինչ է ուսուցանել Աբինադին:

- Ի՞նչ է նշանակում հրատարակել խաղաղություն և փրկություն: (Տես 14 հատվածը:)
- Ինչո՞ւ է հարկավոր, որ փրկությունը հայտարարվի բոլոր ազգերին, ցեղերին, լեզուներին և ժողովուրդներին:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ Աբինադի խոսքերը, հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ հայտարարությունը.



«Խաղաղություն և լավ լուրեր, լավ լուրեր և խաղաղություն: Սրանք են հիմնական օրհնությունների թվում, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը բերում է անհանգիստ աշխարհին և այս աշխարհում ապրող անհանգիստ մարդկանց, անձնական մաքառումների և մարդկային մեղսավորության լուծումներ, ուժի աղբյուր՝ հոգևած օրերի ու իսկական հուսահատության պահերի համար: ... Աստծո Միաձին Որդին անձամբ է տալիս մեզ այս օգնությունը և այս հույսը: ...

Խաղաղության որոնումը մարդկային հոգու ծայրահեղ փնտրտուքն է: ...Բոլորիս կյանքում լինում են ժամանակներ, երբ խորը վիշտը, տառապանքը, վախը կամ միայնությունը ստիպում են մեզ ճշգլ` խաղաղություն հայցելով, որը միայն Աստված անձամբ կարող է տալ: Դրանք հոգևոր սովի սաստիկ ժամանակներ են, երբ նույնիսկ ամենասիրված ընկերները չեն կարող մեզ օգնության հասնել» (“The Peaceable Things of the Kingdom,” *Ensign*, Nov. 1996, 82):

- Ի՞նչ առումով է Հիսուս Քրիստոսի ավետարանը խաղաղության ուղերձ:

Որպեսզի օգնեք պատասխանել այս հարցին, կարող եք քննարկել Առաջին Նախագահությունից Նախագահ Մերիոն Գ. Ռոմնիի (1897–1988) հետևյալ խոսքերը.



«Խաղաղություն հաստատելը պահանջում է հեռացնել սատանայի ազդեցությունը: Որտեղ նա կա, խաղաղություն չի կարող լինել: Ավելին՝ խաղաղ գոյակցությունը նրա հետ անհնար է: ... Միակ բանը, որ նա առաջ է տանում, դա մարմնական գործերն են: ...

Որպես խաղաղության նախաբան, ուրեմն, սատանայի ազդեցությունը պետք է ամբողջությամբ սաստվի: ...

Ինչպես որ մարմնի գործերը համաշխարհային կիրառում ունեն, նույն կերպ խաղաղության ավետարանն ունի: Եթե մի հոգի ապրում է ըստ դրա, նա իր մեջ խաղաղություն ունի: Եթե երկու հոգի են ապրում ըստ դրա, նրանցից յուրաքանչյուրն ունի խաղաղություն իր մեջ, ինչպես նաև միմյանց հետ: Եթե քաղաքացիներն ապրում են ըստ դրա, ապա ազգն ունի ներքին խաղաղություն: Երբ կլինեն Հոգու պտուղը վայելող բավական ազգեր, որոնք կվերահսկեն միջազգային հարաբերությունները, ապա այդ ժամանակ, միայն այդ ժամանակ պատերազմի թմբուկներն այլևս չեն հնչի» ("The Price of Peace," *Ensign*, Oct. 1983, 4, 6):

- Ե՞րբ եք ականատես եղել, որ ավետարանը խաղաղություն է բերել ինչ-որ մեկի կյանք:
- Ի՞նչ եղանակներով մենք կարող ենք արդյունավետորեն կիսվել ավետարանով:

Քաջալերեք ուսանողներին մտածել մեկի մասին, ում նրանք կարող են օգնել զգալ խաղաղությունը, որը գալիս է ավետարանից: Խրախուսեք նրանց սկսել ծրագրել այդ անձի հետ ավետարանով կիսվելը և քաջալերեք նրանց մտածել, թե ինչպես կարող են կիրառել սկզբունքները, որոնք սովորում են դասի ընթացքում:

Մոսիա 28.3, Ալմա 17.2–3, 6, 9–12, 16, 25, 18.10, 21.16, 22.1, 12–14, 26.11–12, 26–29, 31.30–34

Գործիքներ դառնալ Աստծո ձեռքում

Կարող եք ցուցադրել ուսանողներին վերը տրված նկարներից մեկը կամ բոլորը (ջութակ, արհեստանոցի գործիքներ, բժշկական գործիքներ) կամ նմանատիպ նկարներ: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ կարող են այս գործիքներն անել, եթե մեկի ձեռքում են, ով հմուտ է դրանք օգտագործում:
- Ի՞նչ է նշանակում գործիքներ լինել Աստծո ձեռքում:



Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 17.2–3, 9–11 հատվածները: Խնդրեք ուսանողներին փնտրել, թե ինչ արեցին Մոսիայի որդիները Աստծո ձեռքում գործիքներ դառնալու համար:

- Ի՞նչ կարող ենք մենք սովորել Մոսիայի որդիների օրինակից՝ թե ինչպես դառնալ գործիքներ Աստծո ձեռքում: (Ուսանողների պատասխաններից հետո գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. **Երբ աղոթում ենք, ծով ենք պահում, ուսումնասիրում ենք սուրբ գրությունները և լավ օրինակ հանդիսանում մյուսների համար, մենք գործիքներ ենք դառնում Աստծո ձեռքում:**)



Բացատրեք, որ Մորմոնի Գիրքը պարունակում է բազմաթիվ այլ օրինակներ նրա, ինչ արեցին Ալֆան և Մոսիայի որդիները, որպեսզի արդյունավետ գործիքներ դառնային Աստծո ձեռքում: Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները (մի ընդգրկեք փակագծերի մեջ գրված ամփոփումները): Յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք մեկ կամ մեկից ավելի հատվածներ: Խնդրեք ուսանողներին փնտրել, թե ինչ արեցին Տիրոջ ծառաները, ինչը նպաստեց ավետարանով կիսվելու նրանց հաջողությամբ:

Մոսիա 28.3 (Ցանկանում էին հայտարարել փրկության մասին, որպեսզի ոչ մի հոգի չկորչի:)

Ալմա 17.6 (Կամենում էին հրաժարվել աշխարհի ճանաչումից ավետարանը քարոզելու համար:)

Ալմա 17.11–12 (Համբերատու էին, քաջ և լավ օրինակ էին:)

Ալմա 17.16 (Ցանկանում էին օգնել մարդկանց սաքաշխարել և սովորել փրկագնման ծրագրի մասին:)

Ալմա 17.25, 18.10 (Ցանկանում էին ծառա լինել:)

Ալմա 21.16, 22.1 (Առաջնորդվում էին Հոգով:)

Ալմա 22.12–14 (Ուսուցանում էին սուրբ գրություններից Քրիստոսի և փրկագնման ծրագրի մասին:)

Ալմա 26.11–12 (Խոնարհ էին, ընդունելով, որ Աստվածն է իրենց ուժի աղբյուրը:)

Ալմա 26.26–29 (Չէին հանձնվում, երբ ընկճված էին: Ցանկանում էին համբերությամբ տառապել Քրիստոսի գործի համար: Ուսուցանում էին ավետարանը տարբեր իրադրություններում:)

*Ալմա 31.30–34 (Աղոթում էին օգնության համար՝ մարդկանց դեպի
Քրիստոսը բերելիս:)*

Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք ներկայացնել իրենց սովորածը: Կարող եք ամփոփել ուսանողների պատասխանները՝ գրատախտակին գրելով հատվածների ամփոփումները: Կարող եք քաջալերել ուսանողներին գրի առնել սուրբ գրության այս հատվածները և ավելի ուշ՝ դասից հետո կազմել սուրբ գրությունների շղթա «ավետարանով կիսվելու կարևոր տարրերը» անվանումով:

- Եթե դուք հնարավորություն ունեցել եք ավետարանով մյուսների հետ կիսվելու, կարող եք կիսվել ձեր փորձով կամ բերել վկայություն, թե ինչպես են այս տարրերը նպաստել ձեր գործի հաջողությանը:
- Ինչպե՞ս են այս հատվածներում գրանցված սկզբունքները վերաբերում այլ կոչումներին կամ լավ ընկեր կամ հարևան լինելուն:
- Ե՞րբ եք դուք հնարավորություն ունեցել օգնելու ուրիշներին որպես գործիք Աստծո ձեռքում:

Ալմա 18.33–35, 23.5–6, 26.2–5, 15, 29.9–10

Օգնել ուրիշներին դարձի գալ

Հիշեցրեք ուսանողներին, որ բացի այն, որ Մորմոնի Գիրքը ուսուցանում է մեզ գործիքներ լինել Աստծո ձեռքում, այն նաև ուսուցանում է, թե ինչպես կարող ենք փոխել մյուսներին՝ լինելով գործիքներ:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 18.33–35 մինչ դասարանը կփնտրի, թե ինչ պետք է իրականացնել Ամմոնը լինելով գործիք Աստծո ձեռքում: Հրավիրեք ուսանողներին ամփոփել այն, ինչ գտան, սկզբունքի տեսքով: (Օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալը. **Երբ մենք դառնում ենք գործիքներ Աստծո ձեռքում, Նա շնորհում է մեզ գործություն՝ օգնելու մյուսներին գալ ճշմարտության իմացությանը:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին տեսնել մյուսներին ճշմարտության իմացությանը բերելու արդյունքը, հրավիրեք դասարանին մտքում կարդալ Ալմա 23.5–6: Խնդրեք ուսանողներին փնտրել, թե ինչ պատահեց լամանացիների հետ, երբ նրանք եկան ճշմարտության իմացությանը:

- Ո՞ր բառերն ու արտահայտություններն են նկարագրում, թե ինչպիսի ազդեցություն ունեցավ ավետարանի քարոզումը լամանացիների վրա:
- Ի՞նչ սկզբունք մենք կարող ենք սովորել այն մասին, թե ինչ կարող է տեղի ունենալ, երբ մենք մյուսներին բերում ենք ճշմարտության իմացությանը: (Ուսանողները պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունը. **Երբ մենք բերում ենք մյուսներին ճշմարտության իմացությանը, մենք օգնում ենք նրանց դարձի գալ դեպի Տերը:**)

Բացատրեք, որ և Ամմոնը, և Ալման վկայեցին այս ճշմարտությունների մասին: Խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ

Ալմա 26.2–5, 15 և Ալմա 29.9–10 հատվածները, մինչդեռ դասարանը կփնտրի, թե ինչ ազդեցություն մենք կարող ենք ունենալ ուրիշների վրա, երբ որպես գործիքներ Աստծո ձեռքում կիսվում ենք ավետարանով:

- Ամմոնի և Ալմայի արտահայտած զգացմունքների վերաբերյալ ի՞նչ տպավորություն թողեց ձեր վրա:

Հրավիրեք ուսանողներին պատմել, թե ինչ են նրանք զգացել, երբ ավետարանով կիսվել են մյուսների հետ:

Քաջալերեք ուսանողներին խորհել, թե ինչպիսի հնարավորություններ նրանք ունեն՝ օգնելու մյուսներին սովորել ավետարանը և դարձի գալ: Հրավիրեք նրանց մտածել, թե ինչպես միավորեն այս դասին սովորած սկզբունքներն ու փորձը ավետարանով կիսվելու իրենց առօրյա ջանքերի հետ:

Ուսանողի ընթերցարան

- 1 Նեփի 13.37, Մոսիա 15.14–19, 26–28, 28.3, Ալմա 17.2–3, 6, 9–12, 16, 25, 18.10, 33–35, 21.16, 22.1, 12–14, 23.5–6, 26.2–5, 11–12, 15, 26–29, 29.9–10, 31.30–34:
- Մ. Ռասսել Բալլարդ, «Ապավինեք Տիրոջը», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2013, 43–45:

Ապաշխարություն և ներում

Նախաբան

Մեղքից մաքրվելու համար մենք պետք է հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը՝ ի ապաշխարություն: Երբ անկեղծորեն ապաշխարենք, մենք կարող ենք մեղքերի թողություն ստանալ, որը մեր հոգիներին ուրախություն և խղճի խաղաղություն է տալիս: Մենք

կարող ենք պահպանել այդ մեղքերի թողությունը մեր ամբողջ կյանքի ընթացքում, եթե հավատարմորեն պահենք Աստծո պատվիրանները և սիրենք ու ծառայենք մեկս մյուսին:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Ապաշխարության աստվածային պարզևր», *Ensign* կամ *Liahon*, նոյ. 2011, 38–41:
- Նիլ Լ. Անդերսեն, «Ապաշխարեք, ... որպեսզի ես կարողանամ բուժել ձեզ», *Ensign* կամ *Liahon*, նոյ. 2009, 40–43:
- Քրեյգ Ա. Քարդոն, «Փրկիչն ուզում է ներել», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2013, 15–17:

Ուսուցման առաջարկներ

Ավա 34.15–17, 3 Նեփի 9.13–14, 19–22

Հավատք գործադրել առ Քրիստոսը՝ ի ապաշխարություն

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, թե նրանց հանձնարարված է խոսել հաղորդության ժողովին ապաշխարության մասին: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե նրանք ինչ պետք է ասեն, որպեսզի օգնեն եկեղեցու անդամներին ավելի լավ հասկանալ այս վարդապետությունը: Երբ նրանք կիսվեն իրենց մտքերով, ցուցադրեք և կարդացեք Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուիլյամսի հետևյալ խոսքերը.



«Մենք առ Քրիստոս անսասան հավատքի կարիք ունենք, որպեսզի կարողանանք ապաշխարել» («Ապահով վերադարձի կետ», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2007, 100):

- Ինչո՞ւ են այս խոսքերը ճշմարիտ:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ավա 34.15–17 հատվածները, որտեղ գրված է, թե ինչպես էր Ամուդեկը ուսուցանում գորամացիներին ապաշխարության մասին: Քաջալերեք դասարանին

հետևել և տեսնել, որ այն, ինչ Ամուղեկն ուսուցանում էր, պահանջվում է մեզանից՝ ներվելու համար:

- Ներում ստանալու մասին ի՞նչ սկզբունք է ուսուցանվում այս հատվածներում: (Ուսանողների պատասխաններից հետո գրեք այս սկզբունքը գրատախտակին. **Որպեսզի ստանանք ներման ողորմած օրհնությունները, մենք պետք է հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսն՝ ի ապաշխարություն:** Նշեք, որ «հավատք ի ապաշխարություն» արտահայտությունը չորս անգամ կրկնվում է այս հատվածներում: Սա հնարավորություն է՝ կարևորելու սուրբ գրության ուսումնասիրության հմտությունը՝ բառերի կրկնությունները ճանաչելու հարցում:)
- Ինչո՞ւ մենք պետք է հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսը, որպեսզի ապաշխարենք և ներվենք: (Մենք պետք է հավատք ունենանք Նրա քավող զոհաբերության հանդեպ, որպեսզի այս զոհաբերությունը ազդեցություն թողնի մեր կյանքում: Միայն Նրա քավության միջոցով մենք կարող ենք ներվել, որպեսզի մեր սրտերը փոխվեն և մաքրվեն մեղքից [տես Մոսիա 5.2]:)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե ինչպես ենք մենք մոտենում Փրկիչին ու ապաշխարում, բացատրեք, որ Ամերիկաներում տեղի ունեցած մարդկանց զանգվածային ոչնչացումից հետո, որոնք վկայել են Նրա Խաչելության մասին, Փրկիչն ուսուցանեց ժողովրդին, թե ինչ պետք է նրանք անեն, որպեսզի ապաշխարեն և ներում ստանան Իրենից: Հրավիրեք ուսանողներին զույգերով ուսումնասիրել 3 Նեփի 9.13–14, 19–22 հատվածները, գտնելով արտահայտությունները, որոնք նկարագրում են այն, ինչ ասել է Փրկիչը, թե ինչ մենք պետք է անենք, որպեսզի զանք Իր մոտ և ապաշխարենք: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո ուսանողներին խնդրեք կիսվել իրենց գտածով:

- Ի՞նչ սկզբունք է ուսուցանում Տերն այս հատվածներում այն մասին, թե մենք ի՞նչ պետք է անենք ապաշխարելու համար: (Չնայած ուսանողները կարող են օգտագործել տարբեր խոսքեր, նրանք պետք է հասկանան հետևյալ սկզբունքը. **Եթե մենք զանք դեպի Քրիստոսը կոտրված սիրտով և փշրված հոգով, Նա կընդունի մեզ և կփրկագնի մեր մեղքերից:**)
- Ինչպե՞ս կարող է Փրկիչի հրավերը «[զալ իր] մոտ ինչպես մի փոքր երեխա» (22 հատվածում) և «[վերադառնալ իր] մոտ» (13 հատվածում) օգնել մեզ ավելի լավ հասկանալ, թե ինչ է նշանակում ունենալ կոտրված սիրտ ու փշրված հոգի:
- Կյանքի ինչպիսի՞ փորձառություններ կարող են առաջացնել մարդու մոտ կոտրված սիրտ և փշրված հոգի:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Յոթանասունից Երեց Բրյուս Դ. Փորթերի հետևյալ խոսքերը: Կարող եք այդ խոսքերից մեկական օրինակ բաժանել ուսանողներից յուրաքանչյուրին: Խրախուսեք ուսանողներին ուշադիր լինել ոգեշնչումներին, թե ինչպես մենք կարող ենք ունենալ «կոտրված սիրտ ու փշրված հոգի», երբ ապաշխարում ենք:



«Ի՞նչ են կոտրված սիրտը և փշրված հոգին: ... Փրկիչի կատարյալ ենթարկումը Հավերժական Հորը կոտրված սրտի ու փշրված հոգու բուն էությունն է: Քրիստոսի օրինական ուսուցանում է մեզ, որ կոտրված սիրտը աստվածայնության հավերժական տարր է: Երբ մեր սրտերը կոտրված են, մենք ամբողջովին բաց ենք Աստծո Հոգու համար և հասկանում ենք մեր կախվածությունը Նրանից՝ ամեն ինչի համար, որ ունենք և որ մենք կանք:

Այս զոհաբերությունը հանգեցնում է հպարտության զոհաբերությանը՝ դրա բոլոր դրսևորումներով: Ինչպես փափուկ կավը հմուտ բրուտի ձեռքերում՝ կոտրված սրտով անձը կարող է կերտվել և ձևավորվել Վարդապետի ձեռքերում:

Կոտրված սիրտն ու փշրված հոգին նաև ապաշխարության նախապայմաններն են [տես 2 Նեփի 2.6–7]: ... Երբ մենք մեղք ենք գործում և ցանկանում ենք ներվել, կոտրված սիրտն ու փշրված հոգին պիտի զգան «Աստուծոյ ասված կերպով տրտմությունը [որ] ապաշխարություն է գործում» (Բ Կորնթացիս 7.10): Սա տեղի է ունենում, երբ մեղքից մաքրվելու մեր ցանկությունը այնպես է մեզ պարուրում, որ մեր սրտերը ցավից վշտանում են և մենք փափագում ենք զգալ խաղաղություն մեր Երկնային Հոր հետ: Նրանք, ովքեր կոտրված սիրտ ու փշրված հոգի ունեն, ցանկանում են անել ցանկացած բան և ամեն ինչ, ինչ Աստված խնդրում է նրանց, առանց դիմադրության կամ զայրույթի: Մենք դադարում ենք մեր ձևով գործել և փոխարենը սովորում ենք գործել Աստծո ձևով: Հնազանդության այդպիսի պարագայում Քավությունը կարող է ազդեցիկ լինել և ճշմարիտ ապաշխարությունը կարող է տեղի ունենալ» («Կոտրված սիրտ և փշրված հոգի», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2007, 32):

- Ըստ Երեց Փորթերի՝ ի՞նչ է նշանակում գալ դեպի Քրիստոսը կոտրված սրտով և փշրված հոգով:

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչ նրանք կարող են անել, որպեսզի ավելի լիարժեք գործադրեն իրենց հավատքն առ Հիսուս Քրիստոսը, Նրան մատուցելով կոտրված սիրտ և փշրված հոգի: Կարող եք մի քանի ընթացքով նրանց, որպեսզի գրեն, թե ինչպիսի տպավորություններ են ունեցել Հոգու միջոցով:

Վկայեք, որ Փրկիչի բարեգութ պարգևը՝ ապաշխարությունը, մատչելի է մեզանից յուրաքանչյուրին: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց զգացմունքներով՝ Փրկիչի քավող զոհաբերության և ապաշխարության պարգևի վերաբերյալ:

Ենովս 1.4–8, Մոսիա 4.1–3, Ալմա 19.29–30, 33–36, 36.19–21

Մեղքերի ներումը ուրախության և խաղաղության զգացմունքներ է պարգևում

- Ի՞նչ կասեք այն անձանց, ովքեր չգիտեն, թե ինչպես իմանալ՝ արդյոք նրանք ներված են իրենց նախկին մեղքերից:

Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել Ենովս 1.4–8, Մոսիա 4.1–3 և Ալմա 36.19–21, փնտրելով, թե ինչպես կարող են մարդիկ իմանալ, որ իրենք ստանում են մեղքերի թողություն:

- Համաձայն այս հատվածների՝ ինչպե՞ս կարող ենք մենք իմանալ, որ մեր մեղքերի համար թողություն ենք ստանում: (Օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալ սկզբունքը. **Եթե անկեղծորեն ապաշխարենք և թողություն ստանանք մեր մեղքերի համար, մեր սխալը սրբվում է, մենք լցվում ենք Տիրոջ Հոգով և մենք ուրախություն և խաղաղություն**

Ենթ զգում: Հոգու դրդումով կարող եք կիսվել Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ խոսքերով. «Նրանց, ովքեր իսկապես ապաշխարում են, սակայն չեն կարողանում հանգստություն զգալ, ես ասում եմ՝ շարունակեք պահել պատվիրանները: Ես խոստանում եմ ձեզ, հանգստությունը կգա ըստ Տիրոջ ժամանակի: Բուժումը նույնպես ժամանակ է պահանջում» [«Ապաշխարեք, ... որպեսզի ես կարողանամ բուժել ձեզ», *Ensign* կամ *Liahon*, նոյ. 2009, 42)]:

Այս սկզբունքն ավելի լավ ներկայացնելու համար խնդրեք մի քանի ուսանողների բարձրաձայն կարդալ մի քանի հատված՝ Ալմա 19.29–30, 33–36, որտեղ նկարագրվում է թագավոր Լամոնիի և նրա մարդկանց դարձի գալու պատմությունը: Խնդրեք դասարանին փնտրել այն օրհնությունները, որոնք այդ մարդիկ ստացան, իրենց ապաշխարության և հավատքի շնորհիվ:

- Ի՞նչ հատուկ օրհնություններ ստացան Լամոնի թագավորը, նրա կինը և շատ ուրիշ լամանացիներ ապաշխարության և հավատքի շնորհիվ: (Նրանց սրտերը փոխվեցին, հրեշտակները սպասավորեցին նրանց, նրանք մկրտվեցին, եկեղեցին հիմնադրվեց և Տերը թափեց Իր Հոգին նրանց վրա:)
- Ե՞րբ եք տեսել ուրիշներին, որ ունեցել են այս օրհնություններից որոշները, երբ նրանք ապաշխարել են և ավելի են մոտեցել Տիրոջը:

Որպեսզի օգնեք ուսանողներին զգալ վերոնշյալ սկզբունքի ճշմարտությունն ու կարևորությունը, խնդրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերի (1924–2015) հետևյալ վկայությունը.



«Նամակներ են գալիս նրանցից, ովքեր ողբերգական սխալներ են գործել: Նրանք հարցնում են. «Կարո՞ղ եմ ես *երբևէ* ներվել»:

Պատասխանն է՝ *այո*:

Ավետարանը մեզ սովորեցնում է, որ կարող ենք ազատվել տառապանքից և հանցանքից ապաշխարության միջոցով: Բացառություն են կազմում այն քչերը, այն շատ քչերը, ովքեր կորստի են մատնվում ամբողջությունն իմանալուց հետո, չկա սովորույթ, չկա կախվածություն, չկա ըմբոստություն, չկա օրինազանցություն, ոչ էլ մեծ ու փոքր հանցանք, որը գերծ լինի լիովին ներվելու խոստումից:

«Հիմա եկեք ու վիճաբանենք, ասում է Տերը, եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինին, ձիւնի պես պիտի սպիտականան. եթե նորանք որդան կարմիրի պես լինին, ասրի պես սպիտակ պիտի դառնան»: Ապա, Եսայիան շարունակում է. «Եթե յոժարեք եւ լսեք» [Եսայիա 1.18–19]» ("The Brilliant Morning of Forgiveness," *Ensign*, Nov. 1995, 19):

Հրավիրեք ուսանողներին խորհել այն փորձառությունների մասին, երբ նրանք զգացել են խղճի ուրախությունն ու խաղաղությունը, որոնք ուղեկցում են լիարժեք ապաշխարությանը:

Մոսիա 4.11–12, 26

Պահպանելով մեր մեղքերի թողությունը

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 4.11–12, 26 հատվածները: Հրավիրեք ուսանողներին տեսնել, թե ինչ է ուսուցանել Բենիամին թագավորն այն մասին, թե ինչպես մենք կարող ենք պահպանել մեր մեղքերի թողությունը:

- Համաձայն Բենիամին թագավորի այս խոսքերի՝ ինչպե՞ս կարող ենք պահպանել մեր մեղքերի թողությունը մեր ողջ կյանքի ընթացքում: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալը սկզբունքը. **Եթե մենք հիշենք Աստծո սերը և բարությունը մեր հանդեպ, ամուր կանգնենք մեր հավատքում և սիրենք ու ծառայենք մյուսներին, մենք կարող ենք պահպանել մեր մեղքերի թողությունը:**)

Որպեսզի ուսանողներն ավելի լավ հասկանան այս սկզբունքը, խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թող Քրիստոֆերսոնի հետևյալ հայտարարությունը.



«Ապաշխարությունը ենթադրում է փոփոխության ձգտում: Դա կծաղրի հատուն մեզ կրած Փրկչի տառապանքները Գեթսեմանիի այգում և խաչի վրա, եթե ակնկալենք, որ Նա պետք է մեզ հրեշտակների վերածի՝ առանց իրական ջանքերի մեր կողմից: Փոխարենը, մենք փնտրում ենք Նրա շնորհը՝ լրացնելու և փոխհատուցելու համար մեր առավել ջանասեր ջանքերը (տես 2 Նեփի 25.23): Թերևս որքան որ աղոթում ենք ողորմածության համար, մենք պետք է աղոթենք ժամանակի և հնարավորության համար՝ աշխատելու, ձգտելու և հաղթահարելու: Անշուշտ, Տերը ժպտալով է մոտենում մեկին, ով ցանկանում է դատաստանի գալ արժանի, ով վճռականորեն աշխատում է ամեն օր, որպեսզի փոխարինի թուլությունը գործությամբ: Իսկական ապաշխարությունը, իսկական փոփոխությունը կարող են պահանջել բազմակի փորձեր, բայց այդ ձգտումի մեջ կա մի կատարելագործող և սուրբ տարր» («Ապաշխարության աստվածային պարզվածք», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2011, 39):

- Ի՞նչ մտքեր և զգացողություններ եք ունենում, երբ մտածում եք, որ Տերը «ժպտում է» ձեզ, երբ աշխատում եք հաղթահարել մեղքը և մահկանացու թուլությունները:

Կիսվեք Հիսուս Քրիստոսի Քավության մասին ձեր վկայությամբ: Հավաստիացրեք ուսանողներին, որ ապաշխարելիս նրանք խղճի ուրախություն և խաղաղություն կզգան: Քաջալերեք ուսանողներին քննել իրենց կյանքը և հավատք գործադրել առ Հիսուս Քրիստոսը ի ապաշխարություն:

Ուսանողի ընթերցարան

- Ենովս 1.4–8, Մոսիա 4.1–3, 11–12, 26, Ալմա 19.29–30, 33–36, 34.15–17, 36.19–21, 3 Նեփի 9.13–14, 19–22:
- Նիլ Լ. Անդերսեն, «Ապաշխարեք, ... որպեսզի ես կարողանամ բուժել ձեզ», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2009, 40–43:

Խոսքի գորությունը

Նախաբան

Մորմոկի Գրքի մարգարեները մեծ ջանքերի շնորհիվ կազմեցին ու պահպանեցին սուրբ գրությունները, որոնք պետք է օրհներին մեզ մեր օրերում: Այս դասի ընթացքում ուսանողներին կհիշեցվի, որ եթե նրանք ուսումնասիրեն և հավատարիմ մնան մարգարեների խոսքերին, նրանք

կարող են գորություն ստանալ՝ հաղթահարելու սատանային, հարթելու իրենց ճանապարհը մահկանացու կյանքում և ի վերջո ձեռք բերելու հավերժական կյանք:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ռիչարդ Գ. Սքոթ, «Սուրբ գրությունների գորությունը», *Ensign* կամ *Լիստինա*, նոյ. 2011, 6–8:
- Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Սուրբ գրությունների օրհնությունը», *Ensign* կամ *Լիստինա*, մայ. 2010, 32–35:
- «Խոսքի գորությունը», գլուխ 8, *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն* (2014), 115–124:

Ուսուցման առաջարկներ

1 Նեփի 3.19–20, 5.21–22, Օմնի 1.14–17, Մոսիա 1.3–5, Ավմա 37.3–4, 8

Սուրբ գրությունների կարևորությունը

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը, և հարցրեք ուսանողներին, թե ինչպես կպատասխանեին նրա առաջադրած հարցին.



«Մենք [մեծապես] պարտական ենք նրանց, ովքեր հավատարմորեն արձանագրել և պահպանել են խոսքը դարերի ընթացքում, հաճախ ժրջան աշխատանքի և զոհաբերության շնորհիվ՝ Մովսեսին, Եսայիային, Աբրահամին, Հովհաննեսին, Պողոսին, Նեփիին, Մորմոնին, Ջոզեֆ Սմիթին և շատ ուրիշներին: Ի՞նչ գիտեին նրանք սուրբ գրությունների կարևորության մասին, որ մենք էլ պիտի իմանանք»: («Սուրբ գրությունների օրհնությունը»,

Ensign կամ *Լիստինա*, մայ. 2010, 32):

- Ձեր կարծիքով, ի՞նչ գիտեին այս հեղինակները սուրբ գրությունների կարևորության մասին, որ մենք էլ պիտի իմանանք:

Հիշեցրեք ուսանողներին որ Նեփիին և նրա եղբայրներին Տերը պատվիրել էր վերադառնալ Երուսաղեմ՝ վերցնելու արույրե թիթեղները: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 1 Նեփի 3.19–20 և 5.21–22 հատվածները, մինչ դասարանը կգտնի, թե ինչ պատճառով էին արույրե թիթեղներն այդքան կարևոր Լեֆիի և նրա ընտանիքի համար:

- Համաձայն այս հատվածների, ինչո՞ւ են սուրբ գրություններն այդքան կարևոր: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ ճշմարտությունը: **Սուրբ գրությունները պարունակում են Աստծո խոսքերը և պատվիրանները, ինչպես որ դրանք հաղորդվել են Նրա մարգարեների միջոցով:**)

Որպեսզի ամրապնդվի այս ճշմարտությունը, հիշեցրեք ուսանողներին, որ հարյուրավոր տարիներ անց, նրանից հետո, երբ Լեքիի ընտանիքը ժամանեց խոստացված երկիր, նրանց ժառանգները հայտնաբերեցին Զարահեմվայի ժողովրդին (մուղեքացիներին), ովքեր հեռացել էին Երուսաղեմից անմիջապես Լեքիի ընտանիքից հետո:


Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Օմնի 1.14–17 և Մոսիա 1.3–5 հատվածները և ուշադրություն դարձնել, թե ինչպիսի տարբերություն կար, նրանց միջև, ովքեր ունեին սուրբ գրությունները (նեփիաացիների) և նրանց՝ ովքեր չունեին դրանք (մուղեքացիների): (Նշում. Սուրբ գրություններն ուսումնասիրելիս «համեմատելու և հակադրելու» հմտությունը սովորելու համար տես *Gospel Teaching and Learning: A Handbook for Teachers and Leaders in Seminaries and Institutes of Religion* [2012], 22:)

- Ի՞նչ հետևանքներ ունեցան մուղեքացիներն այն պատճառով, որ չունեին սուրբ գրությունները: (Տես նաև 1 Նեփի 4.13:)
- Ի՞նչ օրնություններ ստացան նեփիաացիները, որովհետև նրանք ունեին սուրբ գրությունները:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 37.3–4, 8 հատվածները, մինչ դասարանը կփնտրի, թե ինչ օրհնություններ ունեցան նեփիաացիները արույրե թիթեղներից:

- Համաձայն 8-րդ հատվածի՝ որո՞նք էին այն մի քանի օրհնությունները, որ նեփիաացիները ստացան արույրե թիթեղներից:
- Ձեր կարծիքով, ի՞նչ նկատի ունեի Ալման, երբ ասում էր, որ սուրբ գրություններն «ընդլայնել են այս ժողովրդի հիշողությունը»:

Այս արտահայտության իմաստը հստակեցնելու համար խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Երեց Դ. Թող Քրիստոֆերսոնի խոսքերը, մինչ դասարանը կփնտրի լրացուցիչ հուշումներ, թե ինչպես կարող են սուրբ գրություններն ընդլայնել մեր հիշողությունը:



«Սուրբ գրություններն ընդլայնում են մեր հիշողությունը՝ օգնելով մեզ միշտ հիշել Տիրոջը և մեր հարաբերությունները Նրա և Հոր հետ: Նրանք հիշեցնում են մեզ այն մասին, ինչը մենք գիտեինք մեր նախաերկրային կյանքում: Եվ դրանք ընդլայնում են մեր հիշողությունը նաև այլ իմաստով՝ սովորեցնելով մեզ դարաշրջանների, մարդկանց և իրադարձությունների մասին, որոնց հետ մենք չենք շփվել անձամբ: ...

Սուրբ գրությունները նաև ընդլայնում են մեր հիշողությունը՝ օգնելով, որ չմոռանանք այն, ինչ մենք և նախնիս սերունդները սովորել ենք: Նրանք, ովքեր չունեն կամ անտեսում են Աստծո գրված խոսքը, ի վերջո, դադարում են հավատալ Նրան և մոռանում են իրենց գոյության նպատակը» («Սուրբ գրությունների օրհնությունը», 33):

- Ինչպե՞ս են սուրբ գրություններն ընդլայնում մեր հիշողությունը:
- Սուրբ գրությունների ո՞ր վարդապետությունները, սկզբունքները կամ պատմություններն են ընդլայնել ձեր հիշողությունը Տիրոջ մասին և ձեր հարաբերությունը Նրա հետ:

1 Նեփի 8.21–24, 29–30, 15.23–24, 2 Նեփի 3.12, 32.3, 33.4–5, Հակոբ 2.8, 7.10–11, Ալմա 5.10–13, 31.5, 37.2, 8–10, Հելաման 3.29–30, 15.7–8:

Աստծո խոսքը օրհնություն է բերում

Հրավիրեք մի ուսանողի հակիրճ ամփոփել կենաց ծառի մասին Լեքիի տեսիլքը (տես 1 Նեփի 8): Այնուհետև հարցրեք դասարանին, թե ինչ էր ներկայացնում երկաթե ձողը և ինչու էր դա տեսիլքի կարևոր մասը հանդիսանում: Անհրաժեշտության դեպքում հրավիրեք ուսանողներին կարդալ 1 Նեփի 8.21–24, 29–30 հատվածները:

Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել 1 Նեփի 15.23–24 հատվածները և փնտրել այն օրհնությունները, որոնք ստանում են նրանք, ովքեր ամուր բռնվում են Աստծո խոսքից: Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այն, ինչ գտնում են:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «ամուր բռնվել» Աստծո խոսքից:
- Համաձայն այս հատվածների, ի՞նչ օրհնություններ մենք կարող ենք ստանալ ամուր բռնվելով Աստծո խոսքից: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ սկզբունքը. **Եթե ամուր բռնվենք Աստծո խոսքից, մենք երբեք չենք կործանվի հոգևորապես և հակառակորդը չի կարողանա հաղթել մեզ:**)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Թույլ տվեք առաջարկել, որ երկաթե ձողից ամուր բռնելը, լայն իմաստով, նշանակում է սուրբ գրությունների հետևողական, ջանասիրաբար և աղոթքով կիրառում՝ որպես հայտնված ճշմարտության աղբյուր և վստահելի ուղեցույց նեղ ու անձուկ արահետով շարժվելու համար՝ դեպի կյանքի ծառը, այսինքն՝ Տեր Հիսուս Քրիստոսը» ("Lehi's Dream: Holding Fast to the Rod," *Ensign*, Oct. 2011, 36):

Բացատրեք, որ Մորմոնի Գրքի մի քանի մարգարեներ ուսուցանել են հավելյալ օրհնությունների մասին, որոնք ստանում են նրանք, ովքեր ամուր բռնվում են Աստծո խոսքից: Գրատախտակին գրեք հետևյալ հղումները. Հրավիրեք յուրաքանչյուր ուսանողի ուսումնասիրել տրվածներից մեկը կամ երկուսը, փնտրելով օրհնությունները, որոնք ստանում ենք Աստծո խոսքը ուսումնասիրելուց: Այնուհետև խնդրեք ուսանողներին գրել իրենց գտած օրհնությունները գրատախտակին, համապատասխան հղման կողքին.

2 Նեփի 3.12

2 Նեփի 32.3

2 Նեփի 33.4-5

Հակոբ 2.8

Հակոբ 7.10-11

Ալմա 5.10-13

Ալմա 31.5

Ալմա 37.2, 8-10

Հեբրեական 3.29-30

Հեբրեական 15.7-8

- Ե՞րբ եք դուք ճաշակել այս օրհնություններից որևէ մեկը:

Հրավիրեք ուսանողներին նկարագրել, թե ինչ կարող է անել երիտասարդ ամուրին ամօրյա կյանքում՝ ամուր բռնելու համար երկաթե ձողից:

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե արդյոք սուրբ գրություններն օգտագործելը կարող է նմանեցվել ամուր բռնելուն երկաթե ձողից:

Հրավիրեք ուսանողներին մտածել և գրի առնել հատուկ քայլեր, որոնք նրանք կարող են անել, որպեսզի ավելի ամուր բռնեն երկաթե ձողից և ավելի ամբողջությամբ ստանան այս օրհնությունները:

Ալմա 37.38-46

Աստծո խոսքը տալու է դեպի հավերժական կյանք

Հիշեցրեք ուսանողներին, որ մարգարե Լեֆին մի գործիք էր ստացել Տիրոջից, որը կոչվում էր Լիահոնա: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 37.38-42 հատվածները, մինչ դասարանը կփնտրի, թե ինչպես Լիահոնան օրհնեց Լեֆիի ընտանիքը:

- Ինչպե՞ս էր Լիահոնան օրհնել Լեֆիի ընտանիքը:
- Ի՞նչ էր պահանջվում Լեֆիի ընտանիքից, որպեսզի Լիահոնան լավ գործեր: (Կողմնացույցը գործում էր միայն այն ժամանակ, երբ նրանք հետևում էին դրա հրահանգներին, հավատք էին գործադրում և ջանասիրություն: Տես նաև 1 Նեփի 16.28:)

Բացատրեք, որ Ալման ուսուցանել է, որ Լիահոնայի օգտագործումը «օրինակ» և «նշան» էր (այսինքն, մի խորհրդանիշ), թե ինչպես մենք պետք է օգտագործենք Աստծո խոսքը: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 37.43-46 հատվածները, մինչ դասարանը կհայտնաբերի զուգահեռները, որոնք Ալման անց է կացրել Լիահոնայի և Աստծո խոսքի միջև:

- Քրիստոսի խոսքերի վերաբերյալ ի՞նչ սկզբունք է սովորեցրել Ալման այս հատվածներում: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ սկզբունքը. **Եթե մենք հետևում ենք Քրիստոսի խոսքերին, մենք կառաջնորդվենք ուղիղ ճանապարհով դեպի հավերժական կյանք:** Կարող եք խրախուսել ուսանողներին նշել *հթե* բառը 45–46 հատվածներում: Ուսանողներին ասացեք, որ «Եթե-ապա» արտահայտությունները հայտնաբերելը կարևոր հմտություն է, որը կարող է բարելավել սուրբ գրությունների իրենց ուսումնասիրությունը:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում առաջնորդվել «ուղիղ ճանապարհով» դեպի հավերժական կյանք:
- Որո՞նք են այն բաները, որ մենք կարող ենք անել, բացի Քրիստոսի խոսքերը պարզապես կարդալուց և սկսենք «ուշք դարձնել» դրանց:

Ամփոփեք դասը, ցուցադրելով Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքը, և հրավիրեք ուսանողներին կարդալ և խորհել Երեց Բեդնարի հարցերի շուրջ:



«Կենդանի ջրի հաստատուն հոսքը շատ ավելի լավ է՝ անկանոն կումերով խմելուց:

Արդյոք դուք և ես ամեն օր կարող՞ւմ ենք, ուսումնասիրո՞ւմ ենք և հետազոտո՞ւմ սուրբ գրությունները մի ձևով, որը հնարավորություն է տալիս մեզ ամուր կառչել Երկաթյա ձողից... : Արդյո՞ք դուք և ես առաջ ենք մղվում դեպի կենդանի ջրերի աղբյուրը, ապավինելով Աստծո խոսքին: Սրանք

աղոթքով խորհրդածելու կարևոր հարցեր են մեզանից յուրաքանչյուրի համար» (“A Reservoir of Living Water” [Church Educational System fireside for young adults, Feb. 4, 2007], 7, lds.org/broadcasts):

Հարցրեք, թե ուսանողներից ովքեր են ցանկանում կիսվել իրենց վկայություններով այն մասին, թե ինչպես է Աստծո խոսքը օրհնել նրանց: Խրախուսեք ուսանողներին, որ շարունակեն խորհել այն հարցերի շուրջ, որոնք Երեց Բեդնարն էր տվել, և խնդրեք նրանց հետամուտ լինել դասի ընթացքում իրենց մոտ առաջացած մտքերին և տպավորություններին, որպեսզի Աստծո խոսքի ուսումնասիրությունը ավելի արդյունավետ և բովանդակալից լինի:

Ուսանողի ընթերցարան

- 1 Նեփի 3.19–20, 5.21–22, 8.21–24, 29–30, 15.23–24, 2 Նեփի 3.12, 32.3, 33.4–5, Հակոբ 2.8, 7.10–11, Օմնի 1.14–17, Մոսիա 1.3–5, Ալմա 5.10–13, 31.5, 37.2–4, 8–10, 38–46, Հելաման 3.29–30, 15.7–8:
- Ռիչարդ Գ. Սքոթ, «Սուրբ գրությունների գործությունը», *Ensign* կամ *Լիսինուս*, նոյ. 2011, 6–8:

Պատրաստվել Դատաստանի Վերջին Օրվան

Նախաբան

Մահկանացու կյանքն է ժամանակը մեզ համար, որ նախապատրաստվենք՝ հանդիպելու Աստծուն: Մորմոնի Գիրքը բացատրում է, թե ինչ է տեղի ունենում մեր հոգիների հետ մահի և հարության միջև ընկած հատվածում: Նրանից հետո, երբ մեր հոգիները

միավորվեն մեր անմահ մարմինների հետ, մենք կկանգնենք Աստծո դատավորական աթոռի առաջ, որտեղ մեր գործողությունները և մեր սրտերի ցանկությունները կորոշեն մեր հավերժական պարգևատրումը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Dallin H. Oaks, “Resurrection,” *Ensign*, May 2000, 14–16.
- Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Հիսուս Քրիստոսի Հարությունը», *Ensign* կամ *Լիսինգ*, մայիս 2014, 111-14:
- “Understanding Death and Resurrection,” chapter 37 in *Teachings of Presidents of the Church: Brigham Young* (1997), 273–78.

Ուսուցման առաջարկներ

Ավա 34.32–34, 40.6–7, 11–14

Մահից հետո արդարևորը գնում են դրախտ, իսկ ամբարիշտները գնում են հոգևոր բանտ:

Մինչև դասը սկսելը գրեք հետևյալ հարցը գրատախտակին.

Ինչպե՞ս մարդիկ, ովքեր չեն հասկանում իրենց մահկանացու կյանքի իմաստը և չեն հավատում կյանքին մահից հետո, կարող են ապրել ուրիշ կերպ, քան նրանք, ովքեր հասկանում են այս բաները:

Խնդրեք ուսանողներին պատասխանել այս հարցին: Այնուհետև հիշեցրեք նրանց, որ Մորմոնի Գիրքն օգնում է մեզ հասկանալ կյանքի իմաստը երկրի վրա և սովորեցնում է մեզ, որ կյանքը շարունակվում է մահից հետո:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ավա 34.32–34 հատվածները, մինչ դասարանը կփնտրի, թե ինչ էր սովորեցնում Ամոտելը Ամոնիայի ժողովրդին կյանքի նպատակի մասին:

- Երկրի վրա կյանքի նպատակի մասին ի՞նչ կարևոր վարդապետություններ սովորեցրեց Ամուդեկը: (Ուսանողները պետք է բացահայտեն մի քանի վարդապետություններ այս հատվածներից, ներառյալ հետևյալը. **Այս կյանքն է ժամանակը նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն:**)
- Ինչպե՞ս է այս վարդապետությունը օգնում ձեզ հասկանալ, թե ինչպես պետք է ապրեք ձեր առօրյա կյանքն այստեղ՝ մահկանացու կյանքում:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այս վարդապետությունը, կարող եք կիսվել նրանց հետ Նախագահ Թոմաս Մ. Մոնտնի հետևյալ խոսքերով.



«Մենք հասկանում ենք, որ եկել ենք երկիր սովորելու, ապրելու, զարգանալու դեպի կատարելություն տանող մեր հավերժական ճանապարհին: Սակայն ոմանք կարճատև կյանք են ունենում երկրի վրա, մինչդեռ մյուսները երկար են ապրում: Կարևորը ոչ թե այն է, թե որքան ենք ապրում, այլ՝ ինչպիսի կյանքով ենք ապրում» ("He Is Risen," *Ensign*, Nov. 1981, 18):

- Ինչո՞ւ Ամուդեկը զգուշացրեց մեզ չհետաձգել մեր ապաշխարության օրը:

Ցուցադրեք Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ խոսքը և որևէ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ այն, մինչդեռ դասարանը կփնտրի, թե ինչու է վտանգավոր հետաձգումը.



«Վտանգ կա մի օր բառի մեջ, երբ այն նշանակում է «ոչ այսօր»: «Մի օր ես կապաշխարեմ»: «Մի օր ես կներեմ նրան»: «Մի օր ես կխոսեմ իմ ընկերոջ հետ եկեղեցու մասին»: «Մի օր ես կսկսեմ վճարել տասանորդը»: «Մի օր ես կվերադառնամ տաճար»: «Մի օր...»: Սուրբ գրությունները հետաձգման վտանգը պարզ են դարձնում [տես Ալմա 34.33–34]: ...Այս օրը Աստծո թանկագին պարգևն է: Այդ «Մի օր ես ...» միտքը կարող է ժամանակի և հավերժության օրհնությունների հնարավորությունների գողը լինել» ("This Day," *Ensign* կամ *Լիսհոնա*, մայ. 2007, 89):

Հանձնարարեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 40.6–7, 11–14 հատվածները: Դասարանին հանձնարարեք հետևել՝ փնտրելով, թե ինչ Ալման ուսուցանեց իր որդի Կորիանթոնին այն մասին, թե ինչ է լինում մեր հոգիների հետ, երբ մենք մահանում ենք: (Օգտակար կլինի նշել, որ երբ Ալման օգտագործեց «դրսի խավարը» արտահայտությունը, նա նկատի չունեւ սատանայի վերջնական վիճակը և նրանց, ովքեր նգովված են: Պարզապես, նա նկատի ուներ ամբարիշտների վիճակը նրանց մահի և հարության միջև: Մովորաբար այս վիճակը մենք կոչում ենք հոգևոր բանտ:)

- Ի՞նչ տարբերություն կա մահից հետո արդարների վիճակի և ամբարիշտների վիճակի միջև: (Չնայած նրանք կարող են օգտագործել տարբեր խոսքեր, ուսանողները պետք է հասկանան հետևյալ

վարդապետությունը. **Մահի և հարության միջև արդարների հոգիները բնակվում են դրախտում, իսկ ամբարիշտների հոգիները բնակվում են հոգևոր բանտում:**)

- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ մեր մահկանացու կյանքի գործողությունները ազդեցություն կունենան նրա վրա, թե ինչ վիճակում մենք կլինենք մահից հետո:

2 Նեփի 9.12–13, Մոսիա 15.21–26, 16.6–11, Ալմա 11.40–45, 40.4–5, 19–24

Մեր հոգիները և մարմինները կվերամիավորվեն հարության ժամանակ

Հիշեցրեք ուսանողներին, որ երբ Աբինադին ուսուցանում էր Նոյ թագավորին և նրա քահանաներին, նա նկարագրել է, թե ինչ է պատահելու մեզ հետ մահից հետո: Նրա ուսուցանած վարդապետությունները նկարագրում են, թե ինչ է տեղի ունենալու մեզ հետ մեր կյանքից հետո հոգևոր աշխարհում՝ կամ դրախտ, կամ՝ հոգևոր բանտ: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մոսիա 16.6–11 հատվածները, մինչ դասարանը կհետևի, թե ինչ էր ուսուցանել Աբինադին:

- Ի՞նչ վարդապետություններ էր ուսուցանել Աբինադին այն մասին, թե ինչ տեղի կունենա մեզ հետ մեր կյանքից հետո հոգևոր աշխարհում: (Շեշտեք հետևյալ ճշմարտությունները. **Քանի որ Հիսուս Քրիստոսը ջարդել է մահվան կապանքները, մենք բոլորս հարություն կառնենք և կստանանք անմահ մարմին: Արդարները կժառանգեն անվերջ երջանկություն, իսկ ամբարիշտները կտարվեն դեպի անվերջ նզովքի:**)

Ասացեք ուսանողներին, որ Մորմոնի Գրքի շատ մարգարեներ վկայել են Հարության մասին և բացատրել են, թե այն ինչի նման է լինելու: Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հատվածները (առանց ուղեկցող ամփոփումների) և յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք կարդալ հատվածներից մեկը: Համոզվեք, որ բոլոր հատվածները հանձնարարված են: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ իրենց հատվածը, փնտրելով լրացուցիչ մանրամասներ հարության մասին:

2 Նեփի 9.12–13 (Դրախտը պիտի ազատի արդար ոգիները, և հոգևոր բանտը պիտի ազատի անարդարների ոգիները: Ոգիները կմիանան իրենց մարմիններին և կդառնան անմահ հոգիներ):

Մոսիա 15.21–26 (Արդարները առաջ կգան Առաջին Հարության մեջ, ինչպես նաև նրանք, ովքեր մահացել են անգիտության մեջ, և փոքր երեխաները: Ամբարիշտները բաժին չունեն Առաջին Հարության մեջ:)

Ալմա 11.40–45 (Բոլոր մարդկանց հոգիները՝ ամբարիշտ, թե արդար, կրկին կմիավորվեն իրենց մարմինների հետ կատարյալ տեսքով և կկանգնեն Աստծո առաջ՝ դատվելու համաձայն իրենց գործերի:)

Ալմա 40.4–5, 19–24 (Կա ժամանակահատված մահի և հարության միջև, երբ հոգիները գնում են հոգևոր աշխարհ: Դրանից հետո կա նշանակված ժամանակ բոլոր մարդկանց հոգիների համար, որ հավերժ կմիավորվեն իրենց կատարյալ մարմինների հետ և կկանգնեն Աստծո առաջ՝ դատվելու:)

Ժամանակ տվեք ուսանողներին, որ բացատրեն, թե ինչ սովորեցին հարության մասին իրենց հատվածներից: Կարող եք նրանց մտքերից մի քանիսը գրել գրատախտակին՝ համապատասխան հատվածի կողքին: Անհրաժեշտության դեպքում մեկ կամ մի քանի հարցեր տվեք, ինչպես տրված է ստորև, որպեսզի ուսանողներն ավելի լավ հասկանան այս հատվածները.

- Ինչպե՞ս են այս ճշմարտությունները ամրացնում ձեր հավատքը, որ հարությունը իրական է և մեր Երկնային Հոր ծրագրի կարևոր մասն է:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Հ. Օուքսի հետևյալ միտքը: Դասարանին խնդրեք լսել, թե ինչպես կարող է հարության մասին վկայությունը օրհնել մեզ մահկանացու կյանքում:



«Պետրոս Առաքյալը անդրադարձել է այն փաստին, որ Հայր Աստված, Իր առատ ողորմությամբ «մեզ վերստին ծնեց դեպի կենդանի յոյսը, Հիսուս Քրիստոսի մեռելներից հարություն առնելովը» (Ա Պետրոս 1.3, տես նաև Ա Թես. 4.13–18):

Հարության պարզևաժ «կենդանի յոյսը» մեր համոզմունքն է, որ մահը ոչ թե մեր ինքնության ավարտն է, այլ մահկանացու կյանքից դեպի անմահություն կանխորոշված անցում կատարելու մեջ անհրաժեշտ մի քայլ: Այս յոյսը փոխում է մահկանացու կյանքի ողջ հեռանկարը: ...

Հարության հավաստիացումը մեզ ուժ և հեռանկար է տալիս համբերելու մեր և մեր սիրելիների դեմ ծառացած մահկանացու մարտահրավերներին, ինչպիսիք են՝ ֆիզիկական, մտավոր կամ էմոցիոնալ տկարությունները, որ մեզ հետ են ի ծնե կամ ձեռք ենք բերում մահկանացու կյանքի ընթացքում: Հարության շնորհիվ մենք գիտենք, որ այդ մահկանացու տկարությունները ժամանակավոր են:

Հարության հավաստիացումը մեզ համար նաև հզոր խթան է հանդիսանում մահկանացու կյանքում Աստծո պատվիրանները պահելու համար: ...

Դեպի անմահություն հարություն առնելու մեր վստահ գիտելիքը նաև քաջություն է տալիս մեզ ընդունել մեր մահը, նույնիսկ մահը, որը մենք կարող ենք վաղաժամ կոչել: ...

Անմահության հավաստիացումը նաև օգնում է մեզ տանել մահկանացու բաժանումները, որոնք տեղի են ունենում մեր սիրելիների մահվան պատճառով: ... Մենք բոլորս պետք է փառաբանենք Աստծուն հարության հավաստիացման համար, որը մեր մահկանացու կյանքի բաժանումները ժամանակավոր է դարձնում, և մեզ հույս և ուժ է տալիս դիմանալու» ("Resurrection," *Ensign*, May 2000, 15–16):

- Ե՞րբ է հարության հավաստիացումը ձեզ ուժ տվել կամ դրդապատճառ հանդիսացել, որ դուք ավելի արդարակյաց ապրեք:

Կիսվեք ձեր վկայությամբ հարության իրական լինելու վերաբերյալ:

Ալմա 5.15–21, 7.21–25, 41.2–6

Պատրաստվել Վերջին Դատաստանին

Բացատրեք, որ Ալման կոչ արեց Զարահեմլայի եկեղեցու անդամներին պատրաստվել Վերջին Դատաստանին, խնդրելով նրանց պատկերացնել, թե իրենք կանգնած են Աստծո առաջ՝ դատվելու: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 5.15–21 հատվածները: Խնդրեք դասարանին փնտրել, թե Ալման իր լսողներին ինչ հորդորեց պատկերացնել:

- Ալմայի հարցերից որո՞նք են հատկապես նշանակալից ձեզ համար և ինչո՞ւ:
- Ի՞նչ սկզբունք կարող ենք սովորել 21-րդ հատվածի Ալմայի վկայությունից այն մասին, թե մենք ինչ պետք է անենք փրկվելու համար: (Օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալ սկզբունքը. **Մենք չենք կարող փրկվել, մինչև որ չարքվենք՝ մաքուր լինելու Հիսուս Քրիստոսի փրկագնող արյան միջոցով:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այս սկզբունքը, ցուցադրեք Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հետևյալ խոսքերը և հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Ես չգիտեմ մի բան, որն ավելի կարևոր է կամ անհրաժեշտ այս պահին, քան ապաշխարություն աղաղակելը, նույնիսկ Վերջին Օրերի Սրբերի մեջ, և ես կոչ եմ անում նրանց ... ականջ դնել մեր Զավիչի այս խոսքերին: Նա պարզ ասել է, որ ոչ մի անմաքուր բան չի կարող մտնել Նրա ներկայության մեջ: Միայն նրանք, ովքեր ապացուցել են, որ հավատարիմ են և լվացել են իրենց հանդերձները նրա արյամբ՝ իրենց հավատքի և իրենց

ապաշխարության միջոցով, ուրիշ ոչ ոք չի գտնելու Աստծո արքայությունը» (*Teachings of Presidents of the Church: Joseph Fielding Smith* [2013], 91):

Խնդրեք ուսանողներին մտքում ուսումնասիրել Ալմա 7.21–25 հատվածները և հրավիրեք նրանց փնտրել և նշել այն հատկանիշները, որոնք մենք պետք է ձգտենք զարգացնել, որպեսզի մեր հանդերձներն անբիծ լինեն:

- Ի՞նչ որակներ կամ հատկանիշներ դուք հայտնաբերեցիք այս հատվածներում, որոնք կարևոր են մեզ համար, որ զարգացնենք, քանի որ պատրաստվում ենք դատվելու Տիրոջ կողմից:

Հորդորեք ուսանողներին մտածել, թե արդյո՞ք նրանց գործողությունները և սրտի ցանկությունները պատրաստում են նրանց հանդիպելու Աստծուն՝ Վերջին Դատաստանի օրը: Քաջալերեք նրանց կատարել անհրաժեշտ փոփոխություններ՝ այնպես, որ Դատաստանի օրը նրանց համար երջանիկ օր լինի:

Ուսանողի ընթերցարան

- 2 Նեփի 9.12–13, Մոսիա 15.21–26, 16.6–11, Ալմա 5.15–21, 7.21–25, 11.40–45, 16.6–11, 34.32–34, 40.4–7, 11–14, 19–24, 41.2–6:

- Dallin H. Oaks, “Resurrection,” *Ensign*, May 2000, 14–16.

Պաշտպանել կրոնական ազատությունը

Նախաբան

Կրոնական ազատությունը սուրբ արտոնություն է՝ հավատալու և գործելու մեր հայեցողությամբ. ինչպես որոշում ենք և ապա՝ ապրում մեր խղճի թելադրանքով, միևնույն ժամանակ հարգելով մյուսների իրավունքները (տես ՎեՌՈՒ 134.4): Այս դասին ուսանողները կուսումնասիրեն պատմություններ Մորմոնի Գրքից,

որտեղ անհատներն ու խմբերը փորձել են տապալել Աստծո եկեղեցին և խախտել կրոնական իրավունքներն ու ազատությունը: Ուսանողներին կհիշեցվի, որ կրոնական ազատությունը պետք է պաշտպանվի և պահպանվի այսօր:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ռոբերտ Դ. Հեյլս, «Պաշտպանել կամքի ազատությունը, պաշտպանել կրոնական ազատությունը», *Ensign* կամ *Liahona*, մայ. 2015, 111–13:
- Dallin H. Oaks, “Balancing Truth and Tolerance,” *Ensign*, Feb. 2013, 24–31.
- “Why We Need Religious Freedom,” mormonnewsroom.org/article/why-religious-freedom.
- “An Introduction to Religious Freedom,” mormonnewsroom.org/article/introduction-religious-freedom.

Ուսուցման առաջարկներ

Մոսիա 29.10–11, 16–18, 25–26, 32, Ավմա 30.7–9

Ազատ կամքի և կրոնական ազատության կարևորությունը

Հիշեցրեք ուսանողներին, որ մինչև երկիր գալը մենք մասնակցել ենք Երկնային Խորհրդին: Խնդրեք ուսանողներին կիսվել այդ խորհրդի որոշ կարևոր նպատակներով և արդյունքներով: Ապա ցուցադրեք և բարձրաձայն կարդացեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի (1899–1994) հետևյալ խոսքերը.



«Այդ նախաերկրային խորհրդի առանցքային թեման հետևյալն էր. Արդյոք Աստծո զավակները պետք է ունենան անսահմանափակ ազատ կամք՝ ընտրելու ուղղությունը, որին պիտի հետևեն՝ լինի դա բարի, թե՛ չար, թե՛ նրանք պետք է հարկադրվեն ու ստիպվեն՝ հնազանդ լինել: Քրիստոսը և բոլորը, ովքեր հետևում էին Նրան, պաշտպանում էին առաջին առաջարկը՝ ազատ ընտրությունը, սատանան պաշտպանում էր վերջինը՝ հարկադրանքն ու ստիպողականությունը» (*Եկեղեցու նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն* [2014], 60–61):

«Սուրբ գրքերը հստակեցնում են, որ մեծ պատերազմ էր երկնքում, պայքար ազատության սկզբունքի՝ ընտրության իրավունքի համար» (Ուսմունքներ. Էզրա Թաֆտ Բենսոն, 61):

«Պատերազմը, որը սկսվեց երկնքում այս հարցի կապակցությամբ, դեռ չի ավարտվել: Հակամարտությունը շարունակվում է մահկանացու կյանքի ճակատամարտի դաշտում» (Ուսմունքներ. Էզրա Թաֆտ Բենսոն, 61):

- Ի՞նչ ապացույցներ եք տեսել, որ ազատության և ազատ ընտրության համար մղվող նախաերկրային հակամարտությունը շարունակվում է մահկանացու կյանքում:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է սատանան փորձում կործանել ազատությունը:

Ուսանողների պատասխաններից հետո կիսվեք Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի (1873-1970) հետևյալ խոսքերով.



«Մարդուն կյանք շնորհելուց հետո, Աստծո մեծագույն պարգևը մեր կյանքն ուղղորդելու իրավունքն է» (Teachings of Presidents of the Church: David O. McKay [2003], 208):

Հիշեցրեք ուսանողներին, որ դարեր շարունակ այն բանից հետո, երբ Լեքին ժամանել էր խոստացված երկիր, նեփիազիները ղեկավարվում էին թագավորների կողմից: Մոսիա թագավորը, սակայն, առաջարկեց, որ կառավարության նոր ձև կիրառվեր: Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել Մոսիա 29.10–11, 16–18, 25–26 հատվածները և փնտրեք, թե ինչու Մոսիան առաջարկեց կառավարության նոր ձև:

- Ի՞նչ պատճառներով էր Մոսիա թագավորը ցանկանում կիրառել կառավարության նոր ձև:

Բացատրեք ուսանողներին, որ դատավորների համակարգը տեղին էր և անհրաժեշտ՝ նեփիական հասարակությունում ազատությունը պահպանելու համար: Այլ հասարակությունները նմանապես ձգտում էին հաստատել և պահպանել ազատությունը, թեև նրանց կառավարության համակարգերը այլ կերպ էին կազմակերպված: Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մոսիա 29.32 հատվածը, մինչ դասարանը կփնտրի, թե ինչու էր Մոսիան ցանկանում պահպանել իր ժողովրդի ազատությունը:

- Ինչո՞ւ էր անհրաժեշտ պահպանել նեփիազիների ազատությունը:
- Ու՞մ պարտականությունն է՝ օգնել մեզ պահպանել մեր իրավունքներն ու արտոնությունները: Ինչպե՞ս կարող է այդ պահպանումը իրականացվել:

Բացատրեք, որ անհատական ազատության կիրառումը չպետք է փոխարինի երկրի օրենքներին հնազանդվելու սկզբունքը:

Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել Ալմա 30.7–9 հատվածները և հայտնաբերել իրավունքներից մեկը, որը երաշխավորվում էր նեփիական նոր կառավարության կողմից:

Կարող եք բացատրել, որ այս հատվածները ցույց են տալիս, որ Տերն արգելում է խտրականորեն մոտենալ մարդկանց, կախված նրանից, թե նրանք Աստծուն հավատում են, թե՛ ոչ (տես նաև ՎեՌ 134.4):

- Ինչո՞վ է օգուտ բերում հասարակությանը կրոնական ազատության պաշտպանումը:

Որպեսզի օգնեք ուսանողներին պատասխանել այս հարցին, հրավիրեք որևէ ուսանողի կարդալ հետևյալը.

«Կրոնական ազատությունը, կամ խղճի ազատությունը ծայրահեղ կարևոր է բազմազան հասարակության առողջ լինելու համար: Այն թույլ է տալիս, որ տարբեր հավատքներն ու դավանանքները բարգավաճեն: Կրոնական ազատությունը պաշտպանում է բոլոր անհատներին ու խմբերին ներառյալ ամենախոցելի խմբերին, անկախ նրանից՝ հավատացյալ են, թե՛ ոչ» ("Religious Freedom," mormonnewsroom.org/official-statement/religious-freedom):

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ կրոնական ազատության հիմնական տարրերը, ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքը և խնդրեք որևէ ուսանողի կարդալ այն.



«Կան կրոնական ազատության չորս անկյունաքարեր, որոնց մենք, որպես Վերջին Օրերի Սրբեր, պետք է ապավինենք և պաշտպանենք:

Առաջինը՝ հավատալու ազատությունն է: ...

Կրոնական ազատության երկրորդ անկյունաքարը՝ ուրիշների հետ մեր հավատքով կիսվելու ազատությունն է: ...

Կրոնական ազատության երրորդ անկյունաքարը՝ կրոնական կազմակերպություն, եկեղեցի հիմնելն է և ուրիշների հետ խաղաղությամբ երկրպագություն անելն է: ...

Կրոնական ազատության չորրորդ անկյունաքարը մեր հավատքով ազատ ապրելու իրավունքն է՝ հավատքի ազատ գործադրումը ոչ միայն տներում և ժողովատներում, այլ նաև հասարակական վայրերում» («Պահպանել կամքի ազատությունը, պաշտպանել կրոնական ազատությունը», *Ensign* կամ *Liahona*, մայ. 2015, 112):

Ամփոփեք այս չորս անկյունաքարերը՝ գրատախտակին գրելով հետևյալը .

Ազատություն՝ հավատալու, կիսվելու, կազմակերպելու և ապրելու:

- Ինչպե՞ս կխոչընդոտի հոգևոր աճի հնարավորությունները այս չորս անկյունաքարերից որևէ մեկի սահմանափակումը:
- Ինչպե՞ս են դիպչել ձեր կյանքին կրոնական ազատության այս տարրերը:

Ավճա 2.1–10, 12, 27–28, 44.1–5, 46.4–5, 10–16, 19–22

Պահպանել կրոնական ազատությունը

Գրեք հետևյալ հղումները գրատախտակին և բացատրեք, որ այս հատվածները պարունակում են կրոնական ազատության սպառնալիքների օրինակներ.

Արմա 2.1-4

Արմա 46.4-5, 10

Դասարանի մի կեսին հանձնարարեք կարդալ առաջին հատվածը, իսկ մյուս կեսին՝ երկրորդը: Խնդրեք ուսանողներին տեսնել, թե ո՞րն էր այն մարդկանց նպատակը, ովքեր սպառնում էին կրոնական ազատությանը:

- Համաձայն այս հատվածների՝ ո՞րն էր Ամդիկիի և Ամադիկիայի նպատակը:
- Կրոնական ազատության կորուստը ինչպե՞ս կազդեր հասարակության վրա այս պատմություններում:

Ավելացրեք հետևյալ տեքստը գրատախտակի հղումներին.

Արմա 2.1–4, 5–10, 12, 27–28

Արմա 46.4–5, 10, 11–16, 19–22

Հրավիրեք ուսանողներին կարդալ այն հատվածները, որոնք ավելացվել են իրենց կարդացածներին, և խնդրեք նրանց փնտրել, թե ինչ արեցին արդար մարդիկ, որպեսզի պաշտպանեն իրենց կրոնական ազատությունը:

- Ի՞նչ ճշմարտություն կարող ենք սովորել այս հատվածներից կրոնական ազատությունը պահպանելու կարևորության մասին: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ ճշմարտությունը. **Մեր պարտականությունն է՝ պաշտպանել մեր ընտանիքները, մեր կրոնը և մեր ազատությունը: Երբ մենք կանչում ենք Աստծո անունը և ուխտում՝ պահել Նրա պատվիրանները, Նա կգորացնի մեզ՝ պաշտպանելու մեր իրավունքները և կրոնը:**)

Եթե ժամանակը ներում է, կարող եք նաև կարդալ Ավճա 44.1-5 հատվածները դասարանի հետ և քննարկել, թե ինչպես նեփիացիների հավատքը զորացրեց նրանց Զերահեմնայի և լամանացիների դեմ:

- Մորմոնի Գրքում կրոնական ազատությունը հաճախ է վտանգվել հալածանքների և պատերազմի միջոցով: Ինչպե՞ս են այսօր սպառնում կրոնական ազատությանը որոշ անհատներ կամ խմբեր:

Եթե օգնության կարիք կա այս հարցին պատասխանելու համար, կարդացեք հետևյալը՝ Միացյալ Նահանգներում կրոնական ազատությանը սպառնացող աճող վտանգի մասին: Նշեք, որ թեև այս հոդվածը վերաբերում է մասնավորապես Միացյալ Նահանգներին, բազմաթիվ այլ երկրներ նույնպես կանգնած են կրոնական ազատությանը վերաբերող նմանատիպ մարտահրավերների առջև: (Նշում. Այս գրությունն օգտագործեք միայն օրինակ բերելու համար, թե ինչպես է վտանգվում կրոնական ազատությունը: Թույլ մի տվեք, որ այն դառնա քննարկում՝ համասեռամուլների իրավունքների կամ այլ քաղաքական հարցերի շուրջ:)

«Կրոնական ազատությանը սպառնացող մարտահրավերներն ի հայտ են գալիս տարբեր աղբյուրներից: Համասեռամուլների իրավունքների զարգացող պաշտպանությունը սպառնում է նվազեցնել կրոնական ազատությունը մի շարք ձևերով: Փոփոխություններն առողջապահության ոլորտում սպառնում են նրանց իրավունքներին, ովքեր ունեն որոշակի բարոյական համոզմունքներ մարդկային կյանքի վերաբերյալ: Այս և այլ զարգացումները ծնում են հակառակություն և սկսում են պարտադրել կրոնական կազմակերպություններին և խղճով մարդկանց: Նրանք սպառնում են ... սահմանափակել կրոնական կազմակերպությունների կողմից իրենց աշխատանքի և իրենց սեփականության կառավարումը: Նրանք պարտադրանք են կիրառում կրոնի հետ առնչվող համալսարանների, դպրոցների և սոցիալական սպասարկման միավորումների հանդեպ: ... Այս և այլ պարագաներում մենք տեսնում ենք, թե ինչպես է կրոնական ազատությունը և խղճի ազատությունը նրբորեն, բայց անշեղորեն քայքայվում» («An Introduction to Religious Freedom,” mormonnewsroom.org/article/introduction-religious-freedom):

Շեշտեք, որ եկեղեցին պաշտպանում է արդարությունը բոլորի համար: Համաձայն Հավատո Հանգանակ 1.11-ի, մենք պետք է պահանջենք կրոնական ազատության մեր իրավունքը արդար և հավասարակշռված ձևով, հարգելով նաև ուրիշների իրավունքներն ու շահերը (տես “Mormon Leaders Call for Laws That Protect Religious Freedom,” mormonnewsroom.org/article/church-news-conference-on-religious-freedom-and-nondiscrimination):

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մարգարե Ջոզեֆ Մֆիթի (1805–1844) հետևյալ հայտարարությունը.



«Եթե ես ակնարկեցի, որ կկամենամ մահանալ ցանկացած «մորմոնի» համար, ես համարձակություն ունեմ հայտարարել երկնքի առջև, որ ես պատրաստ եմ իմ կյանքը տալ, պաշտպանելու ցանկացած երիցականի կամ մկրտականի կամ որևէ այլ դավանանքի պատկանող լավ մարդու, քանի որ նույն սկզբունքը, որը ոտնակոխ կարող է անել Վերջին Օրերի Սրբերի իրավունքները, ոտնակոխ կանի նաև հռոմեական կաթոլիկների իրավունքները կամ՝ որևէ այլ դավանանքի, որը կարող է ժողովրդականություն չվայելել և խիստ թույլ լինել իրեն պաշտպանելու համար:

Ազատության սերն է, որ ոգեշնչում է հոգիս՝ քաղաքացիական և կրոնական ազատությունը ողջ մարդկային ցեղի համար» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith* [2007], 345):

- Ինչո՞ւ է կարևոր պաշտպանել կրոնական ազատությունը բոլոր մարդկանց և ոչ թե միայն Վերջին Օրերի Սրբերի համար: (Այդպիսի պաշտպանությունը թույլ է տալիս ուրիշներին օգտագործել իրենց ազատ կամքը՝ համաձայն Աստծո ծրագրի և նպաստել խաղաղ և արդար հասարակությանը: Եթե մենք ուզում ենք, որ մեր կրոնական համոզմունքները պաշտպանված և հարգված լինեն, ապա մենք պետք է պաշտպանենք և հարգենք մյուսների համոզմունքները:)
- Ինչպիսի՞ քայլեր մենք կարող ենք ձեռնարկել, որպեսզի պահպանենք և ամրապնդենք կրոնական ազատությունը:

Որպեսզի օգնեք ուսանողներին պատասխանել այս հարցին, հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Երեց Ռեբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերը.



«Եղբայրներ և քույրեր, մենք պարտավոր ենք պաշտպանել այս սրբազան ազատությունն ու իրավունքները մեր և մեր սերունդների համար: Ի՞նչ կարող ենք դուք և ես անել:

Սռաջինը, մենք կարող ենք տեղեկացված լինել: Տեղյակ եղեք ձեր համայնքի խնդիրներին, որոնք կարող են ազդեցություն ունենալ կրոնական ազատության վրա:

Երկրորդ, ձեր կարողության սահմաններում միացե՛ք նրանց, ովքեր կիսում են կրոնական ազատության նկատմամբ մեր նվիրվածությունը: Միասնական գործե՛ք կրոնական ազատությունը պաշտպանելու համար:

Երրորդ, ձեր ապրած կյանքով եղե՛ք ձեր հավատքի վառ օրինակ՝ խոսքի և գործի մեջ: Այն, թե ինչպես ենք մենք ապրում մեր կրոնով ավելի կարևոր է, քան այն, թե ինչ կարող ենք մենք ասել մեր կրոնի մասին» («Պահպանել կամքի ազատությունը», 112):

- Ինչպե՞ս կարող եք դուք տեղեկանալ խնդիրներին, որոնք ազդում են ձեր համայնքում կրոնական ազատության վրա:
- Ի՞նչ այլ խմբեր կան ձեր տարածքում, որոնք կիսում են կրոնական ազատության հանդեպ ձեր նվիրվածությունը:
- Ի՞նչ եք դուք արել կամ տեսել եք, որ մյուսներն են անում՝ կրոնական ազատությանը նպաստելու համար:

Տեղեկացրեք ուսանողներին mormonnewsroom.org կայքում առկա կրոնական ազատության վերաբերյալ աղբյուրների մասին: Քաջալերեք ուսանողներին մտածել, թե նրանք ինչ կարող են անել, որպեսզի խթանեն և պաշտպանեն կրոնական ազատությունը, և կիսվեք ձեր վկայությամբ, որ Երկնային Հայրը կառաջնորդի նրանց իրենց ջանքերում:

Ուսանողի ընթերցարան

- Մոսիա 29.10–11, 16–18, 25–26, 32, Ալմա 2.1–10, 12, 27–28, 30.7–9, 44.1–5, 46.4–5, 10–16, 20–22
- Ռոբերտ Դ. Հեյլս, «Պահպանել կամքի ազատությունը, պաշտպանել կրոնական ազատությունը», *Ensign* կամ *Liahona*, մայ. 2015, 111–13:

Ամրացնել մեր հավատքն ու վկայությունը

Նախաբան

Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ հավատքը ուժ և հոգևոր պաշտպանություն է բերում Աստծո զավակներին: Մորմնի Գրքում նկարագրվում է այն վերաբերմունքն ու վարքագիծը, որոնք կարող են հանգեցնել նրան, որ անհատներն ընկնեն

անհավատության մեջ: Մորմնի Գրքի մարգարեները նախագուշացրել են այդ վարքագծի և վերաբերմունքի մասին և սովորեցրել են ավետարանի սկզբունքները, որոնք կգործեն ու կամրացնեն մեր հավատքն ու վկայությունը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Նիլ Լ. Անդերսեն, «Հոգևոր պտտահողմեր», *Ensign* կամ *L'hahnmua*, մայ. 2014, 18–21:
- Լ. Ուիթնի Քլեյթոն, «Ընտրիչ հավատքը», *Ensign* կամ *L'hahnmua*, մայ. 2015, 36–39:
- Լարի Ս. Քաչեր, «Թեթևամտորեն մի վարվեք սրբազան բաների հետ», *Ensign* կամ *L'hahnmua*, նոյ. 2014, 104–6:

Ուսուցման առաջարկներ

2 Նեփի 1.10–11, 9.28, Մոսիա 2.36–37, 26.1–4, Ալմա 12.9–11, 31.8–11, 46.7–8, Հելաման 4.11–13, 13.24–26, Մորմոն 9.7–8

Վերաբերմունքն ու վարքագիծը կարող են խաթարել հավատքն ու վկայությունը

Ցուցադրեք հետևյալ հարցերը և հրավիրեք ուսանողներին դրանց հակիրճ պատասխանել.

- Ինչպե՞ս է հնարավոր, որ նրանք, ովքեր ունեցել են ավետարանի օրհնությունները, կորցնեն իրենց հավատքն ու վկայությունը:

Հիշեցրեք ուսանողներին, որ մարգարե Լեքին նախագուշացրել էր, որ իր սերունդը մի օր կորցնելու է հավատքը Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ: Ուսանողներից մեկին հանձնարարեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 1.10–11 հատվածները և հանձնարարեք ուսանողներին գտնել, թե, ի վերջո, ինչ ազդեցություն ունեցավ այդ անհավատությունը Լեքիի հետնորդների վրա: (Օգտակար կլինի բացատրել, որ «անհավատության մեջ ընկնել» արտահայտությունը նշանակում է այլասերվել հոգեպես՝ անհավատության պատճառով:)

- Ի՞նչ ազդեցություն, ի վերջո, ունեցավ անհավատությունը Լեքիի ժառանգների վրա:

Նշեք որ, թեև կային բազմաթիվ գործոններ, որոնք հանգեցրեցին նեփիացիների քաղաքակրթության ոչնչացմանը, նեփիացիների անկման

հիմնական պատճառը նրանց հավատքի կորուստն էր՝ Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ: Այս պատճառով է, որ Մորմոնի Գրքի գրողները բազմիցս զգուշացրել են այն վերաբերմունքի և վարքագծի մասին, որոնք թուլացնում են հավատքն առ Տերը և շարունակաբար սովորեցրել են, թե ինչպես կառուցել և ամրապնդել վկայությունը:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մոսիա 26.1–4 հատվածները, և հորդորեք դասարանին ուշադրություն դարձնել այն վերաբերմունքին և վարքագծին, որոնք խարխլել են ոմանց հավատքը Մոսիա թագավորի կառավարման օրոք:

Հրավիրեք ուսանողներին բացահայտել այդ հատվածներում ուսուցանվող սկզբունքն այն մասին, թե ինչ է պատահում մարդկանց, ովքեր ընտրում են չհավատալ և չգործել ճշմարտությանը համաձայն: Բացահայտած սկզբունքների թվում ուսանողները կարող են նշել հետևյալը. **Երբ մարդիկ չեն հավատում ու գործում համաձայն այն ճշմարտությունների, որոնք նրանց ուսուցանվել են, նրանց սրտերը կարծրանում են և նրանք չեն կարող վայելել հավատքի և վկայության օրհնությունները:**

- Երբ մարդիկ չեն հավատում ու գործում համաձայն այն ճշմարտությունների, որոնք նրանց ուսուցանվել են, ձեր կարծիքով, ինչո՞ւ են նրանց սրտերը կարծրանում՝ Հոգին զգալու համար:

Որպեսզի օգնեք ուսանողներին բացահայտել ևս մի շարք վերաբերմունք ու վարքագիծ, որոնք կարող են հանգեցնել հավատքի և վկայության կորստին, գրատախտակին գրեք սույն գրությունների հետևյալ հատվածները: Յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք կարդալ հետևյալ հատվածներից մեկը կամ երկուսը, և համոզվեք, որ բոլոր հատվածները հանձնարարված են: Խնդրեք ուսանողներին փնտրել իրենց հանձնարարված հատվածներում այնպիսի վերաբերմունք կամ վարքագիծ, որոնք նպաստում են, որ մարդիկ կորցնեն իրենց հավատքն ու վկայությունը:

2 Նեփի 9.28

Մոսիա 2.36–37

Ալմա 12.9–11

Ալմա 31.8–11

Ալմա 46.7–8

Հեյստման 4.11–13

Հեյստման 13.24–26

Մորմոն 9.7–8

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտած վերաբերմունքով ու վարքագծով և բացատրել, թե

ինչպես դրանք կարող են թուլացնել հավատքն ու վկայությունը:
Ամփոփեք ուսանողների պատասխանները գրատախտակին՝
համապատասխան հատվածների կողքին:

- Այս վերաբերմունքից և վարքագծից որո՞նք են ձեր կարծիքով առավել վտանգավոր այսօրվա եկեղեցու երիտասարդ չափահասների համար: Ինչո՞ւ:

Խնդրեք ուսանողներին ընտրել գրատախտակին գրվածներից որևէ վերաբերմունք կամ վարքագիծ և բացատրել, թե ինչ մենք կարող ենք անել, որպեսզի պաշտպանվենք այդ վերաբերմունքից կամ վարքագծից:

Առաջարկեք ուսանողներին մի պահ խորհել, թե այս վերաբերմունքից կամ վարքագծից որոնք են սպառնացել իրենց հավատքին և վկայությանը, և ինչ նրանք կարող են անել իրենց ամրապնդելու համար:

2 Նեփի 28.21–23; Մորմոն 5.16–18

Հավատքի և վկայության կորստի հետևանքները

Հիշեցրեք ուսանողներին, որ երբ Մորմոն մարգարեն առաջնորդում էր նեփիացիների բանակները, եղավ մի ժամանակ, երբ նա նկատեց իր ժողովրդի չարացած ու անհույս վիճակը: Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել Մորմոն 5.16–18 հատվածները և գտնել Մորմոնի տված նկարագրությունը՝ իր ժողովրդի հոգևոր վիճակի մասին:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում ապրել «առանց Քրիստոսի և Աստծո [այս] աշխարհում»:
- Ի՞նչ սկզբունք մենք կարող ենք սովորել Մորմոնի խոսքերից նրանց մասին, ովքեր կորցրել են իրենց հավատքն առ Տերը և չեն ցանկանում ապաշխարել: (Չնայած նրանք կարող են օգտագործել տարբեր խոսքեր, ուսանողները պետք է հասկանան հետևյալ սկզբունքը. **Եթե մենք մեզ թույլ տանք կորցնել հավատքը և չցանկանանք ապաշխարել, Հոգին կհեռանա մեզանից և մենք կկորցնենք Տիրոջ առաջնորդությունը:**)
- Ըստ 18-րդ հատվածի՝ Մորմոնի զգուշացնելով՝ ինչպիսի՞ն կլինեք Տիրոջ առաջնորդությունը կորցնելու արդյունքը:

Բացատրեք, որ Նեփին ուսուցանել է, որ Հոգին կորցնելու և դևի կողմից գերի տարվելու ընթացքը հաճախ դանդաղ է և աստիճանական: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 2 Նեփի 28.21–23 հատվածները և դասարանին խնդրեք հայտնաբերել այն բառերն ու արտահայտությունները, որոնք նկարագրում են այս հոգևոր աստիճանական անկումը:

- Ի՞նչ մոտեցումներ է Նեփին նշել, որոնք կարող են հանգեցնել անձի հոգևոր անկմանը:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են այս մոտեցումները հատկապես վտանգավոր մեր հավատքի համար:

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ պատմությունը.



«Ճիշտ այնպես, ինչպես ճշմարտությունն է տրված մեզ՝ տող առ տող, և լույսը լուսավորում է դանդաղ, կախված նրանից, թե որքանով ենք մենք հնազանդվում, կամ որքանով չենք հնազանդվում, ճշմարտության հանդեպ մեր վկայությունը նվազում է գրեթե աննկատ, կամաց-կամաց, և խավարը իջնում է այնքան դանդաղ, որ հպարտությունը կարող է հեշտությամբ ուրանալ, որ մի բան փոխվում է:

Ես լսել եմ, թե ինչպես էր պարծենում մի մարդ, ով աստիճանաբար հեռացել էր Եկեղեցուց: Սկզբում նա պարզապես դադարել էր ուսուցանել իր Կիրակնօրյա Դպրոցի դասարանին, ապա նա հեռու էր մնացել Եկեղեցուց և ի վերջո մոռացել էր վճարել տասանորդը մինչ օրս: ... Նա չէր կարող զգալ տարբերությունը, բայց ես կարող էի: Նրա աչքերի լույսը և ապա նրա դեմքի փայլը հանգչում էին: Նա չէր կարող զգալ, քանի որ Աստծուն չհնազանդվելու հետևանքներից մեկը կարծես թե հոգևոր անզգայացնող միջոցի ստեղծումն է, որն արգելափակում է զգայունությունը, երբ կապերը Աստծո հետ կտրված են: Ոչ միայն ճշմարտության մասին վկայությունն է դանդաղորեն քայքայվում, այլ նույնիսկ հիշողությունները, թե ինչի նման էր այն, և լույսը սկսում է թվալ նրան իբրև մոլորություն» ("A Life Founded in Light and Truth" [Brigham Young University devotional, Aug. 15, 2000], 3, speeches.byu.edu):

- Ձեր կարծիքով, որո՞նք են նշաններից մի քանիսը, երբ անձը սկսում է կորցնել իր հավատքն ու վկայությունը:

1 Նեփի 15.7–11, 2 Նեփի 25.28–29, Մոսիա 4.11–12; 15.11, 2Ելաման 15.7–8

Ամրացնել հավատքն ու վկայությունը

Ցուցադրեք և հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ հայտարարությունը.



«Բնության մեջ այն ծառերը, որոնք աճում են քամոտ միջավայրում, ավելի ամուր են դառնում: Երբ քամիները պտտվում են նորատունկ ծառի շուրջ, նրա ներքին ուժերը երկու բան են անում: Առաջինը, նրանք խթանում են արմատները, որպեսզի դրանք ավելի արագ աճեն և հեռու տարածվեն: Երկրորդ, ծառի ներքին ուժերը սկսում են ստեղծել բջջային կազմվածքներ, որոնք, ըստ էության, հաստացնում են բունն ու ճյուղերը և ավելի դիմացկուն են դարձնում դրանք քամու ճնշմանը: Այս ուժեղ արմատները և ճյուղերը պաշտպանում են ծառը քամիներից, որոնք հաստատ վերադառնում են:

Դուք անխոս ավելի թանկ եք Աստծուն, քան մի ծառ: Դուք Նրա որդին կամ Նրա դուստրն եք: Նա ձեր ոգին ստեղծել է ուժեղ և ունակ կյանքի պտտահողմերի հանդեպ դիմացկուն լինելու համար: Ձեր պատանեկության ընթացքում պտտահողմերը, մատուցալ ծառի դեմ փչող քամու պես, կարող են մեծացնել ձեր հոգևոր ուժը՝ նախապատրաստելով ձեզ գալիք տարիների համար» («Չոգևոր պտտահողմեր», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 18):

- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի ձեռք բերենք հոգևոր ուժ և դիմակայենք մեր հավատքին ու վկայությանը սպառնացող մարտահրավերներին:

Հիշեցրեք ուսանողներին, որ Մորմոնի Գիրքը պարունակում է ավետարանի սկզբունքներ, որոնք կարող են առաջնորդել անհատներին, ովքեր ձգտում են ավելի ամուր հավատք և վկայություն ունենալ:

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 25.28–29 հատվածները և բացատրեք, որ այս հատվածներն ամփոփում են այն հզոր քարոզը, որը Նեփին հղեց իր ժողովրդին, այն մասին, թե ինչպես փրկված լինել: Խնդրեք դասարանի անդամներին ուշադրություն դարձնել, թե ինչ էր ուսուցանել Նեփին՝ որն է ամենակարևոր որոշումը, որը մենք կկայացնենք մեր կյանքում:

- Ըստ Նեփիի ուսուցանածի՝ ո՞րն է ամենակարևոր որոշումը, որը մենք կկայացնենք մեր կյանքում: (Օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալ սկզբունքը. **Եթե մենք ընտրում ենք հավատալ Հիսուս Քրիստոսին և երկրպագել Նրան մեր ողջ գործությամբ, մտքով և ուժով, ապա մենք հոգեպես ամուր կմնանք և դուրս չենք գցվի:**)

Ցուցադրեք Յոթանասունից Երեց Լ. Ուիթնի Քլեյթոնի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Դարեր շարունակ մարգարեները խրախուսել են մեզ և նույնիսկ աղերսել, որ հավատանք Քրիստոսին: ... Հավատալու որոշումը ամենակարևոր ընտրությունն է, որը մենք երբևէ կատարում ենք: Այն ձևավորում է մեր բոլոր մյուս որոշումները: ...

Դավանանքը, վկայությունը և հավատքը պասսիվ սկզբունքներ չեն: Նրանք առանց ջանքի չեն տրվում մեզ: Դավանանքը մի բան է, որը մենք ընտրում ենք. մենք հույս ենք տաժում, աշխատանք ենք կատարում և զոհաբերում ենք դրա համար: Մենք պատահականորեն չենք հավատա Փրկիչին և Նրա ավետարանին, ոչ էլ պատահականորեն կադրժենք կամ տասանորդ կվճարենք: Մենք գործնականորեն ենք ընտրում հավատալը, ինչպես և ընտրում ենք պահել մյուս պատվիրանները» («Ընտրեք հավատքը», *Ensign* կամ *Liahona*, մայ. 2015, 38):

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում՝ «դավանանքը, վկայությունը և հավատքը պասսիվ սկզբունքներ չեն»:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ ավետարանի սկզբունքներով ապրելու ձգտումը մեր հավատքն ու վկայությունը ամրացնելու լավագույն եղանակն է:

Որպեսզի օգնեք ուսանողներին բացահայտել մի քանի ձևեր, թե ինչպես մենք կարող ենք ջանալ ամրացնել մեր հավատքն ու վկայությունը, գրատախտակին գրեք սուրբ գրության հետևյալ հատվածները և խնդրեք, որ ուսանողներից յուրաքանչյուրը լուռ կարդա դրանցից առնվազն մեկը: Հրավիրեք նրանց փնտրել սկզբունքներ, որոնք կօգնեն մեզ ամրացնել մեր հավատքը Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ:

1 Նեփի 15.7-11

Մոսիա 4.11-12

Մոսիա 15.11

Հելաման 15.7-8

Հրավիրեք ուսանողներին կիսվել այս հատվածների վերաբերյալ իրենց դիտարկումներով: Դուք կարող եք հրավիրել ուսանողներին բերել վկայություն, թե ինչպես են նրանք կիրառել այս կամ այլ սկզբունքներն իրենց կյանքում, և օրհնվել ավելի մեծ հավատքով՝ Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ: Խրախուսեք ուսանողներին ջանքեր կատարել, որոնք անհրաժեշտ են Տիրոջ հանդեպ իրենց հավատքը գորացնելու համար:

Ուսանողի ընթերցարան

- 1 Նեփի 15.7–11, 2 Նեփի 1.10–11, 9.28, 25.28–29, 28.21–23, Մոսիա 2.36–37, 4.11–12, 15.11, 26.1–4, Ալմա 12.9–11, Ալմա 31.8–11, 46.7–8, Հելաման 4.11–13, 13.24–26, 15.7–8, Մորմոն 5.16–18, 9.7–8
- Լ. Ուիթնի Քլեյթոն, «Ընտրեք հավատքը», *Ensign* կամ *Liahona*, մայ. 2015, 36–39:

Հիսուս Զրիստոսի Գալուստը

Նախաբան

Պայմանները և իրադարձությունները, որոնք կապված են Ամերիկաներ Հիսուս Զրիստոսի այցելության հետ, ծառայում են որպես Նրա Երկրորդ Գալուստի օրինակ: Այս դասը կօգնի ուսանողներին կիրառել Մորմոնի Գրքի

սկզբունքները՝ որպեսզի նրանք ավելի լավ պատրաստված լինեն այդ «մեծ ու ահեղ օրվան», (3 Նեփի 25.5) երբ Զրիստոսը կրկին կգա:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Dallin H. Oaks, "Preparation for the Second Coming," *Ensign* կամ *Liahona*, մայ. 2004, 7–10:
- Jeffrey R. Holland, "Preparing for the Second Coming," *New Era*, Dec. 2013, 2–5.

Ուսուցման առաջարկներ

Նշված 14.20–30, 16.1–5, 3 Նեփի 9.1–5, 12–14, 10.12

Նշանները տրված են, որպեսզի օգնեն մեզ հավատալ և պատրաստվել Տիրոջ Երկրորդ Գալուստին:

Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց կյանքից այնպիսի օրինակներով կամ իրադարձություններով, որոնք նախապատրաստություն են պահանջել (օրինակ, միսիան): Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ դեր է խաղացել այդ նախապատրաստությունը ձեր ընդհանուր փորձի ընթացքում:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս կտարբերվեր ձեր փորձը, եթե դուք չնախապատրաստվեիք:

Ցուցադրեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի (1899–1994) հետևյալ խոսքերը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք: Խնդրեք դասարանին լսել, թե Նախագահ Բենսոնի ուսուցանելով՝ ինչին կօգնի մեզ նախապատրաստվել Մորմոնի Գիրքը.



«Մորմոնի Գրքում մենք գտնում ենք օրինակ՝ թե ինչպես նախապատրաստվել Երկրորդ Գալուստին: Գրքի հիմնական մասը կենտրոնացնում է մի քանի տասնամյակների վրա՝ Ամերիկա Զրիստոսի գալուստից առաջ: Այդ ժամանակահատվածի մանրակրկիտ ուսումնասիրությամբ մենք կարող ենք պարզել, թե ինչու են ոմանք ոչնչացվել սարսափելի դատաստաններից, որոնք նախորդել են Նրա գալուստին, և թե ինչն է բերել մյուսներին՝ կանգնելու Բաուլթիֆուլ տեղանքի տաճարի մոտ

և խրելու իրենց ձեռքերը Նրա ձեռքերի և ոտքերի վերքերի մեջ» (Եկեղեցու նախագահների ուսմունքները. Էգրա Թաֆտ Բենսոն [2014], 140):

- Համաձայն Նախագահ Բենսոնի՝ ինչո՞ւ մենք պետք է մանրակրկիտ ուսումնասիրենք Սորմոնի Գրքի պատմությունը, որտեղ Հիսուս Քրիստոսն այցելում է Իր Ժողովրդին Ամերիկաներում: (Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ ուսումնասիրելով Սորմոնի Գրքի պատմությունն այն իրադարձությունների մասին, որոնք կապված են Հիսուս Քրիստոսի այցի հետ Ամերիկաներ, մենք կարող ենք սովորել մի օրինակ, թե ինչպես նախապատրաստվել Երկրորդ Գալուստին:)

Երբ ուսանողներն ուսումնասիրում են Փրկիչի այցը Ամերիկաներ, հրավիրեք նրանց գտնել սկզբունքներ և վարդապետություններ, որոնք կօգնեն նրանց նախապատրաստվել Երկրորդ Գալուստին:

Հիշեցրեք ուսանողներին, որ Փրկիչի ծնունդից առաջ Սամուել Լամանացին կանխագուշակել էր այն նշանները, որոնք պետք է ուղեկցեին Փրկիչի ծնունդն ու մահը: Խնդրեք ուսանողներին աչքի անցկացնել Հելաման 14.20–27 հատվածները և բացահայտել Քրիստոսի մահվան նշանները:

- Ինչպիսի՞ նշանների մասին էր ասել Սամուելը նեփիաացիներին, որ կուղեկցեն Հիսուս Քրիստոսի մահը:

Դասարանի մի կեսին հանձնարարեք կարդալ Հելաման 14.28–30 հատվածները, իսկ մյուս կեսին՝ Հելաման 16.4–5-ը: Խնդրեք նրանց գտնել, թե ինչ պատճառներով էին այդ նշանները տրվում նեփիաացիներին: Հորդորեք ուսանողներին հատուկ ուշադրություն դարձնել «այն նպատակով, որ» արտահայտության գործածումներին:

- Համաձայն այս հատվածների, ինչո՞ւ է Տերը նշաններ տալիս: (Օգնեք ուսանողներին բացահայտել հետևյալ վարդապետությունը. **Տերը նշաններ ու հրաշքներ է ցույց տալիս, որպեսզի մենք հավատանք Իրեն և փրկվենք:** Կարող եք այս վարդապետությունը գրել գրատախտակին:)
- Ի՞նչ է ասված Հելաման 14.29-ում այն մասին, թե ինչ կպատահի նրանց, ովքեր չեն հավատում նշաններին ու հրաշքներին: (Արդար դատաստան կգա նրանց վրա):

Բացատրեք, որ 3 Նեփի գրքում նկարագրվող խոստացված նշաններն ու հրաշքները, ներառյալ Փրկիչի մահվանը նախորդող ոչնչացումը, սկսել են կատարվել: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 3 Նեփի 9.1–5, 12–14 և 10.12 հատվածները, մինչ դասարանը կգտնի, թե ինչ պատահեց նրանց, ովքեր հավատացին Սամուելի և Նեփիի ուղերձներին, ինչպես նաև նրանց՝ ովքեր չհավատացին:

- Համաձայն այս հատվածների՝ ինչո՞ւ ոչնչացվեցին որոշ մարդիկ: Ինչո՞ւ ոմանք խնայվեցին:

Նշեք, որ Հիսուս Քրիստոսի հետևորդներին այսօր ուսուցանվում է հսկել այն նշանները, որոնք նախորդելու են Նրա Երկրորդ Գալուստին: Խնդրեք

ուսանողներին քննարկել, թե Երկրորդ Գալուստի նշանները հասկանալն ու ճանաչելը ինչպես կարող են օգնել Եկեղեցու անդամներին այսօր՝ ավելի լավ պատրաստված լինել Նրա գալուստին:

3 Նեփի 11.1-17

Նախապատրաստվել հանդիպելու Փրկիչին

Ցուցադրեք «Հիսուս Քրիստոսի հայտնվելը նեփիացիներին» նկարը: Երբ ուսանողները վերանայեն պատմությունը, որտեղ նկարագրվում է Փրկիչի այցը նեփիացիներին, խրախուսեք նրանց գտնել օրհնությունները, որոնք ստացել են նրանք, ովքեր հավատացել են Տիրոջ մահվան նշաններին և նախապատրաստվել են Նրա գալուստին:

Հանձնարարեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 3 Նեփի 11.1–12 հատվածները:

- Տիրոջ գալուստին վերաբերող խոստացված նշաններին հավատալը ինչպե՞ս նախապատրաստեց մարդկանց այդ փորձառությանը:
- Ինչպե՞ս կարող են այս հատվածները հիշեցնել մեզ, որ մենք էլ պետք է նախապատրաստվենք:

Հրավիրեք ուսանողներին հերթով բարձրաձայն կարդալ 3 Նեփի 11.13–17 հատվածները և պատկերացնել, թե ինչ կարելի էր զգալ ներկա լինելով այդ իրադարձությանը:

- Ինչպե՞ս է այս փորձառությունը ներկայացնում այն, թե ինչ է ցանկանում Տեր Հիսուս Քրիստոսը մեզանից յուրաքանչյուրի համար: (Պատասխանները պետք է արտացոլեն հետևյալ ճշմարտությունը.
Հիսուս Քրիստոսը հրավիրում է բոլորին գալ Իր մոտ և ստանալ վկայություն, որ Նա է ամբողջ երկրագնդի Աստվածը:)
- Ի՞նչ նմանություն կունենան այս իրադարձությունները նրանց հետ, որոնք տեղի կունենան Հիսուսի Երկրորդ Գալուստի ժամանակ:
- Ի՞նչ կարող եք դուք անել, որպեսզի հետևեք Փրկիչի հրավերին և պատրաստ լինեք մի օր կանգնելու Նրա առաջ:

Եզրափակեք՝ ցուցադրելով Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավին Հ. Օուքսի հետևյալ խոսքերը.



«Ի՞նչ կլիներ, եթե Նրա գալու օրը վաղը լիներ: Եթե իմանայինք, որ վաղը հանդիպելու ենք Տիրոջը, վաղաժամ մահվան կամ Նրա անսպասելի գալուստի արդյունքում, ի՞նչ կանեինք այսօր: Ինչպիսի՞ խոստովանություններ կանեինք: Ի՞նչ սովորություններ կդադարեցնեինք: Ի՞նչ անհամաձայնություններ կլուծեինք: Ինչպիսի՞ ներում կպարզեցնեինք: Ի՞նչ վկայություններ կբերեինք:

Եթե այս բաները կանեինք, այդ դեպքում, ինչո՞ւ չանենք հիմա: Ինչո՞ւ խաղաղություն չկենք, քանի դեռ դա հնարավոր է» (“Preparation for the Second Coming,” *Ensign* կամ *Liahona*, մայ. 2004, 9):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր պատրաստվել կարծես Տիրոջ գալուստը վաղն է:

Հրավիրեք ուսանողներին փնտրել և արձագանքել Հոգու հուշումներին՝ նախապատրաստվելով հանդիպելու Տիրոջը:

Ուսանողի ընթերցարան

- Հեղինակ 14.20–30, 16.1–5, 3 Նեփի 9.1–5, 12–14, 10.12, 11.1–17
- Dallin H. Oaks, “Preparation for the Second Coming,” *Ensign* կամ *Լիստինա*, մայ. 2004, 7–10:

«Ճիշտ ինչպես ես եմ»

Նախաբան

Հարություն առած Հիսուս Քրիստոսը հրավիրեց Իր աշակերտներին հետևել Իր օրինակին: Սերտելով այն սկզբունքները, որոնք Նա ուսուցանել է նեփիացիներին Բաունթիֆուլ տաճարում, մենք կսովորենք, թե ինչպես նմանվել Նրան: Փրկիչն աղոթեց, որ բոլորը, ովքեր

հավատում են Իրեն, կարողանան միասնական լինել Իր և մեր Երկնային Հոր հետ: Այս դասի նպատակն է օգնել ուսանողներին հասկանալ, թե նրանք ինչ կարող են անել, որպեսզի ավելի նմանվեն Հիսուս Քրիստոսին:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Հենրի Բ. Այրինգ, «Մեր կատարյալ օրինակը», *Ensign* կամ *Liahon*, նոյ. 2009, 70-73:
- Լին Գ. Ռոբբինս, «Ինչպիսի՞ մարդ և կին եք դուք պարտավոր լինել», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2011, 103-5:

Ուսուցման առաջարկներ

3 Նեփի 27.21–22, 27

Նմանվել Հիսուս Քրիստոսին

Դասը սկսեք, ցուցադրելով Յոթանասունի Նախագահությունից Երեց Լին Գ. Ռոբբինսի հետևյալ խոսքը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Մեզանից շատերը ստեղծում են *անելիքների* ցուցակներ, որոնք կհիշեցնեն մեզ, թե ինչ գործեր ունենք անելու: Սակայն մարդիկ հազվադեպ են ունենում *ինչպիսին լինելու* ցուցակներ: Ինչո՞ւ: *Անելիքները*՝ միջոցառումներ կամ իրադարձություններ են, որոնք կարելի է ջնջել ցուցակից, երբ *արդեն արված են*: *Ինչպիսին լինելը*, թերևս, երբեք կատարված չի լինում: Դուք չեք կարող «կատարված»-ի նշան դնել *ինչպիսին լինելու* ցանկում: Ես կարող եմ կնոջս որևէ հաճելի տեղ հրավիրել ուրբաթ օրը, երեկոյան, ինչը *անելիք* է: Սակայն լավ ամուսին *լինելը* իրադարձություն չէ, այն պետք է իմ բնույթի մի մասը *լինի*, իմ բնավորությունը կամ իմ «ով» լինելը» (“What Manner of Men and Women Ought Ye to Be?” *Ensign* կամ *Liahon*, մայիս 2011, 104):

- Ձեր կարծիքով, Տերն ինչպիսի՞ն է ուզում, որ մենք լինենք որպես Իր Եկեղեցու անդամներ:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 27.21–22, 27 հատվածները և տեսնել, թե Հիսուս Քրիստոսն ինչ հրահանգներ էր տվել Իր նեփիացի աշակերտներին:

- Ի՞նչ պատվիրեց Փրկիչն Իր աշակերտներին անել և ինչպիսին լինել: (Հետևյալ ճշմարտությունը գրեք գրատախտակին. **Տերը խնդրում է Իր աշակերտներին անել Իր գործերը և լինել ինչպես Ինքն է:**)


- Ձեր կարծիքով, ինչպե՞ս ենք մենք ավելի նմանվում Փրկիչին:
- Նրա գործերից որո՞նք եք դուք կարողացել անել:

Հրավիրեք ուսանողներին քննարկել, թե Մորմոնի Գրքի ուսմունքներն ինչպե՞ս կարող են օգնել մեզ նմանվել Հիսուս Քրիստոսին: Կարող եք գրել ուսանողների պատասխանները գրատախտակին: Կիսվեք ձեր վկայությամբ, որ Մորմոնի Գիրքն ուսումնասիրելը և նրա ուսմունքները կիրառելը կօգնի մեզ ավելի նմանվել Փրկիչին:

3 Նեփի 12.1–16, 43–45, 13.1, 5–7, 16–18, 22–24, 33, 14.1–5, 21–27

Քրիստոսի քարոզը Բաունթիֆուլ տաճարում ուսուցանում է մեզ, թե ինչպես նմանվել Իրեն:

Ցուցադրեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի (1899–1994) հետևյալ խոսքը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն:



«Այն մարդն է մեծ, առատորեն օրհնված և ուրախ, ում կյանքն առավելագույնս մոտ է Քրիստոսի օրհնակին: Սա որևէ կապ չունի երկրային հարստության, իշխանության, կամ հեղինակության հետ: Մեծության, երասության, ուրախության ճշմարիտ ստուգումն այն է, թե որքանով է մոտենում մեր կյանքը՝ նմանվելով Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին: Նա է ճիշտ ճանապարհը, ամբողջական ճշմարտությունը և առատ կյանքը» (“Jesus Christ—Gifts and Expectations,” *Ensign*, Dec. 1988, 2):

- Ըստ Նախագահ Բենսոնի, ի՞նչ է տեղի ունենում, երբ մենք Հիսուս Քրիստոսին դարձնում ենք մեր կյանքի օրինակը:

Հիշեցրեք ուսանողներին, որ երբ հարություն առած Փրկիչը հայտնվեց Իր ժողովրդին Բաունթիֆուլ տաճարում, Նա քարոզեց նրանց և այդ քարոզը նման էր Նրա բիբլիական Լեռան Քարոզին: Սրբազան սկզբունքները, որոնք Փրկիչն ուսուցանել է Լեռան Քարոզի ժամանակ և Բաունթիֆուլ տաճարում, նպատակ ունեն օգնելու մեզ նմանվելու Իրեն:

Ցուցադրեք Նախագահ Հարոլդ Բ. Լիի (1899–1973) հետևյալ խոսքը: Անհրաժեշտության դեպքում բացատրեք, որ *նախագիծը* վերաբերում է շենքերը կառուցելիս օգտագործվող գծագրին:



«Լեռան այս Քարոզի ժամանակ Վարդապետը տվել է մեզ Իր սեփական բնավորության հայտնությունը, որը կատարյալ էր ... և դա անելով տվել է մեզ նախագիծ՝ մեր սեփական կյանքերի համար» (*Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* [2000], 200):

Գրատախտակին գրեք հետևյալ սուրբ գրությունների հղումները:

3 Նեփի 12.1-12

3 Նեփի 12.13-16, 43-45

3 Նեփի 13.1, 5-7, 16-18

3 Նեփի 13.22-24, 33

3 Նեփի 14.1-5

3 Նեփի 14.21-27

Հանձնարարեք ուսանողներից յուրաքանչյուրին կարդալ այս հղումներից մեկը և հայտնաբերել մի սկզբունք, որը կօգնի նրանց ավելի նմանվել Հիսուս Քրիստոսին: Խրախուսեք ուսանողներին նշել կամ գումարավորել այս սկզբունքներն իրենց սուրբ գրություններում: Հրավիրեք նրանց մտածել, թե արդյոք նրանք ճանաչում են մեկին, ով մարմնավորում է իրենց գտած սկզբունքները:

Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք կիսվել իրենց գտածով: Եթե հարկ համարեք կամ հուշում ստանաք Հոգուց, կարող եք լրացուցիչ հարցեր տալ, ինչպես օրինակ.

- Ինչպե՞ս կարող է այս սկզբունքով հետևողականորեն ապրելը օգնել ձեզ ավելի Քրիստոսանման դառնալ:
- Ինչպիսի՞ փորձառություններ եք ունեցել, որոնք վկայում են ձեր գտած սկզբունքի կարևորության մասին:

Հրավիրեք ուսանողներին նպատակ դնել՝ ավելի նմանվել Փրկիչին, իրենց կյանքում ներառելով այս սկզբունքներից մեկը կամ մի քանիսը:

Հովհաննես 17.9-11, 20-23, 3 Նեփի 19.19-23, 28-29

Մեկ լինել Հոր և Որդու հետ

Բացատրեք, որ նեփիացիներին այցի եկած ժամանակ Հիսուս Քրիստոսը աղոթեց Իր ընտրած տասներկու աշակերտների համար և բոլոր նրանց համար, ովքեր կհավատային նրանց խոսքերին: Հրավիրեք մի քանի ուսանողների բարձրաձայն կարդալ 3 Նեփի 19.19-23, 28-29 հատվածները: Խնդրեք ուսանողներին գտնել, թե ինչ օրհնությունների համար էր Հիսուսն աղոթում, որ շնորհվեին նրանց, ովքեր հավատում են Իրեն:


- Ո՞րն է սկզբունքը, որը մենք կարող ենք սովորել մեզ համար ասված Փրկիչի աղոթքից՝ մեկ լինելու Հոր և Որդու հետ: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ սկզբունքը. **Հավատքի միջոցով մենք կարող ենք մաքրվել և լինել մեկ Հիսուս Քրիստոսի հետ, ինչպես Նա է մեկ Հոր հետ:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այս սկզբունքը, բացատրեք, որ Նոր Կտակարանում գրված է մի աղոթք, որը նման է Բաունթիֆուլ տաճարում հնչած Քրիստոսի աղոթքին: Խնդրեք ուսանողներին հղում կատարել այս հատվածների և Հովհաննես 17.9-11,

20–23 հատվածների միջև: Խնդրեք նրանց մտքում կարդալ հատվածները և մտածել, թե ինչպես են դրանք վերաբերում մեզ:

- Ի՞նչ էք զգում իմանալով, որ Հիսուս Քրիստոսը աղոթել է Հորը *ձեզ* համար:
- Ինչպե՞ս կարող ենք մենք հասնել այն միասնությանը, որը գոյություն ունի Հոր և Որդու միջև:

Խնդրեք որևէ ուսանողի բարձրագույն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքը: Հրավիրեք ուսանողներին ուշադրություն դարձնել, թե ինչ պետք է անենք, որ մեկ լինենք Հիսուս Քրիստոսի և Երկնային Հոր հետ:



«Հիսուսը կատարյալ միասնության հասավ Հոր հետ՝ ենթարկելով Իրեն Հոր կամքին՝ թե մարմնով, թե հոգով: Նրա առաքելությունը միշտ հստակ կենտրոնացած էր, քանի որ Նրա մեջ չկար թուլացնող կամ քայքայող երկմտություն: Հորը նկատի ունենալով Հիսուսն ասել է. «Ես միշտ նորան հաճելի բաներն եմ անում» (Հովհաննես 8.29): ...

Անշուշտ, մենք չենք կարող լինել մեկ՝ Աստծո և Քրիստոսի հետ, մինչև Նրանց կամքն ու շահը չդարձնենք մեր մեծագույն ցանկությունը: Նման հնազանդության չեն հասնում մեկ օրում, բայց եթե կամենում ենք Սուրբ Հոգու միջոցով Տերը կուսուցանի մեզ, մինչև որ ժամանակի ընթացքում հստակորեն կարող է ասվել, որ Նա մեզանում է, ինչպես Հայրը Նրանում» («That They May Be One in Us,” *Ensign*, Nov. 2002, 72–73):

- Ըստ Երեց Քրիստոֆերսոնի՝ ի՞նչ մենք պետք է անենք, որ մեկ լինենք Հոր և Որդու հետ:

Գրատախտակին գրեք հետևյալ հարցերը և հրավիրեք ուսանողներին տրամադրել մի քանի բույս և գրել իրենց պատասխանները.

Ի՞նչ եղանակներով Հիսուսը ցույց տվեց, որ Նա կատարյալ կերպով ենթարկվում է Երկնային Հոր կամքին:

Ի՞նչ եղանակներով դուք կարող եք ավելի ենթարկվող դառնալ Երկնային Հոր կամքին:

Եզրափակեք՝ կիսվելով ձեր վկայությամբ, որ Հոր կամքին ենթարկվելը հնարավոր է դարձնում մեզ համար ավելի նմանվել մեր Փրկիչին՝ Հիսուս Քրիստոսին:

Ուսանողի ընթերցարան

- Հովհաննես 17.9–11, 20–23, 3 Նեփի 12.1–16, 43–45, 13.1, 5–7, 16–18, 22–24, 33, 14.1–5, 21–27, 19.19–23, 28–29, 27.21–22, 27
- Հենրի Բ. Այրինգ, «Մեր կատարյալ օրինակը», *Ensign* կամ *Լիսինգ*, նոյ. 2009, 70–73:

Իսրայելի ցրումը և հավաքումը

Նախաբան

Տերը ցրեց Իսրայելի տունը, քանի որ նրանք կարծրացրել էին իրենց սրտերը Նրա դեմ, բայց Նա խոստացավ, որ նրանք կհավաքվեն վերջին օրերին: Մորմոնի Գրքի մարգարեությունները հստակեցնում են, որ երկար

սպասված հավաքումը սկսվել է: Եկեղեցու անդամները պատասխանատվություն ունեն օրհնելու աշխարհի ընտանիքներին՝ կիսվելով Հիսուս Քրիստոսի ավետարանով:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Russell M. Nelson, “The Gathering of Scattered Israel,” *Ensign* կամ *Liahonnu*, Nov. 2006, 79–82:
- C. Scott Grow, “The Book of Mormon, the Instrument to Gather Scattered Israel,” *Ensign* կամ *Liahonnu*, Nov. 2005, 33–35:

Ուսուցման առաջարկներ

1 Նեփի 22.3–5, 2 Նեփի 25.15–17, 3 Նեփի 5.24–26, 20.13, 29–31, 30.2

Իսրայելի տան ցրումը և հավաքումը

Հրավիրեք որևէ ուսանողի, ով նոր է միացել Եկեղեցուն կամ օգնել է մեկ ուրիշին՝ միանալ, կիսվել իր փորձառությամբ: Քաջալերեք ուսանողներին մտածել իրենց ծանոթներից որևէ մեկի մասին, ով հնարավոր է պատրաստ է ավետարանի ուղերձը լսելուն: Խնդրեք ուսանողներին այսօրվա դասի ընթացքում փնտրել ավետարանի ճշմարտություններ, որոնք կքաջալերեն նրանց և կօգնեն՝ մարդկանց հետ ավետարանով կիսվելու նրանց ջանքերում:

Խնդրեք ուսանողներին կարդալ 1 Նեփի 22.3–5 հատվածները և տեսնել, թե ինչ էր մարգարեացել Նեփին Իսրայելի տան վերաբերյալ:

- Ի՞նչ է դա նշանակում, որ Իսրայելի տունը «ցրվել է»:

Բացատրեք, որ Իսրայելի տան ցրվելը կարևոր թեմա էր Նեփիի համար, քանի որ նրա ընտանիքը այդ ցրման մի մասնիկն էր: Նրանք ցրվել էին դեպի Ամերիկաներ Երուսաղեմից, Հուդայի երկրի ժողովրդի ամբարշտության պատճառով:

Ասացեք ուսանողներին, որ Մորմոնի Գրքի շատ մարգարեություններ մխիթարող հավաստիացում են պարունակում, որ վերջին օրերում Իսրայելի տունը նորից հավաքվելու է: Գրատալատակին գրեք հետևյալ հղումները և յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք կարդալ հատվածներից մեկը: Հետևեք, որ բոլոր հատվածները կարդացվեն: Խնդրեք ուսանողներին փնտրել, թե ինչ պետք է սովորեն և անեն անհատները, որպեսզի հավաքվեն Իսրայելի տան հետ:

2 Նևիի 25.15-17

3 Նևիի 5.24-26

3 Նևիի 20.13, 29-31

3 Նևիի 30.2

- Որո՞նք են այն բաները, որ անհատները պետք է սովորեն և անեն, որպեսզի հավաքվեն Իսրայելի տան հետ: (Ուսանողների կողմից կարող են նշվել մի քանի ճշմարտություններ, ներառյալ հետևյալը. **Տերը հավաքում է Իսրայելի տան անդամներին, երբ նրանք հավատում են Նրան, ապաշխարում են և գալիս են Նրա մոտ:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այս ճշմարտությունը, կարող եք կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. Մակքոնկիի (1915–1985) հետևյալ խոսքը.



«Ինչո՞ւ ցրվեց Իսրայելը: Պատասխանը պարզ է. այն հասարակ է և դրա վերաբերյալ կասկած չկա: Մեր իսրայելացի նախնիները ցրվեցին, քանի որ նրանք մերժեցին ավետարանը, պղծեցին քահանայությունը, լքեցին եկեղեցին և հեռացան թագավորությունից: ...

Ապա ի՞նչ է ներգրավվում Իսրայելի հավաքումը: Իսրայելի հավաքումը բաղկացած է հավատալուց և ընդունելուց և ներդաշնակության մեջ ապրելուց այն ամենի հետ, որ Տերը մի անգամ առաջարկել է իր ընտրյալ ժողովրդին վաղ ժամանակներում: ... Այն բաղկացած է ավետարանին հավատալուց, եկեղեցուն միանալուց և դեպի թագավորություն գալուց: ... Այն կարող է բաղկացած լինել նաև հավաքվելուց մի նշանակված վայրում կամ երկրպագության երկրում» (*A New Witness for the Articles of Faith* [1985], 515):

- Ըստ Երեց Մակքոնկիի՝ անձը ի՞նչ պետք է անի, որպեսզի հավաքվի Իսրայելի տանը:

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե անձամբ իրենք ինչպես են հավաքվել Իսրայելի տանը, երբ հավատացել են Փրկիչին, ապաշխարել են և եկել են Նրա մոտ:

1 Նևիի 15.12–16, 22.8–12

Վերջին օրերին եկեղեցու անդամները կտարածեն ավետարանը երկրի բոլոր ընտանիքներին

Հիշեցրեք ուսանողներին, որ Լեքին որպես փոխաբերություն օգտագործել է ձիթենին՝ որպեսզի սովորեցնի իր ընտանիքին Իսրայելի ցրման և հավաքման մասին (տես 1 Նևիի 10.12–14): Լամանն ու Լեմուելը ասացին Նևիիին, որ նրանք չեն կարողանում հասկանալ իրենց հայրերի ուսմունքների նշանակությունը (տես 1 Նևիի 15.7):

Խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 1 Նևիի 15.12–16 հատվածները: Հրավիրեք դասարանին տեսնել, թե մենք ինչ

կարող ենք սովորել Նեփիի բացատրությունից Իսրայելի տան վերաբերյալ:

- Ինչպե՞ս է ձիթենու փոխաբերությունն օգնում մեզ հասկանալ Իսրայելի ցրումն ու հավաքումը:
- Համաձայն 13 հատվածի, ո՞վ կտա ավետարանի լրիվությունը Լեքիի սերնդի մնացորդին: (Հեթանոսները, ովքեր ստացել էին ավետարանի լրիվությունը):

Բացատրեք ուսանողներին, որ Մորմոնի Գրքում *հեթանոսներ* բառը սովորաբար վերաբերում է նրանց, ովքեր Հուդայի ցեղից չեն կամ Հուդայի երկրից: Մորմոնի Գիրքը պարունակում է մարգարեություններ, որ վերջին օրերին որոշ հեթանոսները կստանան ավետարանի լրիվությունը (տես 1 Նեփի 15.13) և կդառնան Քրիստոսի Եկեղեցու անդամները: Մորմոնի Գրքի մարգարեներն ուսուցանում են, որ այդ հեթանոսները կունենան պատասխանատվություն՝ ավետարանը հայտնելու ողջ երկրին:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ *հեթանոս* բառի սահմանումը, ցուցադրեք և կարդացեք Երեց Բրյուս Ռ. Մակքոնկիի հետևյալ բացատրությունը.




«Միևն այժմ մենք հրեա ենք համարել և [նրանց, ովքեր ապրել են] Հուդայի թագավորությունում, և նրանց անմիջական ժառանգներին: ... Եվ մենք արդեն ասել ենք, որ տերմինների այս օգտագործմամբ մյուս բոլոր մարդիկ հեթանոսներ են, ներառյալ Իսրայելի թագավորության կորած և ցրված մնացորդները: ... Այսպիսով Ջոզեֆ Սմիթը՝ Եփրեմի ցեղից, ... հեթանոս էր, ում ձեռքով Մորմոնի Գիրքը առաջ եկավ, և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները ... հեթանոսներ են, ովքեր փրկություն են բերում լամանացիներին և հրեաներին» (*The Millennial Messiah* [1982], 233):

Խնդրեք մի քանի ուսանողների հերթով կարդալ 1 Նեփի 22.8-12 հատվածները, մինչ դասարանը կգտնի այն մարդկանց, ովքեր կօրհնվեն և կսնուցվեն հեթանոսների (Եկեղեցու անդամների) կողմից վերջին օրերում: Երբ ուսանողները կարդան, օգտակար կլինի բացատրել, որ «մերկացնել իր բազուկը բոլոր ազգերի աչքերի առջև» 10-11 հատվածներում վերաբերում է նրան, որ Տերը ցույց է տալու Իր զորությունը ամբողջ աշխարհին:

- Ովքե՞ր են օրհնվելու և սնուցվելու հեթանոսների կողմից վերջին օրերում: (Լեքիի սերունդը, ամբողջ Իսրայելի տունը և «երկրի բոլոր ցեղերը»):
- Համաձայն 9-11 հատվածների՝ ինչպե՞ս է Տերը օրհնելու երկրի «ցեղերը» (ընտանիքները) վերջին օրերում: (Օգնեք ուսանողներին բացահայտել հետևյալ ճշմարտությունը. **Վերջին օրերում Տերը կաշխատի Իր Եկեղեցու անդամների միջոցով՝ օրհնելու երկրի ընտանիքներին Իր ավետարանով և ուխտերով:**)

Յուզադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքը և հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Մերն է պարտականությունը՝ նպաստել Աբրահամյան ուխտի իրականացմանը: Մենք ենք այն սերունդը, որը նախասահմանված և պատրաստված է օրհնելու աշխարհի բոլոր մարդկանց: ... Ակնկալիքների ու պատրաստության 4000 տարիներ անց՝ սա է նշանակված օրը, երբ ավետարանը պետք է տարվի երկրի ցեղերին: Սա է ժամանակը Իսրայելի խոստացված հավաքման: Եվ մենք պետք է մասնակցենք: Արդյոք դա հրաշալի չէ: Տերն ապավինում է մեզ և մեր որդիներին, և Նա խորապես երախտապարտ է մեր դուստրերի համար, ովքեր արժանիորեն ծառայում են որպես միսիոներներ Իսրայելի հավաքման այս մեծ ժամանակաշրջանում» («Ուխտեր», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2011, 88):

- Ձեր կարծիքով, ի՞նչ են զգում նրանք, ովքեր հավաքված են (նորադարձները) նրանց հանդեպ, ովքեր հավաքում են իրենց՝ (նրանց, ովքեր կիսվել են ավետարանով իրենց հետ):
- Ի՞նչ եղանակներով մենք կարող ենք մասնակից լինել Աստծո աշխատանքին՝ կիսվելով ավետարանով երկրի ընտանիքների հետ:

3 Նեփի 16.4–5, 21.1–7

Մորմոնի Գրքի դերը Իսրայելի հավաքման գործում

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 21.1–7 հատվածները և ուշադրություն դարձնել այն նշանին, որն ազդարարում է վերջին օրերում Իսրայելի հավաքումը:

- Փրկիչն ասել է «այս բաները, որոնք ես հայտարարում եմ ձեզ» (2 հատվածում): Որտե՞ղ էին արձանագրվել նեփիացիներին ուղղված Նրա խոսքերը: (Մորմոնի Գրքում:)
- Ո՞րն է նշանը, որն ազդարարում է վերջին օրերում Իսրայելի հավաքման սկիզբը: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ ճշմարտությունը. **Մորմոնի Գրքի ի հայտ գալը նշան է, որ Աստված իրականացնում է Իր ուխտը՝ Իսրայելի հավաքումը վերջին օրերում:**)

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 3 Նեփի 16.4–5 հատվածները և խնդրեք դասարանին փնտրել Մորմոնի Գրքի և ավետարանի ուղերձի ազդեցությունները վերջին օրերում:

- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը օգնում իրականացնել Աստծո ժողովրդի հավաքումը վերջին օրերում: (Ուսանողների կողմից նշվող ճշմարտություններից մեկը կարող է լինել հետևյալը. **Մորմոնի Գիրքը օգնում է մարդկանց ճանաչել Քավիչին, այնպես որ նրանք կարողանան հավաքվել Նրա հետ:**)

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքը: Խնդրեք ուսանողներին լսել, թե որն է Մորմոնի Գրքի դերը Իսրայելի հավաքման գործում:



«Մորմոնի Գրքի ի հայտ գալը մի նշան է ամբողջ աշխարհին, որ Տերը սկսել է հավաքել Իսրայելը և կատարել ուխտերը, որոնք Նա արել է Աբրահամին, Իսահակին և Հակոբին: Մենք ոչ միայն ուսուցանում ենք այս վարդապետությունը, այլ նաև մասնակցում դրան: Մենք անում ենք դա, երբ օգնում ենք հավաքել Տիրոջ ընտրյալներին վարագույրի երկու կողմերում:

Մորմոնի Գիրքը կենտրոնական դեր ունի այս գործում: Այն հայտարարում է հավաքման վարդապետությունը: Այն նպաստում է, որ մարդիկ սովորեն Հիսուս Քրիստոսի մասին, հավատան Նրա ավետարանին և միանան Նրա Եկեղեցուն: Ի դեպ, եթե չլիներ Մորմոնի Գիրքը, Իսրայելի խոստացված հավաքումը տեղի չէր ունենա» («The Gathering of Scattered Israel,” *Ensign* կամ *Լիսինս*, նոյ. 2006, 80):

Խնդրեք ուսանողներին կիսվել որևէ փորձառությամբ, երբ տեսել են, թե ինչպես է Մորմոնի Գիրքը օգնում մյուս մարդկանց սովորել Հիսուս Քրիստոսի մասին և հավաքվել Իր Եկեղեցուն:

Հորդորեք ուսանողներին օգնել Իսրայելի հավաքման գործում՝ կիսվելով Մորմոնի Գրքով մեկի հետ, ով մեր հավատքից չէ:

Ուսանողի ընթերցարան

- 1 Նեփի 15.12–16, 22.3–5, 8–12, 2 Նեփի 25.15–17, 3 Նեփի 5.24–26, 16.4–5, 20.13, 29–31, 21.1–7, 30.2
- Russell M. Nelson, “The Gathering of Scattered Israel,” *Ensign* կամ *Լիսինս*, նոյ. 2006, 79–82:

Բոլորը նույնն են Աստծո համար

Նախաբան

Լեքիի մահից հետո պաշտպանություն ունենալու համար Նեփիսն և Լեքիի ընտանիքի մյուս արդարակյաց անդամները Տիրոջ կողմից ուղղորդվեցին առանձնանալու Լամանից ու Լեմուելից և նրանց հետևորդներից: Այնուհետև, վեճեր ու պատերազմներ հաճախ էին

արձանագրվում նեփիացիների և լամանացիների փոխհարաբերություններում: Այս դասը քննարկում է, թե ինչպես է Հիսուս Քրիստոսի ավետարանը գերազանցում կրոնական, էթնիկական, մշակութային և այլ տարբերությունները, միավորելով Աստծո զավակներին:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Dallin H. Oaks, “All Men Everywhere,” *Ensign* կամ *Liahon*, մայ. 2006, 77–80:
- Howard W. Hunter, “The Gospel—A Global Faith,” *Ensign*, Nov. 1991, 18–19.

Ուսուցման առաջարկներ

2 Նեփի 26.23–28, 33, Հակոբ 7.24, Եսովս 1.11, 20

Աստծո բոլոր զավակները հրավիրվում են գալ դեպի Նա

Խնդրեք ուսանողներին մտաբերել աշխարհի որևէ կրոնական, էթնիկ կամ մշակութային խմբեր և մտածել, թե ինչ վերաբերմունք են ունենում այդ խմբերից որոշ մարդիկ այլ խմբերի անդամների հանդեպ:

Հիշեցրեք ուսանողներին, որ Լեքիի մահից հետո նրա ժառանգորդները բաժանվեցին երկու խմբի. նեփիացիների և լամանացիների (տես 2 Նեփի 5.1–7): Այս բաժանումից կարճ ժամանակ հետո երկու խմբերը սկսեցին վիճել ու պատերազմել միմյանց հետ (տես 2 Նեփի 5.34): Այդ երկու խմբերի կենսափորձը ցույց է տալիս, որ երբ մարդիկ չգիտեն և չեն հետևում Աստծո պատվիրաններին, նրանք հաճախ են ընդգծում իրենց և ուրիշների միջև եղած տարբերությունները, բաժանվելով մյուսներից և ատելության զգացմունքներ տածելով նրանց հանդեպ: Նշեք, որ հակառակ այս բանին, Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ցանկանում են, որ բոլոր մարդիկ սեր զգան միմյանց հանդեպ և միասնական լինեն:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 2 Նեփի 26.23–28, 33 հատվածները: Խնդրեք դասարանին տեսնել, թե ինչպես է Նեփին օգտագործում հետևյալ բառերը *ոչ ոքի, որևէ մեկի* և *բոլորը*: Կարող եք քաջալերել ուսանողներին նշել այս խոսքերն իրենց սուրբ գրություններում:

- Ի՞նչ կարևոր վարդապետություն ենք մենք սովորում այս հատվածներից: (Թեև նրանք կարող են օգտագործել տարբեր խոսքեր, ուսանողները պետք է հասկանան հետևյալ վարդապետությունը.
Հիսուս Քրիստոսը սիրում է բոլոր մարդկանց և հրավիրում է բոլորին

գալ Իր մոտ և ճաշակել Իր փրկությունից: Կարող եք գրել այս վարդապետությունը գրատախտակին: Կարող եք խրախուսել ուսանողներին՝ զուգահեռներ անցկացնել այս հղումների միջև. 2 Նեփի 26.33, Ալմա 5.33–34 և Ալմա 19.36:)

Ուսանողներին մի քանի լուրջ ժամանակ տվեք, որ մտքում կարդան Հակոբ 7.24 և Ենովա 1.11, 20 հատվածները, փնտրելով նեփիացիների նպատակները լամանացիների հետ կապված՝ Հակոբ և Ենովա մարգարեների օրոք:

- Ի՞նչ կեղծ ավանդույթներ կային, որ հետ էին պահում լամանացիներին դեպի Հիսուս Քրիստոսը գալու հրավերն ընդունելուց:
- Իմանալով, որ լամանացիները հաճախ առեկտություն են զգում նեփիացիների հանդեպ, ինչ զգացումներ կամ կեղծ ավանդույթներ պիտի հաղթահարեն նեփիացիները, որպեսզի ավետարանով կիսվեն նրանց հետ:

Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ 4. Օուֆսի հետևյալ խոսքը.



«Մորմոնի Գիրքը խոստանում է, որ նրանք, ովքեր ստանում են Տիրոջ հրավերը և գործում ըստ դրա՝ «ապաշխարում են և հավատում նրա Որդուն», դառնում են «Տիրոջ ուխտյալ ժողովուրդը» (2 Նեփի 30.2): Սա մի հզոր հիշեցում է, որ ոչ հարստությունները, ոչ ծագումը, ոչ էլ որևէ այլ ծննդյան արտոնություններ չեն կարող պատճառ լինել, որ մենք ենթադրենք, թե «ավելի լավն [ենք], քան մեկ ուրիշը» (Ալմա 5.54, տես նաև Հակոբ 3.9): Իսկապես, Մորմոնի Գիրքը հրահանգում է. «Դուք մի մարմին չպիտի բարձր համարեք մեկ ուրիշից, կամ մարդ չպիտի իրեն բարձր համարի մեկ ուրիշից» (Մոսիա 23.7)» («All Men Everywhere,” *Ensign* կամ *Liahona*, մայ. 2006, 79):

Հրավիրեք ուսանողներին մի պահ դադար առնել և խորհել իրենց վերաբերմունքի մասին այն անձանց նկատմամբ, ում ծագումը տարբերվում է իրենց ծագումից: Խրախուսեք նրանց հետևել Փրկիչի օրինակին, ձգտելով սիրել Աստծո բոլոր զավակներին, ներառյալ նրանց, ում ազգային պատկանելությունը, մշակույթը, կամ կրոնը տարբերվում է իրենց սեփականից:


Մոսիա 28.1–3, Հելաման 6.1–8

Մեծացնել ավետարանով կիսվելու ցանկությունը Աստծո բոլոր զավակների հետ

Հիշեցրեք ուսանողներին, որ Մորմոնի Գիրքը նշանակալի դեպքեր է պարունակում նեփիացիների գործունեությունից, երբ նրանք քարոզում էին ավետարանը լամանացիներին: Հիշեցրեք ուսանողներին Մոսիայի որդիների դարձի գալու հրաշալի պատմությունը (տես Մոսիա 27), հետո խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մոսիա 28.1–3 հատվածները: Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչ պատճառներով էին Մոսիայի որդիները ցանկանում քարոզել ավետարանը լամանացիներին:

- Հայտնաբերած պատճառներից ո՞րն է հատկապես նշանակալից ձեր համար, երբ մտածում եք ավետարանով մյուսների հետ կիսվելու մասին:
- 1-ին հատվածում ո՞ր բառն է նկարագրում, թե ինչպես էին Մոսիայի որդիները նայում լամանացիներին:
- Ավետարանով կիսվելու մեր ցանկությունն ինչպե՞ս է նպաստում, որ մենք այլ կրոնների, ցեղերի, կամ էթնիկ խմբերի մարդկանց նայենք ինչպես մեր եղբայրների ու քույրերի: (Երբ ուսանողները պատասխանեն, օգնեք նրանց հասկանալ հետևյալ սկզբունքը. **Երբ մենք մյուսների մեջ տեսնում ենք մեր եղբայրներին և քույրերին, նրանց հետ ավետարանով կիսվելու ցանկությունը աճում է:**)

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Նախագահ Հովարդ Վ. Հանթերի (1907-1995) հետևյալ խոսքը.



«Բոլոր տղամարդիկ և կանայք ոչ միայն ունեն ֆիզիկական ծագում, որը տալիս է նաև՝ դեպի Ադամն ու Եվան՝ իրենց առաջին երկրային ծնողները, այլ՝ նաև հոգևոր ժառանգություն, որը տալիս է նաև՝ դեպի Աստված՝ Հավերժական Հայրը: Այսպիսով, բոլոր մարդիկ երկրի վրա տառացիորեն եղբայրներ և քույրեր են Աստծո ընտանիքում:

Աստծո այս համընդհանուր հայրությունը հասկանալու և ընդունելու միջոցով է, որ բոլոր մարդկային էակները կարող են լավագույնս գնահատել Աստծո մտահոգությունն իրենց համար և նրանց փոխհարաբերությունը միմյանց հետ: Սա կյանքի և սիրո ուղիք է, որն ուղիղ հարվածում է բոլոր ճնշող ավանդույթներին, որոնք հիմնված են ցեղական, լեզվական, տնտեսական կամ քաղաքական դիրքի, կրթական աստիճանի կամ մշակութային ծագման վրա, քանի որ մենք բոլորս նույն հոգևոր ծագումն ունենք»
(*Teachings of Presidents of the Church: Howard W. Hunter* [2015], 123–24):

- Ի՞նչ մտքեր եք ունենում, երբ լսում եք Նախագահ Հանթերի այս խոսքերը:

Ուսանողներին տվեք մի քանի րոպե, որ կարդան Հելաման 6.1-8 հատվածները: Նշեք, որ այս հատվածներում նկարագրված իրադարձությունները տեղի էին ունեցել մոտ 50 տարի նրանից հետո, երբ Մոսիայի որդիները ծառայել էին իրենց միսիանները լամանացիների մոտ: Խնդրեք ուսանողներին մտածել, թե ինչպիսին էին նեփիազիների և լամանացիների հարաբերությունները այդ միսիանների ժամանակ և ինչպես փոխվեցին այդ հարաբերությունները 50 տարվա ընթացքում:

- Ի՞նչն էր փոխվել նեփիազիների և լամանացիների փոխհարաբերություններում: Ինչո՞ւ փոխվեցին փոխհարաբերությունները:
- Մենք ի՞նչ կարող ենք սովորել ավետարանով կիսվելու մասին Մոսիայի որդիների վերաբերմունքից և նրանց միսիանների արդյունքներից:

Ավմա 27.1–2, 20–24, 53.10–11, 13–17, 4 Նեփի 1.1–3, 11–13, 15–18

Հիսուս Քրիստոսի ավետարանը վեր է մարդկանց մեջ եղած տարբերություններից

Խնդրեք ուսանողներին մտածել հետևյալ հարցի շուրջ և ապա կիսվել մտքերով.

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս է հնարավոր, որ այդքան տարբեր ծագում ունեցող մարդիկ հանդիպեն միասին Եկեղեցում՝ խաղաղության և սիրո ոգով: Ի՞նչն է միավորում Եկեղեցու անդամներին:

Դասարանը բաժանեք երկու մասի: Մի կեսին հրավիրեք ուսումնասիրել Ավմա 27.1–2, 20–24 հատվածները և փնտրել, թե ինչ արեցին նեփիացիները, որպեսզի օգնեն Անթի-Նեփի-Լեքիի ժողովրդին: Մյուս կեսին հրավիրեք ուսումնասիրել Ավմա 53.10–11, 13–17 հատվածները և փնտրել, թե ինչ արեց Անթի-Նեփի-Լեքիի ժողովուրդը (Ամմոնի ժողովուրդը) նեփիացիների համար: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո ուսանողներին խնդրեք կիսվել իրենց գտած նյութով:

- Ձեր կարծիքով, այս երկու խմբերի մեջ ի՞նչն առաջացրեց այսպիսի սեր և մտահոգություն միմյանց հանդեպ: (Որպես այս քննարկման մաս, օգնեք ուսանողներին բացահայտել հետևյալ սկզբունքը. **Երբ մարդիկ ընդունում են Հիսուս Քրիստոսի ուսմունքները, նրանք միավորված են դառնում մեկը մյուսի հետ:**)

Բացատրեք, որ այս սկզբունքի վառ արտացոլումը տրված է 4 Նեփի գրքում: Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ 4 Նեփի 1.1–2 հատվածները: Շեշտեք, որ Փրկիչի այցից հետո Ամերիկաներ, բոլոր նեփիացիներն ու լամանացիներն ապաշխարել էին, մկրտվել, ստացել Սուրբ Հոգին և դարձի եկել դեպի Տերը: Հանձնարարեք ուսանողներին հետազոտել 4 Նեփի 1.3, 11–13, 15–18 հատվածները և փնտրել այն օրհնությունները, որոնք մարդիկ ունեցան, երբ բոլորը դարձի եկան դեպի ավետարանը:

- Ո՞ր բառերն ու արտահայտություններն են նկարագրում այդ ժամանակի մարդկանց:
- Ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսի ավետարանով ապրելը հանգեցնում այդ օրհնություններին:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 4 Նեփի 1.17 հատվածը:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում՝ չկային որևէ «տեսակի -ացիներ»: (Ժողովուրդն այլևս չէր բաժանվում մեկը մյուսից այսպիսի անուններով, ինչպիսիք են նեփիացիներ կամ լամանացիներ: Նրանք հաղթահարել էին իրենց միջև գոյություն ունեցող տարբերությունները և ապրում էին միասնական և խաղաղ:)
- Երբևիցե տեսե՞լ եք, թե ինչպես է ավետարանը նվազեցնում տարբերությունները տարբեր ծագում ունեցող մարդկանց միջև:

Որպեսզի ուսանողներն ավելի խորը հասկանան, թե ինչպես է ավետարանով ապրելը միավորում տարբեր ծագում ունեցող մարդկանց, կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Մքոթի հետևյալ խոսքով.



«Ձեր Երկնային Հայրը նշանակել է ձեզ ծնվել մի հատուկ ծագումով, որից դուք ստացել եք ձեր ռասայի, մշակույթի և ավանդույթների ժառանգությունը: Այդ ծագումը կարող է հարուստ ժառանգություն և ցնծալի մեծ աղիթներ պարգևել: Թերևս, դուք պատասխանատվություն ունեք որոշելու, թե արդյոք կա՝ որևէ մաս այդ ժառանգության մեջ, որ պետք է անտեսվի, քանի որ այն դեմ է աշխատում Տիրոջ Երջանկության

ծրագրին: ...

Ես վկայում եմ, որ դուք կհեռացնեք ձեր երջանկությանը խոչընդոտող արգելքները և ավելի մեծ խաղաղություն կգտնեք, երբ ձեր կյանքի հիմքը կառուցեք Հիսուս Քրիստոսի Եկեղեցում ձեր անդամությանը և Նրա ուսմունքներին ձեր հավատարմության վրա: Այն դեպքում, երբ ընտանեկան կամ ազգային սովորույթները, կամ ավանդույթները հակասում են Աստծո ուսմունքներին, մի կողմ դրեք դրանք: Իսկ եթե ավանդույթներն ու սովորույթները ներդաշնակ են Նրա ուսմունքներին, դրանք պետք է փայփայել և հետևել, որպեսզի պահպանեք ձեր մշակույթը և ժառանգությունը» (“Removing Barriers to Happiness,” *Ensign*, May 1998, 86–87):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են նվազում տարբեր ծագում ունեցող մարդկանց միջև տարբերությունները, երբ այդ մարդիկ Հիսուս Քրիստոսի ավետարանը դարձնում են իրենց առաջնահերթ նախապատվությունը:
- Ինչպե՞ս է Եկեղեցու անդամ լինելը օգնել ձեզ՝ միավորված զգալ Եկեղեցու անդամների հետ, ովքեր ծագմամբ տարբեր են ձեզանից:

Եզրափակեք, վկայելով, որ Մորմոնի Գիրքը պարունակում է իրական օրինակներ, թե ինչպես են տարբեր ծագումով մարդիկ ապրել Հիսուս Քրիստոսի ավետարանով և հաղթահարել իրենց տարբերությունները: Հիսուս Քրիստոսի Քավությունը և ավետարանը գերազանցում են ռասայական, ազգային, մշակութային, տարիքային ու սեռական տարբերությունները և միավորում են Աստծո զավակներին:

Խրախուսեք ուսանողներին մտածել, թե ինչպես Հիսուս Քրիստոսի ավետարանը կարող է օգնել նրանց՝ հաղթահարել ցանկացած կեղծ ավանդույթներ կամ գաղափարներ, որոնք նրանք սովորել են իրենց ընտանիքի անդամներից կամ ընկերներից, կամ լուծել որևէ տարաձայնություն, որը նրանք կարող են ունենալ իրենց ծանոթներից որևէ մեկի հետ: Խրախուսեք նրանց եղանակներ փնտրել ավելի միավորվելու իրենց տեղական համայնքի անդամների հետ:

Ուսանողի ընթերցարան

- 2 Նեփի 26.23–28, 33, Հակոբ 7.24, Ենովա 1.11, 20, Մոսիա 28.1–3, Ալմա 27.1–2, 20–24, 53.10–11, 13–17, Հելաման 6.1–8, 4 Նեփի 1.1–3, 11–13, 15–18
- Dallin H. Oaks, “All Men Everywhere,” *Ensign* կամ *Liahona*, մայ. 2006, 77–80:

Արդար ապրել ամբարշտության օրերում

Նախաբան

Մորմոնի Գրքում արձանագրված է անհատների և հասարակությունների ոչնչացումը, որը նպաստեց ամբարշտությանը և թույլ տվեց, որ գոյանան գաղտնի խմբակցություններ: Միևնույն ժամանակ Մորմոնի Գիրքն

ուսուցանում է, որ մենք կարող ենք արդար ապրել անկախ ամբարիշտ շրջապատից, որտեղ ապրում ենք: Այս դասին ուսանողները կսովորեն, թե ինչ կարող են անել, որ արդար մնան այսօրվա աշխարհում:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Quentin L. Cook, “Reaping the Rewards of Righteousness,” *Ensign*, July 2015, 33–39.
- Դենիս Բ. Նյուչվանդեր, «Մեկը՝ ամբոխի մեջ», *Ensign* կամ *Լիաժոնա*, մայ. 2008, 101–3:

Ուսուցման առաջարկներ

Ալմա 37.21–22, 25–27, Հելաման 6.20–26, 37–40, Եթեր 8.18–26

Գաղտնի խմբակցությունները կարող են կործանել ազատությունը և հասարակությունները:

Գրատախտակին գրեք թշնամու տարածք արտահայտությունը և հարցրեք ուսանողներին, թե ինչ է դա նշանակում:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Բ. Փաքերի (1924–2015) հետևյալ հայտարարությունը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Դուք, երիտասարդներդ, մեծանում եք թշնամու տարածքում: Սուրբ գրություններից մենք գիտենք, որ պատերազմ է եղել երկնքում և Լյուցիֆերը ապստամբել է և իր հետևորդների հետ «վայր [է գցվել] երկրի վրա» [Հայտնություն 12.9]: Նա վճռել է ձախողել մեր երկնային Հոր ծրագիրը և ձգտում է վերահսկել բոլորի մտքերն ու գործողությունները» («Խորհուրդ երիտասարդներին», *Ensign* կամ *Լիաժոնա*, նոյ. 2011, 16):

- Ի՞նչ կերպ է այս ժամանակներում ապրելը նման թշնամու տարածքում ապրելուն:

Բացատրեք, որ այս դասն անդրադառնալու է Մորմոնի Գրքում նկարագրված ամբարիշտ շրջակա միջավայրին, որտեղ ապրում են որոշ արդար անձինք: Երբ ուսումնասիրում են այնպիսի անձանց օրինակները, ովքեր հավատարիմ են մնացել, չնայած շրջապատված են եղել

չարությամբ, հրավիրեք ուսանողներին փնտրել սկզբունքներ և վարդապետություններ, որոնք իրենք կարող են կիրառել:

Հիշեցրեք ուսանողներին, որ Մորոնին վկայել է նեփիազիների ամբողջ քաղաքակրթության ոչնչացման մասին: Նա նկարագրել է ամբարշտությունը, որը հանգեցրել է նեփիազիների և հարեդազիների ոչնչացմանը: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Եթեր 8.18 և 21 հատվածները, մինչ դասարանը կբացահայտի այս ոչնչացման պատճառը: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտած նյութով:

Գրատախտակին գրեք հետևյալ սուրբ գրությունների հղումները և հարցերը.

Այստեղ 37.21–22, 25–27

Հեղափոխություն 6.20–26

Եթեր 8.18–26

Ի՞նչ են իրենցից ներկայացնում գաղտնի խմբակցությունները:

Որո՞նք են դրանց մտադրությունն ու նպատակները:

Ինչպե՞ս են դրանք ապահովում իրենց շարունակական գոյությունը:

Խնդրեք ուսանողներին կարդալ գրատախտակին գրված հատվածներից մեկը և փնտրել թվարկված հարցերի պատասխանները: Ասացեք ուսանողներին, որ նրանց ընտրած հատվածը հնարավոր է չպատասխանի բոլոր երեք հարցերին, բայց նրանք պետք է գտնեն, ինչ կարող են: Բավարար ժամանակից հետո, դասարանով քննարկեք գրատախտակի հարցերը: Այնուհետև քննարկեք հետևյալը.

- Ելնելով կարդացածից՝ որո՞նք են հետևանքները, երբ թույլ է տրվում, որ գաղտնի խմբակցությունները գոյություն ունենան և բարգավաճեն: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ սկզբունքը. **Գաղտնի խմբակցությունները կարող են կործանել ազատությունը, կառավարությունները և հասարակությունները**):
- Ձեր կարծիքով, որո՞նք են գաղտնի խմբակցությունների որոշ օրինակները մեր օրերում:

Որպես հուշում ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդի (1899-1994) հետևյալ խոսքը. Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն:



«Այսօրվա գաղտնի խմբակցությունների թվում են ավագակախմբերը, թմրաբիզնեսային և կազմակերպված հանցավորության խմբերը: Այսօր գաղտնի խմբակցությունների գործելաոճը գրեթե նույնն է, ինչ Մորմոնի Գրքի ժամանակներում Գաղիանթոնի ավագակներինը: ... Նրանց նպատակներն են «սպանել, թալանել, գողանալ և պոռնկություններ ու ամեն

ձևի ամբարշտություն անել» [Հելաման 6.23], (M. Russell Ballard, "Standing for Truth and Right," *Ensign*, Nov. 1997, 38):



«Ես վկայում եմ, որ ամբարշտությունն արագորեն բազմանում է մեր հասարակության ամեն հատվածում: (Տես Վնու 1.14–16, 84.49–53:) Այն ավելի լավ է կազմակերպված, ավելի խելացիորեն քողարկված, և ավելի զորավոր է առաջ շարժվում, քան երբևէ նախկինում: Գաղտնի խմբակցությունները, որ ձգտում են իշխանության, շահի ու փառքի, ծաղկում են: ... (Տես Եթեր 8.18–25:)» (Ezra Taft Benson, "I Testify," *Ensign*, Nov. 1988, 87):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էին Մորմոնի Գրքի մարգարեները իրենց գրառումներում ներառել գաղտնի խմբակցությունների մասին տեղեկություն:

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Հելաման 6.20, 37–40 հատվածները: Խնդրեք դասարանի անդամներին հետևել, ուշադրություն դարձնելով լամանացիների և նեփիաացիների տարբերություններին: (Նշում. Համեմատելն ու հակադրելն սուրբ գրություններն ուսումնասիրելու հմտություն է, որը դուք կարող եք շեշտել այս դասին [տես *Gospel Teaching and Learning: A Handbook for Teachers and Leaders in Seminaries and Institutes of Religion* (2012), 22]:)

- Ի՞նչ կարող ենք սովորել այս հատվածներից՝ թե ինչպես վերացնել ամբարշտությունը և գաղտնի խմբակցությունները:

Ավա 62.41, 4 Նեփի 1.42, Մորմոն 1.13–17, 19, 2.8, 14–15, 18–19, 3.2–3, 12, 22, Մորմոնի 9.6, 22, 25–26

Արդար մնալ, երբ շրջապատված ենք ամբարշտությամբ

Ասացեք ուսանողներին, որ Մորմոն մարգարեն ծնվել է մի միջավայրում, որտեղ տիրում էր աճող ամբարշտությունը, որը տարածվում էր այս գաղտնի խմբակցությունների կողմից: Ուսանողներին խնդրեք ուսումնասիրել հետևյալ հատվածները և գտնել ու նշել Մորմոնի ապրած միջավայրի նկարագիրները: Մորմոն 1.13–14, 16–17, 19, 2.8, 14–15, 18: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով և ապա հարցրեք.

- Ի՞նչպիսի մտահոգություններ կունենայիք դուք, ապրելով այսպիսի միջավայրում:

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մորմոն 1.15 և 2.19 հատվածները:

- Ի՞նչ կարող ենք մենք սովորել Մորմոնի օրինակից՝ այս ամբարշտությամբ լի ժամանակներում: (Ուսանողների պատասխաններից հետո, գրատախտակին գրեք այս ճշմարտությունը: **Մենք կարող ենք արդար ապրել, նույնիսկ այն ժամանակ, երբ շրջապատված ենք ամբարշտությամբ:**)

Ուսանողներին ժամանակ տվեք կարդալու Մորմոն 3.2–3, 12, 22 հատվածները, տեսնելու, թե էլ ինչ կարող ենք սովորել այն մասին, թե ինչպես էր Մորմոնը կարողանում արդար ապրել ամբարշտության ժամանակներում: Երբ ուսանողները կիսվեն, թե ինչ իմացան Մորմոնի մասին, տվեք նրանց հետևյալ հարցերը.

- Ուրիշ էլ ո՞վ է Մորմոնի Գրքում արդար ապրող մարդու օրինակ հանդիսանում, ով շրջապատված էր ամբարշտությամբ: (Պատասխանները կարող են ներառել՝ Եթերը, Մորմոնին, Աբիսը և մարդիկ, ովքեր հավատացին, որ Քրիստոսը պիտի ծնվի, ինչպես գրված է 3 Նեփի 1 գլխում:)
- Ի՞նչ դժվարությունների ենք մենք հանդիպում, երբ ձգտում ենք արդար ապրել ամբարշտությամբ լցված աշխարհում:

Հիշեցրեք ուսանողներին, որ Մորմոնի որդին՝ Մորմոնին, ապրել է նույն այս համատարած ամբարշտության ժամանակներում: Իր մահից առաջ Մորմոնը մի նամակ է գրել Մորմոնիին, որը գետեղված է Մորմոնի 9 գլխում: Խնդրեք որևէ ուսանողի կարդալ Մորմոնի 9.6, 22, 25–26 հատվածները: Հրավիրեք դասարանին մտածել, թե այս հատվածներում գրված Մորմոնի խորհուրդը ինչպե՞ս կօգնի մեզ արդար ապրել ամբարշտությամբ լի այս աշխարհում:

- Ի՞նչ կարող ենք սովորել այս հատվածներից, ինչը կօգնի մեզ արդար ապրել այսօրվա աշխարհում: (Օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալ սկզբունքը. **Եթե մենք հավատք ունենք Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ, ապա մենք զորություն կունենանք արդար ապրելու, անկախ ամբարշտությամբ շրջապատված լինելուց:**)
- Ի՞նչ օրինակներ եք տեսել արդար ապրող մարդու՝ այսօրվա ամբարիշտ միջավայրում:
- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության վրա կենտրոնանալը օգնել ձեզ վեր լինել ամբարշտությունից կամ դժվարին պայմաններից:

Կիսվեք Սփոփող Միության գերագույն նախագահության նախկին խորհրդական Քույր Վիրջինիա Ու. Ջենսենի հետևյալ խոսքով, որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե էլ ինչ նրանք կարող են անել, ամուր լինելու համար հավատքով և արդարակեցությամբ.



«Որպեսզի պահպանենք մեր ամուր դիրքորոշումը և օգնենք մյուսներին ամուր կանգնել, վերականգնված ավետարանի ուղերձը պետք է ամուր սերմանվի մեր սրտերում և ուսուցանվի մեր տներում: ... Ուսուցանեք նրանց, ում սիրում եք, թե ինչպես առաջնորդվել երկնքի զորություններով ծոմապահության և աղոթքի միջոցով: Ուսուցանեք նրանց, որ կիրակի օրը սուրբ պահելը կանջատի նրանց աշխարհից: Ուսուցանեք նրանց հնազանդ լինել: Ուսուցանեք նրանց փնտրել Աստծո հավանությունը, ոչ թե՝ մարդու: Ուսուցանեք նրանց, որ հետադարձ միակ երթուղին դեպի մեր երկնային տուն՝ սիրելն է և հետևելը Փրկիչին և սրբազան ուխտերի և պատվիրանների պահելն է: Ավետարանի ճշմարտությունները և փրկության ծրագրի գիտելիքը այն գեներն են, որոնք ձեր ընտանիքի անդամները կարող են օգտագործել՝ հաղթելու սատանայի չար ուժերին» ("Stand Firm," *Ensign*, Nov. 2001, 94):

- Ի՞նչն է ձեզ վճռականություն և ուժ հաղորդել հնազանդվելու Տիրոջը այս ամբարշտությամբ լցվող աշխարհում:

Բացատրեք, որ նեփիացիների և լամանացիների միջև երկարատև պատերազմի ընթացքում, որի մասին գրված է Ալմայի գրքում, անհատները ստիպված էին պայքարել չար ուժերի դեմ, որպեսզի պահպանեին իրենց կյանքը: Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել Ալմա 62.41 հատվածը և տեսնել, թե ինչ հակադիր կերպով էին անհատները արձագանքում ձախորդություններին ու ամբարշտությանը: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտած նյութով, որը կօգնի նրանց արդար ապրել ամբարիշտ աշխարհում:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Ջեյմս Բ. Ֆաուստի (1920–2007) հետևյալ արտահայտությունը այս հատվածի վերաբերյալ.



«Աճող անարդարության աշխարհում գոյատևելու և նույնիսկ երջանկություն և ուրախություն գտնելու համար, անկախ ամեն ինչից, մենք պետք է անսասան կանգնենք Տիրոջ հետ: Մենք պետք է փորձենք հավատարիմ լինել ամեն օր, ամեն ժամ, այնպես, որ Տիրոջ հանդեպ մեր վստահության հիմքը երբեք չսասանվի: ...

Այնքան էլ կարևոր չէ այն, թե ինչ է պատահում մեզ հետ, քան այն, թե ինչպես ենք մենք վերաբերում այն ամենին, ինչ պատահում է մեզ հետ: Սա հիշեցնում է ինձ մի հատված Ալմայից: Երկարատև պատերազմից հետո «շատերը դարձել էին կարծրացած ... շատերն էլ փափկել էին՝ իրենց չարչարանքների պատճառով» [Ալմա 62.41]: Նույն հանգամանքները հանգեցնում են հակառակ հետևանքների: ... Մեզանից յուրաքանչյուրը պետք է ունենա հավատքի մեր սեփական պահեստը, որը կօգնի մեզ վեր բարձրանալ խնդիրների մակարդակից, որոնք այս մահկանացու փորձաշրջանի մասն են կազմում»:

("Where Do I Make My Stand?" *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2004, 18, 20):

Խնդրեք ուսանողներին մի քանի բույն տրամադրել՝ գրելու հետևյալ հարցի պատասխանները.

- Ի՞նչ պարտավորություններ եք դուք ստանձնել՝ անսասան կանգնելու Տիրոջ հետ:

Ապա քաջալերեք ուսանողներին խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Ի՞նչ հուշումներ եք ստացել Հոգուց կապված նրա հետ, թե ինչպես կարող եք ավելի պարտավորված լինել Տիրոջ հանդեպ:
- Ի՞նչ կարող եք անել՝ օգնելու համար ձեր ընտանիքի անդամներին՝ ավելի պարտավորված լինել Տիրոջ հանդեպ:

Վկայեք, որ եթե մենք հաստատական հավատք ունենանք, Տերը կօրհնի մեզ և կօգնի մեզ ապրել արդար՝ ամբարիշտ միջավայրում:

Ուսանողի ընթերցարան

- Ալմա 37.21–22, 25–27, 62.41, Հելաման 6.20–26, 37–40, 4 Նեփի 1.42, Մորմոն 1.13–17, 19, 2.8, 14–15, 18–19, 3.2–3, 12, 22, Եթեր 8.18–26, Մորմոնի 9.6, 22, 25–26

- Quentin L. Cook, "Reaping the Rewards of Righteousness," *Ensign*, July 2015, 33–39.

Նախքան հավատքի փորձությունը

Նախաբան

Այս դասին ուսանողները կսովորեն Մորմոնի Գրքից, որ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք ունենալը հնարավոր է դարձնում Աստծո համար հրաշքներ գործել

հոգուտ մեզ: Հավատք գործադրելը կարող է նաև պատրաստել մեզ ստանալու ճշմարտության հոգևոր վկայություններ:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ռոբերտ Դ. Հեյլս, «Ձգտել ճանաչել Աստծուն՝ մեր Երկնային Հորը և Նրա որդուն՝ Հիսուս Քրիստոսին», *Ensign* կամ *Liahon*, նոյ. 2009, 29–32:
- Դեյվիդ Ա. Բեդնար, «Խնդրեք հավատքով», *Ensign* կամ *Liahon*, մայ. 2008, 94–97:
- Նիլ Լ. Անդերսեն, «Դուք բավականաչափ գիտեք», *Ensign* կամ *Liahon*, նոյ. 2008, 13–14:

Ուսուցման առաջարկներ

2 Նեփի 27.23, 3 Նեփի 17.5–9, 20–24, Մորմոն 9.9, 18–20

Հավատքը նախորդում է հրաշքներին

Խնդրեք ուսանողներին մի քանի հոգևոր օրինակներ թվել, երբ Աստված հրաշքներ է գործել հոգուտ Իր զավակների՝ համաձայն Իր հանդեպ ունեցած նրանց հավատքի: (Օրինակները կարող են ներառել Հիսուս Քրիստոսին, որ բժշկում է հիվանդներին, կենդանացնում մահացածին, Մովսեսին, որ երկու կեսի է բաժանում Կարմիր ծովը, Քրիստոսին, որ դիպչում է քարերին՝ հարեղացիների նավերը լուսավորելու համար):

- Ի՞նչ կարող եք ասել մի մարդու, ով չի հավատում, որ Աստված շարունակում է հրաշքներ գործել այսօր:

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ 2 Նեփի 27.23, իսկ մի ուրիշ ուսանողի՝ կարդալ Մորմոն 9.9, 18–20 հատվածները:

Խնդրեք դասարանին փնտրել, թե ինչու են հրաշքները շարունակում կատարվել այսօր:

- Համաձայն այդ հատվածների, ինչո՞ւ մենք կարող ենք համոզված լինել, որ այսօրվա աշխարհում հրաշքներ կատարվում են: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ վարդապետությունը. **Քանի որ Տերը նույնն է երեկ, այսօր և հավիտյան, Նա շարունակում է հրաշքներ գործել՝ Իր զավակների հավատքի համաձայն:**)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Տերը հրաշքներ գործելուց առաջ պահանջում, որ մենք հավատք ունենանք:

Որպեսզի պատկերավոր լինի սուրբ գրությունների կապը հավատքի ու հրաշքների միջև, հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 3 Նեփի 17.5–9 հատվածները: Խնդրեք դասարանին փնտրել, թե ի՞նչը հարություն առած Քրիստոսը բավարար համարեց՝ մարդկանց համար հրաշքներ գործելուց առաջ:

- Համաձայն 8 հատվածի, ի՞նչն էր, որ թույլ տվեց Փրկիչին բժշկել հիվանդներին և չարչարվածներին:

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ 3 Նեփի 17.20–24 հատվածները:

- Ի՞նչ այլ սրբազան փորձառություններ էին ունենում մարդիկ իրենց հավատքի շնորհիվ:
- Ինչպե՞ս կարող է հրաշքներ գործելու Քրիստոսի պատրաստակամությունը մեծացնել մեր հավատքը, որպեսզի Նա կարողանա գործի դնել Իր գործությունը և օգնել մեզ մեր կարիքներում:

Հրավիրեք որևէ ուսանողի՝ բարձրաձայն կարդալ Երեխաների Միության գերագույն նախագահության նախկին խորհրդական քույր Սիդնի Ս. Ռեյնոլդսի հետևյալ խոսքը.



««Մեծ հրաշքները» նույնքան կարևոր են, որքան փոքր «անհատական հրաշքները», որոնք սովորեցնում են մեզանից յուրաքանչյուրին՝ հավատք ունենալ առ Տերը: Դրանք տեղի են ունենում, երբ մենք ճանաչում ենք և հետամուտ լինում Հոգու հուշումներին մեր կյանքում: ...

Ես հավատում եմ, որ մենք բոլորս կարող ենք վկայել այս փոքրիկ հրաշքների մասին: Մենք ճանաչում ենք այնպիսի երեխաների, ովքեր աղոթում են օգնության համար, որ գտնեն կորած իրը, և գտնում են այն: Մենք ճանաչում ենք այնպիսի երիտասարդների, ովքեր քաջություն են գտնում իրենց մեջ՝ կանգնելու որպես Աստծո վկաներ և զգալու Նրա աջակցող ձեռքը: Մենք ճանաչում ենք այնպիսի ընկերների, ովքեր վճարում են իրենց տասանորդը, տալով վերջին ունեցած գումարը և, հետո, հրաշքով հայտնաբերում են, որ կարող են վճարել իրենց ուսման վարձը, կամ բնակարանի վարձը, կամ ինչ-որ կերպ սնունդ հայթայթել ընտանիքի համար: Մենք կարող ենք կիսվել պատասխանված աղոթքների փորձով, և քահանայության օրհնությունների, որոնք համարձակություն են տվել, մխիթարություն, կամ վերականգնել են առողջությունը: Այս առօրյա հրաշքներն ուղեկցում են մեզ՝ Տիրոջ ձեռքով մեր կյանքում» ("A God of Miracles," *Ensign*, May 2001, 12):

Խնդրեք ուսանողներին մտաբերել, թե երբ են իրենք, կամ իրենց ծանոթներից որևէ մեկը ականատես եղել Աստծո հրաշքներին իրենց կյանքում: Եթե չափազանց սուրբ կամ անձնական չէ, հրավիրեք ուսանողներին կիսվել փորձով, որը հաստատել է իրենց, որ Աստված շարունակում է լինել հրաշքների Աստվածը:

Եթեր 3.6–13, 17–20, 4.13–15, 12.6–7, 12, 19, 31

Հավատքը պատրաստում է մեզ հոգևոր վկայություններ ստանալուն:

Հրավիրեք ուսանողներին մտածել ավետարանական մի ճշմարտության մասին, որի վերաբերյալ նրանց կցանկանային հոգևոր հաստատում կամ

ավելի ամուր փկայություն ստանալ: Բացատրեք, որ որոշ մարդիկ չեն հավատում կամ չեն ապրում համաձայն ավետարանի որևէ սկզբունքի, մինչև չտեսնեն ապացույց, որ դա ճշմարիտ է:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Եթեր 12.6 հատվածը, տեսնելով, թե ինչ է ուսուցանվում այս հատվածում հոգևոր փկայություն ստանալու գործընթացի մասին:

- Ի՞նչ սկզբունք կարող ենք սովորել Եթեր 12.6 հատվածից փկայություն ստանալու մասին: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ սկզբունքը. **Հոգևոր փկայություն ստանալուց առաջ, մենք նախ պետք է հավատք գործադրենք Հիսուս Քրիստոսի հանդեպ:**)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «ձեր հավատքի փորձությունը» արտահայտությունը:

Բացատրեք, որ հավատքի փորձություն ունենալը միշտ չէ, որ դժվարություններ ունենալ է նշանակում: Ցուցադրեք և խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Եթեր 12.6 հատվածում գտնվող Մորոնիի խորհրդի վերաբերյալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Մքոթի և Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ՝ քույր Բոննի Լ. Օսկարսոնի հետևյալ խոսքերը.



«Դուք կարող եք սովորել, թե ինչպես ավելի արդյունավետ օգտագործել հավատքը, կիրառելով Մորոնիի ուսուցանած այս սկզբունքը. «... քանզի նախքան *ձեր հավատքի փորձությունը*, դուք փկայություն չեք ստանում» [Եթեր 12.6, շեշտադրումն ավելացված է]: Այսպիսով, ամեն անգամ, երբ դուք *փորձում եք ձեր հավատքը*, այսինքն, գործում արժանավոր կերպով զգացողության հանդեպ, դուք կստանաք հաստատող ապացույց Հոգուց»

(Richard G. Scott, "The Sustaining Power of Faith in Times of Uncertainty and Testing," *Ensign* կամ *Liahona*, մայ. 2003, 76):



«Մեր աշխարհում, որտեղ ակնկալիքը վայրկենական բավականությունն է, մենք հաճախ մեղավոր ենք՝ սպասելով պարզևստության առանց դրա համար աշխատելու: Ես հավատում եմ, որ Մորոնիս ասում է մեզ, որ եթե մենք առաջինը կատարենք աշխատանքը և հավատք գործադրենք, ապրելով ավետարանով, ապա կստանանք փկայություն, որ այն ճշմարիտ է:

Իրական դարձը տեղի է ունենում, երբ շարունակում եք գործել՝ ըստ այն վարդապետությունների, որոնք գիտեք, որ ճշմարիտ են և պահում եք պատվիրանները օրեցօր, ամիս առ ամիս» (Բոննի Լ. Օսկարսոն, «Դարձի եկեք դեպի Տերը», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2013, 77):

- Ինչո՞վ է տարբերվում Երեց Մքոթի և քույր Օսկարսոնի նկարագրած՝ ճշմարտության մասին փկայություն ստանալու մոտեցումը այն մարդկանց մոտեցումից, ովքեր ցանկանում են ստանալ ապացույց նախքան հավատալը կամ գործելը:
- Ե՞րբ և ինչպե՞ս եք համոզվել, որ այս սկզբունքը ճշմարիտ է:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Եթեր 12.7, 12, 19, և 31 հատվածները: Քաջալերեք ուսանողներին այս հատվածներում ուշադրություն դարձնել «հետո, երբ նրանք հավատք ունեցան» և «նախքան նրանց հավատքը» արտահայտություններին (կարող եք նաև առաջարկել, որ ուսանողները նշեն այս հատվածներն իրենց սուրբ գրություններում):

- Համաձայն այդ հատվածների, ի՞նչ օրհնություններ է Տերը տվել այդ մարդկանց նրանից հետո, երբ հավատք են գործադրել:
Ճշմարտության վերաբերյալ ի՞նչ տեսակ հոգևոր վկայություն եք դուք ստացել՝ ձեր հավատքի շնորհիվ:

Վկայեք, որ հրաշքների պես, մենք վկայություններ չենք ստանում մինչև հավատք չգործադրենք: Այս թեման շեշտելու համար կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերի (1924–2015) հետևյալ խոսքով.



«Հոգևոր գիտելիքի ձեր որոնումներում ինչ-որ տեղ գոյություն ունի «հավատքի ուսույուն», ինչպես փիլիսոփաներն են այն կոչում: Դա այն պահն է, երբ դուք գնացել եք մինչև լույսի ծայրը և քայլ եք արել դեպի խավարը՝ հայտնաբերելով, որ ուղին լուսավորված է նախապես, ուղղակի մեկ կամ երկու քայլի համար» (*"The Quest for Spiritual Knowledge," New Era, Jan. 2007, 6*):

Հրավիրեք մի ուսանողի նկարագրել այն խնդիրները, որ Հարեդի եղբայրն ունեցավ, երբ կառուցեց բեռնանավերը, որոնք պետք է տեղափոխեին իր ընտանիքը խոստացված երկիր, և ամփոփեք, թե ինչն արեց այդ խնդիրները լուծելու համար (տես Եթեր 2.16–25, 3.1–5):

- Ինչպե՞ս Հարեդի եղբայրը հավատք գործադրեց առ Հիսուս Քրիստոսը:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Եթեր 3.6–13, 17–20 հատվածները:

- Ինչպե՞ս Տերն օրհնեց Հարեդի եղբորը նրա հավաքի համար:

Խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Զեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքը: Հրավիրեք դասարանին փնտրել Հարեդի եղբոր հավատքի բնութագրերը.



«Անգիջող հավատքը, սարեր շարժող հավատքը, հավատքն այնպիսին, ինչպիսին Հարեդի եղբայրն ուներ, *նախորդում է* հրաշքին և գիտելիքին: Նա պետք է հավատար *մինչև* Աստված կխոսեր: Նա պետք է գործեր *մինչև* այդ գործողությունն ավարտելու ունակությունն ակնհայտ կլիներ: Նա պետք է պարտավորվեր ամբողջական գործի համար նախապես, նույնիսկ՝ դրա իրագործման առաջին փուլից առաջ: Հավատքը անվերապահորեն համաձայնելն է, կանխավ համաձայնելը՝ ինչ պայմաններ էլ, որ Աստված պահանջի. թե մոտ և թե հեռավոր ապագայի համար» (*Christ and the New Covenant: The Messianic Message of the Book of Mormon* [1997], 18–19):

- Ինչպե՞ս կամփոփեք Երեց Հովանդի նկարագրած Հարեդի եղբոր հավատքը:
- Ինչպիսի՞ գործողություններ մենք կարող ենք նախաձեռնել, որպեսզի ցույց տանք մեր հավատքը Տիրոջ հանդեպ:

Ուսանողներին մի քանի բույն տրամադրեք ուսումնասիրելու Եթեր 4.13-15 հատվածները և բացահայտելու, թե ինչ է ասել Մորոնին, որ մենք պետք է անենք, Հոգուց գիտելիք և դրսևորումներ ստանալու համար:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «պատռեք անհավատության [այդ] վարագույրը»: Ինչո՞վ է այս գործողությունը նման հավատք գործադրելուն: (Օգտակար կլինի բացատրելը, որ *պատռել* նշանակում է ճղել, բաժանել մասերի, իսկ *վարագույրը* վերաբերում է մի բանի, ինչը ծածկում կամ քողարկում է:)
- Ի՞նչ է մեզ խորհուրդ տվել Մորոնին անել, որպեսզի «պատռե[նք] անհավատության այդ վարագույրը»:

Ցուցադրեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի (1805–1844) հետևյալ խոսքը և խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ այն.



[2007], 268):

«Աստված բացահայտել է Ջոզեֆին այն, ինչը հայտնի կդարձներ Տասներկուսին, և նույնիսկ ամենափոքր սուրբը կարող է իմանալ բոլոր բաներն այնքան արագ, որքանով նա կկարողանա հաղորդել դրանք, որովհետև օրը գալու է, երբ ոչ մեկը չպետք է ասի իր հարևանին. ճանաչե՛ք Տիրոջը, քանի որ բոլորը ճանաչելու են Նրան ... ամենափոքրից մինչև մեծը [տես Երեմիա 31.34]» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ

- Ինչպե՞ս են Մարգարե Ջոզեֆ Սմիթի այս խոսքերն օգնում ձեզ հասկանալ ձեր հնարավորությունը՝ հայտնություն ստանալու:

Խրախուսեք ուսանողներին խորհել, թե հավատքի ի՞նչ փորձություններ նրանք ունեն այս պահին, և հրավիրեք նրանց մտածել, թե ինչ նրանք կարող են անել, որպեսզի ամրապնդեն և գործի դնեն իրենց հավատքը: Կիսվեք ձեր վկայությամբ, որ Աստված Իր հավատարիմ հետևորդներին ապահովում է շարունակական վկայությամբ՝ ճշմարտության վերաբերյալ, երբ նրանք գործադրում են իրենց հավատքը:

Ուսանողի ընթերցարան

- 2 Նեփի 27.23, 3 Նեփի 17.5–9, 20–24, Մորմոն 9.9, 18–20, Եթեր 3.6–13, 17–20, 4.13–15, 12.6–7, 12, 19, 31
- Դեյվիդ Ա. Բեդնար, «Խնդրեք հավատքով», *Ensign* կամ *Liahona*, մայ. 2008, 94–97;

Հավատք, հույս և գթություն

Նախաբան

Հավատքի, հույսի և գթության հատկանիշներն անհրաժեշտ են բոլորին, ովքեր ցանկանում են ապրել Երկնային Հոր ներկայությունում: Այս հատկանիշները

պարզևեր են Աստծուց, որ տրվում են նրանց, ովքեր փնտրում են դրանք՝ հետևելով Հիսուս Քրիստոսի օրինակին:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դիտեր Ֆ. Ուլտորֆ, «Հույսի անսահման զորությունը», *Ensign* կամ *Լիսինաս*, նոյ. 2008, 21–24:
- Ռիչարդ Գ. Սքոթ, «Հավատի և բնավորության վերափոխող զորությունը», *Ensign* կամ *Լիսինաս*, նոյ. 2010, 43–46:

Ուսուցման առաջարկներ

Եթեր 12.28, Մորոնի 10.18–21

Հավատքը, հույսը և գթությունը պարտադիր են փրկության համար

Խնդրեք ուսանողներին արագ թվել հատկանիշներ, որոնք, իրենց կարծիքով, կարևոր է ձեռք բերել մահկանացու կյանքում: Այնուհետև խնդրեք նրանց առանձնացնել այն հատկանիշները, որոնք, իրենց կարծիքով, անհրաժեշտ են Աստծո թագավորությունը ժառանգելու համար:

Հիշեցրեք ուսանողներին, որ երբ Մորոնին ավարտեց իր աշխատանքը ոսկե թիթեղների հետ կապված, նա գրեց իր վերջին խրատական խոսքը նրանց, ովքեր մի օր կկարդան այդ գրառումը: Որպես իր խորհրդի մի մաս նա ընդգծել է երեք հատկանիշներ, որոնք էական են մեր փրկության համար: Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Մորոնի 10.18–21 հատվածները, իսկ դասարանին խնդրեք գտնել այդ երեք հատկանիշները:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են հավատքի, հույսի և գթության հատկանիշները այդքան էական մեր փրկության համար:

Որպեսզի օգնեք ուսանողներին պատասխանել այս հարցին, հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Եթեր 12.28 հատվածը բարձրաձայն և խնդրեք դասարանին բացահայտել այս հատվածում ուսուցանվող վարդապետությունը:

- Ի՞նչ վարդապետություն է գրված այս հատվածում: (Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալը. **Հավատք, հույս և գթություն զարգացնելը մեզ բերում է Հիսուս Քրիստոսի մոտ:**)

Խնդրեք ուսանողներին այսօրվա դասի ընթացքում փնտրեն սկզբունքներ և վարդապետություններ, որոնք կօգնեն նրանց ավելի լիարժեք կերպով հասկանալ և զարգացնել այս կարևոր հատկանիշները:

Ալմա 32.26–29, 37–41, Մորոնի 7.21, 25–28, 33

Հավատքը թույլ է տալիս մեզ «որդեգրել այն ամենը, ինչ բարի է»:

Գրատախտակին գրեք *Մեծացնել մեր հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ:*

Հիշեցրեք ուսանողներին, որ մարգարե Ալման, երբ ուսուցանում էր զորամացիներին, թե ինչպես հավատք զարգացնել Հիսուս Քրիստոսի հանդեպ, որպես փոխաբերություն էր օգտագործում աճող սերմը: Հրավիրեք մի քանի ուսանողների՝ հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 32.26–29 հատվածները: Քաջալերեք ուսանողներին գտնել այն արտահայտությունները, որոնք նկարագրում են, թե ինչ կարող ենք անել, որպեսզի մեծացնենք մեր հավատքը:

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց գտած արտահայտությամբ և բացատրել, թե ինչ է ուսուցանում այդ արտահայտությունը մեր հավատքը մեծացնելու վերաբերյալ: Երբ ուսանողները բարձրաձայն են արտահայտությունները, կարող եք գրել դրանք գրատախտակին: Արտահայտությունները կարող են լինել հետևյալները. *արթնացնել և զարթնեցնել ձեր ունակությունները, փորձարկել իմ խոսքերի վրա, ցանկանալ հավատալ, տեղ տալ, որ [խոսքը] սերմանվի ձեր սրտում:* Անհրաժեշտության դեպքում օգնեք ուսանողներին հասկանալ, որ *ունակությունները* բառը վերաբերում է մեր մտածելու և գործելու կարողություններին:

- Ինչ վերաբերում է 29 հատվածին, ձեր կարծիքով ինչո՞ւ Ալման ուսուցանեց, որ մեր հավատքը դեռ կատարյալ չի լինի, այս գործողություններն անելուց հետո:
- Ձեր կարծիքով, է՞լ ինչ է հարկավոր մեր հավատքը կատարյալ դարձնելու համար:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Ալմա 32.37–41 հատվածները, և խնդրեք դասարանին փնտրել, թե մենք ինչ պետք է անենք, որ հավերժական կյանք ձեռք բերելու համար անհրաժեշտ հավատք ունենանք:

- Ի՞նչ սկզբունք է ուսուցանել Ալման այս հատվածներում այն մասին, թե մենք ինչպես կարող ենք շարունակել զորացնել մեր հավատքը: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ սկզբունքը. **Եթե մենք ջանասիրաբար սնուցենք Աստծո խոսքը մեր սրտերում, մեր հավատքն առ Հիսուս Քրիստոս կաճի:** Այդ ճշմարտությունը գրեք գրատախտակին:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում ջանասիրաբար սնուցել խոսքը: Որո՞նք են այն որոշ հետևողական գործողությունները, որ մենք կարող ենք ձեռնարկել, որպեսզի սնուցենք Աստծո խոսքը և օգնենք հավատքին խորը աճել մեր սրտերում:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, թե ինչպես կարող են սնուցել Աստծո խոսքը, ցուցադրեք Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրիմգի հետևյալ խոսքը և որևէ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ այն, մինչդեռ դասարանը կփնտրի, թե որոնք են մեր հավատքը սնուցելու կարևոր ձևերը:



«Որքան էլ որ մեծ հավատք ունենանք՝ հնազանդվելու Աստծուն, մենք այն շարունակաբար պետք է ամրացնենք և անընդհատ թարմացված պահենք: Մենք կարող ենք անել դա՝ այժմ որոշելով ավելի արագ արձագանքել հնազանդվելուն և ավելի վճռական լինել դիմանալու: Վաղ սկսել և ամուր լինել սովորելը՝ հոգևոր պատրաստվածության բանալիներն են: ...

... Մենք կառուցում ենք հավատքը, որպեսզի անցնենք հնազանդության ստուգաբլիթ ժամանակի ընթացքում և մեր առօրյա ընտրությունների շնորհիվ: Մենք կարող ենք այժմ որոշել՝ արագ անել այն, ինչ Աստված խնդրում է մեզ: Եվ մենք կարող ենք որոշել, որ ամուր լինենք հնազանդության փոքր ստուգաբլիթներում, որոնք կառուցում են հավատքը, որ կարողանանք անցնել մեծ ստուգաբլիթներով, որոնք անպայման կլինեն» («Spiritual Preparedness: Start Early and Be Steady,” *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2005, 38, 40):

- Ի՞նչ է ասել Նախագահ Այրիմգը, որ մենք պետք է անենք՝ ամրացնելու կամ սնուցելու համար մեր հավատքը:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է այդքան կարևոր կայուն կերպով ու ամեն օր հնազանդվել Աստծո խոսքին՝ մեր հավատքը զարգացնելու և Նրան վստահելու համար:

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե Ալմայի ուսուցանած սկզբունքներին հետևելը ինչպես է փոխել իրենց հավատքն առ Հիսուս Քրիստոս:

Ասացեք ուսանողներին, որ մարգարե Մորմոնը վկայել է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք ունենալու հավերժական կարևորության մասին: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մորմոնի վկայությունը Մորմոնի 7.21, 25–28, 33 հատվածներում, մինչ դասարանը կխորհի, թե ինչ կարող են նրանք անել, որպեսզի մեծացնեն իրենց հավատքը Տիրոջ հանդեպ և «որդեգրեն» Մորմոնի նշած օրհնությունները:

Եթեր 12.4, 8–9, Մորմոնի 7.40–42

Հույսը խարխսխ է հոգու համար

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Եթեր 12.8–9 հատվածները, իսկ մեկ այլ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ Մորմոնի 7.40–42 հատվածները: Խնդրեք ուսանողներին բացահայտել այն հատկանիշը, որը մենք կարող ենք ձեռք բերել՝ զարգացնելով հավատք:

- Համաձայն այս հատվածների՝ ի՞նչ հատկանիշով ենք մենք օժտվում մեր հավատքի շնորհիվ:

Կարդացեք այս երկու նախադասությունները և խնդրեք ուսանողներին գտնել տարբերությունը դրանց միջև. (1) Հուսով եմ, այսօր անձրև չի գալու:

(2) Ես հույս ունեմ, որ եթե ապաշխարեմ, ապա կներվեմ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:

- Ինչո՞վ են տարբերվում հույսի այս արտահայտությունները: (Առաջինը անորոշ ցանկություն է մի բանի, ինչը դուրս է մեր վերահսկողությունից, իսկ երկրորդը վստահության արտահայտություն է, որը դրդում է գործողության:)

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ սուրբ գրություններում գործածվող հույսի իմաստը, հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուիլյորֆի հետևյալ խոսքը.



«Հույսը ... մի անսասան վստահություն է, որ Տերը կկատարի մեզ տված Իր խոստումը: Դա վստահություն է, որ եթե մենք այժմ ապրենք համաձայն Աստծո օրենքների և Նրա մարգարեների խոսքերի՝ մենք կստանանք ցանկալի օրհնություններն ապագայում: Դա հավատալն է և ակնկալելը, որ մեր աղոթքները կպատասխանվեն: Այն դրսևորվում է վստահությամբ, լավատեսությամբ, խանդավառությամբ և համբերատար տոկոսությամբ»
(«Հույսի անսահման գործությունը», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2008, 22):

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Մորոնի 7.41 հատվածը և տեսնել, թե ինչն է, որի համար մենք պետք է հույս ունենանք, զարգացնելով հավատք Քրիստոսի հանդեպ:

- Ի՞նչ սկզբունք է ուսուցանել Մորմոնն այս հատվածում հույսի մասին: (Ուսանողները պետք է հիշատակեն հետևյալը. **Ջարգացնելով հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ մենք հույս ենք ձեռք բերում, որ Նրա Քավության միջոցով կարող ենք բարձրացվել դեպի հավերժական կյանք:**)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են իրար հետ սերտ կապված հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ և հույսը:

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Եթեր 12.4 հատվածը, իսկ դասարանին խնդրեք տեսնել, թե ինչպես է Մորմոնին նկարագրել հույսը:

- Ի՞նչ է սովորեցնում մեզ հույսի մասին Մորմոնի օգտագործած խարիսխ բառը: Ինչո՞վ է նման քիչ հավատքով մարդը մի նավի, որն առանց խարիսխ է:


Հրավիրեք մի քանի ուսանողների վկայել հույսի մասին, որն իրենց կյանքում հայտնվել է շնոհիվ հավատքի ամ Հիսուս Քրիստոս:

Եթեր 12.33–34, Մորոնի 7.43–48

Գթությունը Քրիստոսի մաքուր սերն է:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մորոնի 7.43–44 հատվածները և խնդրեք ուսանողներին գտնել, թե որ հատկանիշի մասին է հայտարարել Մորմոնը, որ մենք պետք է զարգացնենք, երբ ունենք հավատք և հույս:

Յուզադրեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի (1899–1994) հետևյալ խոսքը և հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Եթե մենք իսկապես ձգտենք ավելի նմանվել մեր Փրկիչին և Տիրոջը, ապա սովորելը սիրել՝ ինչպես Նա է սիրում, պետք է լինի մեր բարձրագույն նպատակը: Մորմունքը համարել է գթությունը «բոլորից մեծ» (Մորոնի 7.46)» ("Godly Characteristics of the Master," *Ensign*, Nov. 1986, 47):

Պարզաբանելու համար, թե ինչու է գթությունը այդքան կարևոր հատկանիշ, որը պետք է ձգտել ունենալ, հրավիրեք մի քանի ուսանողների հերթով կարդալ Մորոնի 7.45–47 հատվածները: Նշեք, որ այս հատվածներն օգնում են մեզ հասկանալ գթությունը, թվելով, թե ինչպիսին է գթությունը և ինչպիսին՝ չէ:

- Ո՞ր բառերն ու արտահայտություններն են այս հատվածներում հաղորդում գթության կարևորությունը:
- Ի՞նչ մտքերով և գաղափարներով կարող եք կիսել 45 հատվածում թվարկված գթության բնութագրերի մասին:

Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մորոնի 7.48 հատվածը:

- Ի՞նչ է մեզ խորհուրդ տվել Մորմոնը, որ անենք գթության՝ պարզևին ձգտելիս: (Օգնեք ուսանողներին բացահայտել հետևյալ սկզբունքը. **Եթե աղոթենք սրտի ողջ կորովով և հետևենք Հիսուս Քրիստոսին, մենք կարող ենք լցվել գթությամբ:**)
- Գթության պարզևին ձգտելն ինչպես է օգնում մեզ դառնալ Հիսուս Քրիստոսի ավելի լավ հետևորդներ:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Եթեր 12.33–34 հատվածները, մինչ դասարանը կփնտրի կապը գթության և Հիսուս Քրիստոսի Քավության միջև:

- Ո՞րն է կապը գթության և Քավության միջև:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքը.



«Ավելի մեծ սահմանումը «Քրիստոսի մաքուր սիրտ» ... այն չէ, ինչ մենք, որպես քրիստոնյաներ, փորձում ենք, բայց հիմնականում թերական ենք ցուցաբերել ուրիշների հանդեպ, այլ այն, ինչ Քրիստոսին լիարժեք կերպով հաջողվեց ցուցաբերել մեր հանդեպ: *Ճշմարիտ* գթությունը հայտնի է եղել միայն մեկ անգամ: Այն կատարյալ և մաքուր ձևով ցույց է տրվել Քրիստոսի անխափան, ծայրաստիճան և քավող սիրով՝ մեր հանդեպ: ... Դա Քրիստոսի սերն է մեր հանդեպ, որ «տանում է ամեն բան, հավատում է ամեն բանի, ամեն բանի հույս ունի, ամեն բանի համբերում է»: Դա ցույց է տրվել Քրիստոսում, որ «գթությունը երբեք չի խափանվում»: Դա այդ գթությունն է՝ նրա մաքուր սերը մեր հանդեպ, առանց որի մենք ոչինչ կլինեինք, անհույս և թշվառ՝ բոլոր տղամարդկանցից և կանանցից առավել:

Իրոք, նրանք, ովքեր վերջին օրը կունենան Նրա սիրո օրհնությունները՝ Քավությունը, Հարությունը, հավերժական կյանքը և հավերժության խոստումը, անշուշտ, այդ ամենը կլինի նրանց հետ» (*Christ and the New Covenant* [1997], 336):

- Ինչպե՞ս է Երեց Հոլլանդն օգնում ձեզ հասկանալ, թե ինչու «գթությունը երբեք չի խափանվում» և ինչու է այն հոգևոր պարզանքներից մեծագույնը:
- Ի՞նչ պետք է դուք անեք, որպեսզի կիսեք ուրիշների հետ Հիսուս Քրիստոսի մաքուր սերը, որը Նա այդքան առատորեն տվել է ձեզ:

Խնդրեք ուսանողներին վերանայել Մորոնի 7.45 հատվածը, այնուհետև նպատակ դնել աղոթելու և աշխատելու՝ գթության բնութագրերից մեկն ավելի լիարժեք ձևով զարգացնելու ուղղությամբ: Վկայեք աստվածային օգնության մասին, որը դուք ստացել եք, երբ աշխատել եք զարգացնել գթությունը:

Ուսանողի ընթերցարան

- Ալմա 32.26–29, 37–41, Եթեր 12.4, 8–9, 28, 33–34, Մորոնի 7.21, 25–28, 33, 40–48, 10.18–21
- Դիտեր Ֆ. Ուլսդորֆ, «Հույսի անսահման զորությունը», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2008, 21–24:

Եկեք Քրիստոսի մոտ

Նախաբան

Մորմոնի Գրքի հիմնական նպատակներից մեկն է՝ հրավիրել բոլոր մարդկանց «[զալ] Քրիստոսի մոտ և կատարելագործվել» (Մորմոնի 10.32): Եթե մենք հավատք գործադրենք և «որդեգրենք» այն ամենը, ինչ բարի է», մենք կարող ենք դառնալ Քրիստոսի

զավակները (տես Մորմոնի 7.19): Այս դասի վերջում ուսանողները հնարավորություն կունենան բերելու իրենց վկայությունն այն մասին, թե ինչպես է Մորմոնի Գիրքը օգնել նրանց գալ դեպի Քրիստոսը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Զեֆրի Ռ. Հոլլանդ, «Ապահովություն հոգու համար», *Ensign* կամ *Liahon*, նոյ. 2009, 88–90:
- «Քրիստոսակենտրոն կյանք», գլուխ 24, *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն* (2014), 357–368.

Ուսուցման առաջարկներ

1 Նեփի 6.4, Հակոբ 1.7, Օմնի 1.26, 3 Նեփի 9.13–14, Մորմոնի 10.30, 32–33

Մորմոնի Գիրքը հրավիրում է մեզ գալ դեպի Հիսուս Քրիստոսը:

Ուսանողներին խնդրեք մտաբերել, թե երբ են նրանք հորդորել ինչ-որ մեկին կարդալ Մորմոնի Գիրքը:

- Ինչո՞ւ հորդորեցիք այդ անձին կարդալ Մորմոնի Գիրքը:

Ուսանողներին խնդրեք մտածել, թե ինչու են իրենք ուսումնասիրում Մորմոնի Գիրքը: Բացատրեք, որ թերևս կան շատ լավ պատճառներ Մորմոնի Գիրքը կարդալու և ուսումնասիրելու համար, գիրքն ինքնին պարունակում է կրկնվող ուղերձ իր կարևորագույն նպատակներից մեկի շուրջ:

Գրատալատակին գրեք հետևյալ սուրբ գրությունների հղումները.

1 Նեփի 6.4

Հակոբ 1.7

Օմնի 1.26

3 Նեփի 9.13-14

Մորմոնի 10.30

Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ հատվածները, գտնելով Մորմոնի Գիրքում հանդիպող կրկնվող ուղերձը: (Կարող եք խրախուսել ուսանողներին իրենց սուրբ գրություններում այս հատվածներով հղումներ կատարել:

- Ո՞րն է այս հատվածներում հանդիպող Մորմոնի Գրքի կրկնվող ուղերձը:
- Ի՞նչ է նշանակում «գալ Քրիստոսի մոտ»:
- Ի՞նչ են սովորեցնում մեզ այս հատվածները՝ ի՞նչ պետք է անենք, որ գանք Քրիստոսի մոտ: (Պատասխանները կարող են ընդգրկել. «մատուցեք ձեր ողջ հոգիները նրան՝ որպես ընծա», ծով պահեք, աղոթեք, համբերեք մինչև վերջ, ապաշխարեք, դարձի եկեք և «որդեգրեք այն ամենը, ինչը բարի է»:)
- Ի՞նչ է նշանակում «մատուցեք ձեր ողջ հոգիները նրան՝ որպես ընծա» արտահայտությունը:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե ինչ է նշանակում գալ Քրիստոսի մոտ, ցուցադրեք և քննարկեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի և Յոթանասունից Երեց Դենիս Բ. Նյուիշվանդերի հետևյալ խոսքերը.



«Երբ մենք հետևողականորեն աղոթում ենք առավոտյան և երեկոյան, ուսումնասիրում մեր սուրբ գրություններն ամեն օր, ունենում ամեն շաբաթ տնային ընտանեկան երեկո և կանոնավորապես տաճար հաճախում, մենք ակտիվորեն արձագանքում ենք Նրա «եկեք ինձ մոտ» հրավերին» (Ռիչարդ Գ. Սքոթ, «Հավատքի գործադրումը դարձրեք ձեր առաջնահերթությունը», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2014, 94):



«Ես բերում եմ իմ վկայությունը, որ մենք կարող ենք գալ Քրիստոսի մոտ և կատարելագործվել՝ նրանում՝ արժանաբար մասնակցելով սուրբ արարողություններին, որոնք Աստծո կողմից նշանակվել են և հաստատվել աշխարհի հիմնադրումից առաջ» (Dennis B. Neuenschwander, "Ordinances and Covenants," *Ensign*, Aug. 2001, 26):

Բացատրեք, որ Մորմոնի Գրքի վերջին գլխում գրված է մարգարե Մորմոնի խորհուրդը՝ ինչպես գալ Քրիստոսի մոտ: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորմոնի 10.32-33 հատվածները, մինչ դասարանը կփնտրի, թե ինչպես են գործածված «եթե» և «ապա» բառերը: Խնդրեք դասարանի անդամներին խորհել, թե ինչ են այս «եթե-ապա» արտահայտություններն ուսուցանում այն մասին, թե ինչպես ենք մենք օրհնված Քրիստոսի շնորհով: (Նշում. «Եթե-ապա» արտահայտություններ փնտրելը կօգնի ուսանողներին ճանաչել սկզբունքները, որոնք ուսուցանվում են սուրբ գրություններում:)

- Ի՞նչ սկզբունքներ կարող ենք սովորել այս հատվածներից այն մասին, թե ինչպես ենք մենք օրհնվում Քրիստոսի շնորհով, գալով Նրա մոտ: (Ուսանողները կարող են տարբեր բառերով պատասխանել, սակայն կարևոր է, որ նրանք նշեն հետևյալ սկզբունքը. **Եթե գանք Հիսուս Քրիստոսի մոտ և հրաժարվենք ամեն անաստվածությունից, ապա**

մենք կկատարելագործվենք, կսրբագործվենք և սուրբ կդառնանք

Նրա շնորհով: Տես նաև Ավմա 5.33–35:)

Որպեսզի ուսանողներն ավելի խորը հասկանան այս սկզբունքը, կիսվեք Յոթանասունից Երեց Բրյուս Ս. Հեյֆենի հետևյալ հայտարարությամբ: Հրավիրեք ուսանողներին լսել, թե Տիրոջ շնորհը ինչպես կարող է օրհնել մեզ:



«Տիրոջ շնորհը, բացվելով Թավությանը, կարող է կատարյալ դարձնել մեր անկատարությունները: «Նրա շնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում»: (Մորոնի 10.32:) Թեև կատարելության գործընթացի մեծ մասն ընդգրկում է մեղքից և դառնությունից առաջացած աղտոտումից մաքրվելը, դրանում կա լրացուցիչ դրական հարթություն, որի միջոցով մենք ձեռք ենք բերում Քրիստոսանման բնույթ, դառնալով կատարյալ, ճիշտ ինչպես Հայրն ու

Որդին են կատարյալ: ...

Փրկիչի հաղթանակը կարող է փոխհատուցել ոչ միայն մեր մեղքերի համար, այլ նաև մեր թերություններին, ոչ միայն մեր դիտավորյալ սխալների, այլ նաև անտեղյակության պատճառով գործած մեր մեղքերի համար, դատելու մեր փորձի և մեր անխուսափելի թերությունների համար: Մեր մեծագույն ձգտումը ավելին է, քան ներված լինել մեղքից՝ մենք ձգտում ենք դառնալ սուրբ, հաստատապես օժտված Քրիստոսանման հատկանիշներով, մեկը՝ նրա հետ, նրա նման: Աստվածային շնորհը միակ աղբյուրն է, որ կարող է, ի վերջո, իրականացնել այդ ձգտումը, նրանից հետո, երբ մենք ամեն ինչ կանենք» (*The Broken Heart* [1989], 16, 20):

- Համաձայն Երեց Հեյֆենի՝ ինչպե՞ս կարող է Տիրոջ շնորհը օրհնել մեզ:

Հրավիրեք ուսանողներին մտածել մի ժամանակի մասին, երբ նրանք ջանքեր են գործադրել՝ գալու Հիսուս Քրիստոսի մոտ: Խնդրեք նրանց պատասխանել հետևյալ հարցերին, եթե միայն նրանց փորձառությունները խիստ անձնական չեն.

- Այդ ժամանակ ի՞նչ եք դուք արել՝ Քրիստոսի մոտ գալու համար:
- Ի՞նչ օրհնություններ եք ստացել ձեր կյանքում, երբ ձգտել եք գալ Քրիստոսի մոտ:

Հրավիրեք ուսանողներին խորհել, թե ինչ կարող են անել, որպեսզի ավելի լիարժեք գան Քրիստոսի մոտ, որ դառնան կատարելագործված և սրբագործված Նրա շնորհով: Խրախուսեք նրանց հետամուտ լինել իրենց ստացած որևէ հոգևոր հուշումի:

Մորոնի 7.18-26

Որդեգրեք այն ամենը, ինչ բարի է՝ Քրիստոսի զավակը դառնալու համար

Հիշեցրեք ուսանողներին, որ Մորոնի 7 գլխում մարգարե Մորոնին գրի է առել այն խոսքը, որը նրա հայրը՝ Մորմոնն էր քարոզել դրանից մի քանի տարի առաջ: Այդ քարոզում Մորմոնն ուսուցանել է, որ մենք կարող ենք իմանալ, որ մի բանը ոգեշնչված է Աստծուց, եթե դա հրավիրում է մարդկանց բարին անել, հավատալ Հիսուս Քրիստոսին և սիրել ու ծառայել Աստծուն:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորոնի 7.18-19 հատվածները: Դասարանին հրավիրեք հետևել՝ տեսնելով, թե ինչ է խնդրել Մորմոնը մեզ, որ անենք:

- Համաձայն 19 հատվածի՝ ի՞նչ կպատահի մեզ, եթե օգտագործենք Քրիստոսի Լույսը տարբերելու համար բարին չարից և հետո «որդեգրենք այն ամենը, ինչը բարի է»: (Մենք կլինենք Քրիստոսի զավակները:)
- Ի՞նչ է նշանակում լինել Քրիստոսի զավակները: (Նշեք, որ մենք մեր Երկնային Հոր հոգևոր զավակներն ենք, ինչպես նաև մեր երկրային ծնողների զավակները: Բայց, ինչպես ուսուցանել է Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը [1876–1972], Հիսուս Քրիստոսը նույնպես «դառնում է մեր Հայրն այն իմաստով, որ այս եզրն օգտագործվում է սուրբ գրություններում, այսինքն՝ Նա մեզ առաջարկում է կյանք՝ հավերժական կյանք, այն քավության շնորհիվ, որը Նա կատարել է մեզ համար: [Տես Մոսիա 5.7:] ... Մենք դառնում ենք Հիսուս Քրիստոսի զավակները՝ որդիները և դուստրերը, Նրան տրված մեր հնազանդության ուխտերի շնորհիվ» [*Doctrines of Salvation*, comp. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 1:29]):

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մորոնի 7.20 հատվածը և գտնել Մորմոնի տված հարցը: Այնուհետև բաժանեք ուսանողներին զույգերի և հրավիրեք նրանց ուսումնասիրել Մորոնի 7.21-26 հատվածները, տեսնելով, թե ինչ է տվել մեզ Տերը, որպեսզի օգնի մեզ «որդեգրել այն ամենը, ինչը բարի է»: Բավարար ժամանակից հետո, խնդրեք ուսանողներին կիսվել իրենց մտքերով և գրեք դրանք գրատախտակին: Պատասխանները կարող են ներառել՝ հրեշտակների սպասավորումը (22 հատվածում), մարգարեներ (23 հատվածում), սուրբ գրություններ (25 հատվածում), գործադրել հավատք (25 հատվածում) և աղոթք (26 հատվածում):

- Ի՞նչ են մեզ սովորեցնում այս հատվածները «որդեգրել այն ամենը, ինչը բարի է» արտահայտության նշանակության մասին: (Մենք պետք է ձգտենք այն ամենին, ինչը բարի է, հատկապես այն բաներին, որոնք տանում են դեպի հավատք՝ Քրիստոսի հանդեպ և փրկություն՝ Նրա անվան միջոցով:)
- Ի՞նչ բարի բաներ են հայտնվել ձեր կյանքում, գրատախտակին թվարկվածից որևէ մեկի շնորհիվ:

Խնդրեք ուսանողներին ընտրել մի լավ բան, որը նրանք կարող են սկսել անել կամ ավելի հմտանալ դրանում, որպեսզի զան դեպի Քրիստոսը: Խրախուսեք նրանց նպատակ դնել՝ աշխատելու «որդեգրել այն ամենը, ինչը բարի է» իրենց կյանքում:

Մորոնի 10.3–5

Մորոնի խոստումը

Բարձր պահեք Մորմոնի Գիրքը և խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչպես է Մորմոնի Գիրքը օգնել նրանց գալ դեպի Քրիստոսը:

Բացատրեք, որ Մորոնին հրավեր և խոստում է հղել բոլորին, ովքեր կարդում և ուսումնասիրում են Մորմոնի Գիրքը:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մորմոնի 10.3–5 հատվածները:

- Ըստ 3-րդ հատվածի, ի՞նչ է Մորմոնին հորդորել մեզ անել:

Հրավիրեք ուսանողներին մտաբերել օրինակներ Մորմոնի Գրքից և իրենց կյանքից, որոնք ցույց են տալիս, թե «որքան ողորմած է եղել Տերը մարդկանց զավակների հանդեպ»: Հրավիրեք մի քանի ուսանողների՝ դասարանի հետ կիսվել իրենց մտքերով:

- Ի՞նչ սկզբունք կարող ենք սովորել այս հատվածներում Մորմոնի հրավերից ու խոստումից: **(Երբ մենք հարցնենք Աստծուն անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, թե արդյոք ճշմարիտ է Մորմոնի Գիրքը, մենք կստանանք վկայություն դրա ճշմարտացիության վերաբերյալ Սուրբ Հոգու միջոցով:)**
- Ի՞նչ է նշանակում հարցնել Աստծուն «անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս»: (Դա նշանակում է, որ մենք հավատք ունենք, որ Աստված կպատասխանի մեր աղոթքներին, և մենք մտադիր ենք գործել համաձայն պատասխանների, որոնք Նա տալիս է մեզ:)
- Ինչպե՞ս է այս կերպ Մորմոնի Գիրքն ուսումնասիրելը և աղոթելը օգնում մեզ գալ Քրիստոսի մոտ:

Խնդրեք ուսանողներին մտաբերել Մորմոնի Գիրքը կարդալու և ճշմարտությունն իմանալու նպատակով աղոթելու իրենց ունեցած փորձառությունները: Հարցրեք ուսանողներին՝ արդյոք կա՞ն ցանկացողներ դասարանի հետ կիսվելու Մորմոնի Գրքի մասին իրենց վկայությամբ, մասնավորապես, թե ինչպես է Մորմոնի Գիրքը օգնել նրանց գալ դեպի Քրիստոսը: Խրախուսեք ուսանողներին, որ շարունակեն կիրառել Մորմոնի խոսքերը՝ Մորմոնի Գրքի մասին վկայություն ստանալու համար, կամ ամրապնդելու այն վկայությունը, որը նրանք արդեն ունեն:

Ուսանողի ընթերցարան

- 1 Նեփի 6.4, Հակոբ 1.7, Օմնի 1.26, 3 Նեփի 9.13–14, Մորմոնի 7.18–26, 10.3–5, 30, 32–33
- «Քրիստոսակենտրոն կյանք», գլուխ 24, *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն* (2014), 357–368:



ՍԵՄԻՆԱՐԻԱՆԵՐ և
ԿՐՈՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ԳՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՅԻ

